

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

---

YEREVAN STATE UNIVERSITY  
INSTITUTE FOR ARMENIAN STUDIES

# ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՆԴԵՍ

**1**

**ARMENOLOGICAL ISSUES**

**BULLETIN**

ԵՐԵՎԱՆ – YEREVAN  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ – YSU PRESS  
2014

Հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ  
Հրատարակվում է 2014 թվականից

The Bulletin is published thrice a year.  
It has been published since 2014

Գլխավոր խմբագիր՝ **Սիմոնյան Ա. Հ.**

Խմբագրական խորհուրդ՝

**Ավագյան Ա. Ա.**

**Ավետիսյան Լ. Վ.** (գլխավոր  
խմբագրի տեղակալ)

**Ավետիսյան Հ. Գ.**

**Ավետիսյան Յու. Ս.**

**Բայրամյան Հ. Ս.**

**Բարդակչյան Գ. (ԱՄՆ)**

**Դեղեյան Ժ. (Ֆրանսիա)**

**Դրոսթ-Աբգարյան Ա. Գ.**  
(Գերմանիա)

**Զաքարյան Ս. Ա.**

**Հայրունի Ա. Ն.**

**Հովհաննիսյան Մ. Ս.**

**Հովսեփյան Լ. Ս.**

**Ղարիբյան Ա. Ա.**

**Սարգսրյան Հ. Գ.**

**Մինասյան Է. Գ.**

**Մուրադյան Ս. Պ.**

**Պողոսյան Վ. Ա.** (պատասխա-  
նատու քարտուղար)

**Սայադով Ս. Ս.** (Ռուսաստան)

**Սաֆարյան Ա. Վ.**

**Տազեյան Ա. (Լիբանան)**

Editor-in-chief: **Simonyan A.**

Editorial Board:

**Avagyan A.**

**Avetisyan H.**

**Avetisyan L.** (Deputy  
editor-in-chief)

**Avetisyan Y.**

**Bardakchian G.** (USA)

**Bayramyan H.**

**Dakessian A.** (Lebanon)

**Dedeyan G.** (France)

**Drost-Abgaryan A.** (Germany)

**Gharibyan A.**

**Hayruni A.**

**Hovhannisyan M.**

**Hovsepyan L.**

**Margaryan H.**

**Minasyan E.**

**Muradyan S.**

**Poghosyan V.** (Executive  
Secretary)

**Safaryan A.**

**Sayadov S.**

**Zakaryan S.**

## ԲԱՐԻ ԵՐԹ «ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ» ՀԱՆՂԵՍԻՆ

Ջերմորեն ողջունում եմ «Հայագիտության հարցեր» հանդեսի նորամուտը գիտական պարբերականների աշխարհ:

Ինչպես հանրապետությունում, ԵՊՀ-ում ևս վերջին տարիներին թափ են առնում հայագիտական հետազոտությունները, կազմակերպվում են գիտաժողովներ, գիտական նստաշրջաններ, գիտության այս ճյուղը վերականգնում է հեղինակությունը, ըստ այսմ՝ անհրաժեշտություն է առաջանում համանման նյութերը ներկայացնել գիտական պարբերականներում:

Մենք վաղուց էինք մտածում, որ ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտն ունենա իր պարբերականը, և այդ մտորումների արդյունքում ծնվեց «Հայագիտության հարցերը», որի գործունեությունը, մեր կարծիքով, լուրջ քայլ կլինի հայագիտության զարգացման գործում: Հանդեսի հիմնական նպատակն է հրատարակել բարձրակարգ գիտական հետազոտություններ, ինչպես նաև գիտական շրջանականերին ծանոթացնել հայագիտության նվաճումներին:

Արդի ժամանակաշրջանում գիտական նվաճումներին զուգահեռ, տարածվում են նաև զեղծարարությունները, պատմական և գիտական փաստերի միտումնավոր խեղաթյուրումը: Այսպիսի դրսևորումները դիմագրավելու խնդիր ևս ունի նորաստեղծ հանդեսը, մանավանդ եթե նկատի ունենանք, որ մեր մերձակա երկու հարևաններ նպատակադիր և լուրջ միջոցների ներգրավմամբ աշխատում են այս ուղղությամբ:

Հատկապես ցանկանում եմ նշել, որ պարբերականի էջերում զետեղվող հոդվածների որոշակի մասը լինելու է օտար լեզուներով, ինչը հնարավորություն կընձեռի այլազգի հայագետներին ծանոթանալու այդ ոլորտի գործընթացներին, հաղորդակից լինելու Հայաստանում կատարվող հայագիտական հետազոտություններին, իսկ մեր գիտնականների՝ այլ լեզուներով հրատարակված աշխատանքները հասանելի կլինեն օտարագիր հեղինակներին: Կարևորում եմ նաև այն փաստը, որ հանդեսի յուրաքանչյուր համար կունենա համարժեք էլեկտրոնային տարբերակ, որը կտեղադրվի ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի կայքում:

Հանդեսի խմբագրական խորհուրդը բաղկացած է բանիմաց և հայտնի հայագետներից, իրենց գործին նվիրված հետազոտողներից, որը և կլինի

հրապարակումների՝ գիտական բարձր չափանիշներին համապատասխանելու գրավականը:

Ցանկանում եմ հավատալ, որ մենք իսկապես կլուծենք մեր առջև դրված խնդիրը և հետազոտողներին կներկայացնենք գիտական արժանիքներով օժտված մի նոր լուրջ պարբերական:

Խմբագրական խորհրդին մաղթում եմ արգասավոր աշխատանք, իսկ հանդեսին՝ անխափան երկարակեցություն ու նորահայտ բազում նյութերի, արժեքավոր հետազոտությունների արդյունքների հրապարակում՝ ի փառս հայրենական գիտության, ի շահ հայագիտության:

**Արամ Միմոնյան**

ԵՊՀ ռեկտոր,

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների  
ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,  
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

# Հ Ո Ղ Վ Ա Ծ Ն Ե Ր

ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

## ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (1915 Թ. ՄԱՅԻՄԻ 30)

Հայոց ցեղասպանության ավելի խորը ու համակողմանի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունի թուրքական վավերագրական փաստաթղթերը գիտական շրջանառության մեջ դնելը: Վերջին տարիներին Թուրքիայում հրատարակվում են Օսմանյան պետական արխիվներում պահվող որոշ փաստաթղթեր: Անտարակույս, դա արվում է ոչ թե այդ ծանրագույն հանցագործության վերաբերյալ առկա փաստագրական նյութը համալրելու, այլ պատմական ճշմարտությունը կեղծելու նպատակով: Սակայն թուրք հեղինակների նախաձեռնությամբ լույս ընծայված նմանօրինակ հրատարակություններում ժամանակ առ ժամանակ հնարավոր է հանդիպել այնպիսի վավերագրերի, որոնք, ի հակադրումն դրանք հրապարակողների նկրտումների, մեկ անգամ ևս հավաստում են օսմանյան իշխանությունների՝ Հայոց ցեղասպանության կազմակերպիչների և իրականացնողների իրական նպատակները:

Այս տեսակետից կարևոր նշանակություն ունի հայ ժողովրդի բռնի տեղահանության վերաբերյալ օսմանյան կառավարության՝ Նախարարների խորհրդի (Meclis-i Vükelâ) 1915 թ. մայիսի 30-ին<sup>1</sup> ընդունած որոշման բնագիրը<sup>2</sup>, որը, անկախ դրա հեղինակների կամքից, բացահայտում է արևմտահայության տեղահանության իրական նպատակը, այն է՝ «լրովին ոչնչացնել ու վերացնել»<sup>3</sup> հայերի կարծեցյալ «վտանգավոր շարժումը» և ոչ թե նրանց վերաբնակեցնել կայսրության՝ ռուսական ռազմաճակատից հեռու գտնվող տարածաշրջաններում:

<sup>1</sup> Բոլոր ամսաթվերը տրված են նոր տոմարով:

<sup>2</sup> Կառավարության Որոշումը բաղկացած է երկու բաժնից՝ «Համառոտ նկարագրություն» և «Որոշում»: Առաջինը Թալեաթի աղճատված զեկուցագիրն է, երկրորդը՝ բուն Որոշումը: Ուստի բուն փաստաթուղթը պայմանականորեն անվանում ենք Որոշում, իսկ դրա երկրորդ բաժինը՝ «Որոշում»:

<sup>3</sup> Տե՛ս Օսմանյան կայսրության Նախարարների խորհրդի նիստի արձանագրության բնագիրը, որը հրատարակվել է Թուրքիայի Հանրապետության կառավարության արքնթեր Պետական արխիվների Գլխավոր վարչության պաշտոնական կայքէջում. Meclis-i Vükelâ Müzâkerâtına Mahsûs Zabıtname: Hülasâ-i me'âli, 17 Mayıs 1331. - BOA. Meclis-i Vükelâ Mazbatası, 198/163. - <http://www.devletarsivleri.gov.tr/kitap/pdf/2/17.pdf>:

Սույն հոդվածում կանդրադառնանք այդ Որոշումն ընդունելու նախապատմությանը և նպատակներին, քննության կենթարկենք դրա բնօրինակը, ինչպես նաև ցույց կտանք, թե ինչպիսի հնարքներ են օգտագործում ժամանակակից թուրքական պաշտոնական պատմագրության ներկայացուցիչները փաստաթղթի հիշյալ հատվածի բուն իմաստն աղավաղելու նպատակով:

Հոդվածին կցել ենք երեք հավելված: Բացի Որոշման բնագրի հայերեն թարգմանությունից, որն իրականացրել ենք առաջին անգամ<sup>1</sup>, ներկայացնում ենք նաև բնօրինակի և դրա պաշտոնական կրկնօրինակի լուսապատճենները:

\*\*\*

1915 թ. Մեծ եղեռնի նախապատրաստումն ընթացել է մի քանի փուլով: 1909 թ. կլիկկյան կոտորածներից հետո՝ սկսած արդեն 1910 թ., երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավար կորիզի ընդերքում տեղի էին ունենում քննարկումներ, որոնք կարելի է բնութագրել որպես արևմտահայության համատարած բնաջնջման նախապատրաստման սկզբնական փուլ<sup>2</sup>: 1913 թ. ձևակերպվում է «Անատոլիան թուրքացնելու» և այդպիսով Հայկական հարցին «վերջնական լուծում» տալու գաղափարը<sup>3</sup>, որի իրականացման կոնկրետ մեթոդները քննարկվում են Առաջին աշխարհամարտի նախօրեին և առաջին ամիսներին<sup>4</sup>: Մեծ եղեռնի մասին վերջնական որոշումն ընդունել է Օսմանյան կայսրության և կառավարող երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարների նեղ շրջանակը՝ բազմաթիվ գաղտնի խորհրդակցությունների արդյունքում: Քննարկումների ընթացքում որպես զանգվածային կոտորածների քողարկման միջոց ընտրվել է արևմտահայության լայնածավալ տեղահանության տարբերակը: Պահպանվել է Հայոց ցեղասպանության գլխավոր պատասխանատուներից՝ ներքին գործերի նախարար և երիտթուրքական կուսակցության փաստացի առաջնորդ Մեհմեթ Թալեաթ բեյի բացառիկ անկեղծ խոստովանությունը: Ըստ Օսմանյան կայսրությունում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուի, Թալեաթն իրեն հայտնել է, որ «Միություն և առաջադիմություն» կոմիտեն «մանրազնին քննության է ենթարկել խնդիրն իր բոլոր

<sup>1</sup> Հրատարակել ենք նաև Որոշման բնագրի ֆրանսերեն թարգմանությունը: Տե՛ս **Safrastyan R.**, Les programmes du génocide dans l'Empire Ottoman, 2<sup>ème</sup> édition revue et corrigée, Erevan, 2013, pp. 199-200.

<sup>2</sup> Այդ մասին տե՛ս **Սաֆրաստյան Ռ.**, Ինչպես էր նախապատրաստվում ցեղասպանությունը. երիտթուրքերը 1910 թ., Իրան-Նամե, 1997, թիվ 4-5-6, էջ 7:

<sup>3</sup> Այդ մասին տե՛ս **Safrastian R.**, The Political Party and Genocide: The Committee of Union and Progress at the Threshold of the “Final Solution”, Problems of Genocide: Proceedings of the International Conference on “Problems of Genocide”, April 21-23, 1995, 1997, p. 196.

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում:

մանրամասներով», և որ «տեղահանություններն արդյունք են երկարատև ու մանրակրկիտ քննարկումների»<sup>1</sup>: Դրանց արդյունքում 1914 թ. դեկտեմբերին կամ 1915 թ. հունվարին Օսմանյան կայսրության հինգ ղեկավար գործիչների գաղտնի խորհրդակցության ժամանակ հաստատվում է տասը կետից բաղկացած մի փաստաթուղթ, որը նախատեսում էր հայ ժողովրդի դեմ ուղղված ցեղասպանական բնույթի գործողությունների իրականացում<sup>2</sup>: Երիտթուրքական կուսակցության ղեկավար մարմնի՝ կենտրոնական կոմիտեի կողմից փաստաթղթի հաստատումից հետո փետրվարից սկսվում է ծրագրված միջոցառումների իրականացումը<sup>3</sup>:

Համաձայն մեր առաջ քաշած վարկածի՝ 1915 թ. Մեծ եղեռնի պետական ծրագիրը ձևակերպվել է երեք փաստաթղթում, որոնցից առաջինը ցեղասպանական գործողությունների տասը կետ պարունակող վերը հիշատակված վավերագիրն է: Մյուսները՝ «Տեղահանության օրենքը»<sup>4</sup> և կառավարության Որոշումը, ընդունվել են ավելի ուշ՝ մայիսին: Այս երկու պաշտոնական փաստաթղթերը, ըստ դրանց հեղինակների, որոնք ներկայացնում էին երկրի կառավարման բարձրագույն մարմինները՝ սուլթանին և Նախարարների խորհուրդը, նպատակ ունեին ընդամենը «իրավական քողով» շղարշելու արդեն իսկ լայնածավալ ընթացք ստացած՝ հայ ժողովրդի բռնի տեղահանություններն ու զանգվածային կոտորածները, բայց որևէ էական նշանակություն չունեին: Սակայն մեր օրերի հեռվից դրանք խիստ կարևոր են, քանի որ հնարավորություն են տալիս մեկ անգամ ևս փաստելու այն իրողությունը, որ Հայոց ցեղասպանությունն Օսմանյան կայսրությունում իրականացվել է պետական քաղաքականության մակարդակով:

Ինչպես արդեն նշեցինք, հայ ժողովրդի բնաջնջման ծրագիրը, որը ղեկավարում էր Թալեաթը, սկսվում է ի կատար ածվել 1915 թ. փետրվարից: Երիտթուրքական կուսակցության փաստացի ղեկավարը լինելու հանգամանքը նրան ընձեռում էր գրեթե անսահմանափակ հնարավորություններ, քանի որ երկրում հաստատվել էր «Միություն և առաջադիմություն» կուսակցության միահեծան բռնապետական իշխանություն: Արևմտահայության կոտորածներն ու տեղահանությունները տեղի էին ունենում ըստ նրա գաղտնի հրամանների, որոնք նա փոխանցում էր տարբեր վայրերում գտնվող պետա-

<sup>1</sup> Ambassador Morgenthau's Story, New York, 1919, p. 333.

<sup>2</sup> Այդ փաստաթղթի և նրա հեղինակների մասին, ինչպես նաև բնագրի հայերեն թարգմանությունը տես **Սաֆրաստյան Ռ.**, Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Երևան, 2009, էջ 168-173:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 171:

<sup>4</sup> Այդ օրենքի ընդունման հանգամանքներին և տեքստի վերլուծությանը ժամանակին անդրադարձել ենք: Տես **Սաֆրաստյան Ռ.**, Օսմանյան կայսրության 1915 թ. «Տեղահանության օրենքը», Պատմաբանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 2007, թիվ 2 (175), էջ 72-81: Այդ հոդվածում ամբողջությամբ հրապարակել ենք նաև օրենքի պաշտոնական բնագրի հայերեն թարգմանությունը:

կան պաշտոնյաներին ու կուսակիցներին՝ տեղերում դրանք ի կատար ածելու նպատակով: Թուրքական սկզբնաղբյուրները վկայում են, որ կայսրության հայ խաղաղ բնակչության զանգվածային բնաջնջման ընթացքում Նախարարների խորհուրդը միայն մեկ անգամ՝ ապրիլի 18-ի նիստում է անդրադարձել հայերին, ի դեպ, ոչ թե նրանց տեղահանության հարցին, այլ ցեղասպանության ծրագրին առնչվող մի շարք այլ խնդիրների<sup>1</sup>: Այս հանգամանքը մեկ անգամ ևս փաստում է, թե որքան ազդեցիկ է եղել երիտթուրքական կուսակցության իշխանությունը:

Տեղահանություններին «օրինական» բնույթ հաղորդելու խնդիրն այդ ժամանակաշրջանում թե՛ Թալեաթին և թե՛ բարձրաստիճան այլ թուրք ոճրագործների ամեննին չէր հետաքրքրում: Թերևս պատճառը նրանց համակած այն համոզմունքն էր, թե իրենց կհաջողվի խուսափել պատասխանատվությունից: Այս ենթադրությունը հաստատում են վստահելի սկզբնաղբյուրների տեղեկությունները: Այսպես, Հայոց ցեղասպանության վերապրողներից և լավագույն հետազոտողներից Հայկազն Գ. Ղազարյանը մեջբերում է Թալեաթի պատասխանն օսմանյան խորհրդարանի հայագգի պատգամավորներ Գրիգոր Զոհրապի և Վարդգեսի զուշացումներին առ այն, որ երիտթուրք պարագլուխներն ամեն դեպքում պատասխան են տալու հայ ժողովրդի նկատմամբ գործած հանցագործությունների համար. «Երկրին իշխանությունը մեր ձեռքին մեջ է և մենք կրնանք մեր ուզածը ընել... Ո՞վ է, որ մեզմե հաշիվ պիտի պահանջե՞»<sup>2</sup>:

Իրադրությունը, սակայն, կտրուկ փոխվում է այն բանից հետո, երբ 1915 թ. մայիսի 24-ին Անտանտի տերությունները՝ Ռուսաստանը, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան, հանդես են գալիս համատեղ Հայտարարագրով, որտեղ խստագույնս դատապարտելով հայերի զանգվածային կոտորածները և որակելով դրանք որպես «մարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված Թուրքիայի... նոր հանցագործություն»՝ ընդգծում են, որ դրա պատասխանատվությունն անհատապես ընկնելու է օսմանյան կառավարության անդամների վրա<sup>3</sup>: Նույն օրը Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարությունը Հայտարարագիրը հանձնում է «Հավա» հեռագրական գործակալությանը, որտեղից այն անմիջապես փոխանցվում է Կոնստանդնուպոլիս:

Հայտարարագիրը մեծ ազդեցություն է ունեցել օսմանյան կառավարության անդամների վրա, սակայն ոչնչով չի կաշկանդել նրանց գործողություն-

---

<sup>1</sup> Տե՛ս **Ercan Y.**, Ermeniler ve Ermeni Sorunu, Yeni Türkiye, 2001, ocak-şubat, yıl 7, sayı 37: Ermeni Sorunu özel sayısı I, s. 48.

<sup>2</sup> Տե՛ս **Ղազարյան Հ. Գ.**, Ցեղասպան թուրքը, Պեյրոթ, 1968, էջ 381:

<sup>3</sup> Տե՛ս հայտարարագրի բնագրում Դեպարտամենտի ծանուցագիրը «Հավա» գործակալությանը. «Հրատապ, Փարիզ, 24-ը մայիսի 1915 թ.», Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում, հ. 1: Աշխատասիրությանը՝ Արթուր Պեյլերյանի: Առաջաբանը՝ Ժան-Բատիստ Դյուրոզելի: Ֆրանսերենից թարգմանեց՝ Վարուժան Պողոսյանը, Երևան, 2005, էջ 99:



ները, այլ սոսկ առաջ է բերել հանցագործությունը քողարկելու ձգտում: Կոնստանդնուպոլսում հավատարմագրված արտասահմանյան դիվանագետների պաշտոնական գրագրություններում վկայություններ կան Հայտարարագրի հետևանքների մասին: Այսպես, օրինակ, Կոստանդնուպոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպան Յոհան Պալլավիչինին հաղորդում էր Վիեննա, որ այն հարուցել է սադրագամ (վարչապետ) Սայիդ Հալիմ փաշայի անթաքույց գայրույթը<sup>1</sup>: 1915 թ. հունիսի 7-ին Մորզենթաուի օրագրային գրառումը ևս փաստում է այն «չափազանց գրգռված» վիճակը, որում Հայտարարագրին ծանոթանալուց հետո գտնվել է Սայիդ Հալիմը<sup>2</sup>:

Կարելի է ենթադրել, որ կառավարության անդամներից Հայտարարագրին առաջինը ծանոթացել է Թալեաթը, որը, նախկինում լինելով փոստային ծառայող և հեռագրիչ, ըստ ականատեսների վկայությունների, նույնիսկ իր կուսակիցների հետ իշխանությունը զավթելուց հետո չէր մոռացել հեռագրիչի մասնագիտությունը և իր տանը տեղադրել էր հեռագրական սարք<sup>3</sup>: Նրա մերձավոր՝ Օսմանյան կայսրության և «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավար գործիչ Հալիլ փաշան<sup>4</sup> իր հուշերում վկայում է, որ ցեղասպանական գործողությունների ընթացքը Թալեաթը հաճախ ղեկավարում էր այդ հեռագրական սարքի միջոցով<sup>5</sup>: Բացի դրանից, մայրաքաղաքում ստացվող բոլոր պաշտոնական հեռագրերը նախ հանձնում էին Թալեաթին և միայն դրանից հետո ուղարկում հասցեատերերին<sup>6</sup>:

Հետաքրքիր է, որ այդ ոճրագործն իրականում շատ լավ էր գիտակցում պատասխանատվության իր ահռելի բաժինը: Այդ մասին է վկայում Թալեաթի բացառիկ խոստովանությունը, որի մասին իր հուշերում հիշատակում է Հալիլը: Ըստ վերջինիս հավաստման, ի նկատի ունենալով հայերի տեղահանությունը, Թալեաթը խոստովանել է, որ այդ մասին վերջնական որոշումն ինքն է կայացրել<sup>7</sup>:

Մակայն Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունից հետո գրի առած իր հուշագրություններում, որոնք նպատակ ունեին առաջին հերթին մոլորության մեջ գցել համաշխարհային հասարակական կարծիքը, Թալեաթը փորձում է հայերի տեղահանությունը ներկայացնել որպես հարկադրաբար իրականացված միջոցառում՝ ի պա-

---

<sup>1</sup> Pallavicini – an Baron Burian, Constantinopel, an 18. Juni 1915. – K. u K. – Dokumente: Armenien in Österreichischen Archiven (Fotokopien). Band II: 1915 – 1917. Herausgeber: Artem Ohandjanian, S. 884.

<sup>2</sup> United States Diplomacy on the Bosphorus: The Diaries of Ambassador Morgenthau 1913-1916, Compiled with an introduction by Ara Sarafian, Princeton and London, 2004, p. 249.

<sup>3</sup> Տե՛ս Ambassador Morgenthau's Story, p. 21.

<sup>4</sup> Հետագայում ընդունել է Մենթեշե ազգանունը:

<sup>5</sup> [Halil Menteşe], Osmanlı Mebusan Meclisi Reisi Halil Menteşe'nin anıları. Giriş: İsmail Arar, İstanbul, 1986, s. 216.

<sup>6</sup> Ambassador Morgenthau's Story, p. 332.

<sup>7</sup> Տե՛ս [Halil Menteşe], նշվ. աշխ., էջ 216:

տասխան նրանց կարծեցյալ համընդհանուր ապստամբության<sup>1</sup>:

Ամեննին պատահական չէր, որ Հայտարարագիրը, ըստ երևույթին, Թալեաթի մոտ առաջացրել էր մտավախություն, որ հայ ժողովրդի դեմ իրագործված ոճրագործությունների ամբողջ մեղքն Անտանտի երկրները հետագայում կվերագրեն միայն իրեն: Փորձելով խուսափել դրանից՝ նա նախաձեռնել է այնպիսի մի գործընթաց, որի նպատակն էր խուսափել ոճրագործության պատասխանատվությունը միայնակ կրելու հնարավոր հեռանկարից, դրան հաղորդել հավաքական բնույթ և այն բարդել կառավարության անդամների վրա<sup>2</sup>:

Այդ նպատակով Հայտարարագրի հրապարակումից մեկ օր անց՝ մայիսի 26-ին, նա գաղտնի զեկուցագրով դիմում է Սայիդ Հալիմ փաշային և պահանջում, որ իր՝ ներքին գործերի նախարարի կողմից արդեն իրականացվող հայերի տեղահանության մասին ընդունվի կառավարության հատուկ որոշում: Թուրքական պատմագրության մեջ շրջանառվում է զեկուցագրի աղճատված տարբերակը, որն ընդգրկվել էր մայիսի 30-ին կայացած Նախարարների խորհրդի նիստի արձանագրությունում<sup>3</sup>: Այդ «ավանդույթը», որի նախակարապետը Յուսուֆ Հիքմեթ Բայուրն է<sup>4</sup>, շարունակել է Հայոց ցեղասպանության վերաբերյալ թուրքական պաշտոնական տեսակետի հետևորդներից մեկ այլ կարկառուն դեմք՝ Քյամուրան Գյուրյունը՝ արտատպելով սուկ զեկուցագրի՝ Բայուրի հրատարակած աղճատված տարբերակը<sup>5</sup>:

Վերջին շրջանում թուրք հեղինակները կիրառում են մեկ այլ հնարք ևս: Նրանք հղում են Օսմանյան արխիվների Վարչապետության ֆոնդում պահվող Թալեաթի զեկուցագրի բնագիրը, սակայն խուսափում ներկայացնել փաստաթղթի ամբողջական տարբերակը և սահմանափակվում են միայն դրա որոշ դրույթների վերաշարադրմամբ: Հետաքրքիր է, որ զեկուցագրի բնագրի, ինչպես նաև դրա հայերեն թարգմանության օրինակները պահվում

---

<sup>1</sup> Talât Paşa'nın hâtıraları: Sadırazam Talât Paşa'nın tarihin bir çok gizli taraflarını aydınlatan şimdikiye kadar neşredilmemiş şahsi notları. İstanbul, 1946, s. 63-65. Հարկ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ Թալեաթի հուշագրությունները հրատարակվել են փոփոխված ու խմբագրված տեսքով, ինչը ժամանակին ընդունել է նույնիսկ թուրքական պաշտոնական պատմագրության հիմնասյուներից մեկը՝ Յու. Հ. Բայուրը: Տե՛ս **Bayur Y. H.**, *Ermeni Meselesi, Kaynaklar, II: Hatıralar. - Cumhuriyet, Salı / Cuma Kitabı*, 26.06.1998.

<sup>2</sup> Տե՛ս, օրինակ, **Bayur Y. H.**, *Türk İnkılâbı tarihi. Cilt: III: 1914 -1918: Genel Savaşı, Kısım III: 1915- 1917 vuruşmaları ve bunların siyasal tepkileri*, Ankara, 1983, s. 39; **Halaoğlu Y.**, *Die Armenierfrage, Klagenfurt*, 2006, S. 66.

<sup>3</sup> Տե՛ս արձանագրության բնագիրը՝ Meclis-i Vükelâ Müzâkerâtına Mahsûs Zabıtname: Hülasâ-i me'âli, 17 Mayıs 1331. - BOA. Meclis-i Vükelâ Mazbatası, 198/163. - <http://www.devletarsivleri.gov.tr/kitap/pdf/2/17.pdf>: Արձանագրությունից պարզ է դառնում, որ Նախարարների խորհրդի նիստում, նախքան որոշում կայացնելը, Թալեաթի զեկուցագիրն ընթերցվել է և կցվել արձանագրության՝ «Համառոտ նկարագրություն» վերնագրված առաջին բաժնին:

<sup>4</sup> Տե՛ս **Bayur Y. H.**, նշվ. աշխ., էջ 37-38.

<sup>5</sup> Տե՛ս **Gürün K.**, *Ermeni dosyası. İkinci baskı*, Ankara, 1983, s. 213-214.

են նաև Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի արխիվում<sup>1</sup>:

Այդ ուշագրավ փաստաթուղթն ամբողջությամբ հրապարակել է միայն Հ. Գ. Ղազարյանը՝ հայերեն թարգմանությամբ<sup>2</sup>: Ցավոք, նա չի ներկայացնում դրա թուրքերեն բնագիրը: Չի կարելի բացառել, որ սույն վավերագիրը եղել է Հայոց ցեղասպանությանը վերաբերող այն գաղտնի փաստաթղթերի թվում, որոնք 1921 թ. Հ. Գ. Ղազարյանը, իր իսկ հավաստմամբ, անձամբ է ընդօրինակել օսմանյան Ծովային նախարարության պաշտոնական արխիվից<sup>3</sup>:

Ծանոթությունը Թալեաթի զեկուցագրին ակնհայտ է դարձնում, թե ինչն է պատճառը, որ թուրք պատմաբանները ցանկություն չեն դրսևորում հրատարակել բնագիրն ամբողջությամբ: Այս փաստաթուղթը, չնայած այն հանգամանքին, որ պարունակում է կեղծիքների և ստերի մի ամբողջ շարան, միաժամանակ հնարավորություն է ընձեռում վերահաստատելու արևմտահայության նկատմամբ թուրքական իշխանությունների որդեգրած՝ ցեղասպանություն իրականացնելու դիտավորությունը: Հ. Գ. Ղազարյանի թարգմանությամբ այն ձևակերպված է այսպես. «Պետության կենսական ջանքերու կարգին կարևոր գործ մըն է այս մտատանջությունը, զայն հիմնական կերպով լուծելու, վերջացնելու և ամբողջապես ջնջելու<sup>4</sup> համար: Այս մասին միջոցներ պատրաստելու և պատրաստ գտնվելու մասին խորհած և նկատողության առած ենք»<sup>5</sup>: Թալեաթի օգտագործած արտահայտությունները՝ «հիմնական կերպով լուծել, վերջացնել և ամբողջապես ջնջել», անկախ իր կամքից, բացահայտում են տեղահանության իրական նպատակը: Ինչպես ի հայտ է գալիս փաստաթղթի համատեքստից, զեկուցագրի հեղինակին «մտատանջություն» էր պատճառում Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու հայ ժողովրդի ձգտումը:

Թալեաթի զեկուցագիրը քննարկվում է Նախարարների խորհրդի մայիսի 30-ի նիստում, որի ժամանակ հավանություն է տրվում հայերի՝ արդեն ընթացքի մեջ գտնվող տեղահանությանը, և ընդունվում է համապատասխան Որոշում: Այն ստորագրել են կառավարության յոթ անդամ՝ սադրազամ Սայիդ Հալիմ փաշան, ներքին գործերի նախարար Թալեաթը, պատերազմական նախարար Էնվեր փաշան, հանրային աշխատանքների նախարար Աբբաս Հալիմ փաշան<sup>6</sup>, լուսավորության նախարար Ահմեդ Շյուքրյուն<sup>7</sup>,

---

<sup>1</sup> Տե՛ս **Akçam T.**, *The Young Turks' Crime against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire*, Princeton, 2012, pp. 6-7.

<sup>2</sup> Տե՛ս **Ղազարեան Հ. Գ.**, նշվ. աշխ., էջ 328:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>4</sup> Թարգմանության հեղինակը՝ Հ. Գ. Ղազարյանը, հաշվի առնելով «ամբողջապես ջնջելու» արտահայտության կարևորությունը, փակագծերում նշել է բնագրի թուրքերեն արտահայտությունը՝ հայերեն տառերով՝ «քյուլլիյեն իզալեսի»:

<sup>5</sup> **Ղազարեան Հ. Գ.**, նշվ. աշխ., էջ 325:

<sup>6</sup> Սայիդ Հալիմ փաշայի եղբայրը:

<sup>7</sup> Հետագայում ընդունել է Բայրնդըր ազգանունը:

առևտրի նախարար Ահմեդ Նեսիմին<sup>1</sup>, արդարադատության նախարար Փիրիզադե Իբրահիմ Հայրուլլահը<sup>2</sup>:

Հաջորդ օրը Որոշման բնագիրը, առանց «Համառոտ նկարագրություն» բաժնի, պաշտոնապես կրկնօրինակվել է՝ համապատասխան նախարարություններ ուղարկվելու նպատակով: Այդ կրկնօրինակներից մեկը, որը պահվում է Գլխավոր շտաբի Ռազմական պատմության ու ռազմավարական հետազոտությունների վարչության և Գլխավոր տեսչության արխիվում, ընդգրկվել է թուրքական զինված ուժերի Գլխավոր շտաբի հրատարակած փաստաթղթերի ժողովածուում<sup>3</sup>:

Ինչպես արդեն նշեցինք, փաստաթղթի բնօրինակը հրատարակված է թուրք պատմաբանների կողմից և լայնորեն օգտագործվում է որպես ապացույց թուրքական պաշտոնական պատմագրության այն վարկածի, թե իբր տեղահանության նպատակը եղել է միայն արևմտահայության տեղահանությունը և ոչ թե զանգվածային կոտորածը: Հիրավի, դրանում մանրամասներ են նշված են հայերից բխող «վտանգները», տեղահանվածների՝ վերաբնակեցման հետ կապված մի շարք խնդիրներ, հատուկ ուշադրություն է հատկացված բնակեցման նոր տարածաշրջաններում նրանց կյանքի կազմակերպման, ինչպես նաև հայրենի բնակատեղիներում լքված գույքի հարցերին և այլն<sup>4</sup>: Որոշման շատ դրույթներ ակնհայտորեն հետապնդում էին տեղահանության գործընթացի վրա ոչ թե իրական ներգործություն ունենալու նպատակ՝ արտաքուստ կամ ընդամենը ձևականորեն հաղորդելով դրան կարծեցյալ կազմակերպված բնույթ, այլ ստեղծում էին, ըստ Թալեաթի և նրա հանցակից գործընկերների, իրավական այնպիսի մի դաշտ, որը նրանց հնարավորություն կընձեռեր խուսափել հայ ժողովրդի բնաջնջումը տեղահանության քողի տակ իրականացնելու պատասխանատվությունից:

Սակայն «լիովին ոչնչացնել ու վերացնել» (*“imhâ ve izâlesi kat‘iyyen muktezî”*) արտահայտությունն ի հայտ է բերում ոչ միայն Օսմանյան կայսրության բարձրագույն ղեկավարության բուն նպատակները, այլև ժամանակակից ցեղասպանագիտության հայեցակարգային մոտեցումների շրջանակում հնարավորություն է տալիս բացահայտելու նրա՝ տեղահանության շղարշով ցեղասպանություն իրականացնելու դիտավորությունը (*intent*)<sup>5</sup>:

---

<sup>1</sup> Հետազայում ընդունել է Սայման ազգանունը:

<sup>2</sup> Տե՛ս Որոշման բնագրում Meclis-i Vükelâ Müzâkerâtına Mahsûs Zabıtınâme: Hülasâ-i me’âlî, 17 Mayıs 1331. - BOA. Meclis-i Vükelâ Mazbatası, 198/163. - <http://www.devletarsivleri.gov.tr/kitap/pdf/2/17.pdf>:

<sup>3</sup> Arşiv belgeleriyle ermeni faaliyetleri, 1914-1918 Cilt I (1914-1915), Genelkurmay ATASE ve Genelkurmay Denetleme Başkanlığı yayınları, Ankara, 2005, s. 427.

<sup>4</sup> Ավելի մանրամասն տե՛ս սույն հոդվածին կցված «Որոշման» բնագրի հայերեն թարգմանությունում:

<sup>5</sup> Դիտավորության հանգամանքի նշանակությանը մանրամասն անդրադարձել ենք մեր վերը հիշատակված գրքի «Տեսական հիմնադրույթներ» գլխում: Տե՛ս **Սաֆրասոյան Ռ.**,

Գիտակցելով այդ վտանգը՝ թուրք հեղինակները դիմում են մի շարք հնարքների, որոնց նպատակն է քողարկել վերը նշված արտահայտության իմաստը և խեղաթյուրելով այն՝ մոլորության մեջ ձգել ընթերցողին: Այսպես, օրինակ, թե՛ պաշտոնական թուրքական պատմագրության «դասականներ» Բայուրն ու Գյուրյունը և թե՛ նոր սերնդի ներկայացուցիչները, իրենց աշխատություններում հրատարակելով «Որոշման» օսմաներեն բնագիրը, միահամուռ խուսափում են ճշգրտորեն թարգմանել “imhâ ve izâlesi kat‘iyyen muktezi” արտահայտությունը ժամանակակից թուրքերենի՝ չվարանելով երբեմն օգտագործել ժամանակակից թուրքերենին սիրապետողների համար անհասկանալի օսմաներեն բառերի թարգմանություններ<sup>1</sup>:

Նման հնարքը, անտարակույս, կարելի է բնութագրել որպես բավական «նուրբ»: Մակայն պաշտոնական պատվեր կատարող թուրք հեղինակները դրանով չեն սահմանափակվում: Զինված ուժերի գլխավոր շտաբի հրատարակած փաստաթղթերի ժողովածուն կազմողները<sup>2</sup> գնում են ավելի հեռուն և դիմում ակնհայտ կեղծիքի: Այդ ժողովածուում զետեղված են «Որոշման» կրկնօրինակի ժամանակակից թուրքերեն և անգլերեն թարգմանությունները, որոնց հեղինակները փորձել են «մեղմացնել» մեզ հետաքրքրող արտահայտության իմաստը: Թուրքերեն թարգմանությունում օգտագործված է “etkili bir şekilde bertaraf edilmesi mutlak surette gerekli olup” արտահայտությունը, որը կարելի է թարգմանել իբրև «բացարձակ անհրաժեշտություն է ներգործուն ձևով չեզոքացնելը»: Ակնհայտ է, որ այս թարգմանության հեղինակները<sup>3</sup> խուսափել են ճշգրտորեն վերարտադրել բնօրինակի “imhâ ve izâlesi”՝ «նչնչացնել ու վերացնել» արտահայտության իմաստը:

Անգլերենի թարգմանիչները, որոնք ակնհայտորեն օգտվել են ոչ թե օսմաներեն բնագրից, այլ թուրքերեն թարգմանությունից, վերը նշված արտահայտությունն անվարան կրճատել են և այն ներկայացրել իբրև “ought to be eliminated effectivety”<sup>4</sup>, որին ընդհանուր առմամբ համարժեք է «արդյունավետորեն պետք է վերացվի» հայերեն թարգմանությունը: Դրանով իսկ նրանք ավելի են հեռացել բուն բնագրից:

Համեմատենք Նախարարների խորհրդի ընդունած որոշման օսմաներեն

---

Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), էջ 20-43:

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, **Bayur Y. H.**, նշվ. աշխ., էջ 41-43; **Gürün K.**, նշվ. աշխ., էջ 214-215; **Akgündüz A.**, *Ermeni katliamı mı? Ermeni Tehciri mi?*, Yeni Türkiye, 2001, ocak-şubat, yıl 7, sayı 37; *Ermeni Sorunu özel sayısı I*, s. 361-362; **Demirel M.**, *Ermeni tehciri ve alınan tedbirler*, Yeni Türkiye, 2001, ocak-şubat, yıl 7, sayı 37; *Ermeni Sorunu özel sayısı I*, s. 400-401.

<sup>2</sup> Նրանց թվում է, օրինակ, Հայոց ցեղասպանության պատմության տխրահռչակ կեղծարար, Թուրքական պատմական ընկերության նախկին նախագահ Յուսուֆ Հալաջօղլուն:

<sup>3</sup> Ժողովածուում նշված են թարգմանիչների անունները, սակայն չի պարզաբանվում, թե կոնկրետ ո՞վ է բնագրի թուրքերեն թարգմանության հեղինակը:

<sup>4</sup> *Arşiv belgeleriyle ermeni faaliyetleri, 1914-1918 Cilt I (1914-1915)*, Genelkurmay ATASE ve Genelkurmay Denetleme Başkanlığı yayınları, s. 134.

բնագիրն անզլերեն թարգմանության հետ: Բնագրում նշված է՝ «լիովին ոչնչացնել ու վերացնել». անզլերեն թարգմանության մեջ կարդում ենք՝ «արդյունավետորեն պետք է վերացվի»: Իմաստի փոփոխությունն ակնհայտ է: Այն է՝ կատարվել է կեղծիք:

Այսպիսով, պարզ է դառնում, որ հրատարակելով Նախարարների խորհրդի «Որոշման» բնագիրը՝ թուրք պատմաբանները փորձում են ոչ մասնագետների համար ամեն կերպ դժվարըմբռնելի դարձնել դրա բուն իմաստը: Հրապարակելով այդ փաստաթուղթը՝ նրանք ձգտում են ոչ թե Հայոց ցեղասպանության պատմության դեռևս սակավ ուսումնասիրված էջերի վրա լույս սփռել, այլ օգտագործել այն որպես լրացուցիչ «փաստարկ» տեղահանության ընթացքում հայ ժողովրդի նկատմամբ օսմանյան իշխանությունների «ցուցաբերած հոգատարության» մասին՝ կեղծ վարկածը հիմնավորելու նպատակով:

Ընդհանրացնելով նշենք, որ թուրքական պաշտոնական պատմագրության ներկայացուցիչների կողմից կոնկրետ մեկ արխիվային փաստաթղթի շուրջ ստեղծված անորոշությունների ու խարդավանքների դաշտը հարուցում է լուրջ կասկածներ և տեղիք տալիս խորհելու, որ նմանատիպ մեթոդների կիրառում կարելի է ակնկալել նաև Թուրքիայում վերջին տարիներին իրականացվող օսմանյան արխիվների փաստաթղթերի պաշտոնական հրապարակումների շատ այլ դեպքերում:

**Հավելված 1**

***Նախարարների խորհրդի քննարկումների արձանագրություն***

մվ. 198/24

Հերթական թիվ՝ 163

Ամսաթիվ

Արաբական՝ 15 Ռեջեբ տարի [1]333

Ռումի՝ 17 Մայիս տարի [1]331

***Որոշում***

Քննարկումների արդյունքում որոշվեց, որ անհրաժեշտ է լիովին ոչնչացնել ու վերացնել այն վտանգավոր շարժումը, որի նպատակն է խափանել պետության գոյության և անվտանգության պահպանման համար անձնագոհ կերպով իրականացվող միջոցառումները և կարգավորումները: Վերոնշյալ նախարարության կողմից այդ ուղղությամբ սկսված միջոցառումները, ակնհայտորեն, ճիշտ են: Վերոհիշյալ զեկուցագրում նշված գյուղերում ու քաղաքներում բնակվող հայերից նրանք, որոնք ենթակա են տեղահանման, պետք է բարեհաջող տեղափոխվեն ու հասնեն



այն վայրերը, ուր նրանք պետք է ուղարկվեն: Ճանապարհին գտնվելու ընթացքում պետք է ապահովել նրանց հանգստությունը և պաշտպանել նրանց կյանքն ու ունեցվածքը: Նախատեսված վայրերը հասնելուն պես՝ մինչև վերջնականապես տեղավորվելը, գաղթականների համար նախատեսված հատկացումներից կապահովվի նրանց սնունդը, համապատասխան նախապես ունեցած գույքի ու տնտեսական վիճակի նրանց կրթամակարձի անշարժ գույք և հող: Կարիքավորների համար կառավարությունը կացարաններ կկառուցի, հողագործներին և կարիք ունեցող արհեստավորներին սերմեր ու գործիքներ կբաժանվեն: Լքված վայրերում նրանց թողած ունեցվածքը և իրերը կամ վերջիններիս արժեքը համապատասխան ձևով նրանց կվերադարձվեն: Ազատված գյուղերը կբնակեցվեն գաղթականներով և աշիրեթներով, նրանց կրթամակարձի անշարժ գույք և հող՝ արժեքը գնահատելուց հետո: Ազատված քաղաքներից ու գյուղաքաղաքներից տեղահանված բնակչությանը պատկանող անշարժ գույքը կցուցակագրվի և նրա տեսակը, արժեքն ու քանակը որոշելուց հետո կբաժանվի գաղթականներին: Շահույթ ապահովող ձիթենու, թթենու, խաղողի ու նարնջենու այն այգիները, ինչպես նաև խանութները, իջևանատները, գործարաններն ու պահեստատները, որոնք չեն համապատասխանում գաղթականների հետաքրքրություններին կամ զբաղմունքներին, աճուրդի միջոցով կվաճառվեն կամ կտրվեն վարձակալության: Այդ միջոցով ստացված ամբողջ գումարը գույքի տերերի անունով ժամանակավորապես կփոխանցվի գանձարան՝ նրանց տրամադրելու նպատակով: Նշված գործողությունները և միջոցառումները ֆինանսավորելու նպատակով կատարվելիք ծախսերը կհատուցվեն գաղթականների համար նախատեսված միջոցներից՝ վերոնշյալ նախարարության կողմից նախապատրաստած Կարգադրությունների բոլոր դրույթների կատարմամբ: Լքյալ գույքի պահպանումը, կառավարումը, վերաբնակեցման ընդհանուր հսկողությունը, կարգավորումը, ուսումնասիրումը և վերաքննումը, ինչպես նաև այդ ուղղությամբ Կարգադրությունների դրույթների և վերոնշյալ նախարարությունից ստացվելիք և նրա կողմից ընդունվելիք հրամանների շրջանակում որոշումների ընդունումն ու կատարումը կապահովվեն ներքին գործերի նախարարության անմիջական ենթակայության տակ գտնվող ենթահանձնաժողովների ստեղծումով, որոնց անդամները կլինեն վարձատրվող պաշտոնյաներ: Այդ ենթահանձնաժողովները կազմված կլինեն նախագահից և երկու անդամից: Նրանցից մեկը կընտրվի և կնշանակվի ներքին գործերի նախարարության կողմից, իսկ մյուսը՝ ֆինանսների նախարարության կողմից: Նպատակահարմար գտնվեց, որ տեղերում նշված Կարգադրությունների իրագործումը դրվի նահանգապետների վրա: Այս որոշման մասին տեղյակ կպահվի վերոնշյալ նախարարությանը և համապատասխան գերատեսչություններին:



<p>Յեռնակ</p>	<p align="center"><b>ՄԱՅՐՈՒՄԻ ԳՐԱԴԱՐԱՆ</b></p> <p align="center"><b>ՄԱՅՐՈՒՄԻ ԳՐԱԴԱՐԱՆ</b></p> <p align="center"><b>ՄԱՅՐՈՒՄԻ ԳՐԱԴԱՐԱՆ</b></p>	<p>Վերջին համար 164</p>
<p>Գրքի անունը և հեղինակը</p> <p>Մալուխյան Գրքերի Գրքարան</p>		<p>Գրքի անունը 16</p>
<p align="center">Փոստային հասցե</p>		
<p>Մալուխյան Գրքերի Գրքարանը հիմնադրվել է 1918 թ. Երևանում և իր անցած տարիներում զբաղվել է հայ գրականության և հայ մշակույթի պահպանմամբ և արտադրմամբ։ Գրքարանը հիմնականում զբաղվում է հայ գրականության և հայ մշակույթի պահպանմամբ և արտադրմամբ։ Գրքարանը հիմնականում զբաղվում է հայ գրականության և հայ մշակույթի պահպանմամբ և արտադրմամբ։</p>		
<p align="center">Տարի</p>		
<p>Մալուխյան Գրքերի Գրքարանը հիմնադրվել է 1918 թ. Երևանում և իր անցած տարիներում զբաղվել է հայ գրականության և հայ մշակույթի պահպանմամբ և արտադրմամբ։ Գրքարանը հիմնականում զբաղվում է հայ գրականության և հայ մշակույթի պահպանմամբ և արտադրմամբ։ Գրքարանը հիմնականում զբաղվում է հայ գրականության և հայ մշակույթի պահպանմամբ և արտադրմամբ։</p>		



توصیه صانع توبیخ ضمیمه نامه رسالت الایمان تنظیم ایشان اولیای تعلیمات نام نهادیم تمامای طبیعه احکامیه اموره ترک نمودن نامیده  
 محاطه اداره سه و معالده عمومی اسکانه نیک تسبیح و تطبیح و تزیین و تقیه و تقصیر و بوی مخصوصه تعلیمات نام نهادیم و نه رسالت  
 رسالت الایمانه اخذ و تلقین ایام حیات ادار ذره شده مقررات اتحاد و تطبیق و تالیق قریب سونتر تشکیل ایام معانی مأمور است و این  
 وظیفه و صلاحیت های حار اولیه و طوفان طوغری به راجعه نفع نه مربوط بولونه در بر سر ایام بری مأمور به اخذ و نه و در  
 مأمور به مگر نه بخانه و تصدیق ایام حیات ایام اعضا در ترکیه ایام از زره قریب سونتر تشکیل ایام در کلله اعراض و قریب سونتر  
 گویند بلی به کلله در مذکور تعلیمات نام نهادیم و لیدر طرح اجرای احکام سبب ایشان اولیای تعلیمات جوینا نفع رسالت الایمان  
 و ذوات متعلقه مقررات اعراض ترک گفته .



**Ruben Safrastyan - *The Decision of the Ottoman Government on the Removal of the Armenians (1915, May 30)***

In recent years, in order to falsify the historical truth, some archival documents concerning the theme of the Armenian Genocide have been published in Turkey. However, in the publications of the kind it is possible to come across such documents, which, against the wishes of publishers throw light on the true goals of the Ottoman authorities – organizers and executors of the Armenian Genocide.

In this respect, the origin of the May 30, 1915 resolution of the Ottoman government on violent expulsion of the Armenians has an important role, which reveals the real purpose of the expulsion of the Western Armenians, i.e. “to fully exterminate and liquidate” the seeming “dangerous movement” of the Armenians and not to resettle in the regions of the Empire far from the Russian front.

The article discusses the prehistory and the objectives of making that decision, its background, it also shows what tricks the representatives of modern official Turkish historiography use in order to screen the passage cited above.

**KRIKOR ZOHRAB ET LES JEUNES-TURCS :  
LA TRAHISON DE L'IDÉAL OTTOMAN**

La nature complexe des relations entre les élites jeunes-turques et arméniennes a rarement fait l'objet d'études. Elle semble même n'avoir guère intéressé les chercheurs, bien que l'examen de ces liens, d'une certaine communauté de pensée des deux élites, pourraient apporter bien des éclaircissement sur leur évolution par rapport à la question dominante du temps, à savoir le choix d'un modèle de développement politique pour l'Empire ottoman, entre un État-nation centralisateur ou un État décentralisé pluri-ethnique.

Traiter de ce phénomène à travers un membre des élites arméniennes, Krikor Zohrab (1861-1915), est certes réducteur, mais permettra cependant de cerner au plus près les positions adoptées par les deux cercles face aux question les plus brûlantes.

Le choix de cet avocat, qui a vécu à Constantinople durant toute la période hamidienne – sur le point d'être arrêté et exclu du barreau d'Istanbul, il s'est enfui à Paris et n'a finalement connu qu'une brève période d'exil, durant le premier semestre de 1908 –, contrairement à beaucoup d'autres membres de ces élites, nous a été dicté par sa personnalité multiformes : juriste, écrivain, directeur de journal, avocat des révolutionnaires macédoniens et albanais, ou encore de militants de l'opposition sous le régime d'Abdülhamit II, député au Parlement ottoman de 1908 à 1915 et personnage central de la vie politique arménienne, sans être affilié à un parti politique, il incarne l'élite ottomane qui a travaillé de l'intérieur à mettre un point final à un système ottoman ne répondant plus au besoin du temps. Le fait qu'il ait laissé un *Journal*, minitueusement tenu jusqu'à l'été 1915, n'est pas non plus le moindre des avantages.

Aux premiers jours de la révolution de juillet 1908, il se veut, selon ses propres termes, un « trait d'union entre les milieux conservateurs et les militants arméniens issus des partis révolutionnaires ». Rentré d'exil le 2 août, Krikor Zohrab annonce dès le 5 qu'il souhaite fonder un Club Constitutionnel Ottoman. Le 13 août, ce même Club improvisé organise une réunion publique dans les jardins de Taksim : 50.000 personnes, de toutes origines, assistent à ce meeting au cours duquel Zohrab s'exprime en turc et soulève l'enthousiasme de la foule lorsqu'il déclare : « Notre religion commune, c'est la liberté »<sup>1</sup>.

A l'époque qui nous occupe, Zohrab apparaît aussi très vite aux côtés des principaux chefs jeunes-turcs, Ahmet Rıza et le Dr Bahahettin Şakir, notamment à l'occasion du retour d'exil du prince Sabahettin dans la capitale ottomane, le 2 septembre 1908<sup>2</sup>.

---

<sup>1</sup> Շարուրյան Ա. Ա., Գրիգոր Զոհրապի կյանքի և գործունեության տարեգրություն, Էջմիածին, 1996, էջ 155-156: D'après la presse stambouliote du 14 août et sa correspondance.

<sup>2</sup> Սապահ-Գիլեան Ա., Պատասխանատուները, Փրավիտենս, 1916, էջ 150-151:

On a quelques indications sur la manière dont on accueille la révolution en milieu arménien à l'occasion d'une conférence organisée le 30 août au collège Sahagian de Samatia sur le thème de la « Révision de la Constitution ». Zohrab s'y exprime cette fois en arménien et souligne la nécessité qu'il y a à refondre profondément la Constitution qui ne répond plus aux besoins du temps<sup>1</sup>.

Dans la nouvelle donne, le pouvoir au sein du *millet* est dorénavant partagé par les milieux conservateurs et les militants rentrés d'exil, dont les partis sont officiellement enregistrés. Cette cohabitation n'est évidemment pas sans heurts, deux cultures politiques s'affrontant. La nouvelle donne se trouve illustrée par la personnalité des deux députés arméniens de la capitale désignés lors des premières élections de l'ère constitutionnelle : Krikor Zohrab et Bédros Haladjian, qui ne sont pas membres de la Fédération Révolutionnaire Arménienne, le second étant même membre du CUP<sup>2</sup>.

Lorsque la Chambre nationale arménienne rouvre ses portes le 3 octobre 1908, après trente ans d'interdiction, elle a quatre vingts représentants. Au sein du nouveau Conseil politique, dirigé par le libéral Stépan Karayan, on trouve deux membres des directions dachnak et hentchak, Haroutiun Chahrikian et Mourad (Hampartsoum Boyadjian), ainsi que l'incontournable Krikor Zohrab. Lors de la séance du 17 octobre, ce dernier présente à la Chambre, au nom du Conseil politique, un rapport sur la situation générale dans les provinces orientales où les effets de la révolution se font attendre. Pour rétablir la situation, Zohrab propose : la constitution d'une mission d'enquête mixte, turco-arménienne, avec pouvoir exécutif ; le renvoi des *vali* et officiers hamidiye coupables d'exactions ; le jugement des pillards et assassins devant une cour de justice d'Istanbul ; la restitution des terres confisquées à leurs propriétaires durant l'ère hamidienne ; l'attribution aux exilés souhaitant rentrer dans leurs villages de droits et d'exonérations similaires à ceux attribués aux *muhacir* ; l'interdiction aux bey et aux ağa de continuer à rançonner les paysans arméniens ; attribution d'une aide aux populations au bord de la famine en blé et en semences<sup>3</sup>.

Cela dit, la quinzaine de députés arméniens élus au Parlement ottoman s'est essentiellement occupée de questions d'intérêt général, sans jamais évoquer les questions liées au monde arménien<sup>4</sup>. On note par exemple que Krikor Zohrab a joué un rôle fondamental au sein de la commission chargée de préparer le projet de loi visant à la réforme des tribunaux ; que Garo (Karekin Pastermadjian), ingénieur de formation, a travaillé sur le projet « Chester » de ligne de chemin de fer reliant Istanbul à la frontière iranienne ; que le D<sup>r</sup> Vahan Papazian a lui-même œuvré à la réforme du système scolaire et à sa « laïcisation » ; que le D<sup>r</sup> N. Daghavarian, médecin et agronome, a élaboré l'essentiel de la loi fondamentale destinée à favoriser le

---

<sup>1</sup> Շարություն Ա. Մ., op. cit., p. 159-160.

<sup>2</sup> Il est intéressant de noter que la candidature des deux hommes a été présentée par le Club constitutionnel ottoman, au cours d'un vote à bulletin secret, organisé le 18 septembre, au sein du Club : Շարություն Ա. Մ., op. cit., p. 163. Il faut par ailleurs noter que dans un premier temps le patriarche s'est vainement mêlé de l'établissement des règles de désignation des candidats arméniens.

<sup>3</sup> Ատենադրութիւնը Ազգային ժողովոյ: Վերաբացում 1908-09 նստաշրջանի, Կ. Պոլիս, 1909, էջ 39, 49-54:

<sup>4</sup> Փափազյան Վ., Իմ յուշերը, հ. երկրորդ, Պէրոպ, 1952, էջ 101: Nous avons observé que la représentation arménienne avait opté pour des négociations directes avec le gouvernement, voire avec le Comité central jeune-turc, pour éviter d'emblée des tensions au sein du Parlement, où les milieux conservateurs, notamment de province, étaient nombreux à avoir été élus sur les listes du CUP.

développement de l'agriculture et une autre visant à la réforme du système de santé et à l'amélioration de l'hygiène<sup>1</sup>. Tout cela montre dans quel état d'esprit – ce qui est bon pour le pays est bon pour nous – les députés représentants du *millet* arménien travaillent, sans arrière-pensée, à la réforme de l'empire. L'action parlementaire de Zohrab est à cet égard exemplaire<sup>2</sup>. Bien que contesté par certains milieux conservateurs, qui lui reprochent de ne connaître de la « vie nationale que son aspect littéraire »<sup>3</sup>, celui-ci devient le porte-parole et l'animateur du groupe des députés arméniens. On note que pour aller à la séance inaugurale du Parlement, Zohrab doit d'abord, sans doute pour marquer à quel parti il doit son élection, se rendre au siège du CUP, rue Nuri Osmaniye, d'où il part en voiture, aux côtés de Mustafa Asim<sup>4</sup>, un magistrat jeune-turc. On observe aussi qu'il siège au côté de Hüseyin Cahit, rédacteur en chef du journal jeune-turc *Tanin*<sup>5</sup>. La première intervention de l'avocat arménien devant le Parlement, dès le 24 décembre, illustre le « malentendu » qui va aller grandissant entre les députés arméniens et jeunes-turcs. Zohrab a dénoncé l'élection manifestement entachée d'irrégularité d'un certain Serdatzâde Mustafa, connu dans sa circonscription de Şabinkarahisar comme brigand et assassin. Mais il s'est fait rabrouer par ses collègues, que les antécédents de l'accusé ne semblent pas avoir choqués<sup>6</sup>.

Dans les cercles stambouliotes, on observe douloureusement qu'aucun député n'a soutenu la position de l'avocat, alors que tous savaient combien Serdatzâde Mustafa était lourdement impliqué dans les massacres de novembre 1895 dans sa région d'origine. À travers ce premier incident s'exprime déjà, mais encore sur un ton modéré, un reproche qui revient régulièrement dans les débats : les députés musulmans des provinces orientales, élus sur les listes du CUP, sont souvent d'anciens partisans du régime hamidien, plus ou moins impliqués dans les massacres des années 1894-1896. Les rumeurs, apparemment infondées, de menaces de mort visant Zohrab, illustrent en tout cas les premiers signes de tension<sup>7</sup>.

Dans le contexte du temps, la nomination de Zohrab comme professeur de droit

---

<sup>1</sup> Ibid., pp. 99-100.

<sup>2</sup> Celui-ci a vu dans un premier temps sa candidature barrée par le CUP (Բիւզանդիոն, թիվ 3700, 8-ը դեկտեմբերի 1908, էջ 1). Mais, devant l'insistance du Conseil politique et après une entrevue de son président, Stépan Karayan, avec « une personnalité importante » du siège stambouliote du CUP, le 6 décembre, les Jeunes-Turcs ont levé leur véto (Բիւզանդիոն, թիվ 3701, 9-ը դեկտեմբերի 1908, էջ 1). Dans son n° daté du 9 décembre, l'organe du CUP, Şûra-yı Ümmet, annonce que deux candidats Arméniens sont sur la liste du Comité pour les élections dans la capitale.

<sup>3</sup> Sous la plume du rédacteur en chef, Puzant Kéitchian (տե՛ս Բիւզանդիոն, թիվ 3706, 15-ը դեկտեմբերի 1908, էջ 1).

<sup>4</sup> Laze natif de Şoppa, magistrat en poste à Damas, Salonique, Skopié (Uskub) comme président du tribunal pénal ; après 1908, membre du CUP, inspecteur judiciaire à Salonique et vali intérimaire du Kosovo ; a fait de fréquents séjours comme propagandiste du CUP au Lazistan ; directeur des Affaires criminelles au ministère de la Justice ; membre de la commission de nomination des magistrats ; chargé d'enquêter sur les « abus » commis durant la Première Guerre à l'encontre des Arméniens ; président de la cour criminelle et de la cour d'appel : APC/PAJ, Bureau d'information du Patriarcat arménien, E 25-34, Second Report on Turks Responsible for the Armenian Atrocities.

<sup>5</sup> Hüseyin Cahit bey [Yalçın] (1874-1957), député de la capitale, vice-président du Parlement (1914-1916), puis président, membre du comité central jeune-turc, un des principaux propagandistes de son parti, rédacteur de *Tanin*, interné à Malte en 1919.

<sup>6</sup> Բիւզանդիոն, թիվ 3714, 24-ը դեկտեմբերի 1908:

<sup>7</sup> Ժամանակ, թիվ 54, 29-ը դեկտեմբերի 1908:

pénal à l'école de Droit d'Istanbul, dès novembre 1908, illustre toutefois l'ouverture d'une partie de la société ottomane. Pour sa leçon inaugurale, le 20 novembre 1908, plus de sept cents étudiants, désertant les autres salles de cours, envahissent l'amphithéâtre<sup>1</sup>.

Une interview donnée fin décembre 1908 par Zohrab au correspondant d'un journal bulgare permet de préciser le regard qu'il porte sur l'archaïsme de la vie politique ottomane. Le député y déplore en effet l'absence de groupes politiques organisés, dans lesquels « les nationalités pourraient se fondre », plutôt que de travailler en blocs nationaux antagonistes. Les députés arméniens, dit-il, souhaitent « avant toute chose travailler dans l'intérêt général de l'empire. Les intérêts particuliers de la nation arménienne viendront après »<sup>2</sup>. On le voit ainsi intervenir à la tribune du Parlement le 21 janvier 1909, pour réclamer une commission d'enquête sur les conditions de construction de la ligne de chemin de fer du Hedjaz, car il semble qu'il y ait eu de lourdes malversations dans la gestion du projet<sup>3</sup>. En d'autres circonstances, il suggère au gouvernement d'élaborer un budget prévisionnel, que le Parlement devrait voter, d'instaurer une véritable politique fiscale, etc.

Les explications données lors de la séance du 13 février 1909, au cours de laquelle un vote de défiance du Parlement met fin à l'existence du cabinet Kâmil pacha (formé le 5 août 1908) ont également suscité une intervention de Zohrab qui a mis dans l'embarras ses collègues jeunes-turcs. Chacun sait en effet que le Comité central de l'Union et Progrès a souvent excédé le grand vizir par ses interventions continuelles dans les affaires du gouvernement, engendrant une tension permanente entre les deux sources du pouvoir.

La position adoptée par les députés arméniens lors de la « réaction du 31 mars » (13 avril 1909) marque encore leur volonté de trouver une solution pacifique et surtout de tout faire pour éviter une restauration de l'ancien régime. Lors de sa séance du 17 avril, le Parlement ottoman décide d'envoyer une délégation à Çatalca, auprès des troupes de Roumélie menées par Mahmut Şevket pacha, pour l'informer que les mutins ont regagné leurs campements et qu'une intervention militaire est désormais inutile et provoquerait à coup sûr un bain de sang inutile. Yusuf Kemal, Krikor Zohrab et Vartkès Séringulian sont désignés pour mener à bien cette conciliation qui reste néanmoins sans effet<sup>4</sup>.

Les massacres qui surviennent dans le même temps en Cilicie, faisant environ 25.000 victimes – ne manquent cependant pas de brouiller les pistes. Il est clair que les élites arméniennes sont d'abord restées dubitatives face à ces violences ne rappelant que trop l'ancien régime, puis médusées en entendant les réactions des autorités, dans le droit fil de la culture politique hamidienne. Une fois de plus, c'est à Zohrab qu'est revenu la responsabilité, quelques semaines plus tard, d'exprimer devant le Parlement le sentiment des cercles arméniens : « Le gouvernement reste fidèle aux vieilles traditions en niant les faits qui se sont produits, comme dans le cas des événements d'Adana, où il a longtemps réfuté le nombre des victimes qui a pourtant été confirmé par des

---

<sup>1</sup> Բիւզանդիոն, թիվ 3686, 21-ը նոյեմբերի 1908:

<sup>2</sup> Շամանակ, թիվ 61, 6-ը հունվարի 1909:

<sup>3</sup> Բիւզանդիոն, թիվ 3736, 22-ը հունվարի 1909:

Վանգենհայմի մոտեցումը սկզբից նեթ որդեգրեց նաև նրա կառավարությունը, որը, մի կողմից հիմք ընդունելով Բարձր Դռանը դեսպանի ներկայացրած վերոնշյալ ամուլ առարկությունները, հայտարարում էր, թե հայերի դրությունը բարելավելու համար անում էր հնարավոր ամեն բան և մյուս կողմից բացառում էր Գերմանիայի կոշտ միջամտության հնարավորությունը՝ պնդելով, թե դա կհանգեցնե՞ր դաշինքի խզմանը: Ներկայումս հրապարակված փաստաթղթերը, սակայն, փաստում են, որ կոշտ միջամտության դեպքում գերմանա-թուրքական դաշինքի լուծարման՝ պաշտոնական Գերմանիայի վերոնշյալ պատճառաբանությունը միանգամայն սնանկ էր: Դրա լավագույն ապացույցը Թուրքիայում գերմանական ռազմական առաքելության ղեկավար գեներալ Լիման ֆոն Սանդերսի վարքագիծն է, որը 1916 թ. նոյեմբերին զենքի գործադրման սպառնալիքով թուրքական իշխանություններին արգելել է աքսորել Չմյուռնիայի հայ բնակչությանը՝ դա հիմնավորելով հենց նույն ռազմավարական նկատառումներով, որոնց քաղաքական շահարկմամբ երիտթուրքերն իրականացնում էին հայերի բնաջնջումն ու տեղահանությունը: «Նոյեմբերի 10-ի առավոտյան ես 5-րդ բանակի շտաբի պետին՝ գնդապետ Քյազիմ բեյին, ուղարկեցի կուսակալի մոտ, - նշում էր այդ առթիվ գեներալը Կ. Պոլսում գերմանական դեսպանությանն ուղղած իր տեղեկագրում, - և կարգադրեցի նրան ասել, որ այլևս չէի հանդուրժելու նման գանգվածային ձերբակալությունները և տեղահանությունները, որոնք կատարվելու էին թշնամու սպառնալիքի տակ, ռազմական տարածաշրջանում գտնվող մի քաղաքում, իսկ եթե, այնուամենայնիվ, ոստիկանությունն այդ միջոցառումները շարունակեր, ապա ես իմ ենթակայության տակ գտնվող զորամասերի միջոցով դրանք արգելելու էի: Ես կուսակալին մինչև կեսօր ժամանակ տվեցի վճիռ կայացնելու համար: Չմյուռնիայում հրամանատարող գեներալ Թրոմերին, որն արդեն իրազեկ էր իրադրությանը, ես մայրը Պրիդգեի միջոցով ծանուցեցի վերոնշյալի և անհրաժեշտության դեպքում ձեռնարկվելիք միջոցառումների մասին: Մոտավորապես կեսօրվա ժամը 1.30-ին մայրը Քյազիմ բեյը կուսակալի մոտից (որը Բուռնաբաղում էր) վերադարձավ և ինձ հայտնեց, որ ձերբակալություններն ու տեղահանությունները դադարեցվել էին և այլևս չէին շարունակվելու»<sup>1</sup>:

Եթե այդ բարձրաստիճան զինվորականը սեփական նախաձեռնությամբ կարողացավ դա անել, ապա ինչպիսի նշանակալից արդյունքների կարող էր հանգեցնել գերմանական կառավարության ազդեցիկ ճնշումը: Հատկանշա-

---

Վանգենհայմը սրտի նույնպե՛ս է ունեցել, որը կրկնվել է նաև երկու օր անց՝ դառնալով նրա մահվան պատճառը:

<sup>1</sup> Deutschland und Armenien..., S. 312-313 (թիվ 307 փաստաթուղթը): Այդ միջադեպի վերաբերյալ այլ տեղեկություններ ստանալու համար տե՛ս նույն տեղում, էջ 310-311 (թիվ 306 փաստաթուղթը): Հմտ. **Vierbücher H.**, Was die kaiserliche Regierung den deutschen Untertanen verschwiegen hat. Armenien 1915, Hamburg, 1930, S. 75; **Lepsius J.**, Der Prozeß Teilirian-Talaat, „Der Orient“, 1921, S. 70:

կան է, ի դեպ, որ գեներալ-լեյտենանտ Լ. Ֆոն Սանդերսը, որը մինչև Թուրքիա մեկնելը Կասեղում գտնվող 22-րդ դիվիզիայի հրամանատարն էր, ժամանակակիցների վկայությամբ իր պաշտոնակիցների շրջանում ուներ կարգապահ, ինքնավստահ, ուղղամիտ և միաժամանակ մանրախնդիր, մեծամիտ, անտակտ և, ընդհանուր առմամբ, դիվանագիտական վարվեցողության հմտություններից զուրկ անձնավորության համբավ<sup>1</sup>: Ուստի պատահական չէ, որ երբ նա, ընդունելով Թուրքիայում գերմանական ռազմական առաքելությունը ղեկավարելու վերաբերյալ 1913 թ. հունիսի 15-ին կայսեր կողմից կատարված առաջարկը, մեկնեց Թուրքիա, դեսպան Վանգենհայմն այդ փաստն ընդունեց մեծ անհանգստությամբ՝ վրդովված արձանագրելով, որ ռազմական առաքելության ղեկավարի պաշտոնի համար բոլոր հավանական թեկնածուներից ընտրվել է քաղաքականապես ամենաապաշնորհը<sup>2</sup>: Ուշագրավ է նաև, որ Լ. Ֆոն Սանդերսի նշանակումից հետո ինչպես դեսպանության, այնպես և Թուրքիայի ռազմական նախարարության հետ ռազմական առաքելության փոխհարաբերություններում տևական և մեծ լարվածություն առաջացավ. վերջին իրողությունն առավելապես պայմանավորված էր Էնվերի և գեներալի միջև մշտապես առկա անձնական լարվածությամբ<sup>3</sup>:

Իրադրությունը «շտկելու» նպատակով Վանգենհայմը ձգտում էր Լ. Ֆոն Սանդերսին փոխարինել ֆելդմարշալ Կոլմար Ֆոն դեր Գոլթցով, որը դեռևս 1883-1895 թթ. որպես ռազմական կրթության կազմակերպիչ լայն գործունեություն էր ծավալել Թուրքիայում՝ 1885 թ. ստանձնելով նաև Օսմանյան պետությունում գերմանական ռազմական առաքելության ղեկավարի պարտականությունները<sup>4</sup>: 1896 թ. թուրքական մարշալի կարգավիճակով Գերմանիա վերադառնալուց հետո նա կայսրից ստացել էր նաև ֆելդմարշալի աստիճան և 1909-1913 թթ. բազմիցս մեկնել Թուրքիա՝ օսմանյան բանակի ռազմական պատրաստվածությունն ամրապնդելու նպատակով<sup>5</sup>:

Վանգենհայմի ջանքերը հաջողությամբ պսակվեցին, և 72-ամյա Ֆոն դեր Գոլթցը, որն այդ ժամանակ Բելգիայում կատարում էր գլխավոր նահանգապետի պարտականությունները, 1914 թ. դեկտեմբերին մեկնեց Կ. Պոլիս: Դեսպանը, սակայն, անկարող եղավ ռազմական առաքելության գործող ղեկավար Լ. Ֆոն Սանդերսին պաշտոնանկ անելու: Ուստի նա ձգտում էր հնարավորինս սահմանափակել նրա ազդեցության ոլորտները, և պատահական չէ, որ Ֆոն դեր Գոլթցը, որը դեկտեմբերի 12-ին արդեն Թուրքիայում էր,

<sup>1</sup> Տե՛ս **Tamcke M.**, Armin T. Wegner und die Armenier, Hamburg, 1996, S. 44:

<sup>2</sup> Տե՛ս **Wallach J. L.**, Anatomie einer Militärhilfe – die preussisch-deutschen Militärmissionen in der Türkei 1835-1939, Düsseldorf, 1979, S. 137:

<sup>3</sup> Տե՛ս **Tamcke M.**, op. cit., S. 45:

<sup>4</sup> Տե՛ս **Силин А. А.**, Германская военная миссия фон дер Гольца в 1882-1895 гг. (Из истории проникновения Германии в Турцию в конце XIX в.) // Ученые записки по новой и новейшей истории, вып. II, М., 1956, с. 318-398:

<sup>5</sup> Տե՛ս **Tamcke M.**, op. cit., S. 46.

առանց ռազմական առաքելության ենթակայության ներքո դրվելու՝ 1915 թ. փետրվարին նշանակվեց թուրքական ռազմական գլխավոր շտաբի խորհրդական և, բացի այդ, ապրիլին ստանձնեց նաև 1-ին, իսկ աշնանը՝ 6-րդ բանակի, ներառյալ նաև Պարսկաստանում ու Աֆղանստանում տեղակայված գերմանական զինված ուժերի գլխավոր հրամանատարի պարտականությունները<sup>1</sup>:

Թուրքական ազդեցությունը ֆելդմարշալի վրա, այնուամենայնիվ, այնքան էր ակնհայտ, որ, ինչպես վկայում էին ժամանակակիցները, առժամանակ անց նրա հանդեպ անվստահություն առաջացավ նույնիսկ Կ. Պոլսի գերմանական ղեկավար շրջաններում<sup>2</sup>, որտեղ նա ձեռք էր բերել «թուրքացած» անձի համարում: «Օեր զորավարին,- նշում էր Հ. ֆոն Կիսլինգը,- առաջին հերթին այն բանի համար էին պախարակում, որ նա կատարելապես թուրքացել էր և չէր կարողանում պաշտպանել գերմանական շահերը թուրքական ընչաքաղցությունից»<sup>3</sup>: Այդ անվստահության հետևանքով գերմանացի զինվորականներ էին հաճախակի ուղարկվում Բաղդադ՝ նրա մասին տեղեկագրեր պատրաստելու համար, և, բացի այդ, որպես գերմանական շտաբի պետ, նրան կցվեց նաև գեներալ մայոր Գերոլդ ֆոն Գլայխը, որի կարծիքը հաստատում էր վերոնշյալը: «Գերմանական բարձրագույն զինվորական հրամանատարությունն այն տեսակետին էր, որ թուրքերի ազդեցությունը ֆելդմարշալի վրա ավելի մեծացել էր, քան նվազել,- հաղորդում էր նա այդ առնչությամբ: - Իմ հետագա սպավորություններն անմիջապես հաստատեցին այդ կարծիքը»<sup>4</sup>:

Եթե ֆելդմարշալին թուրքական ազդեցություն էր վերագրվում նույնիսկ Գերմանիայի շահերը պաշտպանելու հարցում, ապա ավելի քան ակնբախ է, թե որքան մեծ պետք է լիներ այն հայ ժողովրդին վերաբերող խնդիրներում: Այս ամենը նկատի առնելիս հասկանալի կդառնա, որ, ինչպես 1918 թ. տեղեկացնում էր "Deutsch-Armenische Korrespondenz"-ը, ֆոն դեր Գոլթը նույնիսկ եղել է հայ ժողովրդի տեղահանության ծրագրի կողմնակիցը<sup>5</sup>, թեպետ երիտթուրքերի բուն դիտավորություններին դեռևս իրազեկ չի եղել: Հասկանալի է նաև, որ եթե ֆելդմարշալն ընդհուպ իր սեփական հրաժարականի հեռանկարով 1915 թ. դեկտեմբերին կարողացավ կանխել Մոսուլի, ինչպես նաև այնտեղ գտնվող՝ Բաղդադի հայերի տեղահանությունը, այնուամենայնիվ դա շատ էր զիջում այն ամենին, ինչ նա կարող էր անել իր հնարավորությունների սահմանում:

---

<sup>1</sup> Տե՛ս **Kießling H. von**, Mit Generalfeldmarschall von der Goltz Pascha in Mesopotamien und Persien, Leipzig, 1922, S. 16, 18-20: Հմմտ. **Tamcke M.**, op. cit., S. 46:

<sup>2</sup> Խոսքը, թերևս, վերաբերում է Ռազմական առաքելությանը և Վանզենհայմին հաջորդած նոր դեսպանին՝ Մետեռնիխին:

<sup>3</sup> **Kießling H. von**, op. cit., S. 109.

<sup>4</sup> **Gleich G. von**, Vom Balkan nach Bagdad, Berlin, 1921, S. 73.

<sup>5</sup> Տե՛ս **Օհանջանյան Ա.**, 1915 թվական. Անհերքելի վկայություններ, Երևան, 1997, էջ 222:



Ի դեպ, վերոհիշյալը փոքր-ինչ ավելի հանգամանալից ներկայացնելու համար հարկ է մանրամասնել, որ երբ 1915 թ. դեկտեմբերին որոշում կայացվեց Մոսուլում գտնվող հայերին տեղահանելու և դեպի Եփրատի կողմերն ուղարկելու մասին, ֆոն դեր Գոլթցը «ռազմական տեսանկյունից այդ՝ ամենևին չարդարացված միջոցառման» հարցում ընդդիմացավ տեղական իշխանություններին: «Խնդիրը ձգվեց գրեթե մի ամբողջ ամիս,- նշում էր ժամանակակիցը,- և ֆելդմարշալը սկզբում կարողացավ հասնել միայն այն բանին, որ հայերը Մոսուլում առժամանակ այլ ցուցումի սպասեին: Երբ մինչև հունվարի կեսը Կ. Պոլսից ոչ մի ցուցում չտրվեց, ֆելդմարշալը, ելնելով իր՝ իբրև գլխավոր հրամանատարի իրավասություններից, Մոսուլի կուսակալին արգելեց տեղահանել հայերին: Կուսակալն այդ մասին կրկին տեղեկություն հաղորդեց Կ. Պոլիս: Մինչև հունվարի 27-ը պատասխան չհետևեց: Ապա մի տեղեկություն ստացվեց այն մասին, որ կառավարությունը հետամուտ է տեղահանման անհրաժեշտությանը: Դրանից հետո ֆելդմարշալը հեռագրով անմիջապես ներկայացրեց իր հրաժարականը: Միայն այդ ժամանակ էնվեր փաշան մի գաղտնի հեռագրով հավաստիացրեց, որ Մոսուլի հայերը կմնան այնտեղ և ֆելդմարշալին ի միջի այլոց նաև հայտնում էր, որ նրա՝ իբրև գլխավոր հրամանատարի լիազորությունները նրան իրավունք չեն ընձեռում միջամտելու թուրքական կայսրության ներքին գործերին»<sup>1</sup>:

Էնվերի այդ նախազգուշացումը, իհարկե, միանգամայն անհիմն էր, քանզի, եթե նկատի առնենք, որ հայ ժողովրդի տեղահանության ծրագիրը երիտթուրքական կառավարության կողմից պատճառաբանվում էր բացառապես ռազմավարական պատրվակներով, ապա կասկած չի կարող հարուցել, որ Թուրքիայում գտնվող գերմանական բարձրաստիճան զինվորականությունը, նույնիսկ Թուրքիայի ներքին գործերին չմիջամտելու՝ գերմանական կառավարության որդեգրած միանշանակ դիրքորոշման դեպքում, ռազմավարական նկատառումներով ամենևին չարդարացվող այդ ծրագիրը մեծ մասամբ կամ ամբողջովին արգելելու բոլոր հնարավորություններն ուներ, և պատահական չէ, որ ինչպես ֆոն դեր Գոլթցը Մոսուլի, այնպես և Լ. ֆոն Սանդերսը Զմյուռնիայի հայերի տեղահանման արգելքները հիմնավորում էին հենց ռազմավարական նկատառումներով:

Այն, որ պաշտոնական Գերմանիայի կողմից որպես «արդարացում»՝ դաշինքի խզման վկայակոչումը միանգամայն սնանկ էր, պարզորոշ վկայում էր նաև Վանգենհայմին հաջորդած նոր դեսպանը՝ կոմս Վոլֆ Մետեռնիխը, որը, Կ. Պոլսում պաշտոնավարությունը ստանձնելով 1915 թ. նոյեմբերի 15-ից, ի տարբերություն իր նախորդի, փորձեց գործադրել բոլոր հնարավորու-

---

<sup>1</sup> Deutschland und Armenien, S. 218-219: Ֆոն դեր Գոլթցը, ի դեպ, հիվանդանալով բժավոր տիֆով, մահացել է Կուլթ էլ Ամարայի մոտ 1916 թ. ապրիլի 19-ին: Հիվանդության շրջանում՝ մասնավորապես ապրիլի 8-15-ն ընկած ժամանակամիջոցում, նրան խնամել է նաև Արմին Վեգները: Տե՛ս **Tamcke M.**, op. cit., S. 59:

թյունները դեռ կենդանի արքայալուսիններին օգնելու և երիտթուրքերի հայաս-  
պան քաղաքականությունը կասեցնելու համար, չնայած այն արդեն թևակո-  
խել էր վերջին փուլը: «Նաև մեր մամուլը պետք է վրդովմունք հայտնի հայերի  
հավածանքների հանդեպ և դադարի թուրքերին քծնել,- նշում էր նա 1915 թ.  
դեկտեմբերի 7-ին կանցլեր Բ. Հովվեգին հղած իր զեկուցագրում: - Այն, ինչ  
նրանք անում են (նկատի ունի Թուրքիայի ռազմական գործողությունները –  
Ս. Հ.) մեր գործն է, մեր սպաներն են, մեր հրանոթները, մեր դրամը: Առանց  
մեր օգնության այդ փքված գորտը կփռվի: Մենք ամենևին կարիք չունենք  
այդքան երկյուղած վերաբերվելու թուրքերին: Նրանք հեշտությամբ չեն կա-  
րող անցնել մյուս կողմը և խաղաղություն կնքել: Անգլիական կառավարու-  
թյունն *այժմյան* իշխանավորների հետ հեշտությամբ պայմանագիր չի կնքի:  
Դա ավելի շուտ հնարավոր կլիներ Ջեմալի հետ, եթե նա (ինչը բացառված չէ)  
Էնվերին դուրս մղեր: Անգլիական կառավարությունը տարիներ ի վեր փոր-  
ձում է Էնվերին տապալել: Չափազանց անհավանական է, որ նա *այժմյան*  
իշխանավորների հետ սեպարատ հաշտության ձգտի: Առավել ևս անհավա-  
նական է, որ նա Էնվեր փաշային օգտագործի ընդհանուր խաղաղության  
հաստատման փորձերում: Դրա համար նա ունի հարյուրավոր այլ բաց ճա-  
նապարհներ: Հայկական հարցում հաջողություն ունենալու համար մենք  
պետք է թուրքական կառավարությանը երկյուղ ներշնչենք հետևանքների  
հանդեպ: Եթե մենք, ռազմական նկատառումներից ելնելով, չհամար-  
ձակվենք ավելի վճռականորեն հանդես գալ, ապա մեզ այլ բան չի մնա, քան  
հետագա անարդյունք բողոքների հետ մեկտեղ, որոնք ավելի չարացնում են,  
քան օգուտ տալիս, դիտել, թե ինչպես է մեր դաշնակիցը շարունակում  
սպանողը»<sup>1</sup> (ընդգծումները հեղինակինն են – Ս. Հ.):

Գերմանիայի վերոնշյալ պաշտոնական տեսակետի սնանկությունը  
փաստել են նաև գերմանացի մի շարք հյուպատոսներ և այլ դիվանագետներ,  
որոնք, հանգամանալից ներկայացնելով եղերական իրադարձությունների  
բնույթը, ծրագրայնությունը, ընթացքն ու հրեշավոր ենթատեքստը և հերքե-  
լով հայ ժողովրդի տեղահանության ռազմավարական «հիմնավորումները»,  
հաճախ նաև իրենց անթաքույց անհամաձայնությունն են հայտնել ոճրա-  
գործությունների նկատմամբ Գերմանիայի ցուցաբերած անտարբերության և  
իրողությունները կոծկելու՝ գերմանական մամուլի որդեգրած քաղաքակա-  
նության հանդեպ: «Ըստ իմ մինչայժմյան հեռագրային և գրավոր տեղեկա-  
տվության,- նշում էր, օրինակ, Հալեյի հյուպատոս Վալտեր Ռոսլերը  
կանցլերին հղած՝ 1915 թ. հուլիսի 27-ի թվակիր տեղեկագրում,- կարելի է  
փաստարկված համարել, որ թուրքական կառավարությունը փաստացի և  
հնարավոր հայկական խարդավանքների դեմ հիմնավորված պաշտպանա-  
կան միջոցառումների սահմաններն էապես խախտել է և, առաջին հերթին,  
իր կարգադրություններով, որոնք վերաբերում են նաև կանանց ու երեխանե-

<sup>1</sup> Revidierte Lepsius-Edition..., 1915-12-07-DE-001-V փաստաթուղթը:

րին, նա ամենախիստ և ամենադաժան ձևով պարտավորեցրել է իշխանություններին, գիտակցաբար նպատակադրվել է հայ ժողովրդի՝ հնարավորինս մեծ զանգվածներին այնպիսի միջոցներով բնաջնջելու, որոնք փոխ են առնված հնադարից, սակայն անպատվաբեր են մի կառավարության համար, որը ցանկանում է դաշնակցել Գերմանիայի հետ: Կասկած լինել չի կարող, որ նա մտադրվել է Քառյակի հետ պատերազմի մեջ գտնվելու առիթն օգտագործել հնարավորության սահմաններում սակավաթիվ հայ ազգաբնակչություն թողնելու միջոցով ապագայում Հայկական հարցից ազատվելու համար: Նա փոքրաթիվ մեղավորների հետ զոհաբերել է անմեղների բազմությունները: ... Թուրքական կառավարությունը միանգամայն անմեղ իր հայ հպատակներին պատերազմի գոտուց հեռացնելու անհրաժեշտության պատրվակով հազարներով և տասնյակ հազարներով քշել է անապատ՝ բացառություն չանելով ո՛չ հիվանդների, ո՛չ հղիների և ո՛չ գորակոչված զինվորների ընտանիքների համար..., ոչինչ չի ձեռնարկել նրանց շրջանում բռնկված համաճարակների դեմ, կանանց այնպիսի զրկանքների և հուսահատության մեջ է նետել, որ նրանք իրենց ծծկեր և նորածին երեխաներին նետել են ճանապարհին, իրենց՝ հասունության հասնող աղջիկներին վաճառել, իսկ շատերն իրենց փոքրիկ երեխաների հետ նետվել են գետը: Նա նրանց մատնել է ուղեկցող գորախմբի կամայականություններին և դրանով իսկ՝ անարգանքների ու անպատվության մի գորախմբի, որը տիրացել է աղջիկներին և վաճառել նրանց: Նա նրանց նետել է բեդվինների ձեռքը, որոնք նրանց կողոպտել են և առևանգել: Մեկուսի վայրերում նա տղամարդկանց անօրինաբար ոչնչացրել է և իր զոհերի դիերը կեր դարձրել շների և գիշատիչ թռչունների համար: Նա իբրև թե «աքսորավայր» ուղարկված պատգամավորներին սպանել է, բանտերից ազատել կալանավորներին, հագցրել նրանց զինվորի համազգեստ և ուղարկել այն վայրերը, որտեղով պետք է անցնեին քսորյալները: Նա հավաքագրել է չերքեզ կամավորների և հայերին դարձրել նրանց թիրախը... Հնարավոր չէ՞ր գեթ այսօր կասեցնել հետագա սարսափները և գոնե փրկել Հալեպի վիլայեթի ծովափնյա տարածքների հայերին, որոնց քսորը դեռ առջևում է: ... Մի թե Բեյլանը, Սուլյուկը, Քեսաբը և մյուս շրջանները պատերազմական գոտի են: Մի թե այնտեղ կանանց և երեխաների ներկայությունը վտանգավոր է, չէ՞ որ բոլոր տղամարդիկ գորակոչվել են»<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Deutschland und Armenien..., S. 110-111: Հմնտ. թեմային առնչվող մյուս հյուպատոսական տեղեկագրերը Լեփսիոսի “Deutschland und Armenien...” և Վ. Միքայելյանի՝ “Die Armenische Frage und der Genozid an den Armeniern...” ժողովածուներում: Այդ առիթով իր իսկ կատարած ուսումնասիրությունների հիման վրա ուշագրավ դիտողություն է կատարում նաև ակադեմիկոս Վ. Միքայելյանը. «Այսպես կոչված՝ «հայկական ապստամբությունների», «յրտեսության» և «խռովությունների» աղերսով ևս գերմանացի դիվանագետներն արտահայտել են իրենց կարծիքը: Նրանք բոլորը ժխտում են թուրքական կողմի մեղադրանքները, գտնում, որ դրանք զուտ պրոպագանդիստական միտվածություն ունեն՝ արդարացնելու համար հայերի դեմ գործված բռնություններն ու կոտորածները: Նրանք անվարան փաստարկում էին այն

Ինչևէ, արևմտահայության բնաջնջման՝ երիտթուրքական ծրագրի հիմնական մասը, փաստորեն, իրագործվեց աշխարհամարտի «բարենպաստ» իրադրության «ամենաբարենպաստ» ժամանակաշրջանում, երբ Թուրքիայում գերմանական բարձրագույն դիվանագիտական ներկայացուցչությունը, ի դեմս Վանգենհայմի, այդ ծրագրին հակադդեմ գեթ անձնական նպատակամղվածություն չունեի, իսկ առավել ազդեցիկ զինվորական ղեկավարությունը, ի դեմս ֆոն դեր Գուլթցի, կոշտ հակազդման համար բավականաչափ ինքնուրույն չէր: Իսկ դա այնքան էր միանշանակ, որ մինչև իսկ հյուպատոսների և այլ դիվանագետների բազմաթիվ ասհազանգերը ոչնչով չկարողացան իրավիճակը փոխել: Չնայած, ի տարբերություն Վանգենհայմի, Մետեռնիխը վճռականորեն հանդես եկավ ոճրագործությունների դեմ՝ փորձելով համապատասխան դիրքորոշում ձևավորել նաև կառավարությունում, այնուամենայնիվ հայ ժողովրդի տեղահանության և բնաջնջման գործընթացն արդեն հիմնականում ավարտվել էր, և նրա միջամտությունները, այլևս անկարող լինելով կասեցնելու իրենց անպատժելիության հարցում կատարելապես համոզված երիտթուրքերի քաղաքականությունը, պատճառ դարձան Բարձր Դռան հետ նրա փոխհարաբերությունների վատթարացմանը, ինչի հետևանքով թուրքական կողմից գերմանական կառավարությանն ուղղված բողոքների հիման վրա նա ետ կանչվեց: «Թուրքիայի հանդեպ Մետեռնիխը սկզբից եթե որոշակի համակրանք չդրսևորեց,- գրում էր Կ. Պոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպանության կցորդ Յոզեֆ Պոմյանկովսկին,- և գրավեց առավել քննադատական դիրքորոշում: Նրա համար խիստ անհաճ էր լռությամբ հանդուրժել հայերի բնաջնջման թուրքական ծրագիրը: Ի նպաստ հայկական նախճիրի զոհերի նրա բազում միջամտությունները, սակայն, հաջողության չհասան և այնպես պղտորեցին նրա հարաբերությունները թուրքական կառավարության հետ, որ արդեն 1916 թ. ամռանը նրա համագործակցությունը Բ. Դռան հետ դարձավ անհնարին: Կ. Պոլսի գերմանական շրջանները նույնպես գոհ չէին Մետեռնիխից և ձգտում էին գաղտնի զեկուցագրերով թուլացնել նրա դիրքերը Բեռլինում, ինչը կարճ ժամանակում լիովին հաջողվեց: 1916 թ. սեպտեմբերին Էնվերը պաշտոնապես պահանջեց ետ կանչել կոմս Մետեռնիխին, որը և ի կատար անվեց: Հոկտեմբերի 3-ին Մետեռնիխը մեկնեց»<sup>1</sup>:

Հարկ է միաժամանակ նշել, որ հայ ժողովրդի բնաջնջման հարցում պաշտոնական Գերմանիայի որդեգրած հանդուրժողական դիրքորոշումն այնուամենայնիվ ունեցել է իր «զարգացման փուլերը»: Սկզբնական շրջա-

---

իրողությունը, որ պատժիչ ջոկատներն ու ջարդարարները ղեկավարվում էին երիտթուրքական ջեմիետի (կոմիտե) որոշմամբ և պարտավոր էին անառարկելիորեն կատարել այն»: Տե՛ս **Միքայելյան Վ.**, Հայոց ցեղասպանությունը գերմանացի դիվանագետների հաղորդագրություններում, 1915 թ. հայոց ցեղասպանությունը. Պատմության և պատմագրության հարցեր, հոդվածների ժողովածու, Երևան, 1995, էջ 28:

<sup>1</sup> **Pomiankowski J.**, Der Zusammenbruch des ottomanischen Reiches, Wien, 1928, S. 176:

նում՝ առնվազն մինչև 1915 թ. հոկտեմբեր ամիսը, այն, թերևս, ծրագրային բնույթ չէր կրում և դեռ չէր ձևակերպվել որպես քաղաքական հրամայական: Դա հնարավորություն ընձեռեց Լեփսիուսին 1915 թ. հուլիսին ստանալու արտգործնախարարության աջակցությունը՝ Թուրքիա մեկնելու համար, այն դեպքում, երբ դեսպան Վանգենհայմը վճռականորեն ընդդիմանում էր նրա այցին և փորձում նաև արտգործնախարարությանը դրդել՝ խոչընդոտելու և արգելելու Լեփսիուսի մեկնումը: «Բ. Դռան՝ արդեն ամբողջությամբ ի կատար ածվող միջոցառման պարագայում,- գրում էր դեսպանն արտգործնախարարությանն ուղղված իր՝ հունիսի 9-ի թվակիր հեռագրում,- որը ստուգապես հաստատված զանազան փաստերի միջոցով հիմնավորված է թվում, դր. Լեփսիուսի ժամանումը չափազանց ուշացած կլինի, և նրա ջանքերն արդյունք չեն ունենա: Դրանից զատ, ես այդ այցն առավել ևս այն նկատառումով եմ համարում ժամանակավրեպ, որ... այն կարող է Բ. Դռանը վրդովեցնել, որը, ինչպես ցույց է տալիս նախնական հավաստի գնությունը, կատարելապես դեմ է այդ այցելությանը: Բացի այդ, ես իմ հնարավորությունների սահմանում անում եմ ամեն բան, որպեսզի մեղմեմ Բ. Դռան չափազանց խիստ միջոցառումները»<sup>1</sup>:

Երբ վերադարձից հետո Լեփսիուսը համոզվեց, որ գերմանական կառավարությունը մտադիր չէր ի նպաստ հայերի ճնշում գործադրել օսմանյան կառավարության վրա, վճռեց եղերական իրադարձությունների մասին հասարակայնությանն իրազեկել և փորձել նրա օգնությամբ ազդել քաղաքագետների վրա<sup>2</sup>: Սեպտեմբերին նա մեկնեց Բազել ու Ժնև և հայ ժողովրդի շվեյցարացի բարեկամներին տեղեկացնելով Կ. Պոլսում իր կատարած հետազոտությունների արդյունքների մասին՝ նրանց տրամադրեց նաև իր մոտ գտնվող փաստաթղթերի մի մասը<sup>3</sup>: "Basler Nachrichten" օրաթերթի սեպտեմբերի 16-ի համարում նա հրատարակեց նաև «Մի ժողովրդի բնաջնջումը» խորագրով անստորագիր հոդված<sup>4</sup>, որտեղ, ամփոփ ներկայացնելով իր դիտարկումների արդյունքները, միաժամանակ տեղեկացնում էր, որ գերմանական կառավարությունը քաջատեղյակ էր այդ ոճրագործություններին և դեմ լինելով դրանց՝ անգոր էր դրանք կանխարգելել<sup>5</sup>: Ինչպես Բեռլին ուղարկած հաղորդագրությունում այդ մասին տեղեկացնում էր Բազելի

---

<sup>1</sup> Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., S. 135. Դեսպանն իր հուլիսի 2-ի հեռագրում նույնպես արտգործնախարարությանը կոչ էր անում Լեփսիուսին արգելել այդ ուղևորությունը ձեռնարկել, քանի որ այն, ըստ նրա, «հայերի ծանր դրությանը ծանոթանալու հետևանքով» Գերմանիային կարող էր «մեծ անախորժություններ պատճառել» և Գերմանիայի «հետագա՝ ավելի կարևոր շահերին վնասել»: Նույն տեղում, էջ 150:

<sup>2</sup> **Lepsius J.**, Der Todesgang..., S. XIX.

<sup>3</sup> Տե՛ս **Lepsius J.**, Mein Besuch in Konstantinopel Juli/Aug. 1915, "Der Orient", 1919, S. 31.

<sup>4</sup> Տե՛ս **Lepsius J.**, Der Todesgang..., S. XXIV. Հմմտ. **Meyer K.**, Armenien und die Schweiz, Bern, 1974, S. 106:

<sup>5</sup> Տե՛ս **Trumpener U.**, Germany and the Ottoman Empire 1914-1918, Princeton, 1968, p. 221:

գերմանական գլխավոր հյուպատոսը, Լեփսիուսի հողվածն այնտեղ ահռելի սենսացիա էր առաջացրել<sup>1</sup>: Ավելին, քանի որ շվեյցարական թերթերը բաժանորդներ ունեին նաև Գերմանիայում, հողվածն այնտեղ ևս մատչելի էր դարձել բազմաթիվ ընթերցողների համար, և երբ գերմանական զանգվածային մամուլի հրատարակիչները կառավարությունից պահանջեցին նշված հրապարակման վերաբերյալ դիրքորոշում ցուցաբերել, վերջինիս համար ստեղծվեց բավականին անբարենպաստ կացություն<sup>2</sup>:

Պաշտոնական Բեռլինն այդ իրավիճակում հարկադրված էր ընդառաջել առաջատար մամուլի ղեկավարների հետ տեղեկատվական հանդիպում ունենալու՝ Լեփսիուսի ցանկությանը, և հոկտեմբերի 5-ին նա ռալիստագի շենքում զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների առջև հանդես եկավ մի ընդարձակ զեկուցումով<sup>3</sup>: Ներկայացնելով արևմտահայության ողբերգական վիճակը՝ հռետորն իր ելույթում մեկ անգամ ևս սուր քննադատության ենթարկեց գերմանական կառավարության անվճարականությունը՝ նշելով, որ հայ ազգաբնակչության բնաջնջմամբ վերանում էր նաև Գերմանիայի տնտեսական և մշակութային ազդեցությունը Թուրքիայի վրա, և այդպիսով, Գերմանիան իր մեղքի բաժնով դառնում էր ոչ թե Թուրքիայի «պարոնը», ինչին նա իրականում արժանի էր, այլ «ծառան»<sup>4</sup>: Հետևաբար, ըստ Լեփսիուսի, Գերմանիան, հանուն իր իսկ ռազմավարական և մշակութային շահերի, պետք է վճարեցնեին հանդես գար ի պաշտպանություն հայ ժողովրդի: Լեփսիուսը կոչ արեց նաև ձեռնպահ մնալ Թուրքիայի ներքին իրադրության վերաբերյալ «կեղծ և գունազարդված տեղեկատվություն» հրապարակելուց, ինչը, նրա համոզմամբ, էապես կվնասեր Գերմանիայի բարոյական վարկին աշխարհում<sup>5</sup>:

Չնայած Լեփսիուսի ելույթը կրքոտ բանավեճերի տեղիք տվեց և ընդհանուր առմամբ հակասական գնահատականների արժանացավ, այնուամենայնիվ այն կառավարությանն այնքան էր անհանգստացրել, որ հաջորդ օրը նույն շենքում կազմակերպվեց մամուլի ներկայացուցիչների մի մեծ համաժողով: Արտգործնախարարության աշխատակիցն այստեղ Լեփսիուսի հարցադրումները որակում էր «չափազանցված», թուրքական միջոցառումները բնութագրում՝ սուսկ որպես «Անտանտի խառնակիչ գործունեության արձագանք» և հավաստիացնելով, որ գերմանական կառավարությունը ձգտում էր հայերի համար դիվանագիտական ճանապարհով հնարավոր ամեն բան անել՝ կոչում էր գերծ մնալ Հայկական հարցի հովանավորչությունից<sup>6</sup>:

Կառավարության կողմից նույն օրը ևեթ լրատվամիջոցների ներկայացուցիչներին ուղղվեց նաև հետևյալ հրահանգը. «Հայկական կոտորածների

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում: Հմմտ. **Meyer K.**, op. cit., S. 106:

<sup>2</sup> Տե՛ս **Feigel U.**, Das evangelische Deutschland und Armenien, Göttingen, 1989, S. 214.

<sup>3</sup> Տե՛ս **Lepsius J.**, Der Todesgang..., S. XXIV: Հմմտ. **Feigel U.**, op. cit., S. 214:

<sup>4</sup> Տե՛ս **Trumpener U.**, op. cit., p. 223.

<sup>5</sup> Տե՛ս **Lepsius J.**, Mein Besuch in Konstantinopel Juli/Aug. 1915, "Der Orient", 1919, S. 31.

<sup>6</sup> Տե՛ս **Feigel U.**, op. cit., S. 214-215.

մասին պետք է ասել հետևյալը. Թուրքիայի հետ մեր բարեկամական հարաբերությունները նրանց ներքին գործերի պատճառով ոչ միայն չպետք է վտանգվեն, այլև ներկա ծանր պահին նույնիսկ չպետք է քննարկվեն: Այդ իսկ պատճառով լռելն առժամանակ հարկ է պարտավորություն համարել: Հետագայում, եթե արտերկրից Գերմանիայի մեղսակցության ուղղակի մեղադրանքներ ի հայտ կգան, անհրաժեշտ կլինի հարցը մեծ զգուշությամբ և վերապահությամբ դիտարկել և պնդել, որ թուրքերը հայերի պատճառով նրանց դեմ ուժգին գրգռվել էին»<sup>1</sup>:

Այս հրահանգով սկզբնավորվեց հայ ժողովրդի ողբերգությունների մասին բոլորին լռություն պարտադրելու մի ծրագրված քաղաքականություն, ինչը հաջողությամբ կիրառվեց ընդհուպ մինչև պատերազմի ավարտը: Բացառություն կազմող միակ անձը, որը բազում զրկանքների, վտանգների, ընդհուպ հայրենիքից տարագրվելու գնով չենթարկվեց այդ պահանջին, դոկտոր Լեփսիուսն էր<sup>2</sup>:

Այսպիսով, այն հանգամանքը, որ Գերմանիան կարող էր առանց դաշինքը վտանգելու կասեցնել կամ նույնիսկ կանխարգելել Հայոց մեծ եղեռնը, չի կարող կասկածի ենթակա լինել, և դրանից, անշուշտ, ածանցվում է Գերմանիայի համապատասխանատվության, բնականաբար՝ նաև մեղսակցության հանգամանքը, ինչն ըստ հարկի կարող է օգտագործվել Հայոց ցեղասպանությանը վերաբերող քաղաքական գործընթացներում:

### **Ashot Hayruni – *On German-Turkish Alliance in 1915-1916***

The article gives a critical explanation for the position of imperial Germany towards the Armenian Genocide in the context of military alliance with Turkey. The approaches towards the problem adopted by different German diplomatic and military figures are elucidated. According to various primary sources it is argued that Germany could, without risking the alliance with Turkey, prevent or stop the extermination of the Armenian people, and the “argument” to disrupt the alliance in favour of Armenians in case of hard interference cited by official Germany does not correspond to reality.

---

<sup>1</sup> **Vierbücher H.**, op. cit., S. 78. Հմմտ. **Feigel U.**, op. cit., S. 214-215:

<sup>2</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս **Հայրունի Ա.**, Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը, Երևան, 2002, էջ 212-322:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ «ՇԱՐՔԱՅԻՆ» ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԸ,  
ՄՈՒՍՈՒԼՄԱՆ ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒԹՅԱՅԻՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ցեղասպանագիտության մեջ գերակայող տեսակետներից մեկի համաձայն՝ զանգվածային կոտորածներ կամ ցեղասպանություն իրականացնելու համար անհրաժեշտ է հասարակության անմիջական մասնակցությունը կամ առնվազն ակտիվ աջակցությունը: Այս հանգամանքը ենթադրում է զանգվածային կոտորածների կազմակերպումն ու հրահրումը կանխարգելելու համար հասարակության տարբեր սոցիալական խմբերի համոզմունքների, մտայնությունների, բռնություններին մասնակցելու նրանց նպատակների ու շարժառիթների ուսումնասիրության անհրաժեշտությունը<sup>1</sup>:

Ընդհանրապես ընդունված է համարել, որ զանգվածային բռնությունները գերազանցապես իրականացնում են տղամարդիկ<sup>2</sup>, իսկ կանայք հակված չեն վայրագություններ գործադրելու: Սակայն, հակառակ գոյություն ունեցող կարծրատիպերի, նորագույն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ զանգվածային սպանություններ և ցեղասպանություն իրականացնող «մարդկային ռեսուրսը» իրականում համալրում են նույնիսկ այնպիսի մարզինալացված խմբեր, ինչպիսիք են կանայք ու երեխաները, որոնք իրենց դաժանությամբ ոչնչով չեն զիջում տղամարդկանց:

Քաղաքապետ Լիսա Շարլաչն իրավացիորեն նշում է, որ կանանց՝ որպես ցեղասպանություն իրականացնող ոճրագործների դիտարկելը շատ ավելի բարդ է, քան որպես ցեղասպանության զոհերի<sup>3</sup>: Իսկ ըստ նորվեգացի սոցիոլոգ Գ. Հոլթերի առաջադրած տեսակետի՝ զենդերային կարծրատիպերը քողարկում են զանգվածային բռնություններում տղամարդու և կնոջ դերակատարությունը. իրականում կանայք կարող են ինքնակամ ու ավելի ակտիվ մասնակցել դրանց, քան տղամարդիկ: Հեղինակը մանրամասնում է, որ գերիշխող տեսադրույթները հիմք չեն տալիս կարծելու, որ գոյություն ունեցող բազմաթիվ զենդերային անհավասարությունները ենթադրում են միայն մեկ սեռի ընդգրկվածությունը զանգվածային բռնությունների իրականաց-

<sup>1</sup> Այս մասին մանրամասն տե՛ս **Valentino B.**, *Final Solutions: Mass Killing and Genocide in the Twentieth Century*, Ithaca and London, 2004, p. 31:

<sup>2</sup> Տե՛ս **Goldhagen D.**, *Worse than War: Genocide, Eliminationism, and the Ongoing Assault on Humanity*, New York, 2009, p. 100:

<sup>3</sup> Տե՛ս **Sharlach L.**, *Gender and Genocide in Rwanda: Women as Agents and Objects of Genocide*, *Journal of Genocide Research*, vol. 1, issue 3, 1999, p. 388:



ման գործընթացներում, կամ իբր թե բացառվում է տարբեր սեռերի կամ սոցիալական խմբերի ներկայացուցիչների մասնակցությունը, եթե այն անհարիր չէ ցեղասպանություն իրականացնելու քաղաքականությանը<sup>1</sup>:

Ա. Ջոնսը նշում է, որ բնաջնջման գործընթացին կանանց ընդգրկվածության առումով 1994 թ. Ռուանդայում տեղի ունեցած թուֆսիների ցեղասպանությունն աննախադեպ է, թեպետ համանման փաստեր արձանագրվել են նաև Շոայի և Հայոց ցեղասպանության ժամանակ<sup>2</sup>: Հեղինակը, հպանցիկ անդրադառնալով Հայոց ցեղասպանության պարագայում կանանց մասնակցության խնդրին, վկայակոչում է միայն քուրդ կանանց հարձակումները տեղահանված հայերի քարավանների վրա և նրանց կողոպտումը<sup>3</sup>: Ի տարբերություն Ջոնսի՝ Դ. Մեյերն առաջադրում է հետևյալ հիմնական հարցադրումը. արդյո՞ք ոճրագործություններին մասնակցելու կանանց պատրաստակամությունը թուֆսիների ցեղասպանության պարագայում ավելի մեծ էր, քան այլ ժողովուրդների ցեղասպանությունների համատեքստում, թե՞ նման մտայնությունը սուկ պայմանավորված է Ռուանդայում առավել մեծաթիվ փաստերի արձանագրմամբ<sup>4</sup>:

Նման մոտեցումը թերևս կարելի է բացատրել այն բանով, որ ցեղասպանությունների իրականացման ընթացքում կանանց մասնակցության խնդրի վերաբերյալ հետաքրքրությունը հատկապես աճել է Ռուանդայում տեղի ունեցած ցեղասպանության գործընթացում կանանց լայն ընդգրկվածության պատճառով: Թուֆսիների ցեղասպանության առանձնահատկությունները լավագույնս ներկայացնում են “African Rights Report”-ի նյութերը, որոնց հիմքում խարսխված են ոճրագործ կանանց հարցազրույցները: Դրանք հնարավորություն են ընձեռում նրանցից յուրաքանչյուրին ներկայացնելու անհատապես՝ ըստ իրենց գործունեության ոլորտի ու գործառույթների<sup>5</sup>: Կանանց մասնակցության մասին փաստեր են բացահայտել նաև Ռուանդայի Միջազգային քրեական դատարանի (International Criminal Tribunal for Rwandan-ICTR) և ազգային դատարանների հետաքննությունները, որոնց արդյունքում դատապարտվել են ավելի քան երկու հազար կին<sup>6</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս **Holter G.**, A Theory of Gendercide, Gendercide and Genocide, edited by A. Jones, USA, 2004, pp. 73-74:

<sup>2</sup> Տե՛ս **Jones A.**, Gender and Genocide in Rwanda, Journal of Genocide Research, vol. 4, issue 1, 2002, p. 65:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 88:

<sup>4</sup> Տե՛ս **Maier D.**, Women Leaders in the Rwandan Genocide: When Women Choose To Kill, Universitas, The University of Northern Iowa, Journal of Research, Scholarship, and Creative Activity, vol. 8, 2012-2013:

<sup>5</sup> African Rights, Rwanda. Not so innocent. When women become killers, August, 1995, Kigali.

<sup>6</sup> Տե՛ս **Hogg N.**, Women’s Participation in the Rwandan Genocide: Mothers or Monsters? International Review of the Red Cross, vol. 92, N 877, March 2010, p. 70:

Ի տարբերություն Ռուանդայում թուփսիների ցեղասպանությանը և Շոային վերաբերող ուսումնասիրությունների՝ առ այսօր գոյություն չունի 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրությունում արևմտահայության կոտորածներին և ցեղասպանությանը մուսուլման կանանց<sup>1</sup> մասնակցությանը նվիրված գեթ մեկ գիտական հետազոտություն: Այդ իսկ պատճառով սույն խնդրի արծարծման համար գերազանցապես անդրադարձել ենք հայ վերապրողների և օտարերկրյա պաշտոնյաների ու ականատեսների հուշագրություններում, զեկուցագրերում տեղ գտած՝ բռնություններին անմիջականորեն մասնակցած կանանց արարքներին: Կատարված դասակարգումն ու խմբավորումը թույլ են տալիս պայմանականորեն առանձնացնել զանգվածային ոճրագործություններին մասնակցած մուսուլման կանանց դերակատարության առանձնահատկություններն ու գործառույթները:

Օսմանյան կայսրությունում հայերի զանգվածային կոտորածներին ու ցեղասպանությանը կանանց մասնակցությունն ընդգրկել է տարբեր ոլորտներ. նրանք երբեմն հանդես են եկել որպես նախաձեռնողներ, սպանությունների անմիջական կատարածուներ, հրահրողներ և կողոպտիչներ, նաև առևանգել են կամ տարել հայ երեխաների ու կանանց՝ նրանց աշխատանքը շահագործելու և այլ նպատակներով:

*Նախաձեռնողներ:* Չնայած Հայոց ցեղասպանության պարագայում հայտնի են բռնություններն անմիջականորեն կազմակերպած սակավաթիվ կանայք, այնուամենայնիվ սկզբնաղբյուրներում կան որոշ հիշատակումներ հատկապես պաշտոնյաների կանանց մասին, որոնք հանդես են եկել իբրև նախաձեռնողներ: Օրինակ, 1909 թ. կիլիկյան կոտորածների ականատես, Ադանայի կաթոլիկ հայերի հոգևոր առաջնորդ Հակոբ Եպիսկոպոս Թերզյանը հաղորդում է, որ Ադանայից երեք ժամ հեռավորությամբ գտնվող Ղայրըլը գյուղում բնակվող Ապտալ Խալոյիի աղջկա՝ Սինեմե հանրմի մասին վերապրողները պատմել են, թե ինչպես է իր ազդեցության շնորհիվ նա համախմբել գյուղի և շրջակայքի երկսեռ հայերին, ապա առանձնացրել զեղեցկադեմ կանանց ու աղջիկներին և նրանց ամուսնացրել իր նախընտրած թուրքերի հետ: Նրանցից ոմանց նա, անվարան փուռը նետելով, այրել է ու զվարճացել, իսկ մյուս մասին տանելով գետեզերք՝ անձամբ է մորթել ու գետը նետել<sup>2</sup>:

Բերենք մեկ այլ օրինակ ևս. թուրք զինվորական գործիչ Վեհիբ Մեհմեդ փաշայի կինը խուզարկություններ է կատարել և ոսկի փնտրելու նպատակով զննել տարագրված կանանց մարմինները, անգամ նրանց սեռական օրգանները<sup>3</sup>:

<sup>1</sup> Այս եզրն օգտագործվում է այն դեպքում, երբ սկզբնաղբյուրում հստակեցված չէ ոճրագործություններն իրականացնող կանանց թուրք թե քուրդ լինելու հանգամանքը:

<sup>2</sup> Տե՛ս **Թերզյան Յ.**, Կիլիկիոյ աղետը, Կ. Պոլիս, 1912, էջ 252: Այս մասին տե՛ս նաև Վեր. **Աջճեան Հ.**, Ատանայի եղեռնը եւ Գոնիայէ յուշեր (Պատմութեան համար), Նիւ Եորք, 1950, էջ 84:

<sup>3</sup> Տե՛ս **Պողոսյան Ս.**, Գոյատևման պայքարի քառուղիներում, Երևան, 1988, էջ 428:

*Սպանությունների անմիջական մասնակիցներ:* Ի տարբերություն նախաձեռնողների դերակատարության՝ բազմաթիվ վկայություններ կան զանգվածային բռնություններին, այդ թվում սպանություններին թուրք և քուրդ կանանց մասնակցության մասին: Այս առնչությամբ տեղեկություններ է հաղորդում շվեդ միսիոներուհի Ա. Յոհանսոնը, որը 1915 թ. հուլիսին եղել է Խարբերդում. «Հուլիսի սկզբից 2000 հայ զինվորների հրամայվում է ճանապարհներ կառուցելու համար մեկնել Հալեպ: Մի քանի օրից նորից 2000 հայ զինվոր է ուղարկվում՝ Դիարբեքի դեպարտամենտ... Քրդերին տեղեկացնում էին, որ հայերն են գալիս, և քրդերի կանայք, մսագործի դանակներով, գալիս էին իրենց ամուսիններին օգնելու»<sup>1</sup>:

Գերմանացի ավագ ուսուցիչ Նիկոլայազեն իր զեկուցագրում, որը կայսերական գաղտնի քաղաքացիական կարիների աշխատակից Վալենտինը 1916 թ. սեպտեմբերին ուղարկել է ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին, տեղեկացնում է, որ բազմաթիվ անձինք, հատկապես Բաղդադի երկաթուղու ինժեներները և գերմանացի ճանապարհորդները, դարձել են Հալեպում տեղի ունեցած ոճրագործությունների ակնատեսը և տեղեկություններ հաղորդել այդ մասին: Նա հայտնում է, որ Վ. Շպիկերը տեսել է, թե ինչպես են Հալեպում տղամարդկանց ձեռքերը կապել մեջքներին և գառիթափերից ցած գլորել, իսկ ներքևում սպասող թուրք կանայք զոհերին դանակահարել են այնքան, մինչև նրանք մահանան<sup>2</sup>: Հայոց ցեղասպանությունը վերապրած տասներկուամյա խարբերդցի Մանուկը պատմում է, որ տեսել է, թե ինչպես է մի քուրդ կին դանակով պատռում հայ կանանց որովայնը՝ ոսկի փնտրելու նպատակով<sup>3</sup>:

Ըստ օտարերկրյա ակնատեսների ու Հայոց ցեղասպանությունը վերապրողների վկայությունների՝ թուրք կանայք հարձակվում էին հայերի վրա, քարկոծում նրանց, անպատվում և մեղադրում:

Խարբերդում աշխատանքային գործունեություն ծավալած դանիացի միսիոներուհի Մ. Յակոբսենն իր օրագրության մեջ 1915 թ. մայիսի 5-ին նշում է, որ թուրք կանայք քրիստոնյաների նկատմամբ (վերջիններիս էթնիկական ծագումը չի ընդգծում) լի էին ատելությանբ և պնդում էին, որ նրանք են Առաջին աշխարհամարտի պատճառը: Այդ կանայք համոզված էին նաև, որ քրիստոնյա բժիշկները թունավորելիս են եղել թուրք զինվորներին<sup>4</sup>: Հայերի նկատմամբ թուրք կանանց համանման վերաբերմունքի մասին են վկայում նաև հայ վերապրողները: Նրանցից Մինաս Թաթարյանը հաղորդում է, որ Սներեկում<sup>5</sup> իրենց քարավանից մի քանի հոգու ուղարկել են շուկա՝ հաց

<sup>1</sup> **Յոհանսոն Ա.**, Աքսոբյալ ժողովուրդ. մեկ տարի հայոց պատմությունից, Երևան, 2008, էջ 44:

<sup>2</sup> Տե՛ս **Գուստ Վ.**, Հայերի ցեղասպանությունը 1915-1916, Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի փաստաթղթերից, Երևան, 2008, էջ 584:

<sup>3</sup> Տե՛ս **Մանուկ**, Ձեռագիր հուշ, ՀՅԹԻ, թղթապանակ 172:

<sup>4</sup> Տե՛ս **Ճեքրպարն Մ.**, Օրագրություն. 1907-1919. Խարբերդ, Անթիլիաս, Լիբանան, 1979, էջ 92-93:

<sup>5</sup> Սներեկ (Սևարագ)՝ քաղաք Արևմտյան Հայաստանում, Դիարբեքի նահանգի Դիարբեքի գավառում:

բերելու: Ճանապարհին նրանք հանդիպել են շուրջ քսան թուրք կանանց, որոնք ոստիկաններից պահանջել են նրանցից մեկին՝ ասելով, որ հայերը սպանել են իրենց այրերին, իսկ իրենք ցանկանում են նրանց հոգուն մատաղ անել: Խմբից առանձնացնելով Հովհաննեսին՝ թուրք կանայք քարերով ջախջախել են նրա գլուխը<sup>1</sup>: Իսկ բաբերդցի մի կին պատմում է, որ իրենց խումբը 1915 թ. հունիսի կեսերին բաբերդցիների տեղահանության ժամանակ տեսել է հիսունից վաթսուն կառքեր, որոնցում եղել են նաև պատերազմի հետևանքով այրիացած՝ Կարինից Կ. Պոլիս ուղևորվող երեսուն թրքուհի: Նրանցից մեկը ժանդարմներից խնդրել է մի հայի և սպանել<sup>2</sup>:

*Տղամարդկանց հետ ոճրագործությունների մասնակցած կանայք:* Թուրք և քուրդ կանայք սպանության և կողոպուտի նպատակով հիմնականում խմբերով էին գնում կոտորածի վայր կամ մոտենում այն ճանապարհներին, որոնցով անցնելու էին տեղահանված հայերի քարավանները: Նրանք երբեմն հայերի վրա հարձակվում էին նաև տղամարդկանց հետ միասին: Վերապրողներից Պետրոս Ծատուրյանը, որը Մեծ եղեռնի ժամանակ եղել է ինը տարեկան, վերհիշում է. «Ակն քաղաքին մոտերն էինք: Առաջին լեռը կտրեցինք: Երկրորդը հազիւ կտրած էինք, երբ յանկարծ քիւրտերը վրանիս թափեցան չորս կողմէն: Սայրերը իրենց զաւակները ջուրը ձգեցին... քիւրտ կին ու մարդ յարձակեցան վրանիս սովալլուկ գայլերու պէս»<sup>3</sup>:

1901 թ. Բիթլիսի Խլաթ գավառի Փրխուս գյուղում ծնված Սուրաստ Մկրտչյանը վկայում է 1915 թ. գարնանն Ալաշկերտի Զիլանի լեռներում ու ձորերում բնակվող քրդերի՝ իրենց գյուղի վրա կատարած հարձակման մասին. «Քրդական այդ ռիմակը սիրտ չարեց գիշերով գյուղ մտնել: Առավոտյան, երբ տեսան, որ ոչ մի դիմադրություն չկա, չորս կողմից իրենց կանանց հետ, սպանելու և կողոպտելու նպատակով այնպիսի վայրագությամբ գյուղ խուժեցին, ինչպես ձմռան քաղցից ռոնացող գայլերի ռիմակն է հարձակվում իր անպաշտպան ու անզեն գոհի վրա»<sup>4</sup>:

Դերջանի Չըխընլոց գյուղի՝ 1915 թ. կոտորածը վերապրած Առաքել Թագոյանը, որն այդ ժամանակ եղել է 13 տարեկան, վկայում է. «Մեկ ալ տեսանք՝ խումբ մը մարդիկ, ձեռքերնին կացիններով, դանակներով, կնիկները տոպրակների մեջ քարերով եկան մեզ վրա: Ժանդարմները ետ քաշվեցին:

---

<sup>1</sup> **Թաթարեան Մ.**, Կամաուրի մը յուշեր, Մատենաշար թիւ 7, Անթիլիաս, Լիբանան, 1960, էջ 40: Հուշագրությունը գրի է առնվել 1930-ական թթ.:

<sup>2</sup> Գաղտնի տեղեկագիր Տոքթ. Եօհաննէս Լէփսիուսի, Հայաստանի ջարդերը, Կ. Պոլիս, 1919, էջ 56-57: Այս մասին տե՛ս նաև՝ **Գուստ Վ.**, նշվ. աշխ., էջ 370:

<sup>3</sup> **Ծատուրեան Պ.**, Կեանքը որ ապրեցայ, Մատենաշար թիւ 13, Անթիլիաս, Լիբանան, 1969, էջ 27: Հուշագրությունը գրի է առնվել 1962 թ.:

<sup>4</sup> **Սվազյան Վ.**, Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, Երևան, 2011, էջ 106: Հուշագրությունը գրի է առնվել 1980 թ.:

Անոնք՝ առաջ եկան: Մեզի քշեցին ժայռի մի ծայրը՝ Եփրատ գետի եզերքը: Ետևից զարնում են՝ զցում Եփրատ գետը»<sup>1</sup>:

Գարեգին Թուրիկյանը պատմում է 1915 թ. ապրիլին Մեծ և Փոքր Արմտաններ գյուղերի տեղահանության և կոտորածի մասին. «Կարաւանը երբ Կապուտ Կէպանի գառիվերը կը բարձրանար լեռներու կատարներու վրայ, ձորերու մէջ, բլուրներու վրայ խոնուած թուրք կատաղի կիներու, այրերու, մանուկներու ոռնոցն ու հայիոյութիւնը ծայր տալ սկսած էին: Ոմանք մանուկներու կոնակի հացի պաշարը կը քաշէին, ոմանք՝ կիներու շալկած վերմակները և ոմանք ալ եզներու վրայ բեռցած պաշարները կը վերցնէին»<sup>2</sup>:

*Հրահրողներ:* Մուսուլման կանանց մի մասն անմիջականորեն չի մասնակցել սպանություններին, կողոպուտին, բայց հրահրել է տղամարդկանց, օգնել և քաջալերել նրանց, ինչպես նաև մատնացույց արել հայերի թաքստոցները:

1895 թ. նոյեմբերին Այնթափի դէպքերի վերաբերյալ մի նամակում ամերիկացի հոգևորական և միսիոներ Էդվին Բլիսը գրում է. «Վերցնելով ատրճանակս՝ հեծնեցի ձիս և շտապեցի այնտեղ: Ես կարողացա զանազանել կռվող տղամարդկանց խոպոտ ձայները, կանանց և երեխաների ծղրտոցը և ամենավատը՝ տղամարդկանց քաջալերող՝ թուրք և քուրդ կանանց տոնական, ականջ ծակող լու-լու-լու-ն»<sup>3</sup>:

Սվազում Ֆրանսիայի փոխհյուպատոս Մորիս Կարլիեի կինը՝ Էմիլի Կարլիեն, իր օրագրության մեջ հղում է ֆրանսիական «Դեղին գիրքը», ըստ որի՝ «Ուրֆայի դէպքերի ժամանակ, երբ 3000 կանայք պատսպարվել էին մայր տաճարում, մարդասպանները մտան եկեղեցի և բազմաթիվ բռնություններ իրագործեցին: Շուտով հոգնելով այդ ամենից՝ այնպես արյունտուված, որ այլևս անճանաչելի էին դարձել (նրանց մեջ կային *գազան կանայք՝ ավելի դաժան, քան տղամարդիկ*) (ընդգծումն մերն է – Հ. Գ.), նրանց մտքով մի զարհուրելի բան անցավ՝ ավելի ակտիվացնել բռնությունը: Նրանք վազեցին նավթ որոնելու: Մարսափելի ճակատագիր, հիսուն արկղ նավթ կար եկեղեցու բակում: Նրանք մինչև հասակը դատարկեցին դրանք: 3000 դժբախտ կանայք այրվում էին դանդաղ, մինչդեռ խորանի վրա մազլցած մոլլաները, ձեռքերը բարձրացրած, շնորհակալություն էին հայտնում և օրհնում Աստծուն»<sup>4</sup>:

1909 թ.՝ Ադանայի առաջին կոտորածի ժամանակ, Դաշտային Կիլիկիայում գտնվող Սայ Կեչիտ գյուղում, երբ ոճրագործներն իրենց զոհերին նետում են փոսը, մի թուրք կին, նկատելով, որ մի փոքրիկ հայ տղա ողջ է մնացել,

<sup>1</sup> **Սվազյան Վ.**, նշվ. աշխ., էջ 234: Հուշագրությունը գրի է առնվել 1975 թ.:

<sup>2</sup> Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. Վերապրածների վկայություններ. Փաստաթղթերի ժողովածու, հ. III, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքիրի, Սեբաստիայի, Տրապիզոնի նահանգներ, Պարսկահայք, Երևան, 2012, էջ 204:

<sup>3</sup> **Bliss E.**, Turkey and the Armenian Atrocities, Edgewood Publishing Company, 1896, pp. 451-452, 465.

<sup>4</sup> **Կարլիե Է.**, Կոտորածների մեջ. Հայաստանում ֆրանսիացի հյուպատոսի կնոջ օրագիրը, Երևան, 2010, էջ 77-78: Այս մասին տե՛ս նաև Братская помощь пострадавшим в Турции армянам, М., 1897, с. 53.

ճչում է. «Գյավուրները ողջացան»: Դրանով նա փոքրիկի վրա է հրավիրում մարդասպանների ուշադրությունը, որոնք նրան նույնպես սպանում են<sup>1</sup>:

Հայոց ցեղասպանությունը վերապրած գրող-հրապարակախոս Արամ Անտոնյանը թուրք կանանց դերակատարության վերաբերյալ գրում է. «Երբ բանտերու մէջ գտնուող հայ մտաւորականները եւ ականաւոր մարդիկը կը տանջէին, թուրք կիներն էին, որ ամէն օր ճպտոներ հաւաքելով, առջի իրիկուրնէ ջուրը կը ձգէին որպէս զի ուռին, աւելի տոկուն դառնան, ու կը պոռային դահիճներուն. «Ձարկէ՛ք, ուժով զարկէ՛ք, եթէ փայտերը կոտրին, ահա ձեզի նորեր բերեր ենք»: Եվ ամէն տեղ անոնք նուազածութեամբ ու հեզնական երգերով, պարերով ու ցնծութեամբ ճամբու կը դնէին դէպի սպանդանոց քշուող կարաւանները»<sup>2</sup>:

Վերապրող Աննա Միրաքյանը պատմում է, որ Դիարբեքիի նահանգի Ամիդի գավառում գտնվող Հունի գյուղից քարավանը հագիվ էր տեղից շարժվել, երբ մի թրքուհի, կռահելով, որ կալի մեջ կան թաքնված փոքրիկներ, այդ մասին տեղեկացրել է Սոսիկցի Մյուղյուր անունով ոճրագործին, որը երեխաներին ծեծի է ենթարկել<sup>3</sup>: Բիթլիս գավառի Խլաթ գավառակի Փրխուս գյուղում 1915 թ. ապրիլին տեղի ունեցած կոտորածների մասին տասներկուամյա վերապրող Ադամի Հլղայանը վկայում է. «Քիւրտեր և անոնց կանայք մորս վրայ յարձակելով՝ բռնեցին: Քրտուհիները կը կանչէին իրենց մարդկանց՝ «Եկէ՛ք, այստեղ ալ գեղեցիկ կին մը կայ ...»<sup>4</sup>:

*Կողոպտիչներ:* Մեծ է մուսուլման կանանց մասնակցությունը հատկապես հայերի ունեցվածքի կողոպուտին: Թուրք և քուրդ կանայք որպես կանոն թալանում էին հարևան հայերի տները՝ տիրանալով նրանց կահույքին, հագուստին, զարդեղենին, նույնիսկ մթերքին:

Կողոպուտի մասնակից կանանց ու երեխաների թիվն անհամար էր. գողանալով իրերի և ապրանքների մի մասը՝ նրանք անմիջապես վերադառնում էին՝ նոր կողոպուտի ակնկալությամբ: Երբ ոստիկաններն ու զինվորներն ավարտում էին հայկական բնակավայրերի կողոպուտը, կանայք և երեխաները շտապում էին այնտեղ՝ թալանելու դեռևս չկողոպտված իրերը<sup>5</sup>: Հաճախ նրանք նաև հետևում էին ոստիկաններին, որպեսզի կարողանային հափշտակել հայերին պատկանող ունեցվածքը<sup>6</sup>:

<sup>1</sup> Տե՛ս **Թերզևան Յ.**, նշվ. աշխ., էջ 214:

<sup>2</sup> **Անտոնյան Ա.**, Մեծ ոճիրը. Հայկական վերջին կոտորածները և Թալեաղ փաշա, Պոսթըն, 1921, էջ 243-244:

<sup>3</sup> Տե՛ս **Միրաքյան Ա.**, Վերքեր ու ցաւեր, Մատենաշար թիւ 10, Անթիլիաս, Լիբանան, 1960, էջ 30-31: Մեծ եղեռնի ժամանակ եղել է 26 տարեկան:

<sup>4</sup> Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. Վերապրողների վկայություններ. Փաստաթղթերի ժողովածու, հ. II, Բիթլիսի նահանգ, Երևան, 2012, էջ 51:

<sup>5</sup> Տե՛ս **Bliss E.**, նշվ. աշխ., էջ 458:

<sup>6</sup> Գաղտնի տեղեկագիր Տոթթ. Եօհաննէս Լեփսիուսի, Հայաստանի ջարդերը, էջ 40:

Հայերը, որոնց կարճ ժամանակ էր հատկացվում տեղահանությանը պատրաստվելու համար, չէին կարող իրենց հետ շատ իրեր վերցնել, ուստի չնչին գներով վաճառում էին կահույքը, տնային իրերը, սննդի պաշարները և անգամ հագուստը: Մատչելի գներով իրեր գնելու նպատակով փողոցները լցվում էին մուսուլման կանանցով և տղամարդկանցով, որոնք հայ հարևաններից գնումներ էին կատարում: Շատ իրեր անվճար էին տանում, քանի որ սեփականատերերը չէին կարողանում դրանք վաճառել: Խարբերդում ամերիկյան հյուպատոս Լ. Դևիսը, նկարագրելով նմանօրինակ մի դեպք, հետևյալ կերպ է այն բնութագրում. «Տեսարանը ինձ հիշեցնում էր գիշանգղների հետամտումը իրենց որսին: Թուրքերի համար իսկական տոն էր, նրանք գուզված-գարդարված ելնում էին փողոց, ցնծում էին, հրճվում ուրիշի դժբախտությամբ»<sup>1</sup>:

Դումինիկյան միաբանության անդամ եղբայր Եասենթ Սիմոնը 1915 թ. հուլիսի 1-ին Թել Արմենի գյուղի պաշարման մասին գրում է. «Քիւրտ մարդոց գործը ավարտած էր. ամեն ինչ կոտորած էին: Այժմ կը սկսէր քիւրտ կիներուն գործը՝ կողոպուտը: Քիւրտ կիները սպրդեցան հայ տուներէն ներս. կահ կարասի, սնտուկներ, պաշար, հագուստեղէններ, ինչ որ գտան, բոլորը բեռցուցեցան ջորիներուն վերայ եւ տարուեցան դէպի լեռները»<sup>2</sup>: Նրանց հագին հաճախ կարելի էր տեսնել հայ աղջիկների օձիտներից խլված մետաքայա շրջագեստներ: 1908 թ. Խարբերդի Չմշկաձագ քաղաքում ծնված, վերապրող Ղևոնդ Փրփերյանը 1915 թ. սեպտեմբերի վերջին-հոկտեմբերի սկզբին պատմում է, որ քաղաք վերադառնալուց հետո իրենց տան դռների և լուսամուտների փեղկերը գտել են հարևան թուրքերի մարագներում: Վերապրողը վերհիշում է, որ իրենց հարևան թրքուհին ճարպկորեն սողոսկել է իրենց տուն և տարել ամեն ինչ, իսկ երբ իր մայրը գնացել է Ռզա էֆենդու եղբոր՝ Ֆահիլ էֆենդու տուն, այնտեղ նրա կանանց հագին տեսել է քրոջ օձիտի մետաքայա շրջագեստները<sup>3</sup>: Ըստ բայազետցի տասնյոթամյա Կամսար Խաչատրյանի վկայության՝ 1916 թ. աշնանը, «երբ քաղաքը կիսադատարկ էր, արդեն հասկացանք, որ գնալն անխուսափելի էր, և սկսեցինք հավաքվել: Ժամանակ քիչ էր մնացել: Հարևան թուրք կանայք արդեն լցվել էին մեր տունը ու բացահայտ մատնացույց էին անում, թե ով ինչ է ուզում վերցնել: Մեր իրերը մեր ներկայությամբ իրար մեջ բաժանում էին: Մեր հացթուխ թրքուհին ամեն ինչի տեղը գիտեր և կարծես ցույց էր տալիս, թե որտեղ ինչ կա»<sup>4</sup>:

Թուրք և քուրդ կանայք ոչ միայն կողոպտում էին հարևան հայերի տները, այլև հարձակվում հայ կանանց վրա և թալանում նրանց: Նրանք կողո-

<sup>1</sup> Դևիս Լ., Սպանդի նահանգ, Երևան, 2001, էջ 114:

<sup>2</sup> Եղբայր Եասենթ Սիմոն, Մարտին. Հերոս քաղաք, խորան եւ շիրիմ Հայաստանի 1915ի ջարդերուն ընթացքին, Լիբանան, 1991, էջ 93-94:

<sup>3</sup> Տե՛ս Փրփրեան Դ., Իմ կեանքի ողիսականը, Լոս Անջելես, 2000, էջ 93-94:

<sup>4</sup> Սվազյան Վ., նշվ. աշխ., էջ 172:

պուտի նպատակով գնում էին կոտորածների վայրերը՝ հիմնականում հագուստ և զարդեղեն թալանելու: Ավետիս Թեքեյանի հուշագրության մեջ կարդում ենք Ուրֆայի տեղահանության մասին մի կնոջ պատմություն. «Կը յառաջանայինք դէպի գիւղը... Այդ միջոցին տեսանք խումբ մը գիւղացի կիներ (զագա), ովքեր դէպի մեր կողմը կու գային... Երբ գիւղացի կիները մօտեցան մեզի, կոտորած թուրքերէնով մը ըսին. «Ո՞ւր մնացիք, սատկելիքներ»: ...Այդ սրիկայ կիները իրենց ափերուն մէջ նախապէս պատրաստած մոխիրները մեր աչքերուն նետելով յարձակեցան մեր վրայ եւ սկսան կողոպտել մեզ: Մէկը մեր մատներուն մատանիները կը հանէր, միւսը մեր ականջներուն օղերը: Յետոյ սկսան քակել մեր գօտիները, հանեցին մեր հագուստները եւ լեցուցին կողովներու մէջ եւ բռնեցին վերադարձի ճամբան, ըսելով՝ «Սատկելիքներ, այլեւս ինչ բանի պիտի ծառայեն ասոնք ձեզի: Չէր գիտէր թէ այս լեռները ձեր գերեզմանները պիտի ըլլան եւ ձեզ գայլեր եւ թռչուններ պիտի ուտեն»<sup>1</sup>:

Անդրադառնալով 1915 թ. ապրիլի վերջերին Քղիի հայության տեղահանությանն ու կոտորածին՝ Միրանույշ Եսայանը նկարագրում է Բալուում թուրքական և քրդական խաժամովի հարձակումը. «Երբ այսպէս կը վազեր կիներու այդ սարսափահար ամբոխը, հանկարծ կարկուտի պէս վար թափեցաւ երկսեռ քիւրտ-թուրք խուժանը՝ կիներու մէջ և սկսան անխնայ խլել ինչ որ տեսան կամ գտան՝ դրամ, զարդեղեն, հագուստ և այլն»<sup>2</sup>: Ականատես վերապրողներից եպիսկոպոս Գրիգորիս Պալաքյանը հավաստում է, որ Եոզկատից մինչև Կեսարիա ճանապարհի վրա տղամարդկանց, կանանց և երեխաների ութսուն տոկոսը կրում էր հայերից գողացած եվրոպական արյունաներկ զգեստներ: Ըստ ականատեսի վկայության՝ հագուստի մի մասը կարելի էր տեսնել մեկի հագին, իսկ մյուս մասը՝ մեկ ուրիշի<sup>3</sup>:

Քղի քաղաքի մեկ այլ վերապրող՝ Եփրեմ Տլեմյանը, պատմում է Ջան գյուղում 1915 թ. հունիսին տեղի ունեցած կոտորածի մասին. «Այս կոտորածի ատեն ես և մայրս մտանք քիւրտի մը տուն: Այս տան մարդը և կինը զացած էին կոտորածի վայրը՝ կողոպուտի: Կոտորածը և կողոպուտը վերջանալէ յետոյ վերադարձան տուն: Մեր շորերը հանեցինք և մեզի տուին ցնցոտիներ»<sup>4</sup>:

Իսկ ըստ կարինցի կանանց վկայության՝ 1915 թ. հունիսի 3-ին քսանհինգ տուն հայեր Բալուի և Քղիի ճանապարհով գնում են Խարբերդ: Քաղա-

---

<sup>1</sup> Թեքեյան Ա., Դրուագներ ապրիլեան Մեծ եղեռնէն. Պահեսնիհայութեան գողգոթան (1914-1918), Պէյրուք, 1956, էջ 134:

<sup>2</sup> Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, հ. III, էջ 162:

<sup>3</sup> Տե՛ս Պալաքեան Գ. Մ. Վարդ., Հայ գողգոթան. Դրուագներ հայ մարտիրոսագրութենէ. Պեոյիւնէն դէպի Զօր, 1914-1920, Վիեննա, 1922, էջ 231-233:

<sup>4</sup> Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, հ. III, էջ 166:



քից դուրս տեղադրված է լինում մի վրան, ուր երկու թուրք կանայք ոստիկանների հսկողությամբ մանրագնին խուզարկում էին բոլորին<sup>1</sup>:

Թուրք և քուրդ կանայք երբեմն գնում էին կոտորածի վայրեր՝ տղամարդկանց կողոպտած իրերը տանելու: Երզնկացի վերապրող Վարդան Մալյանն իր հուշագրության մեջ 1915 թ. մայիսին տեղի ունեցած տեղահանության մասին վկայում է, որ նրանք գնում էին այն վայրերը, որտեղով անցնում էին տեղահանված հայերի քարավանները և օգնում իրենց ամուսիններին ու եղբայրներին՝ տեղափոխելու կողոպտված իրերը: «Հազիվ քիչ մը առաջացած էինք, դարձեալ հրացանի մը նշանին վրայ շրջակայ լեռներէն մեծ բազմութեամբ զինեալ քուրդ կամ թուրքեր շրջապատեցին զմեզ: Չհապանները ձիերու կամ էջերու չոյրները բեռներով միասին քշեցին տարին և իրենց չար կիներու յանձնելով դարձան մարդասպանութեան և աւարի»<sup>2</sup>:

*Աշխատեցնելու կամ այլ նպատակներով երեխաներին ու կանանց առևանգող կամ տանող կանայք:* Ինչպես նշվեց, կանայք գնում էին այն վայրերը, որտեղով անցնում էին տեղահանված հայերի քարավանները և կողոպուտով զբաղվելուց բացի, տարագրյալներից ընտրում էին ու տանում, իսկ երբեմն առևանգում երեխաների, կանանց կամ երիտասարդ հարսների՝ իրենց տանն աշխատեցնելու կամ այլ նպատակներով:

Վերապրողներից մեկը՝ Ավետիս Թեքեյանը, 1915 թ. պահեսնիհայության բռնագաղթի առնչությամբ վկայում է. «Տաճիկ կիները իրենց ամուսինների դրդումով տեղ կը կանգնէին եւ իրենց տունը տանել կ'ուզէին Չաթի հրապարակը լքուած հայ ընտանիքներէն անոնք որոնք հարուստ էին կամ մանկամարդ աղջիկներ եւ թարմատի հարսեր ունէին»<sup>3</sup>: Մուսուլման կանանց կողմից հայ երեխաներին իրենց տուն տանելու մասին է պատմում վերապրող Սմբատ Դավթյանը, որը բայազետցիների տեղահանության ժամանակ՝ 1916 թ. աշնանը, Մարագա գյուղում իր քրոջն ու եղբորը թողնում է մի ծեր կնոջ խնամքին, իսկ ինքը գնում մորը փնտրելու: Երբ վերադառնում է, ծեր կինը պատմում է. «Մի քաղաքի կին մոտեցավ, բռնեց տղայի ձեռքը ու հարցրեց, թե ում երեխան է: Ես ասացի, որ չեմ ճանաչում... Ձեռքը մեկնեց, որ տղի ձեռքը բռնի, քույրը ճչաց, գրկեց ախպորն ու լաց եղավ... Կնիկը չդիմացավ ասաց՝ երկուսին էլ տուր, տանեմ պահեմ: Տվեցի»<sup>4</sup>:

Այս կապակցությամբ հետաքրքիր է նաև 1915 թ. բաբերդցիների կոտորածն ու տեղահանությունը վերապրած Արշալույս Տեր-Նազարեթյանի վկայությունը Երզնկայի մոտակայքում տեղի ունեցածի մասին. «Ես էլ խոսքերը լսեցի՝ ուրեմն բոլորին ջուրն են գցել: Նստա լաց եմ լինում: Մեկ էլ երկու

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 45:

<sup>2</sup> **Մալեան Վ.**, Երզնկայի Հայոց տեղահանությունը եւ ջարդը. Ականատեսի մը նօթագրութենէն, ձեռագիր հուշեր, ՀՅԹԻ, թղթապանակ 54: Հուշագրությունը գրի է առնվել 1930-ական թթ.: Վարդան Մալյանը Մեծ եղեռնի տարիներին հավանաբար եղել է 10-12 տարեկան:

<sup>3</sup> **Թեքեան Ա.**, նշվ. աշխ., էջ 81:

<sup>4</sup> **Սվազյան Վ.**, նշվ. աշխ., էջ 173:

թուրք կնիկ եկան հարցրին՝ «Կգա՞ս մեր տունը»: Դրանք էլ մեծ զինվորականի կնիկներ էին: Էլա դրանց հետ գնացի: Իմ ձեռքեն բռնեցին, ինձ տարան երկու փողոց էն կողմը: Ինձ լողացրին, շորեր հագցրին, երեք տարի պահեցին: Անունս Գյուլի էին դրած»<sup>1</sup>:

Էրզրումցի Աշխեն Պողիկյանն այդ առնչությամբ պատմում է 1915 թ. աշնանը Տիգրանակերտում իրենց քարավանի հետ տեղի ունեցածի մասին. «Հաջորդ օրը Լևոնիկը մեռավ: Ես մնացի մենակ մայրիկիս հետ: Արդեն ութ տարեկան էի և միսիթարում ու հանգստացնում էի մայրիկիս: Տրտերն ընկան, ուտելիք չկար: Սարսափելի էր: Մի օր մի կին եկավ և մորս ասաց՝ «Տուր աղջկադ տանեմ ինձ երեխա՝ էս սառը խանի մեջ չի ապրի»: Ես չէի ուզում գնալ, բայց մայրիկս ինձ համոզում էր... Թուրք կինը ասաց՝ «Գյավուրին լավություն չարժի անել»: Վերջը հետը գնացի այդ կնոջ տուն»<sup>2</sup>:

Հայ երեխաներին առևանգելու մասին է վկայում նաև արդեն վկայակոչված Առաքել Թագոյանը. «Մենք մինչև հասանք Ակն այնքան շատցանք նոր գաղթականներով, որ դարձանք մոտ տասը հազար: Էնտեղ մեկ գիշեր մնացինք: Մամաս իմ ձեռքը բռնել էր: Մեզի հետ էր Վարդան հորեղբորս աղջիկը: Անցանք գետը: Գացինք, գյուղ մը կար: Գացինք, որ հաց ուզենք: Ճարչունենք: Մեկ էլ երկու կնիկ եկան էս Վարդան հորեղբորս աղջկան քաշքշեցին ու տարան: Էսպես մեզի հասցուցին Արաբկիր: Մամաս ինձ շալակեց, քանի որ շատ հոգնած էի, և ոտքերս արյունոտվել էին: Մի մարդ ու կնիկ ինձ մամայիս գիրկեն հափշտակեցին ու տարին»<sup>3</sup>:

\* \* \*

Քննարկելով Օսմանյան կայսրությունում 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին հայերի նկատմամբ իրականացված զանգվածային կոտորածներին ու ցեղասպանությանը ոճրագործ մուսուլման կանանց մասնակցության գործառությանն առանձնահատկությունները և զուգահեռներ անցկացնելով դրանց ու այլ ժողովուրդների ցեղասպանությունների իրականացման ժամանակ տեղ գտած համանման երևույթների միջև՝ կարող ենք հստակորեն փաստել, որ կանանց մասնակցության խնդիրը զանգվածային բռնություններին հարկ է դիտարկել ոչ այնքան գենդերային կարծրատիպերի, որքան հասարակության շարքային քաղաքացիների ներգրավվածության տեսանկյունից: Անշուշտ կանանց մասնակցությանը մեծապես նպաստում են ատելության և նախանձի գործոնները: Այդուհանդերձ, հարկ է նշել այն երեք հիմնական սոցիալ-հոգեբանական և սոցիալ-մշակութային մեխանիզմները,

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 202:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 226:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 233-234:

որոնք լույս են սփռում կոտորածներին և ցեղասպանություններին հասարակության լայնածավալ մասնակցության խնդրի վրա:

1. *Նախացեղասպանական քարոզչության ազդեցությունը*: Ժողովրդական զանգվածներին ուղղորդելու և ցեղասպանությանը մասնակից դարձնելու համար իշխանությունները որպես քարոզչության ենթատեքստ օգտագործում էին «մշակութային մոդելները», որոնք հիմնականում յուրացվում են սոցիալիզացիայի<sup>1</sup> ընթացքում: Դրանով ստեղծում են հոգեբանական այնպիսի մթնոլորտ, որ անհատները կորցնում են իրենց բնորոշ հատկանիշները և արմատապես վերափոխում իրենց վարքագիծը: Այդպիսի «մշակութային մոդելներից» է «օտարի» կերպարի վերաբերյալ պաթոզեն վտանգ պարունակող տեղեկատվությունը, որն Օսմանյան կայսրությունում հանգում էր գլխավորապես հայերի «ապստամբ» և «դավաճան» լինելու մասին լուրերի տարածմանը: Քարոզչության ենթատեքստում օգտագործվող «մշակութային մոդելներից» են նաև հայրենիքի մասին պատկերացումները, «ոսկե դարի» վերականգնումը, «սրբազան պատերազմը», թուրքական «ազգային եսի» կերտման ձգտումը և այլն<sup>2</sup>:

2. *Հասարակության հիերարխիկ (ուղղահայաց) կառուցվածքը*: Չանգվածային կոտորածներին ու ցեղասպանությանն ամբողջ հասարակության, այդ թվում նաև կանանց, ներգրավվածությունը պայմանավորված է նաև տվյալ հասարակության ընդգծված ուղղահայաց կառուցվածքով: Ավանդական ուղղահայաց կառուցվածք ունեցող հասարակությունների կազմակերպման հիմքում խարսխված են հավաքական արժեքները, որոնք ծայրահեղ դրսևորմամբ կարող են վերածվել զանգվածային բռնության կամ ցեղասպանության հրամայականի, քանի որ կիրառվում են ներխուժային համերաշխություն հաստատելու համար և վերացնում բռնություն գործադրելուն խոչընդոտող արգելքները<sup>3</sup>: Ավանդական հասարակություններում մեծ դեր ունեն նաև գենդերային առանձնահատկությունները. հասարակության մեջ կանանց զբաղեցրած սոցիալական դիրքը կարող է թելադրել զանգվածային բռնություններին նրանց մասնակցության ձևերն ու ծավալները: Հենց այն հանգամանքով, որ մուսուլման կանայք հասարակության մեջ չունեին կայուն սոցիալական դիրք և չէին զբաղվում հասարակական ակտիվ գործունեությամբ, կարելի է բացատրել, թե ինչու Օսմանյան կայսրությունում արևմտա-

---

<sup>1</sup> Անհատի՝ իր էթնիկ հասարակություն և մշակույթ ներգրավման գործընթացն ազգագրության մեջ արտահայտվում է «սոցիալիզացիա» կամ «ինկուլտուրացիա» հասկացություններով: Դա անհատի կողմից իր սոցիումալիզացիային միջավայրի (մշակութային տարածության և ժամանակի, գործառության օբյեկտների, գործունեության, շփման, վարքագծային կրթության) յուրացման գործընթացն է:

<sup>2</sup> Տե՛ս **Գրիգորյան Հ.**, «Մշակութային մոդելները» որպես ամբոխի վարքի կազմակերպման ազդակներ Հայոց ցեղասպանության համատեքստում, Մերձավոր Արևելք, Պատմություն, քաղաքականություն, մշակույթ, Հոդվածների ժողովածու, VII, Երևան, 2011, էջ 98-103:

<sup>3</sup> Տե՛ս **Waller J.**, *Becoming Evil*, Oxford, 2007, pp. 174-189.

հայության բնաջնջմանը մասնակցել են գերազանցապես շարքային կանայք, որոնք հիմնականում զբաղվում էին կոդոպուտով<sup>1</sup>:

*3. Իրավիճակային ճնշումը:* Հասարակության շարքային քաղաքացիները զանգվածային կոտորածներին ու ցեղասպանությանը մասնակցում են երկու կերպ. կամ ընդգրկվում են ռազմական և կիսառազմականացված ինստիտուտներում, կամ ներգրավվում փողոցային ոճրագործ խմբերում: Ժողովրդական զանգվածների՝ կոտորածներին ու ցեղասպանությանը մասնակից դառնալու գլխավոր ազդակներից են միջավայրի ճնշումը և խմբային համատեղման ազդեցությունները<sup>2</sup>: Օսմանյան կայսրությունում շարքային մուսուլման կանայք զանգվածային բռնություններին ու անկարգություններին մասնակցում էին գլխավորապես իրավիճակային ճնշմամբ՝ ընդգրկվելով միայն կանանցից բաղկացած փողոցային խմբերում, երբեմն նաև տղամարդկանց հետ:

### **Hasmik Grigoryan – *The “Denary” Executors of the Armenian Genocide: Functional Peculiarities of Women’s Participation***

To understand mass violence, massacres, genocides, as well as to prevent their organization and implementation it is necessary to conduct a research of convictions of different social groups, the concerns they have, their goals and motives of participation in mass violence.

In general, it is a common belief that the implementation of mass violence is the priority of men, that women in their nature are not inclined to commitment of cruelty. In contrast with the existing stereotypes researches have recently shown, that the “human resource” implementing mass murders and genocides is in fact replenished by such marginalized groups as women and children who do not yield to men by their cruelty.

In the article the functional peculiarities of participation of Muslim women are grouped and illustrated with examples in the mass murders and genocide committed against the Armenians in the Ottoman Empire at the end of the 19<sup>th</sup> and at the beginning of the 20<sup>th</sup> century. Muslim women have often appeared to be in the role of initiators, immediate participants, undertakers, assistants, sneakers, burglars and abductors.

---

<sup>1</sup> Մուսուլման, հատկապես թուրք կանանց՝ հասարակության մեջ ունեցած սոցիալական կարգավիճակի մասին մանրամասն տե՛ս **Голобородько И. И. (Южанин И.)**, Старая и новая Турция, М., 1908, с. 38-56:

<sup>2</sup> Մանրամասն տե՛ս **Valentino B.**, Final Solutions: Mass Killing and Genocide in the Twentieth Century, Ithaca and London, 2004, p. 46:

**ԶՄՅՈՒՌՆԻԱՅԻ ՀԱՅ ԵՎ ՀՈՒՅՆ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԲՆԱԶՆՁՄԱՆ  
ՄՊԱՌՆԱԼԻՔԻ ԺԽՏՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ (1922 Թ. ՄԵՊՏԵՄԲԵՐ)**

Մարդկային հասարակությանը բնորոշ է սոցիալ-հոգեբանական մի օրինաչափություն, որը չի շրջանցում թե՛ անհատին և թե՛ մարդկանց խմբին. հանգամանքների բերումով և տարբեր իրադրություններում այն արթնացնում է մարդու հոգու խորքում նիրհող բարբարոսական գրգռները: Այս երևույթը հոգեբանության մեջ հայտնի է հոգեբանական նահանջ (ռեգրեսիա) անվամբ: Մարդկանց խմբերի վրա առավել ակտիվ դրսևորումներ ունի ֆիլոգենետիկ (Եվոյուցիոն) նահանջը, որի էությունն այս կամ այն չափով քաղաքակիրթ մարդու կամ մարդկանց խմբի հոգևոր վերադարձն է դեպի նախնադարյան հոտի մակարդակ<sup>1</sup>: Այս երևույթն ի հայտ է գալիս հատկապես զանգվածային ագրեսիայի պայմաններում, որի ամենացայտուն դրսևորումը ցեղասպանությունն է:

Փաստորեն ագրեսորը (տվյալ պարագայում՝ դահիճը), ի կատար անելով իրեն վիճակված աշխատանքը, կամա թե ակամա դառնում է մարդու դեմ ուղղված հանցագործության կատարածուն, մասնակիցը և մեղսակիցը, այն է՝ հանուն պետության շահի, ավարտին է հասցնում ստանձնած հանձնարարականը: Մինչդեռ, ինչպես նշում է հոգեբան Կ. Նալչաջյանը, մարդն իր ագրեսիվ վարքագծին արդարացումներ տալու ներքին պահանջ է զգում, որը և բավարարվում է զոհի վարկաբեկմամբ: Այս մեխանիզմը մեծապես օգնում է ագրեսորին՝ ապագա զոհին անմարդկային հատկանիշներ և վտանգավոր դիտավորություններ վերագրելու հարցում: Համանման հատկանիշները վերագրվում են նաև մարդկանց խմբին, երբ զոհի վարկաբեկման հետ մեկտեղ անհրաժեշտ է դառնում համահարթեցում, այն է՝ բոլորը՝ տղամարդ թե՛ ծերունի, կին թե՛ երեխա, առանց խտրության՝ արժանի են միևնույն վերաբերմունքին<sup>2</sup>:

Քրիստոնյաներին ոչնչացնելն օրինաչափ դարձնելու նպատակով հորինված և հարմարեցված արդարացումների լավագույն օրինակներից է Հայոց ցեղասպանությունը ծրագրած և իրականացրած «Միություն և առաջադիմություն» կուսակցության՝ Թուրքիայի ներքին գործերի նախարար Թա-

<sup>1</sup> Տե՛ս **Նալչաջյան Կ.**, Ցեղասպանությունը՝ որպես հոգեբանական ֆենոմեն, Հայոց Մեծ եղեռն-90, հոդվածների ժողովածու, Պատասխանատու խմբագիր՝ Արամ Միմոնյան, Երևան, 2005, էջ 339:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 341-342:

լեաթի նախագահությամբ 1915 թ. անցկացված գաղտնի խորհրդակցության ընթացքում կենտրոնական կոմիտեի անդամներից մեկի՝ դիվանապահ, բժիշկ Նազրմի հետևյալ հայտարարությունը. «Վայրագութիւնը բնութեան օրէնքն է, հարցը ասոր ընդունելի կամ մերժելի ըլլալը տրամաբանելու մէջն է: Ամբողջ կենդանիները, նոյնիսկ բոյսերը զիրար ուտելով, զիրար ջնջելով չեն սնանիր, ուրեմն ասոնց զիրար ուտելն եւ զիրար ջնջելը արգիլեցէք. Բայց վայրագութիւն է կրնա՞նք ըսել»<sup>1</sup>:

«Միություն և առաջադիմություն» կուսակցության Կաստամոնուի պատասխանատու քարտուղար, պատգամավոր, կրոնական գործիչ Հասան Ֆեհմին նույն խորհրդակցության ժամանակ հայտարարում է, որ այն ամենը, ինչը վնասակար է, պետք է կործանվի<sup>2</sup>:

Հետաքրքիր է Հ. Պողոսյանի դիտողությունը. «Բնութեան մէջ ոչինչ կալ յեղակարծ, հոգեկան աշխարհի մէջ ոչինչ յանկարծակի տեղի կ'ունենայ: Ամեն արդիւնք պատճառ մը, եւ ամեն հոգեկան երեւոյթ հոգեկան նախագործողութիւն մը կ'ենթադրէ... Թշնամին ջարդերէ ու տեղափոխութիւններէ առաջ կ'սկսի իր ներքին թշնամութեան եւ չարամտութեան նշանները ցոյց տալ: Նախ կեղրոնը իր մէջ դիւային ծրագիրներ կը դարբնէ եւ յետոյ զայն գործադրելու համար երկրին ամեն կողմը եւ կամ մասնաւոր կեղրոններ գտնուող պաշտօնեաներու, խաֆիյէներու, կրօնամոլ մօլլաներու եւ կարելոր ու ազդեցիկ պէլերու եւ անձնաւորութիւններու կը դիմէ: Այս վերջիններն ալ իրենց կարգին կանխամտածուած այս դիւային ծրագիրները յարմար միջոցաւ մը իրենց մարդոց կը պարզեն, անոնց միտքը կը թունաւորեն, որպէս զի որոշեալ օրուան համար խուժանային միտքը կազմ ու պատրաստ ըլլայ... Ջարդերէն առաջ պատահող շփոթութիւնները, վրդովմունքն ու յուզումներն են, որ ամբողջ ժողովուրդը ոչխարային հոգեբանութեան մը, խուժանային վիճակի մը կ'ենթարկեն: Անոնց կապարային ծանրութեան տակ ամբողջ ժողովուրդը կը հիւծի, կը ճնշուի, մինչեւ որ տիրական ձայն մը, ցեղային հոգի մը, այդ ճնշուած յուզումներուն ազատ ելք մը տայ»<sup>3</sup>:

Փաստորեն, ըստ նրա՝ ցեղասպանության կազմակերպիչները ստեղծում են որոշակի մթնոլորտ այն հնարավորինս դյուրին իրականացնելու նպատակով: Այսպես. մշակվում է գործողությունների որոշակի ծրագիր, որը նպատակաուղղված է թե՛ ցեղասպանության զոհերի և թե՛ այն իրականացնողների հոգեբանության՝ համապատասխանաբար ընդարմացմանն ու խեղաթյուրմանը:

Մահվան դատապարտված մարդկանց խումբը հնազանդ և կառավարելի դարձնելու նպատակով ցեղասպանության կազմակերպիչները փաստորեն

---

<sup>1</sup> Հղումը ըստ՝ **Մելվան Զատէ Բիֆաթ**, Օսմանեան յեղափոխութեան մութ ծայքերը եւ իթթիհատի հայաջինջ ծրագիրները, Պէրոյթ, 1968, էջ 98:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 100:

<sup>3</sup> **Պողոսեան Յ.**, Հայ ցեղը եւ հալածանքները հոգեբանութեան լոյսին տակ, Երևան, 1919, էջ 25-27:

ստեղծում են հոգեբանական այնպիսի մթնոլորտ, որը նրա մեջ փրկության ինչ-որ միջոց ունենալու հավատ է սերմանում: Ըստ այդմ՝ արդեն գոհի կարգավիճակ ստանձնած ժողովուրդը կամ մարդկանց խումբը հոգեբանորեն կախման մեջ է ընկնում դահճից: Հետևաբար, այդպիսի պայմանները հարկադրում են նրանց ծանրութեթև անել իրենց վարքագիծն ու պահվածքը և լինել ավելի հնազանդ<sup>1</sup>: Ամերիկյան հոգեբան Սթեյնլի Միլգրամը մի փորձ է կատարել և այն համեմատել ցեղասպանության հետ<sup>2</sup>: Նա հանգել է միակ հնարավոր եզրակացության, ըստ որի՝ շարքային մարդիկ, այս կամ այն հանձնարարությունը կատարելիս չունենալով որևէ թշնամական մտադրություն, կարող են դառնալ կործանարար գործողությունների կատարածուներ նույնիսկ այն դեպքում, երբ գիտակցում են դրանց կործանարար բնույթը, անհամապատասխանությունը բարոյականության չափանիշներին, սակայն անում են այն, ինչն իրենց պարտադրված է<sup>3</sup>:

---

<sup>1</sup> **Փանոսյան Վ.**, Ցեղասպանության հոգեբանությունը. Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, հ. 10-11, Երևան, 2005, էջ 252:

<sup>2</sup> 1960-ական թվականներին Ս. Միլգրամը կատարել է հետևյալ փորձը. նա նախօրոք տարբեր սենյակներում առանձնացրել է երկու հոգու: Նրանցից առաջինը պետք է ժամանակ առ ժամանակ հատուկ սարքավորումների՝ էլեկտրական հարվածի միջոցով ազդեր երկրորդի հիշողության կենտրոնի վրա: Իրականում հոգեբանական այդ փորձի նպատակն էր որոշել առաջինի՝ էլեկտրական հարվածներ հասցնելու ունակության պատրաստակամությունը: Որքան ավելի էր առաջին սենյակում գտնվողը մեծացնում էլեկտրական հարվածների ուժգնությունը, այնքան ավելի էր լարվում երկրորդի հոգեբանական կոնֆլիկտային իրավիճակը: Ընդ որում, երկրորդի տառապանքները ստիպում էին առաջինին դադարեցնել այդ ամենը, և ամեն անգամ, երբ նա հապաղում էր հարված հասցնել, նրա «վերադասար» հարկադրում էր այդ անել: Առաջինին մնում էր ընտրություն կատարել. ենթարկվել «վերադասին» և շարունակել հարվածները կամ հնազանդվել ներքին ձայնին՝ խղճին: Երբ նա ընտրում է երկրորդ տարբերակը, նրա և «վերադասի» միջև տեղի է ունենում խզում: Այս փորձը կատարվել է քառասուն անձանց հետ, որոնցից քսանհինգը շարունակել են չորս հարյուր հիսուն վոլտ հզորությամբ էլեկտրական հարվածներ տեղալ: Փորձերի արդյունքներից Միլգրամը հանգել է հետևյալ եզրակացության. «Ցանկացած ուժի կամ հարկադրանքի դեպքում անհնազանդությունը նվազում է»: Վերոհիշյալ փորձի և ցեղասպանության միջև գուցե անցկացնելու նպատակով Ս. Միլգրամը փորձի մասնակիցներից առաջինին փոխարինել է զինվորով, որը ենթարկվում էր իր վերադասի կարգադրությանը: Սկզբում զինվորի առջև դրված պահանջի մեջ արտասովոր ոչինչ չկար, որը կապ ունենար հրամանը կատարող զինվորի բարոյական սկզբունքների հետ: Վերադասի հետագա հրամանների հետևանքով զինվորի՝ առաջին հայացքից սովորական թվացող գործողությունները դառնում էին անմարդկային: Զինվորը սկսում է գիտակցել, որ անհրաժեշտ է սահմանափակվել, սակայն չի կողմնորոշվում սահմանեզրի ընտրության հարցում: Երբ նրան տրվում են նոր հրամաններ, նա խուճապի է մատնվում, քանի որ բարոյական տեսակետից վերջին հրամաններն առաջինների համեմատությամբ թվում էին անիրագործելի: Այսպիսով, ակնհայտ է դառնում է, որ զինվորը հայտնվել է ծուղակի մեջ, քանի որ սկզբնական կարգադրությունները շատ սովորական բնույթ ունեին, սակայն նա չէր կարող հրաժարվել հետագա գործողություններից, քանի որ հարկադրված էր ենթարկվել իր «վերադասին» (**Փանոսյան Վ.**, նշվ. աշխ., էջ 250):

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 250- 251:

Անկախ այն բանից՝ հանցագործներն անմեղ մարդկանց կյանքն են խլում, թե՞ ոչ, նրանք հիմնականում շարքային մարդիկ են, սակայն մարդիկ, որոնք այդ հանցանքը կատարելու պարտավորություն են զգում, այսինքն՝ իրենց կարծիքով կատարում են կյանքում իրենց վերագրված սոցիալական դերը<sup>1</sup>:

### **«Բնքնապաշտպանական բնա՞գր», թե՞ իրողությունների խեղաթյուրված ընկալում**

1922 թ. սեպտեմբերին Ջմյունիայում քրիստոնյա բնակչության ոչնչացման հանցավոր ծրագիրը մշակելիս, որպես իրենց գործողությունների ապահովման և ավարտին հասցնելու երաշխիք, քեմալականները շահարկել են հոգեբանական տարբեր գործոններ, որոնցից թերևս ամենապարզունակը քրիստոնյա բնակչությանը հանկարծակիի բերելն էր: Այսինքն՝ քաղաքի քրիստոնյա բնակչությունը լայն առումով չպետք է հավատ ընծայեր առաջիկա կոտորածի սպառնալիքին և առավել ևս ցանկություն դրսևորեր մասնակցելու արագորեն ծավալվող հանցագործությունների խոչընդոտմանը:

Սույն հողվածում քննարկվում է կանխամտածված ոճրագործության առնչությամբ Ջմյունիայի հայ և հույն քրիստոնյա բնակչության դիրքորոշման հիմնախնդիրը: Պարզաբանենք. բացառելով իրենց ոչնչացման հնարավորության հավանականությունը՝ քաղաքի հայ և հույն քրիստոնյա բնակիչներն իրականում «ազատ են արձակել» ոճրագործի ձեռքերը և դյուրին դարձրել նախապես ծրագրված գործողությունների անարգելի կատար ածումը:

Ջմյունիայի հայերն ու հույներն անտեսում էին իրենց բնաջնջմանը վերաբերող բոլոր նախազգուշացումները, դրանք համարում ստահող տեղեկություններ և ապավինում քաղաքում տեղակայված եվրոպական պետությունների ներկայացուցիչների համոզիչ հորդորներին, ըստ որոնց՝ վախենալու կարիքը չկար, կոտորած չէր կարող տեղի ունենալ, քանի որ բոլոր քրիստոնյաներն իբր պաշտպանված էին և այլն: Այս առնչությամբ խիստ հատկանշական է զմյունիաբնակ հայերի առաջնորդ Ղևոնդ եպիսկոպոս Դուրյանի՝ 1922 թ. նոյեմբերի 23-ին Աթենքում գրած համառոտ տեղեկագիրը, որում նա նշում է. «Վտանգին լրջությեան առջեւ խորհրդակցութիւններ ունեցանք Ջմիւռնիոյ մետրապոլիտ Գեր. Խրիստոսթոմոս սրբազանի\* հետ եւ որոշեցինք սեպտեմբեր 2 շաբաթ օր ստիպողաբար դիմում կատարել Հէլլէն բարձր Քոմիսէր եւ Ջմիւռնիոյ կառավարիչ պ. Սթերիատիսի, դժբախտաբար, կառավարիչը մեզ չընդունեց՝ առարկելով, թէ նախապէս ժամադրութիւն

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 251:

\* Խոսքը վերաբերում է 1910-1914 թթ. և 1919-1922 թթ. Ջմյունիայի ուղղափառ հույների միտրոպոլիտ (արքեպիսկոպոս), Նորին սրբազնություն Խրիստոստոմոսին (1867-1922), որին քեմալականները սարսափելի խոշտանգումների ենթարկելով սպանել են:



չէինք խնդրած. յաջորդ օր՝ կիրակի, մասնաւոր ժամադրութեամբ յոյն, հայ եւ բողոքական եկեղեցեաց պետեր ներկայացանք պ. Սթերիատիսի, որ կացութեան ամենաճանր կերպով վտանգուած ըլլալը յայտնեց եւ ազատ թողուց օտար հիւպատոսներու մօտ մեր ընելիք դիմումներուն մէջ: Քրիստոնէայ հոգեւոր պետերուն հիւպատոսներու մօտ ըրած դիմումը մեր հասարակութեան մէջ եւս վատահոռութիւն ներշնչեց, որ անգղիական, ամերիկեան, ֆրանսական եւ իտալական միջամտութիւն մը կամ պաշտպանութիւն մը ահաւոր աղէտի մը առաջքը պիտի կրնայ առնել եւ այս թեզը միշտ առաջ կը տարուէր, ու այդ մասին շատ կը խօսուէր: Մեր դիմումին հետեւանքով ամերիկեան հիւպատոսը հաւաստեց, որ ինք թէ՛ Ամերիկա եւ թէ՛ Պոլիս կարելորդ հեռագրած է եւ տակաւին պատասխան չէ ստացած. այսուամենայնիւ, կրկին դիմումներ կատարելէ չպիտի դադրէր՝ կացութեան ծանրութիւնը նկատի ունենալով: Ֆրանսական հիւպատոսին մոտ մեր ըրած դիմումին առթիւ հիւպատոսը յանձնարարեց չվախնալ եւ հաւաստեց, որ թէ իսկ շփոթութիւններ ալ պատահին, ջարդ չէր կրնար ըլլալ, եւ թէ ֆրանսական զինուորներու ժամանումը օրէ օր կը սպասուէր Իզմիրի քրիստոնէից պաշտպանութեան համար: Իտալական հիւպատոսը նոյնպէս սոյն հաւաստիքներով ուզեց մեզ հանդարտեցնել եւ աւելցնել, թէ 15.000 իզմիրաբնակ իտալահպատակները պաշտպանել պարտաւորուած ըլլալով ինքնին պաշտպանած պիտի ըլլար բոլոր քրիստոնէաները, քանի որ իր հպատակները գրեթէ բոլոր թաղերուն մէջ բնակութիւն հաստատած էին... Քաջալերական խօսքերը բաւական եղան, որ ես զգուշանայի իմ ժողովուրդիս ընելէ կացութեան մասին այնպիսի աննպաստ յայտնութիւններ, որոնք զինքը սարսափի կրնային մատնել եւ յառաջ բերել վտանգավոր խուճապ մը»<sup>1</sup>:

Հայտնի է, որ Զմյուռնիայի ինքնապաշտպանության մարտիկներ Բ. Ջամբազյանը և Հ. Մելքոնյանը, մտնելով «Արևելյան մամուլ» օրաթերթի\* տպարան, հայտարարում են կոտորածի անխուսափելիության մասին և որպէս փրկության լավագոյն միջոց առաջարկում ժողովրդին տեղափոխել մոտակա կղզիներ<sup>2</sup>: Մինչդեռ Ղևոնդ եպիսկոպոս Դուրյանը հորդորում է խուճապի չմատնվել և վստահաբար հայտարարում, որ քաղաքի քրիստոնյաներն անհանգստանալու կարիք չունեն, քանի որ լավ հարաբերություններ ունենալով մուֆթիի հետ՝ ինքը տեսակցել է նրան և հավաստիացել, որ նրանց կյանքին որևէ վտանգ չի սպառնում<sup>3</sup>: Այս առնչությամբ Բ. Ջամբազյանը գրում է. «Ժողովուրդին մէջ աղմուկ, իրարանցում մը տեղի ունեցաւ: Եկան, հրեցին, հրմշտեցին զիս վար առին ու սկսան ծեծել... Այդ ատեն Հայ-

<sup>1</sup> Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆոնդ 430, ցուցակ 1, գործ 748, էջ 1-2:

\* Գրական-քաղաքական պարբերական: Հրատարակվել է Զմյուռնիայում 1871-1909 և 1919-1922 թթ.: 1871-1893 թթ.՝ ամսագիր, 1894-1902 թթ.՝ կիսամյա հանդես, 1903-1909 թթ.՝ շաբաթաթերթ, 1919-1922 թթ.՝ օրաթերթ:

<sup>2</sup> Տե՛ս **Ճամբազեան Բ.**, Պատանի կեանքի մը պատմութիւնը, Անթիլիաս, 1960, էջ 42:

<sup>3</sup> Նույն տեղում:

նոցի\* կողմէն ռուսք մը պայթեցաւ: Բակին մէջ մարդ չմնաց: Ամէն մարդ ծակ մը գտաւ մտնելու: Մէջտեղ մնացինք զինուածներս, որոնք քիչ ետք պիտի դառնային ազատարարները վեց հազար հոգիի»<sup>1</sup>:

Հետաքրքրական է, որ Բ. Ջամբազյանը, որը 1909 թ. Ադանայի կոտորածի ժամանակ եղել է ընդամենը վեց տարեկան, իսկ պատանեկության տարիներին դարձել քրիստոնյաների նկատմամբ թուրքական ցեղասպան քաղաքականության ակնատեսը, քաջ գիտակցում էր, որ զմյուռնիաբնակ քրիստոնյաների ապրելու իրավունքը ոտնահարված էր, իսկ թուրքական վարչակարգը դաժանորեն իրականացնելու էր նրանց ոչնչացման ծրագիրը:

Զմյուռնիայի հայերն ու հույները, սակայն, որքան տարօրինակ թվա, համակվեցին այն համոզմամբ, թե իրենց կյանքին վտանգ չի սպառնում, քանի որ գտնվում էին, ինչպես իրենց էր թվում, օտարերկրյա ներկայացուցչությունների «հուսալի» հովանու ներքո և միամտաբար հավատում էին, որ թուրքերը հերթական անգամ վայրագություններ չեն իրականացնի: Այդ մասին վկայում է զմյուռնիահայ վերապրողներից Ռոզ Բերբերյան-Կաչոյանը. «Եղբայրս ասաց, որ պետք է հեռանանք քաղաքից, սակայն ծնողներս առարկեցին՝ ասելով, թե ինչ կարող է պատահել, երբ բոլոր ռազմանավերը հսկում են նավահանգիստը: Ոչինչ չի կարող պատահել այդքան շատ վկաների ներկայությամբ»<sup>2</sup>:

Մեկ այլ վերապրողի՝ ծնունդով Կեսարիայի Թալաս գյուղից Տիգրանուհի Արթինյանին (1911-2001), որը չորս տարեկանում կորցրել էր հորը և մոր հետ բնակություն հաստատել Զմյուռնիայում, վիճակվել է այստեղ դառնալ քեմալականների վայրագությունների ականատեսը: Նա բարեբախտաբար փրկվել է և ամերիկյան նավերից մեկի օգնությամբ ապաստանել Եգիպտոսում<sup>3</sup>: Հետագայում նա իր հուշերում վկայում է. «Միամիտները լավատես են. Չէ, ճանրմ, համաձայնականներու (Անտանտի – Թ. Մ.) նաւերը Իզմիրի առջեւ շարուած են, չեն թողուր որ բան մը պատահի... Արդէն կը լսուին փողոցը խուճապահար վագոններու ձայներ ու քիչ ետք ձիերու սմբակներու դոփիւնը սալաքարերուն վրայ: Մուսթաֆա Քեմալի կանոնավոր բանակն է, որ կ'անցնի մեր սրտերուն վրայէն: Չէմ գիտեր, թէ մեծերը ինչ կը խորհէին, բայց ինձ թուեցաւ, թէ քարացած էր հայ ժողովուրդի Տան մէջ գտնուող իւրաքանչիւր անձ... Մայրիկս արդէն պատրաստած է հիւանդապահուիլի իր

\* Խոսքը վերաբերում է Զմյուռնիայի հայկական թաղամասին:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 43: 1922 թ. սեպտեմբերյան հերոսական ինքնապաշտպանությանը զոհարար Թորգոմի (Արսեն - Արշակ - Խարիտոն Նազգաշյան) հրամանատարության ներքո մասնակցել են նաև Արսեն Չավուշը, Ավագ Վարդանյանը, Փանոս Մեսրոպը, Ավետիս Ալլահվերդյանը, Հովհաննես Մելքոնյանը, մանիսացի Աշճը Հակոբը, կեսարացի Թորոս Թորոսյանը և նրա կինը՝ Պայծառը, թոմարգացի մի քահանա և ուրիշներ (տե՛ս **Ρομαζιόν Σ.**, *Ιστορία τών Άρμενο - Έλληνικών στρατιωτικών σχέσεων και συνεργασίας*, Αθήνα, 2010, σελ. 214-215):

<sup>2</sup> Հղումը ըստ՝ **Housepian Dobkin M.**, *Smyrna 1922, The Destruction of a City*, Kent, Ohio, London, 1988, p. 120.

<sup>3</sup> Տե՛ս **Արթինեան Տ.**, Հայ մօր յուշեր, Տորոնտո, 2005, էջ 3:

Ճերմակ տարազը... կը խորհի, թե թերեւս կրնայ օգտակար ըլլալ, ու փրկել կէանքեր... Օր մը բաւական հրացանաձգութենէ մը վերջ կը լսի Սուրբ Ստեփանոսի զանգակի ղօղանջը հաստ-հաստ ու տխուր-տխուր, ու թաղմանական արարողութեան մը պէս կը տարածուի, թէ եկեղեցիէն օգնութեան կոչ մըն է օտար հիւպատոսարաններուն եւ կաթողիկէ եկեղեցիներուն ուղղուած: Ապա դարձեալ հրացանաձգութիւն եւ պայթիւն: Դիմադրած են հայերը. ու օտարներու միջնորդութեամբ պայման դրած են եկեղեցին պարպել, այր, կին ու երախայ, խառն կերպով: Մինչ թուրքերը պահանջած էին, որ այրերը մնան: Ըստ կարելոյն այդպէս խմբովին ելած են: Բայց այս ձեռով ազատուած այր մարդիկը կամ քարափին վրայ սպաննուեցան, կամ ալ գերի տարուելով աքտորուեցան մինչեւ Այնթափ»<sup>1</sup>:

Այն մասին, թէ ինչպէս են փրկվել իր ընտանիքի անդամները, Տիգրանուհին գրում է. «Որոշուած էր փոքր պատուհանէն նայիլ ու երբ տեսնուէր, թէ օտար պետութեան մը հովանիին տակ խումբ մը կ'անցնէր, յանկարծ բանալ դուռը, ու խառնուիլ օտարահպատակներուն: Այդպէս ալ եղաւ, եւ մենք հասանք ֆրանսական Գաթէտրալը... Հոն մեծ բազմութիւն մը խառնուած էր արդէն... Հրդեհը ծայր տուած էր արդէն ու հասած մինչեւ ծովեզերք, ու այդ գիշերն իսկ մենք ստիպուեցանք հեռանալ Գաթէտրալէն. ծովեզերքի շէնքերն ալ՝ պանդոկ, սրճարան եւ այլն, կերոնի պէս այրեցան: Հազարաւորներ անյուսօրէն օգնութիւն կ'աղաղակէին ծովէն, մինչ մեր գլուխներուն վրայ կը տեղար մոխիրի անձրեւ մը ու ճիչ ու աղաղակ ու սպանութիւն: Հսկայ մարտանաւեր կեցած էին ծովուն բացը, բայց լուռ վկաներն էին այս նախճիրին, լուսարձակները ձգած կը լուսանկարէին: Ոմանք կը փորձէին նաւակներով հեռանալ ծովեզերքէն, բայց մարդկային ծանրութեան տակ նաւակները կը շրջէին ու ծովամոյն կ'ըլլային. ուրիշներ երբ լողալով կը փորձէին մարտանաւի մը հասնիլ, ծովուն մէջն իսկ իրենց կոնակէն կը գնդակահարուէին. այսպէս մեռած է կարծեմ Մեսրոպեան վարժարանի տնօրէն Ելլ համալսարանէն շրջանաւարտ հոյակապ Անդրանիկ Կարապետեան: Մարդկային այս տարուբերուող ալիքը, մէկ կողմէ ծով, կոնակը հրդեհ, ու երկու կողմէ թուրք ջարդարարներ ունենալով լուսցուց»<sup>2</sup>:

Ինչո՞ւ էին Զմյուռնիայի քրիստոնյաները բացառում իրենց բնաջնջման հնարավորությունը: Ինչպէ՞ս է կարելի դա բացատրել, ինչո՞վ էր պայմանավորված այդ հանգամանքը: Կ. Նալչաջյանն այդ համոզմունքը համարում է մարդկանց խմբի կամ անհատների կողմից խնդրի հանդէպ ցուցաբերվող պարզունակ մոտեցման դրսևորում և շեշտում. «Էթնոգենեզը շատ տևական և բարդ գործընթաց է, և որևէ ազգի հոգեկերտվածքի ու էթնիկական բնավորության մէջ փոփոխությունների համար մի քանի տասնամյակն անգամ ընդամենը վայրկյան է, և այդ կարճ ժամանակահատվածում ազգի կերպարի

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 21-23:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 24-25:

մեջ կտրուկ փոփոխություններ ակնկալելն առնվազն միամտություն է, մանավանդ եթե հաշվի առնենք, որ նրանց էթնոքաղաքական ընդհանուր միտումների, նպատակադրումների և սոցիալական դիրքորոշումների մեջ որևէ շրջադարձային փոփոխություն չի գրանցվել: Ուստի «թուրքը փոխվել է» դիրքորոշումը ինչպես այն ժամանակ, այնպես էլ այսօր ընդամենը ինքնախաբեություն է, իրականության ժխտման վրա հիմնված հոգեբանական ինքնապաշտպանական բարդույթ, ցանկալին իրական համարելու պարզունակ մղում, որը թեև տվյալ պահին բավականաչափ հանգիստ ու լարվածություններից զերծ է դարձնում իրադրության ընկալումը, սակայն հանգեցնում է զգոնության կորստի, օբյեկտիվ իրողությունների խեղաթյուրված ընկալումների և էապես թուլացնում է ազգի հոգեբանական պաշտպանվածությունը՝ դրանից բխող հետևանքներով»<sup>1</sup>:

Ուշագրավ է նաև ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ն. Հովհաննիսյանի հետևյալ դիտարկումը, որը զոհ-դահիճ փոխհարաբերակցության առումով բնորոշ է նաև Զմյուռնիայի քրիստոնյա բնակչության նկատմամբ ցեղասպան քաղաքականություն իրականացրած քեմալականներին: «Ձոհի» հասկացությունն անբաժան է ցեղասպանությունից... Ձոհը ցեղասպանության պահին չէ, որ դառնում է զոհ, և ոչ էլ դահիճն է դահիճ դառնում ցեղասպանության իրականացման ժամանակ»<sup>2</sup>: Նա իրավացիորեն նկատում է, որ այդ երևույթը բարդ գործընթաց է, որն ավելի վաղ է սկսվում, քան բուն ցեղասպանությունը<sup>3</sup>:

Ի պատասխան առաջ քաշված հարցադրումների, ինչպես նաև նոր մոտեցումներն ավելի հիմնավոր ներկայացնելու նպատակով՝ սույն հոդվածի շրջանակում դիմեցինք նաև հարցազրույցների մեթոդին: Այսպես, աստվածաբան Շ. Խաչատրյանը հարցազրույցի ընթացքում համոզմունք հայտնեց, որ «հայերի ու հույների՝ իրենց ոչնչացման հնարավորությունը բացառելն ընդամենը հոգեբանական ինքնապաշտպանական բնագոյ է: Քրիստոնյաներն իրենց զոհ չէին ընկալում, թեև քրիստոնեությունը հաճախ թյուրիմացաբար մեկնաբանվում է որպես «զոհի կրոն»: Փաստորեն, բացառելով իրենց զոհ դառնալու հանգամանքը, պաշտպանվում էին հնարավոր բացասական երևույթից»<sup>4</sup>:

Տարօրինակ է մասնավորապես այն հանգամանքը, որ Զմյուռնիայի բազմաթիվ հայ և հույն բնակիչներ համոզված էին, թե մուսք գործելով քաղաք՝ թուրքական բանակը չի իրականացնելու իրեն հատուկ բարբարոսությունները, որոնցով սկզբից նեթ առլեցուն էր Օսմանյան կայսրության պատմությունը: Ընդհակառակը, նրանց թվում կային անձինք, որոնց կարծիքով թուրքական բանակն այդ ժամանակ պետք է լիներ «օրինապահ և քաղաքա-

<sup>1</sup> Նալչացյան Կ., նշվ. աշխ., էջ 347:

<sup>2</sup> Հովհաննիսյան Ն., Հայոց ցեղասպանությունը ցեղասպանագիտության հայեցակարգային համակարգում, Երևան, 2002, էջ 18:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Երևան, 03.05.2013 թ.:

կիրթ»։ Այդ տեսակետը սատարողների թվում էին նաև Կարապետ Խաչերյանը, Հարություն Միսլյանը և այլք։ Իսկ ինչո՞վ էր պայմանավորված նրանց լավատեսությունը։ Ձմյունհայում տեղի ունեցող անցքերի ժամանակակից և ակնատես բժիշկ Կ. Խաչերյանն իր օրագրում նշել է. «Ինձ նման հազարավորներն այն համոզմունքին են, թե թուրքը չի կարող մտնել Իզմիր, իսկ եթե նույնիսկ դա նրան հաջողվի, նրան չպիտի թույլատրվի գործադրել իր սովորական խժողովությունները»<sup>1</sup>։ Քաղաքում բնակվող քրիստոնյաների շրջանում վստահությունն առ այն, որ իրենց ոչինչ չէր սպառնում, բավականին մեծ էր։ Կ. Խաչերյանը խոստովանում էր. «Երեք տարվա անընդմեջ աշխատանքի շնորհիվ Իզմիրում ձեռք բերած նախանձելի դիրքս չեմ ուզում կորցնել քիչ հավանական ինչ-որ վտանգի պատճառով»<sup>2</sup>։ Բերենք ևս մեկ օրինակ. ֆրանսիական հյուպատոսարանի իրավագետ, փաստաբան Հ. Միսլյանը Ձմյունհայում վերահաս հնարավոր անկարգություններին առնչվող լուրերին արձագանքում է հետևյալ կերպ. «Վախենալու բան չկա. թուրքական բանակը այս անգամ մուտք պիտի գործի խիստ օրինապահորեն և աշխարհին պիտի ցույց տա, որ թուրքը քաղաքակիրթ ազգ է... Անխոհեմություն կլինե՞ր տուն, աշխատանք, դիրք թողած՝ անձանթ հորիզոններ փնտրելը»<sup>3</sup>։

Ինձ հետ հարցազրույցում մշակութաբան Հ. Գրիգորյանն այս առնչությամբ հայտնել է հետևյալ կարծիքը. «Մոցիալ-մշակութային միջավայրը, քաղաքացի լինելու փաստը, որպես կանոն, նպաստում են, որ զոհը բացառի իրեն ոչնչացնելու դահճի նպատակադրությունը։ Բացի այդ, զոհը չի ուզում հավատալ, որ դրանով կանխարգելի տեղի ունենալիք չարիքը։ Նա այդ ամենը դիտում է որպես սուտ լուր, ահաբեկություն»<sup>4</sup>։

Ձմյունհայի հայ և հույն բնակչության նման համոզմունքը մեկնաբանելի է։ Չէ՞ որ միամիտ ու ազնիվ ժողովուրդը հավատում է այն ամենին, ինչի ակնատեսն է դառնում։ Այսպես, օրինակ՝ Ձմյունհայի քրիստոնյա բնակչության շրջանում նվազագույն իսկ կասկածն անգամ փարատելու և թուրքերի նկատմամբ մեծ վստահություն ներշնչելու նպատակով թուրքական առաջին զորամասերի ժամանմանը գուզընթաց՝ սեպտեմբերի 9-ին՝ շաբաթ առավոտյան, քաղաքի պատերին փակցվել են Մուստաֆա Քեմալի ստորագրությամբ հայտարարություններ, որոնք ազդարարում էին, թե մահապատժի կենթարկվեն բոլոր նրանք, ովքեր քրիստոնյաների նկատմամբ բռնություններ կկիրառեն։ Հայկական ավետարանական եկեղեցու քահանա Աբրահամ Հարթունյանը, ծանոթանալով դրանցից մեկին, որը եղել է միաժամանակ հունարեն և թուրքերեն, հաղորդում է. «Մուստաֆա Քեմալն իր զինվորներին խստապահանջորեն հրամայել էր ոչ ոքի չկոտորել և չվնասել։

<sup>1</sup> **Սաքայան Դ.**, Ձմյունհա 1922. բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը, Երևան, 2005, էջ 59։

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 61։

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 62։

<sup>4</sup> Երևան, 06.05.2013 թ.։

Նրանք, ովքեր չեն հնազանդվի, կենթարկվեն մահապատժի: Թող մարդիկ համոզված լինեն իրենց անվտանգության հարցում»<sup>1</sup>: Քրիստոնյաները, որոնց այս հայտարարությունը որոշ չափով հուսադրել էր, երկուշաբթի օրն առիթ են ունեցել զարմանքով տեսնելու, որ «մահապատիժ» բառը պարզապես փոխարինվել է «պատիժով»<sup>2</sup>:

Ինչ կարող էր մտածել այն պետության քաղաքացին, որն իր հացը վաստակել էր արդար աշխատանքով և այն կիսել թուրք հարևանի հետ: Ինչո՞ւ պետք է նա չհավատար, որ իր կյանքն ու ունեցվածքն ապահով են: Ինչո՞ւ պետք է նա մեկընդմիջտ լքեր իր ծննդավայրը: Առավել ևս՝ երբ խոսքը վերաբերում էր այնպիսի խաղաղասեր և ստեղծարար ժողովուրդների, ինչպիսիք էին հայերն ու հույները:

Սակայն քրիստոնյա այս ժողովուրդները հուսախաբվեցին: Ավելին՝ բնակավայրերից հեռանալու մասին հորդորներն ապարդյուն անցան: Դժբախտաբար ջարդարար պետության ծրագրերը մշակված էին սառնասրտորեն, և խիստ հաշվարկված դերաբաշխումը կատարված էր հաշվենկատորեն: Անմեղ զոհին հատկանշական էին վստահությունն ու հավատը, դահճին՝ դավաճանությունը, նենգությունն ու ծայրահեղ դաժանությունը: Քեմալականներն ամեն ինչ իրականացրին անթերի, անշեղորեն և ճշգրիտ: Երբ սեպտեմբերի 9-ին՝ առավոտյան ժամը 11-ին, թուրքական հեծելազորը մտավ Չմյուռնիա, թվաց, թե արտառոց ոչինչ տեղի չի ունենալու: Սակայն առիթն անհապաղ ընձեռվեց: Այդ մասին 1924 թ. Աթենքում հրատարակված «Նոր օր» պարբերականում կարդում ենք. «Խիստ կարգապահությամբ զարափեն անցան: Միայն Բասափորթին առջև, անձանթ մը ռումբ նետեց, որմե վիրավորուեցավ թուրք զինվորական մը ու կարծես այս դեպքը ազդանշան մը եղաւ սպանութիւններու, կողոպուտներու սկսելու»<sup>3</sup>: Անկախ Մուստաֆա Քեմալի խոստումից, ըստ որի՝ «կյանքն ու ունեցվածքը պետք է հարգվեն», Չմյուռնիայի բնակչությունն անմիջապես ենթարկվեց կողոպուտի, բռնության և կոտորածի:

Վերստին դիմենք ականատեսի վկայությանը: «Սեպտեմբերի 10-ի առավոտյան, - հաղորդում է Կ. Խաչերյանը, - նավահանգստում հանդարտություն է տիրում: Ուրախանում ենք, որ թուրքական գրավումը տեղի է ունեցել առանց արյունահեղության: Սակայն պատշգամբից տեսնում ենք տասնհինգամյա մի պատանու դիակ... Օտարահպատակ մի քանի հայ երիտասարդներից տեղեկանում ենք, որ թուրք զինվորը և խուժանը թալանել են Հայնոցը,

---

<sup>1</sup> Neither to Laugh nor to Weep. A Memoir of the Armenian Genocide by Abraham H. Hartunian. Translated from the Original Armenian Manuscripts by Vartan Hartunian, Boston, 1968, p. 193. Տե՛ս նաև՝ **Puaux R.**, La mort de Smyrne. Les derniers jours de Smyrne. Réunis et présentés par Varoujean Poghosyan, Erevan, 2012, p. 81:

<sup>2</sup> Տե՛ս **Puaux R.**, նշվ. աշխ., էջ 81:

<sup>3</sup> Չմիւռնահայ կեանքը զինադադարէն յետոյ, Ահաւոր փլուզումը, Նոր օր, Աթենք, 1924, թիւ 3, էջ 29:

առևանգել կանանց ու աղջիկներին և պաշարել Սուրբ Ստեփանոս եկեղեցին ու առաջնորդարանը»<sup>1</sup>: Այնուհետև նա շարունակում է. «Հայնոցն ու շրջակա թաղերը դարձել են անմարդաբնակ, մինչդեռ ֆրանկների թաղի շուրջը գտնվող հույն թաղերում երևում են հասուկներն անցորդներ: Հայնոցի վիճակը տեսնելուց հետո հասկացա, որ թուրքը միշտ նույն ջարդարար ու կողոպտիչ տարրն է, լինի Ալբանիայում, Մակեդոնիայում, թե Թրակիայում, լինի Արաբիայում, Սիրիայում, թե Հայաստանում: Թուրքը նույն արյունարբու գազանն է՝ անկախ այն բանից, թե սքողված է իթթիհաթական, թե իթիլաֆական, համիդական, թե քեմալական դիմակի տակ: Թուրքը նույն գիշատիչ բորենին է թե՛ Փոքր Ասիայի ներքին գավառների խորքերում, թե՛ Պոլսի և Իզմիրի նման եվրոպականացված քաղաքներում»<sup>2</sup>:

1920-ական թվականներին Լոնդոնի համալսարանի (թագավորական քոլեջի) Ժամանակակից հույների և Բյուզանդիայի պատմության դասախոս դոկտոր Լիսիմախոս Օեկոնոմոսը նկարագրում է, թե ինչպես է հայկական թաղամաս ներխուժած թուրքական անկանոն բանակը դանակներով և սվիններով կոտորել բնակչությանը<sup>3</sup>: Հիշարժան է Ղևոնդ եպիսկոպոս Դուրյանի հետևյալ հաղորդումը. «Մեպտեմբեր 9, շաբաթ առտու, թուրքերու մեջ տարածուած ըլլալով քեմալական բանակին Իզմիրին շատ մօտ գտնուիլը, խաժանութ ամբոխը ոտքէն ցզլուի զինուած իջաւ շուկայ. նոյն առտու շուկայէն անցնող կարգ մը քրիստոնէանէր գանակոծուեցան, վիրաւորուեցան, եւ ոմանք ալ խոշտանգումներու հետեւանօք մեռան: Սոյն օրը՝ ժամը 10-էն սկսեալ, Իզմիրի այլեւ այլ կողմերէն քեմալական յառաջագնաց ջոկատներու ներս խուժելը աւելի խրախուսեց թուրք խուժանը, որ թրքական դրօշներով սկսաւ պտտիլ քաղաքին մէջ: Պասմախանէի հանդիպակաց պուլվարին վրայ հաւաքուած թուրք խուժանը սկսաւ Հայոց թաղին ուղղութեամբ հրացան արձակել. այս հրացանաձգութիւնը, որ քառորդ ժամ տեւեց, պատճառ եղաւ, որ Հայոց թաղի մերագնեայք Ս. Ստեփանոս եկեղեցին ապաստանին... Ապաստանողների մեջ 2000-ի չափ մանուկներ կային»<sup>4</sup>:

Զմյուռնիայում ԱՄՆ հյուպատոս Ջորջ Հորթոնը նույն առնչությամբ հաղորդում է. «Թուրքերի՝ Զմյուռնիա մտնելուց անմիջապես հետո կողոպուտը, հափշտակությունը, բռնաբարությունը և կոտորածն ավելի մեծ թափ ստացան: Վրեժխնդրությունն ուղղված էր գլխավորապես հայերի դեմ. նրանց մեղադրում էին ռումբ օգտագործելու մեջ... Այնուհանդերձ, դա չի արդարացնում երեք օր ու գիշեր տևած՝ կանոնավոր բանակի դասակի դաժան հաշվեհարդարը հայերի հետ... Թուրքամետ ոչ մի քարոզչություն չի կարող թաքցնել այն,

<sup>1</sup> Սաքայան Դ., նշվ. աշխ., էջ 67:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 69:

<sup>3</sup> Տե՛ս **Economos L.**, The Tragedy of the Christian Near East; **Dobson Ch.**, The Smyrna Holocaust, London, 1923, pp. 4-5.

<sup>4</sup> ՀԱԱ, ֆոնդ 430, ցուցակ 1, գործ 748, էջ 3:

ինչն իրականում կատարվեց Ձմյուռնիայում, որովհետև վստահության արժանի շատ վկաներ կային, և ճշմարտությունը, անշուշտ, բացահայտվելու է»<sup>1</sup>:

Ղևոնդ եպիսկոպոս Դուրյանը որոշել էր իբրև հայ հոգևորական ներկայանալ Ձյուռնիայի զինվորական կառավարչի պարտականությունները կատարող գեներալ Նուր Էդ Դին փաշային և գթություն աղերսել իր հոտի համար. «Առաջնորդարանին վրայ, թուրք խուժանին և անկանոն զինվորներու կողմէ եղած կատաղի յարձակումներն ու հրացանաձգութիւնները խորհիլ տուին ինձի, թէ Առաջնորդարանը թողլով ուրիշ տեղ մը ապաստանիլս եւ անկէ որեւէ միջոց գտնելով, Նուրէտտին փաշային ներկայանալովս, եւ ժողովուրդիս վրայ անոր գթութիւնը եւ բարեացակամութիւնը հայցելս աւելի ճիշդ պիտի ըլլար... Հրաշքով դուրս նետուեցայ... Առաջնորդարանէն մինչեւ Այեա Ֆօթինիի երկարող Թավերնէս կոչուած փողոցը, իւրաքանչիւր քայլափոխիս սպաննուած քրիստոնէայ մը կը տեսնէի»<sup>2</sup>:

Ուշագրավ է նաև նրա՝ թուրքական բանակին ողջունելու եկած թուրք բնակչության դրսևորած վարքագծի նկարագրությունը. «1922 թ. սեպտեմբերի 9-ի առաւօտեան ժամը 11-ին, սարէն, ձորէն քով քովի եկած այլազան հագուստներով, երկու-երեք հարիւրի չափ թուրք չէթէներ Փունթայի կողմէն հանդիսաւոր կերպով մտան Իզմիրի քարափը: Թէեւ քանի մը մէթր անդին՝ ծովածոցին մէջ խարսխած քրիստոնէայ պետութիւններու տօնական օրերու յատուկ զարդարանքներով պճնուած զրահաւորները, «խոր քունի» մէջ ըլլալ կը թուէին... Բայց արթուն էր քաղաքին թուրք բնակչութիւնը, ու վաղ առաւօտէն խռնուած քարափին վրայ որոտընդոստ ծափերով ու բացագանչութիւններով կ'ողջունէին եկուոր «ճերմակ ձեռնոցաւորները»<sup>3</sup>:

Ամերիկյան «Էյժա» ամսագրի 1923 թ. համարում տեղ է գտել հետևյալ հաղորդումը. «Սպանությունն ու կողոպուտը սկսվեցին սեպտեմբերի 9-ի երեկոյան և շարունակվեցին՝ ապահովելով դաժանության համակարգված ծավալում մինչև տարաբախտ քաղաքի վերջնական կործանումը կրակի միջոցով: Միայն Ջուլան, Դյուման կամ Վիկտոր Հյուգոն կարող էին նկարագրել, թե ինչ տեղի ունեցավ... Ոչինչ չէր պակասում՝ ո՛չ կոտորածը, ո՛չ բռնաբարությունը, ո՛չ կրակը, ո՛չ կողոպուտը... Հայկական թաղամասը, խանութները, շուկաները կողոպտվել էին: Քաղաքում երեք օր ու գիշեր շարունակվում էին սպանությունները... Դիակները թափված էին փողոցներում և նույնիսկ դեպի գյուղեր տանող ճանապարհներին: Դիակներով բեռնված վագոնները քշվում էին հեռու, վագոնները տեղափոխում էին նաև կողոպտված ապրանքը... Դռները ջարդվում էին, կահույքը՝ փողոց նետվում, տղամարդիկ, կանայք ու երեխաները՝ սպանվում»<sup>4</sup>:

<sup>1</sup> Report on Turkey, USA Consular Documents by George Horton, Athens, 1985, pp. 20-21.

<sup>2</sup> Հղումը ըստ՝ **Տէր Սարգիսեան Մ.**, Իզմիրի անկումը եւ այլ էջեր, Նիւ Ճըրզի, 1975, էջ 108:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 111:

<sup>4</sup> **Grantham E.**, The Betrayal of Our Faith in the Near East // Asia, The American Magazine on the Orient, New York, Feb., 1923, p. 120.



Չ. Հորթոնը արտի անհուն ցավով գրում է. «Եվրոպական մեծ ուժերի աչքի առջև և, ըստ երևույթին, նաև նրանց լռակյաց համաձայնությամբ իրականացվող կոտորածը միակն է, որը, հույս ունեմ, այլևս երբեք չտեսնել: Հավատացած եմ, որ երբ հայտնի դառնա իսկական ճշմարտությունն այն մասին, թե ինչ տեղի ունեցավ Չմյունխայում, և թե ինչ էր տեղի ունենում Մերձավոր Արևելքում, Եվրոպայի և ԱՄՆ բոլոր պարկեշտ մարդիկ կզգան այն, ինչ ես եմ զգում»<sup>1</sup>: Հյուպատոսը եզրահանգում է. «1. Թուրքերը կոտորածներ միշտ իրականացրել են բարձրագույն իշխանությունների հրամանով: Սա հայտնի սկզբունք է... Այդպես էր նաև Չմյունխայում, իսկ Քեմալի հայտարարությունն այն մասին, թե զորքը վերահսկողությունից դուրս էր եկել, սուտ է<sup>2</sup>: Տարօրինակ փաստ է, որ թուրքը դեռ ի վիճակի է խաբելու եվրոպացիներին... Հնարավոր է, որ ֆրանսիացի ծովակալի՝ թուրք հրամանատարին ուղղված ազդեցիկ խոսքը կանխեր կոտորածներն ու դրանց սարսափելի հետևանքները:

2. Հարկ է նկատի ունենալ, որ թուրք ազգայնամոլների քաղաքականությունը որոշակի ժամանակաշրջանում նպատակաուղղված է եղել Թուրքիայի քրիստոնյա ազգաբնակչության ոչնչացմանը և արտաքսմանը»<sup>3</sup>:

Կոստանդնուպոլսում ԱՄՆ նախկին դեսպան Հենրի Մորգենթաուն հաղորդում է. «Չմյունխայի 1922 թ. կոտորածի, Փոքր Ասիայի հույների մեծ գաղթի մանրամասները դեռ թարմ են հասարակության հիշողության մեջ: Ահա դրանցից մի քանիսը. Քեմալի աչքի առջև թուրքական բանակն իրականացրեց Չմյունխայի հունական թաղամասի հույն տղամարդկանց, կանանց և երեխաների կանոնավոր սպանությունը, տների և եկեղեցիների կազմակերպված կողոպուտը, առանց խտրության՝ կանանց և երիտասարդ աղջիկների անկաշկանդ բռնաբարումը, 16-50 տարեկան աշխատավոր տղամարդկանց օտարումը, ապա երկրի խորքերն արտաքսելը, ուր գրեթե բոլորը մեռնում էին հարկադիր աշխատանքի հետևանքով, ինչը տառապանքի միջոցով արագացնում էր ոչնչացումը, կանանց, երեխաների ու ծերերի արտաքսումը Հունաստան: Բոլոր այս բռնությունները Փոքր Ասիայից հույներին ամբողջությամբ արտաքսելու՝ թուրքերի նպատակադրվածության ակնհայտ դրսևորումն են: Քեմալի հսկողության ներքո՝ թուրք ազգայնականների հե-

<sup>1</sup> Report on Turkey, USA Consular Documents, The Journalists Union of the Athens Daily Newspapers, by George Horton, Athens, 1985, p. 24.

<sup>2</sup> Այս հարցը մեկնաբանել է նաև Ռենե Պյուն, որը ևս չի հաստատել թուրքական բանակի՝ Մուստաֆա Քեմալի վերահսկողությունից բացահայտորեն դուրս գալու հանգամանքը: «Ըստ հավաստի վկայությունների՝ Անգորայի ազգայնամոլական շարժման ղեկավարը, նշում է նա, - զգալով, որ իր զորքերը խիստ գրգռված են և վախենալով, որ իր կողմից խտությունների ցուցաբերման դեպքում նրանք կարող են դուրս գալ իր ենթակայությունից, թույլատրում է կողոպուտը քաղաքը: Ահա գերագույն հրամանատարի այս հրամանից հետո էր, որ գեներալ Նուրեդինն ամսի 11-ին՝ երկուշաբթի օրը, հրաման արձակեց հայերին հետապնդելու մասին»: Տե՛ս **Puau R.**, նշվ. աշխ., էջ 81:

<sup>3</sup> Report on Turkey, USA Consular Documents, p. 25.

տապնդած ծրագրով Փոքր Ասիան ամբողջությամբ «թուրքացվեց»<sup>\*</sup>: Հույն բնակչությանը քշելու կամ արտաքսելու այս ծրագիրը պարզ էր. Չմյուռնիայի սարսափների հետևանքով Փոքր Ասիայի նավահանգիստներից անմիջապես հեռացան հազարավոր հույն ընտանիքներ: Շատ դեպքերում նրանք հալածվում էին հենց իրենց՝ թուրք հարևանների կողմից: Իրենց նախնիների երկրում հեղեցին իրենց արյունը, իսկ հազարավորները կուտակվեցին Հուսաստանի նավահանգիստներում»<sup>1</sup>:

Ձ. Հորթոնը Չմյուռնիայի քրիստոնյա բնակչության ոչնչացումն անվանում է դանթեական ողբերգություն և որպես ականատես արձանագրում համաշխարհային պատմության մեջ նմանօրինակ դեպքերի սակավությունը. «Չմյուռնիայի վիլայեթի քրիստոնյա բնակչության նկատմամբ կատաղի վերաբերմունք դրսևորվել է ինչպես Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, այնպես էլ մինչև պատերազմի սանձազերծումը... Թուրքերի արյունոտ պատմության ընթացքում կատարված ոչ մի գործողություն ավելի դաժան չի եղել, որքան Չմյուռնիայի 1922 թ. կործանումը. դա մարդկային տառապանքների համար ընտրված վատթարագույն ձևերի կիրառումն էր անպաշտպան ու անզեն մարդկանց նկատմամբ... Դա սուսկալի ողբերգության «սատանայական ավարտն» էր»<sup>2</sup>:

Այսպիսով՝ Չմյուռնիայի հայերի և հույների համոզմունքը, որ իրենց հետ որևէ աղետալի բան տեղի չի ունենա, կատարելապես հիմնագուրկ էր: Տասնյակհազարավոր անմեղ հույներ և հայեր դարձան թուրքական վարչակարգի ցեղասպան քաղաքականության հերթական զոհը: Քեմալականների՝ քաղաքի հունաթափման և հայաթափման նպատակի իրականացմանն առավելագույնս նպաստեցին իրադարձությունների կանխամտածված և սրընթաց զարգացումները, ինչպես նաև զոհերի նկատմամբ դրևորվող անասելի դաժանությունը:

---

<sup>\*</sup> Նշենք, որ քեմալականների՝ Փոքր Ասիայի թուրքացման քաղաքականությանը հետևողականորեն հետամուտ լինելու հանգամանքը հավաստել է անձամբ Մուստաֆա Քեմալը: Նկատի ունենալով հրկիզվող Չմյուռնիան՝ նա դիմել է իր հայրենակիցներին. «Երկար նայեցեք այս տեսարանին: Սա մեր երկրում օտար միջամտության վախճանն է: Այս կրակը դրա խորհրդանիշն է: Այն նշանակում է, որ մեր հայրենիքը վերջնականապես ազատագրվել է դավաճաններից և առևտրականներից: Այսուհետև ազատագրված ու մաքրագարդված Թուրքիան կպատկանի միայն և միայն թուրքերին»: Հղումը ըստ՝ **Պողոսյան Վ.**, Առաջաբան, Պյոտ Ռ., Չմյուռնիայի վախճանը, Երևան, 2001, էջ 4: Տե՛ս նաև՝ **Poghosyan V.**, Avant-propos // La catastrophe de Smyrne de 1922 (recueil de documents). Documents réunis et présentés par Varoujean Poghosyan, Erevan, 2011, p. 9:

<sup>1</sup> **Morgenthau H.**, I was sent to Athens, USA, 1929, pp. 47-49.

<sup>2</sup> **Horton G.**, The Blight of Asia, An Account of the Systematic Extermination of Christian Populations by Mohammedans and of the Culpability of Certain Great Powers, with the True Story of the Burning of Smyrna. Indianapolis, 1926, p. 12.

**Themine Martoyan – *The Consequences of the Denial of the Threat of Extermination of the Greek and the Armenian Population of Smyrna (September 1922)***

Developing the criminal plan of extermination of the Christian population in Smyrna in September 1922, as a guarantee of securing of their actions the Kemalists speculated various psychological factors among which the most common one was taking the Christian population unawares. That is, the Christian population of the city was not to believe in the existence of the threat of forthcoming massacre in the broad sense and what is more expressed a wish to take part in the prevention of the crimes being committed and rapidly spreading at the moment.

The article deals with the attitude the Armenian and the Greek Christian residents took toward the forthcoming crimes. The Armenians and the Greeks of Smyrna ignored all the warnings concerning their extermination, regarding them as fake news and relied on the convincing persuasions of the representatives of the European countries according to which there was no basis for fear, as massacre could occur as all the Christians were protected and so on.

Excluding the possibility of their extermination the Armenian and the Greek Christian residents of the city in fact 'released' the criminal's hands and made easy the realization of the preliminarily planned actions without difficulty. The belief of the Armenians and the Greeks of Smyrna that nothing would happen to them was completely groundless. Thousands innocent Greeks and Armenians became victims of the massacre policy of the Turkish regime. The realization of the aim of the Kemalists to empty the city from the Greek and the Armenian population was facilitated by the intentional and quick developments of the events as well as the incredible violence displayed towards the victims.

**ZWISCHEN COMING OUT, IDENTITÄTSSTIFTUNG UND (AN)K LAGE:  
DER VÖLKERMORD AN DEN ARMENIERN IN DER ERINNERUNGSPROSA  
DER US-ARMENISCHEN DIASPORA UND IN DER TÜRKEI**

<sup>7</sup> **Pelagidis S.**, *The Restoration of the Refugees in the Western Macedonia 1922-1930*, Thessaloniki, 1997; **Lampsidis**, *Memory of Greek Refugees of 1922*, Athens, 1976; *League of Nations, L'établissement des réfugiés en Grèce*, Genève, 1926 ; **Prevelakis G.**, (ed.) *Les réseaux des Diasporas. The Network of Diasporas*, Nicosia, 1996; **Bruneau M.**, *The Dispersal of the Pontiac Greeks*, Thessaloniki, 2000; *Centre of Asian Minor Studies, The last Greek Populations of Asia Minor (catalogue)*, Athens, 1974.

<sup>8</sup> "Thousands of (Greek) men, women and Children were expelled and dying. It was clearly a deliberate extermination. "Extermination" is not my word. It is the word being used by the American mission", **Lloyd George**, British Prime Minister, House of Commons Parliament Debates, Fifth series, vol. 157, 1922.

The final chapter of this mass murder deals with the forcible removal of the survivors from their homeland. With the treaty referring to the population exchange, signed both by Greece and Turkey in 1923, the uprooting of the Greeks from their land is completed, closing the issue of one of the bloodiest mass murders in the history of mankind.

The Greeks nowadays in Greece, in the USA, in Canada, in Australia, in Europe, and throughout the world want justice to be attributed in the name of their ancestors that were murdered during the Genocide, which costed the life of 1.000.000 Greeks<sup>1</sup> and total 2.750.000 Greeks, Armenians and Assyrians, who lived in the Ottoman state in the beginning of the 20<sup>th</sup> century.

### *Epilogue*

The presence of Greeks in Thrace, Pontus, Asia Minor, Cappadocia, after the Ottoman domination over this region, the Greek influence and their contribution to various cultural achievements were threatened. The authority system and the government, the discriminations against the Christians, the conditions of the financial and political life threatened the continuity of the Greeks in the region.

With the creation of the Young Turks group in the Ottoman state, a nationalistic ideology appeared and consolidated, and with the domination of power in 1908, there was a desire for the Christian populations to become extinct, a dream which came true during World War I, the Greeks were a central target<sup>2</sup>.

When the genocide of the Armenians was about to end, it was time for the Greeks to be exterminated by the same means: massacres, atrocities, massive violence, arrests of women and children, violent conversions to Islam, marches of death. These facts are confirmed by survivors of the genocide as well as foreign witnesses, whereas lots of people left the region taking refuge in Russia.

The Greek genocide continued even after the end of World War I and systematically after 1919, when on May 19<sup>th</sup> of the same year Mustafa Kemal arrived at Samsun. Operations of massive assassinations, deportations, banishments, destruction of cultural and religious places took place as well as burning down villages and cities. Nobody can explain these crimes and this fact is confirmed by the Turks<sup>3</sup>, many foreigners<sup>4</sup> and allies of Mustafa Kemal's coup<sup>5</sup>.

Between 1916 and 1923 approximately 1.000.000 from more than 2.500.000 Greeks (census 1914) were lost due to massacres, deportations and marches of death.

---

<sup>1</sup> **Kitromolidis P. – Alexandris A.**, Ethnic Survival, Nationalism and Forced Migration, "Asia Minor Bulletin 5 (1983-1984)", p. 23.

<sup>2</sup> **Charalambidis M. – Fotiadis K.**, Pontians: Right to Memory, Athens, 1988 (in Greek).

<sup>3</sup> Speeches, that pronounced Mustafa Kemal in the second concentration of Democratic Popular Party of (15-20 October 1927) for the Pontus question and the attempt of foundation of Democracy of Pontus and the reports of Ottoman are certain sources. Mustafa Kemal Atatürk. Nutuk. Ankara: Kultur Bakanligi Yayinlari 1980. For the proceeding of Turkish National assembly see Proceeding of Secret Meetings of Big National assembly: Türkiye Is Bankasi Kültür Yayinlari, vol. 3, Ankara 1985 (in Turkish).

<sup>4</sup> See the volumes 12, 13, 14 of the **Fotiadis K.**, op. cit. Also see certain articles in the newspaper "New York Times" (New York) and in newspaper "The Times".

<sup>5</sup> See the opinions of Soviet envoy in Turkey. The presence of Frounze in Turkey, Istanbul, 1978 (in Turkish).

This premeditated destruction of the 50% of the Greeks, constitutes genocide according to the criteria of U.N. (article 2 of the Convention, paragraphs a, b, c, d and e).

The population which survived the Genocide was led to expulsion. Thousands of them took refuge in several countries. The Treaties that were signed between Greece and Turkey in 1923 for the “exchange of populations”<sup>1</sup>, as well as the Treaty of Lausanne<sup>2</sup> did not include the Greek survivors, whose great majority was islamized. This is the dimension of the Greeks mainly in Pontus (Black Sea) which remains alive even today, with the existence of large populations who speak the, closest to ancient Greek, spoken dialect nowadays, the Greek Pontian dialect, which, together with the identity of these people, is threatened by the Turkish regime.

The Greek Genocide is an issue which has remained cut off from the world for many years and is appointed in the late 1980’s and in the early 1990’s, posed pressure on the Greek grounds and on the issue, which resulted in applying for the issue of the recognition of the genocide. In 1994 and 1996 the Greek Parliament voted for the declaration “Day of Commemoration of the genocide”<sup>3</sup>.

So far, the genocide of has been recognized by the Parliament of Representatives of the Cypriot Republic, from the Swedish Parliament, the Parliament of South Australia and New South Wales and by several institutional conveyors of the USA. The issue has been introduced in the financial and social council of the U.N as well as the organization for the Safety and Co-operation in Europe have been occupied with it, the latter after the intervention of non governmental organizations<sup>4</sup>.

The question was posed at the Committee of European Affairs of the European Parliament (5<sup>th</sup> September 2006), by the presentation of the composition of the Dutch European-deputy Camiel Eurlings, in which her notes on the development of Turkey in its course to the European accession were reported<sup>5</sup>.

Parallel the International Association of Genocide Scholars (IAGS), officially recognize the genocide of Armenians, Greeks and Assyrians (December 2007)<sup>6</sup>, while

---

<sup>1</sup> **Pentzopoulos D.**, *The Balkan Exchange of Minorities and Its Impact on Greece*, Paris and the Hague, 1962.

<sup>2</sup> Treaty of Lausanne, Acts signed in Lausanne of 30 January and 24 July 1923, Athens, 1923 (in Greek).

<sup>3</sup> Greek Parliament. 1994 and 1996 (in Greek).

<sup>4</sup> **Charalambidis M.**, *The Pontian Question in the United Nations*, Athens, 2004 (in Greek); idem: *The Pontiac Question Today*, Athens, p. 127 (in Greek).

<sup>5</sup> The Committee of Foreign Affairs of the European Parliament (Brussels 05.09.2006), and European Parliament. *Texts Adopted at the sitting of Wednesday 27 September 2006*, Provisional Edition. Turkey’s progress towards accession, p. 12.

<sup>6</sup> The full text of IAGS resolution: WHEREAS the denial of genocide is widely recognized as the final stage of genocide, enshrining impunity for the perpetrators of genocide, and demonstrably paving the way for future genocides; WHEREAS the Ottoman genocide against minority populations during and following the First World War is usually depicted as a genocide against Armenians alone, with little recognition of the qualitatively similar genocides against other Christian minorities of the Ottoman Empire; BE IT RESOLVED that it is the conviction of the International Association of Genocide Scholars that the Ottoman campaign against Christian minorities of the Empire between 1914 and 1923 constituted a genocide against Armenians, Assyrians, and Pontian and Anatolian Greeks. BE IT FURTHER RESOLVED that the Association calls upon the government of Turkey to acknowledge the genocides against these populations, to issue a formal apology, and to take prompt and meaningful steps toward restitution.



for first time actuarial company of USA<sup>1</sup>, gives the possibility in descendants of victims of genocide of claiming compensations (September 2008).

The Greek Genocide is a political issue and its international extension refers to the commitment of all the institutions of the International community, to the states and the international organizations to recognize the offence of genocide which was committed at the expense of the Greeks and to restore, this way, the huge moral damage they suffered. The perspective of building a new Europe and a new peaceful planet which will be more democratic and true depends today on creating a freer, fair, equal, harmonious world. This Europe and the planet on its whole that we anticipate to construct cannot be indifferent, simulated concerning itself and history.

The international crime of genocide opposes responsibilities not only on the state which committed it, but also to the whole international community:

- a) For not recognizing a situation created by global crime as legal;
- b) For not helping the performance of an international crime to maintain the illegal situation and<sup>2</sup>;
- c) To help other countries with the application of the obligations above. That is, it imposes on the international community the obligation not to recognize an illegal situation as a result of genocide<sup>3</sup>.

A struggle to ask for and point out the truth will find a lot of nations agreed. In order not to repeat the crimes, the responsible and the reasons that led them have to be found out. The truth must be sought and presented to the international public opinion, which knows how to judge and sentence without self-interest. Nowadays, when other nations suffer genocides from racist states, it is time for the first step to be taken to

---

<sup>1</sup> As weird or unbelievable as it may seem, the recording of an event in history, in other words the wretched attempt of Talaat Pasha, Minister of Internal Affairs of the Young-Turks in 1915, to collect 'on behalf of the Armenians' the compensation money from their death insurance, a death which he himself contributed to via mass extermination, was reason enough for lawyer Vartkes Yeghiayan to begin a 20 year legal struggle in the State of California with a view to claim back in favour of the descendants of these victims of the genocide of 1915, the above money. The defender of the victims of the Greek and Armenian Genocide, Henry Morgenthau, American Ambassador to Constantinople in the period 1914-17, states in his book *Ambassador Morgenthau's Story* (1918) (in the Greek publication *The Secrets of the Bosphorus*, 1918), that Talaat asked him whether the Ottoman Government could collect the compensation money from the life insurance contracts which were held by many Armenians (Ottoman nationals), while he personally had undertaken the organisation of their extermination. Vartkes Yeghiayan, whose origins are from Asia Minor, whilst reading the lines from the above book, conceived the idea of reclaiming this compensation money for the descendants of the victims of the Armenian Genocide. At first many didn't take his efforts too seriously, however through strong will and hard work the distinguished lawyer was eventually vindicated. Recently the insurance companies New York Life and AXA, after a long and difficult legal battle were ordered to pay to beneficiaries the total sum of 53 million dollars. Apart from life insurance contracts, it is also well known that in that same period in Anatolia, fires destroyed many buildings and belonging owned by Greeks, so in September 2008, New York Life Launches Voluntary Program to Reach out to Heirs of Greek Policies from 1914.

<sup>2</sup> **Shaw M.**, *In International Law*, New York, 2002, p. 481; it marks that the violation of international obligation gives reason for a requirement for the repair.

<sup>3</sup> **Lauterpacht H.**, *Recognition in International Law*, Cambridge University Press, 1947, p. 20; **Bassiouni C.**, *Crimes Against Humanity in International Criminal Law*, Martinus Nijhof, Dordrecht, 1992; **Shelton D.** (ed.) *Encyclopaedia of Genocide and Crimes against Humanity*, MacMillan reference, 2004; **Francillon J.**, *Aspects juridiques des crimes contre l'humanité // L'actualité du génocide des Arméniens. Actes du colloque organisée par le Comité de Défense de la Cause Arménienne à Paris les 16, 17 et 18 avril 1998*, Paris, 1999, pp. 397-404.

recognize the crime of Greek genocide of the. On the other hand, the contemporary Turkish state has to answer for the Greek genocide<sup>1</sup>, without making propaganda and pleads inconsistency as a state in order to be exculpated from the charge. This state, as the creation of Mustafa Kemal, and the Young Turks are responsible for the crime of genocide. Each nation has the right to intensely demand from the authorities of the crimes and offences committed against it to recognize them. The greater the harm and the longer the facts were hidden, the more intense the desire for such recognition becomes. Recognition, which is a substantial way to fight against genocide; recognition which constitutes the confirmation of a nation's right to the respect of its existence according to the international law and the historic truth.

### **Թեոֆանիս Մակլիդիս – Հույն ժողովրդի ցեղասպանության շուրջ**

Օսմանյան կայսրությունում բնակված հույներին երկարատև գոյատևումից հետո բռնի միջոցներով հարկադրել են լքել այդ երկիրը: Հալածանքները հետագայում վերածվել են ցեղասպանության. երկու միլիոն վեց հարյուր հազար (ըստ 1914 թ. մարդահամարի) հույներից մեկ միլիոնը կոտորածների զոհ դարձավ: Հույն ժողովրդի ցեղասպանությունը մարդկության դեմ գործված ամենամեծ հանցանքներից է, որը դեռևս մնում է անպատիժ: Վերապրած հույներն արտաքսվեցին անմարդկային պայմաններում, կամ համընդհանուր բնաջնջման սպառնալիքի տակ հազարավորներն ընդունեցին իսլամը և մնացին Թուրքիայում: Իսկ զանգվածային բնաջնջման մնացորդների մի մասը դարձավ գաղթական և սփռվեց աշխարհով մեկ: Երանց մեծ մասը զնաց Հունաստան, նախկին Խորհրդային Միություն, Արևմտյան Եվրոպա, ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա: Հողվածում քննարկվում են հույն ժողովրդի ցեղասպանության պատմությունը և մերօրյա կողմերը:

---

<sup>1</sup> See **Fotiadis K.**, The Genocide of Greeks of Pontus, Thessaloniki, 2002-2006; **Enepekidis P.** Genocide in Pontus. Diplomatic documents from Vienna (1909-1918), Thessaloniki, Euxeinos Club of Thessaloniki, 1996 (in Greek); **Vakalopoulos K.**, Persecutions and Genocide of Thracian Hellenism, Thessaloniki, 1998 (in Greek); **Tsirkinidis H.**, Red river. The tragedy of Hellenism of East. 1908-1923, Thessaloniki, 2005; **Horton G.**, The Blight of Asia; Report on Turkey: USA Consular Documents [Originally published in 1926 as The Blight of Asia], Athens, The Journalists' Union of the Athens Daily Newspapers 1985; **Morgenthau H.**, The Murder of a Nation, New York, 1974; Ambassador's Morgenthau story, Garden City, New York, 1918; I was sent to Athens, Garden City, New York, 1929; An international drama, London, 1930; **Hofmann T.** (ed.), Verfolgung, Vertreibung und Vernichtung der Christen im Osmanischen Reich 1912-1922, Münster, 2004.

**ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՂԵՌՆ**  
**(Արցախի ճարտարապետական հուշարձանների օրինակով)**

Հայոց ցեղասպանության մասին մտորելիս ակամա մտաբերում ենք գլխավորապես ավելի քան մեկուկես միլիոնի հասնող անմեղ հայերի անմարդկային բնաջնջումը: Համեմատաբար քիչ ենք խորհում և գրում ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած մշակութային արժեքների՝ հոգևոր գանձերի, ճարտարապետական կոթողների կորստի մասին: Հայկական հուշարձանների ոչնչացումն ամբողջությամբ համապատասխանում է միջազգային աստիճանների ընդունած մշակութային ցեղասպանություն եզրույթի չափորոշիչներին<sup>1</sup>:

Մշակութային այդ եղեռնը տեղի էր ունենում ոչ միայն բռնագավթված մեր պատմական հայրենիքի ամբողջ տարածքում, այլև Խորհրդային Ադրբեջանում: Այս առումով Հայաստանի հարակից երկրների թվում առանձնանում է միայն Իրանը, որտեղ հայկական հուշարձանները պահպանվել են և նույնիսկ վերանորոգվել: Մինչև վերջերս Ադրբեջանին բռնակցված Արցախի ճարտարապետական հուշարձաններն ավերվում էին կամ այլափոխվում: Ի դեպ, հայկական մշակութային արժեքների կանխամտածված և հետևողական ոչնչացումն Ադրբեջանի իշխանությունների կողմից ամբողջությամբ համապատասխանում է «էթնոցիդ» (ethnocide) եզրույթին<sup>2</sup>:

Արցախի և նրա ճարտարապետության մեկուսացումն Ադրբեջանում հետապնդում էր իշխանությունների առաջադրած գերիսնդրին հասնելու հեռահար նպատակներ՝ Լեռնային Ղարաբաղի տարածքը և հայ ժողովրդի արցախյան հատվածը վերագրել ադրբեջանցիների կարծեցյալ հայրենիքը «հանդիսացող» Աղվանքին և հիմնավորել հայ ժողովրդի կերտած նյութական ու մշակութային հուշարձաններն աղվանական (ադրբեջանական) համարելու մտացածին վարկածը: Ադրբեջանական պատմագիտությունն այդ նկրտումներն իրականացնելու համար ոչ մի բանի առջև կանգ չի առնում՝ ընդհուպ մինչև Լեռնային Ղարաբաղի, Սյունիքի, Նախիջևանի տարածա-

<sup>1</sup> Տե՛ս **Charny I. W.**, Classification of Genocide in Multiple Categories, Encyclopedia of Genocide, Israel W. Charny editor in chief, vol. 1, Santa Barbara, California, 1999, p. 9.

<sup>2</sup> Տե՛ս **Պարսամյան Ս.**, Ադրբեջանի կողմից իրագործված հայկական հուշարձանների ոչնչացումը՝ որպես մշակութային ցեղասպանություն, Ադրբեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական ձգտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ (2010 թ. մարտի 21-24-ը Ստեփանակերտում և Շուշիում կայացած միջազգային գիտագործնական կոնֆերանսի զեկուցումներ), Կաճառ, 2010, թիվ 4 (47-58), էջ 160-161:

շրջանների և նրանց մշակութային հուշարձանների «աղվանացումը», «թուրքացումը»՝ վերջիններս կապելով Ադրբեջանի «կրակի տաճարների» հետ: Այդ նպատակին հասնելու համար հայ ժողովրդի արցախյան հատվածի նյութական արժեքները բարբարոսական եղանակներով հետևողականորեն կեղծում, ավերում կամ ոչնչացնում էին:

Հակահայկական գործողություններն Ադրբեջանում «ադմինիստրատիվ-կազմակերպչական» մակարդակով համակարգված էին և ընթանում էին միասնական ճակատով<sup>1</sup>: Առ այսօր շարունակվող այս գործընթացում ներգրավված են քաղաքագետներ, պատմաբաններ, ճարտարապետներ, հնագետներ, ազգագրագետներ, լեզվաբաններ: Օգտագործելով բոլոր հնարավոր միջոցները՝ նրանք ձգտում են Ադրբեջանի տարածքն ադրբեջանցիների հետ կապող արմատներ գտնել և այն անջրպետել հայերից, ուստի և՛ հայկական մշակութային ժառանգությունից: Արցախի քրիստոնեական եկեղեցիները, վանքերը, ճարտարապետական մյուս կառույցները ոչնչացնելու քաղաքականությունը խթանվում էր պետական բարձր մակարդակով: Ադրբեջանական իշխանությունները կոչ էին անում ոչնչացնել քրիստոնեական պաշտամունքի կառույցները, որովհետև դրանց «բազմազանության առկայությունը ցույց է տալիս, թե որքան շատ է կաշկանդված եղել Ղարաբաղի բնակչությունը կրոնական կապանքներում», որից «ազատագրվել է շնորհիվ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիայի»<sup>2</sup>:

Ադրբեջանական ԽՍՀ տարածքում հայկական մշակութային հուշարձանները բացարձակ մեծամասնություն էին կազմում՝ շուրջ 11 հազար, ընդ որում՝ դրանց թիվը միայն Լեռնային Ղարաբաղում հասնում էր 1700-ի<sup>3</sup>: Սակայն պաշտոնական փաստաթղթերում արձանագրվում էր բոլորովին այլ պատկեր: Պետական պահպանության ներքո գտնվող 591 հուշարձաններից միայն քսանհինգն էր հայկական, որոնցից ընդամենը յոթը՝ Լեռնային Ղարաբաղի տարածքում: 1968 թ. ապրիլի 2-ի թիվ 140 և 1988 թ. ապրիլի 27-ի թիվ 145 որոշումներով (թվում է, թե վերջին որոշումը ոչ պատահաբար էր ընդունվել ապրիլին) հաստատված են Ադրբեջանի տարածքում գտնվող՝ պետության կողմից ընդունված հուշարձանները, որոնց թվում բացակայում է նույնիսկ Գանձասարի վանական համալիրը<sup>4</sup>:

Հատկապես վերջին տասնամյակներում Արցախի ճարտարապետական հուշարձանները դարձել են ադրբեջանցի պատմաբանների հիվանդ երևակայության առարկան: Գիտակցաբար անտեսելով պատմական սկզբնաղբ-

<sup>1</sup> Տե՛ս **Պետրոսյան Ն.**, Մշակութային էթնոցիդն Արցախում (Մշակութային ժառանգության բնայուրաբանական մեխանիզմը), Կաճառ, 2010, թիվ 4 (47-58), էջ 142:

<sup>2</sup> Տե՛ս **Մկրտչյան Շ.**, Լեռնային Ղարաբաղ, Ադրբեջանի իրականացրած ցեղասպանության անատոմիան, Սեփանակերտ, 2003, էջ 196:

<sup>3</sup> Տե՛ս **Կարապետյան Ս.**, Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանի բնակցված շրջաններում, Երևան, 1999, էջ 7:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում:

յուրների, այդ թվում վիմական արձանագրությունների տեղեկությունները, հայկական հուշարձանների ճարտարապետական և կառուցվածքային առանձնահատկությունները, Արցախի վանքերի ու եկեղեցիների պատկերաքանդակներն ու որմնանկարները՝ դրանք ներկայացվում են իբրև աղվանական-ադրբեջանական մշակութային արժեքներ՝ հետապնդելով հայկական մշակույթից օտարելու նպատակ:

Ի պատասխան հակազիտական այդ տեսակետների՝ հայ գիտնականներն ադրբեջանական պատմագիտության կեղծարարության վերլուծության հիման վրա փորձում են վեր հանել Արցախի մշակույթի քննության տեսական ու քաղաքական հիմքերը, բացահայտել Ղարաբաղում թուրքական էթնոսի բնիկ լինելու և հայերի եկվորության մասին ադրբեջանցի պատմաբանների առաջադրած հայեցակարգի սնանկությունը, հետևաբար՝ արցախահայության մշակութային, մասնավորապես ճարտարապետական ժառանգության յուրացման փորձերի կատարելապես հիմնազուրկ լինելը<sup>1</sup>: Արցախում առանձնացվում է «Արցախի ճարտարապետական դպրոց» հասկացությունը, որն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրել Պաուլո Կունենոն, իսկ Արցախի հուշարձանների ուսումնասիրության նախակարապետը Ա. Յակոբսոնն է՝ Գանձասարի վանքին նվիրված հանգամանալից ուսումնասիրությամբ<sup>2</sup>: Հետագայում արդեն Շ. Մկրտչյանը, Մ. Հասրաթյանը, Ս. Կարապետյանը, Ա. Ղուլյանը, Վ. Հարությունյանը, Ժ. Մ. Տիերին, Պ. Տոնապետյանը<sup>3</sup> և այլք իրենց աշխատություններում բացահայտել են ոչ միայն Արցախի ճարտարապետության ամբողջ հարստությունը, առանձնահատկությունները՝ որպես միջնադարյան հայ ճարտարապետության առանձին դպրոց, այլև ճարտարապետական հուշարձանների բարձիթողի, ավերված, խաթարված վիճակը:

Նախքան արցախյան շարժումը հայագիտության նվիրյալները, բնականաբար, զրկված էին Լեոնային Ղարաբաղում համապարփակ հետազոտություններ իրականացնելու հնարավորությունից: Այսօր արդեն ընձեռվել են բոլոր հնարավորություններն ազատագրված տարածքներում Արցախի հին և միջնադարյան մշակույթի ուսումնասիրության ու պահպանության համար: Այդ աշխատանքներն սկսվել են, կարելի է ասել, էթե ոչ ռազմական գոր-

---

<sup>1</sup> Տե՛ս **Сафарян В.**, К вопросу о методике присвоения истории и культуры Арцаха в современной азербайджанской историографии, Լեոնային Ղարաբաղի Հանրապետության անցյալը, ներկան ու ապագան: Միջազգային գիտաժողով, Երևան, 2007, էջ 206:

<sup>2</sup> Տե՛ս **Якобсон А.**, Гандзасарский монастырь, Исследования по истории культуры народов Востока (Сборник в честь академика И. О. Орбели), М.-Л., 1960, с. 145-158.

<sup>3</sup> Տե՛ս **Մկրտչյան Շ.**, Լեոնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1985; **Հասրաթյան Մ.**, Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը, Երևան, 1992; **Կարապետյան Ա.**, նշվ. աշխ.; **Ղուլյան Ա.**, Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքները, Երևան, 2001; **Հարությունյան Վ.**, Դարը մեր մեջ, մենք՝ դարի, Երևան, 2003; **Tierry J.M., Donabedian P.**, Les arts arméniens, Paris, 1987.

ծողություններին զուգահեռ, ապա տարածքների ազատագրումից անմիջապես հետո: Վերջին տարիներին այստեղ կատարված հետազոտությունների շնորհիվ ոչ միայն համալրվել է հայկական պատմաճարտարապետական ժառանգությունը, այլև ճարտարապետական հուշարձանների փաստական տվյալների և ճարտարապետական գիտության ընձեռումների հիման վրա շատ համալիրներ ներկայացվում են նոր մեկնաբանությամբ:

Այս տարածաշրջանի հայկական հոգևոր և մշակութային արժեքների նկատմամբ վանդալիզմի և բարբարոսության դրսևորումների բազում օրինակներ են վավերացված առանձին հետազոտողների աշխատություններում, որոնցում այդ ամենը որակվում է որպես «քարե պատերազմ»՝ ուղղված պատմական հիշողության դեմ<sup>1</sup>: Դրանով իսկ ադրբեջանական կողմը հետամուտ էր միայն մեկ հիմնախնդրի՝ ապացուցել, որ Քուր-Արաքսյան միջագետքը պատկանել է ոչ թե Հայաստանին, այլ Կովկասյան Աղվանքին, իսկ վերջիններիս միջև սահմանաբաժանը եղել է ոչ թե Քուր գետը, այլ Արաքսը: Միանգամայն ակնհայտ է այն մեխանիզմը, որն առաջադրել են ադրբեջանցիները. Կովկասյան Աղվանքը զբաղեցնում էր նաև Քրի աջափնյա տարածքը, որը հայերի հետ կապ չունի, և որտեղ չեն կարող լինել հայկական հուշարձաններ, իսկ ամբողջ այդ տարածքում գտնվող հուշարձանները ստեղծել են աղվանները: Ըստ այդ տրամաբանության՝ Ադրբեջանի տարածքում պահպանված պատմական հուշարձանների թվում չեն հիշատակվում (պետական-պաշտոնական գրանցումներում, տուրիստական ուղեցույցներում, ուսումնական ձեռնարկներում, հետազոտական աշխատություններում) տեղի հայկական հուշարձանները: Մինչդեռ դրանք վավերացրել են նաև այլազգի հետազոտողները:

Ռուս հնագետ Ե. Պյոլինան Քարվաճառի շրջանի հայկական հուշարձանների ու բնակավայրերի մասին գրում է. «Բազմաթիվ բնակելի քարայրեր, գյուղերի ավերակներ, բերդապարիսպներ, մատուռներ ու եկեղեցիներ վկայում են երբեմնի կյանքի մասին՝ ներկայիս գրեթե մարդագուրկ հեռաստաններում: Ցավոք, գերակշռող մեծամասնությամբ այդ բոլոր հուշարձանները ոչ միայն չեն հետազոտված, այլև անգամ չեն հիշատակված գրականության մեջ թեկուզ հաշվառման կարգով: Այստեղ ստվար զանգվածներով ամենուր ապրող հայերից մնացել են լայնատարած գերեզմանոցներ, որ սփռված են թե՛ կիսավեր եկեղեցիների շուրջ և թե՛ առանձին»<sup>2</sup>: Ահա թե ինչու խոհեմ և շատ զգույշ պետք է լինեն հայ ուսումնասիրողները «Կովկասյան Աղվանք» եզրույթն օգտագործելիս, քանզի այն ադրբեջանցիների կողմից օգտագործվում է և շահարկվում պատմական իրական հիմքերի բացակայությամբ: Այսպիսի մոտեցում է դրսևորում ճարտարապետ Արմեն Ղազար-

<sup>1</sup> Տե՛ս **Կարապետյան Ս.**, նշվ. աշխ., էջ 7:

<sup>2</sup> **Пчелина Е.**, Армянские памятники на территории Азербайджанской ССР, Ленинград, 1940, с. 243.

յանը, որը Վանքասարի եկեղեցու մասին գրում է. «Պատմական տեղագրությունը. Կովկասյան Ալբանիա (Աղվանք), Արցախ, Վանքասար լեռ՝ Խաչե-նագետի աջ ափին»<sup>1</sup>:

Արցախահայության հոգևոր և մշակութային արժեքների հանդեպ վանդալիզմը միայն քարոզչությամբ չի սահմանափակվել: 1970-ական թվականներից ի վեր՝ ադրբեջանցիները որդեգրել են ամեն գնով հայկական ճարտարապետական ժառանգությունը յուրացնելու կամ ոչնչացնելու ուղին: Այդ գործողությունների հետևանքով, ինչպես ահագանգում էին մասնագետները, «հողօգտագործման նպատակով բուլդոզերներով ավերվել և հողին են հավասարեցվել 13 պատմահնագիտական հուշարձաններ: Պայթուցիկ նյութեր են օգտագործվել Մեծ Թաղլարի Ծծախաչ և Ազոխի քարանձավներում, Ամարասի և Կաղանկատույքի բնակավայրերի տարածքներում: Փորումներ են կատարվել Գրիգորիսի դամբարանում (Ամարասի վանքում), երկրաբանական հետազոտություններ կատարելու պատրվակով հորանցքներ են փորված Դադիվանքի հուշարձանների տակ... 12-13-րդ դարերի երկու կամուրջ, 13-17-րդ դարերի 3 մատուռ, շուրջ 70 խաչքար, դամբարաններ՝ առանց օրենքի արձանագրելու (չափագրելու, լուսանկարելու և այլն) գոհ են դարձել Սարսանգի ջրամբարի կառուցմանը՝ քարերն օգտագործելով պատվարի մեջ կամ թողնելով ջրամբարի հատակում»<sup>2</sup>: Հայկական վանքերի ու եկեղեցիների սրբատաշ քարերն օգտագործվել են նաև գյուղերում տներ և այլ շինություններ կառուցելու ժամանակ: 1950-ական թվականներին քանդված Գետամիջո սբ. Աստվածածին վանքի շուրջը գոյացել էր Վանք գյուղը: Վանքի քարերն օգտագործվել են այդ գյուղի տների, նույնիսկ գումերի պատերի կառուցման համար: Վանքի շատ քարեր հանդիպում են վերոնշյալ թվականներին Չրաղ (որը ճրագի աղավաղված տարբերակն է) գյուղի դպրոցի պատերի շարվածքում<sup>3</sup>:

Հուշարձանի ոչնչացման և քարերը որպես շինաքար օգտագործելու օրինակ է նաև Տաք ջուր (Իստիսու) առողջարանի շրջակայքի՝ հայկական միջնադարյան եկեղեցիների քարերով կառուցված կառավարական առողջարանը<sup>4</sup>:

Ադրբեջանցիների կողմից հուշարձանների ինքնության ոչնչացման քաղաքականություն էր նաև «նորոգման» կազմակերպումը, որի աշխատանքների գոհ է դարձել Գանձակ քաղաքի սբ. Սարգիս եկեղեցին, որը երեսապատվել է աղյուսով՝ կորցնելով հայկական ճարտարապետական ոճը, և օգտագործվել որպես ժողովուրդների բարեկամության պալատ<sup>5</sup>:

<sup>1</sup> Казарян А., Церковная архитектура стран Закавказья VII века, Ванкасар, церковь, 70-80-е гг. VII в., т. III, М., 2012, с. 601.

<sup>2</sup> Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 119-120:

<sup>3</sup> Տե՛ս Կարապետյան Ս., նշվ. աշխ., էջ 69:

<sup>4</sup> Տե՛ս Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղ. Ադրբեջանի իրականացրած ցեղասպանության անատոմիան, Ստեփանակերտ, 2003, էջ 207:

<sup>5</sup> Տե՛ս Կարապետյան Ս., Հայկական հուշարձանների վիճակը Հայաստանի հարևան երկրներում: Տե՛ս Վասն հայության, շաբաթաթերթ, 23 ապրիլ, 2002, էջ 11:

Շուշարձանների ավերումը մեծ չափերի է հասել արցախյան պատերազմի ժամանակ, երբ օգտվելով ընձեռված առիթից՝ եկեղեցիներն ու վանքերը կանխամտածված պայթեցվել են, հրետանակոծվել և ռմբակոծվել: Արդյունքում Գետաշենի մոտ գտնվող Եղնասարի կանգուն վանքը վերածվել է ավերակների: Գնդակոծվել են Գանձասարի, Ամարասի, Դադիվանքի տաճարները, Տոդ գյուղի եկեղեցին և այլ հուշարձաններ: Շուշիի սբ. Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցին այդ տարիներին երեք անգամ հրկիզվել է:



1



2

*Նկ. 1. Շուշիի սբ. Ամենափրկիչ եկեղեցին՝ ազատագրումից (1) և վերականգնումից (2) հետո (լուսանկարը՝ Հ. Բազեի):*

1991 թ. Շուշիի Մեղրեցոց եկեղեցին վերածվել է ամառային կինոթատրոնի, Գանաչ ժամը՝ հանքային ջրերի սրահի, որի հետևանքով եկեղեցու կառույցը վտանգվել է<sup>1</sup>: 1990 թ. մայիսի 20-ի համարում «Սովետական Ղարաբաղ» թերթը գրում էր. «Ադրբեջանական զինված բանդայական ձևավորումները չեն դադարեցնում գազանությունները Ամարասի հովտում: Այստեղ տեղափոխված տնտեսական կառույցներն ավերելուց և թալանելուց հետո մայիսի 18-19-ին նրանց գազանությունների օբյեկտը դարձավ Ամարասի վանքը: Իրենց հետ բերելով ավերման անհրաժեշտ ողջ տեխնիկան, հանցագործները ջարդեցին վանքի դռները և պատուհանները, գողացան կահույքը, հափշտակեցին վանքի գանձարանը»:

Ազատագրված տարածքներում և մասնավորապես Քարվաճառում ու Մարտակերտում հետախուզական շրջայցերի և հնագիտական պեղումների ընթացքում մենք ևս հանդիպել ենք այլևայլ եղանակներով հուշարձանների ոչնչացման դեպքերի: Ծար պատմական բնակավայրում, որը Խորհրդային Ադրբեջանի կազմում հայտնի էր հնչյունափոխված Զառ ձևով, 1950-ական-

<sup>1</sup> Տե՛ս **Մելիք-Շահնազարյան Լ.**, Ադրբեջանի ռազմական հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խաղաղ բնակչության նկատմամբ, Երևան, 1998, էջ 149-150:



ներին կառուցվել են մի քանի բնակելի տներ և գյուղի դպրոցը, որի պատերում որպես շինաքար օգտագործվել են նաև արձանագրակիր քարերի, խաչքարերի, տապանաքարերի բեկորները:



Նկ. 2. Ծար. խորհրդային շրջանում կառուցված դպրոցի պատերի մեջ որպես շինաքար օգտագործված ջարդոտված խաչքարերի և արձանագրակիր քարերի բեկորներ (լուսանկարը՝ Հ. Պետրոսյանի):

Մեկ այլ՝ Եղեգնուտ գյուղի տներից մեկի պատի շարքում որպես շինաքար էր օգտագործվել խաչային հորինվածքով քարը: Հանդաբերդի վանքում պայթեցվել էր գավիթը, որի հետևանքով ծածկի զգալի մասը փլուզվել էր: Կանգուն շինությունների մեծ մասը շատ անմխիթար վիճակում էր: Տեղահանել և ձորն էին գլորել վանքի շուրջը գտնվող միջնադարյան գերեզմանոցի շատ տապանաքարեր և խաչքարեր: Արցախի ազատագրումից հետո հնարավոր դարձան վանքի պեղումները և շրջակայքի հետազոտությունը<sup>1</sup>: Երկամյա պեղումների արդյունքում ամբողջովին մաքրվեց, ամրակայվեց և մասնակի վերականգնվեց Հանդաբերդի վանքը (տես նկ. 3)<sup>2</sup>:

Արցախի Վերին Խաչեն գավառում գտնվող Չարեքտարի վանքի (այժմ՝ ԼՂՀ Մարտակերտի շրջան, գյուղ Չարեքտար) կառույցները ձևափոխել էին և տասնամյակներ շարունակ օգտագործել որպես անասնազուր: Այստեղ ևս պեղումներ և հետազոտական աշխատանքներ են իրականացվել, և վանքն այսօր ներկայանում է քայքայված, բայց նախնական տեսքով (երեք եկեղեցի, գավիթ, սրահարավային կողմից՝ կից սրահ, գավթին՝ հյուսիսից կցված գույգ աշտարակներով պարիսպ)<sup>3</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ., Հանդաբերդի վանքը և դրա պեղումները, Երևան, 2009, էջ 30-47:

<sup>2</sup> Տե՛ս Կիրակոսյան Լ., Հանդաբերդի վանքի վերականգնման հայեցակարգը, Հայագիտական հանդես, թիվ 1, Ստեփանակերտ, 2010, էջ 127:

<sup>3</sup> Տե՛ս Այվազյան Ս., Սարգսյան Գ., Չարեքտարի վանական համալիրի պեղումների և հետազոտությունների արդյունքները, Վարձք, 2011, թիվ 4, մայիս-հոկտեմբեր, էջ 48-58:



Նկ. 3. Հանդաբերդի վանքի շինությունների հիմնական խումբը պեղումներից առաջ և վերականգնման նախագիծը, տեսքը՝ հարավից (լուսանկարը՝ Հ. Պետրոսյանի, նախագիծը՝ Լ. Կիրակոսյանի):



1



2

Նկ. 4. Չարեքտարի վանքի ընդհանուր տեսքը (1) և գոմի վերածված եկեղեցու ներքին տեսքը (2) աղբբեջանցիների օրոք (լուսանկարը՝ Հ. Պետրոսյանի):

Իհարկե հարկ է նշել նաև, որ խորհրդային շրջանում աթեիստական քարոզչության պայմաններում ոչ միայն աղբբեջանցիները, այլև հայերը ևս եկեղեցիները վերածում էին եթե ոչ գոմի, ապա պահեստի, լավագույն դեպքում՝ ակումբի:

Մշակութային յուրօրինակ վանդալիզմի դրսևորումներ էին նաև պատմաճարտարապետական հուշարձանների վերականգնման և պահպանության անվան տակ իրականացված աշխատանքները, որոնց հետևանքով վանքերի և եկեղեցիների ճարտարապետությունն այլափոխվում էր: Այսպիսի ճակատագրի է արժանացել Վանքասարի՝ 7-րդ դարի եկեղեցին, որը գտնվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանում՝ Ստեփանակերտից Մարտակերտ տանող մայրուղու ձախ կողմում՝ Վանքասար կոչվող ամենաբարձր գագաթի վրա: Միջնադարյան գողտրիկ կառույցը թեև կանգուն է մնացել, բայց կորցրել է իր դիմագիծը՝ ճարտարա-

պետական ոճը, պատկանելությունը: Վանքասարի եկեղեցու՝ մեր կողմից կատարված տեղագնումներն ու մանրամասն չափագրությունները նպաստել են կառույցի հատակագծային և ծավալատարածական հորինվածքի ամբողջական և իրական պատկերը ներկայացնելուն և հնարավորություն ընձեռել հասկանալու աղբյուրների «վերականգնման» ելությունը, որն իրականացվել է անցյալ դարի 80-ական թվականներին: Սկզբնական հատակագծի վրա վերականգնվել է մի ծավալ, որը չի համապատասխանում նախնական կառույցին: Այդ «նորոգումներից» եկեղեցու ծավալատարածական հորինվածքն ու համաչափական համակարգը խաթարվել են, և աղճատվել է նրա նախնական հորինվածքը: Վանքասարի եկեղեցու ոճական և շինարարական առանձնահատկություններին առնչվող վաղ միջնադարյան բոլոր հուշարձանները կառուցված են այլ կերպ: Այսպիսի ձևով վերականգնումը ոչ թե չիմացության, այլ դիտավորության արդյունք է: Քաղաքական նպատակներ հետապնդող աղբյուրների «հեռատես ձեռնարկը» լուրջ բարդություններ է հարուցել հուշարձանի նախնական տեսքի վերականգնման համար:

Սակայն փաստական կռվանների, համեմատական վերլուծության (մասնավորապես՝ Քարաշամբի, Այլաբերի, Թալիսի սբ. Աստվածածին եռախորան եկեղեցիների օրինակով) և տարածաշրջանի վաղ միջնադարյան հարուստ մշակութային շերտի ու ճարտարապետական համալիրների համարդրությամբ անհրաժեշտ է ներկայացնել անցյալի իրական պատկերը՝ աղվանական-աղբյուրական կապի և ընդհանրության «տեսության», ինչպես նաև հայ ժողովրդի արցախյան հատվածի ստեղծած նյութական մշակութային հուշարձաններին աղվանական ծագում վերագրելու վարկածների ամբողջ սնանկությունը բացահայտելու, ինչպես նաև՝ հետազոտությունների միջոցով աղբյուրական հարձակումներին հակահարված տալու համար: Արդյունքում ներկայացնում ենք Վանքասարի վերակազմության նախագիծը՝ առաջարկելով այն վերակառուցել<sup>1</sup>:

Վանքասարի եկեղեցին տուժել էր նաև արցախյան պատերազմից: Արևմտյան ճակատում՝ բարավորից վերև, արկը բավական մեծ խոռոչ է բացել, որը սպառնում էր պատի կայունությանը: 2011 թ. աշնանը ԼՂՀ Զբոսաշրջության վարչությունն այստեղ իրականացրել է մաքրման, ամրակայման և բարեկարգման աշխատանքներ: Մասնակի ամրակայման աշխատանքներն ավարտվել են 2012 թ. հունվարին, և եկեղեցու գմբեթին տեղադրվել է խաչը: Վերաշարվել է արևմտյան ճակատի քանդված մասը: Բացվածքներում տեղադրվել են մետաղական դռներ, ներսում կառուցվել է բեմը: Կարծում ենք, սակայն, որ այսպիսի աղավաղված ծավալի վրա հավելումներ անելն ավելորդ միջոցառում է: Անհրաժեշտ է վերականգնել կառույցի նախնական տեսքը, առավել ևս կատարված նորոգումները նույնպես զուրկ չեն սխալ-

---

<sup>1</sup> **Կիրակոսյան Լ.**, Վանքասարի եկեղեցու ճարտարապետությունը և աղբյուրական «վերականգնումը», ՊԲՀ, 2013, թիվ 1, էջ 120-133:

ներից (արևելյան խորանում անմասշտաբ և անհամաչափ բեմի կառուցում, մուտքերում մետաղական դռների տեղադրում, արկից վնասված արևմտյան ճակատի խոռոչի վերաշարում՝ միջնադարյան շարվածքին անհարիր եղանակով): Ցավով ենք նշում, որ այլ տեղերում նույնպես հանդիպում ենք անթույլատրելի դրսևորումների. երեսապատվում է Գանձասարի վանքի պարիսպը, Ասկերանի շրջանի Ավետարանոց (Չանաղչի) գյուղում՝ Արցախյան ազատամարտում նահատակված քաջորդիների հիշատակին նվիրված հուշակոթողը կանգնեցվում է վանքի միջնադարյան պարսպի վրա՝ խաթարելով մշակութային լանդշաֆտը:



1



2



3

*Նկ. 5. Վանքասարի եկեղեցին «աղբբեջանական վերանորոգման» ընթացքում (1), վերանորոգումից հետո (2) (լուսանկարը՝ Հ. Բազեի) և վերակազմությունը (3) (Լ. Կիրակոսյան):*



*Նկ. 6 Գանձասարի վանքի պարսպից մի հատված՝ երեսապատման գործընթացը դադարեցված վիճակում:*

Ներկայացված ճարտարապետական հուշարձանները միայն փոքր մասն են այն ծանրակշիռ ժառանգության, որի նկատմամբ աղբբեջանցիներն իրականացրել են մշակութային եղեռն:

Ամփոփելով կարող ենք ասել, որ աղբբեջանական իշխանությունների վարած քաղաքականությունը քրիստոնեական հայ ճարտարապետական հուշարձանների հանդեպ հիմնականում ունեցել է մի քանի ուղղություն՝ դրանց մասին պաշտոնական հրատարակություններում, տեղեկատուներում, ուղեցույցներում՝ լռության պահպանում, էթնոմշակութային և կրոնական պատկանելության խեղաթյուրում, հուշարձանների կանխամտածված ավերում և այլափոխում, հուշարձանների նկատմամբ զանազան բարբարոսական գործողությունների իրականացում (պայթեցումներ, շինությունների ավերում, հրկիզում և որպես շինաքարի օգտագործում, եկեղեցիների վերածում գոմերի, ախոռների, պահեստների և այլ նշանակության շինությունների), հայկական եկեղեցիները՝ մուսուլմանական կառույցների վերափոխում, հայկական շատ հուշարձանների քողարկում՝ հողով ծածկելու միջոցով, այցելությունների և ուսումնասիրությունների արգելում, վերականգնման և պահպանության քողի ներքո հուշարձանների ծավալատարածական հորինվածքի, կերպարի և ինքնության ճարտարապետական այլափոխում:

**Lyuba Kirakosyan – *Cultural Genocide (With Special Reference  
to the Monuments in Artsakh)***

Speaking about the Armenian Genocide one only remembers more than a million and a half innocent victims murdered, slaughtered, driven to other places. Far less is thought of the cultural loss and spiritual and material values that we lost.

Today the Azerbaijanians steadily and deliberately destroy the Armenian cultural heritage and this process can be fully called “ethnocide” or cultural genocide.

The policy of changing Christian Armenian architecture led by Azerbaijani government is realized in several directions: nothing is said about them in official publications, guidebooks; ethnocultural and religious identity is changed; the monuments are deliberately destroyed; different barbaric acts are committed (explosion, destruction, usage of the stones of churches as building material, stores) against the monuments; the Armenian Christian churches are turned into Mosques; many Armenian monuments are being hidden under a thick layer of soil; visits to and research of the monuments are prohibited. They were changing the plan, view, name of the architectural monuments under the name of reconstruction and rebuilding.

# Հ Ր Ա Պ Ա Ր Ա Կ ՈՒ Մ Ն Ե Ր

## ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 1894-1896 ԹԹ. ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ (ԲԻԹԼԻՄԻ ՆԱՀԱՆԳ)

1894-1896 թթ. Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում սուլթան Աբդուլ Համիդ II-ի կառավարության կողմից իրականացվեցին հայերի զանգվածային կոտորածներ, որոնց նպատակն էր արյան մեջ խեղդել արևմտահայերի ազգային-ազատագրական շարժումը և վերջնականապես վերացնել Հայակական հարցը: Տեղի ունեցած ոճրագործությունը ցեղասպանության դրսևորում էր, որի արդյունքում կոտորվեց շուրջ 300000 հայ, բռնի մուսուլմանացվեց շուրջ 100000-ը, ավերվեցին և թալանվեցին հայաբնակ հարյուրավոր բնակավայրեր:

1894-1896 թթ. ընթացքում Արևմտյան Հայաստանի հայոց թեմական առաջնորդների, առաջնորդական փոխանորդների, հոգևոր հովիվների, կրոնական ու քաղաքական ժողովների կողմից հայկական կոտորածների վերաբերյալ անընդհատ տազնապալից տեղեկագրեր ու զեկուցագրեր էին հղվում Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի և Կ. Պոլսի հայոց պատրիարք Մատթեոս արքեպիսկոպոս Իզմիրյանի հասցեին<sup>1</sup>: Դրանցում մանրամասն ներկայացվում էր տեղերում տիրող իրավիճակը՝ սով, բռնություններ, թալան, հրկիզումներ, բռնի իսլամացում, կանանց ու աղջիկների առևանգումներ, հայերի ձերբակալություններ, սպանություններ, ինքնապաշտպանական գործողություններ, համատարած կոտորած: Հաճախ նշվում էին այդ չարագործությունները կատարողների անունները:

Հատկանշական է, որ գրությունների հեղինակներն իրադարձություններին տալիս էին ճիշտ քաղաքական գնահատականներ՝ հստակ հասկանալով, որ տեղի ունեցող կոտորածները ոչ թե տարերային բնույթ կրող իրադարձություններ են, այլ կառավարության կողմից իրականացվող հայաջինջ քաղաքականություն: Այսպես՝ Տարոնի առաջնորդական փոխանորդ Ներսես վարդապետ Խարախանյանը նշում է. «Իսկ տեղական կառավարութիւնը այս պարագայից մէջ կը փայլի իր ցցուցած սառն անտարբերութեամբը, և մանաւանդ շատ մը պարագաներ կապացուցանեն անոր գործակցութիւնն այս աղետալի կոտորածներու և աւարառութեանց մէջ և որ այս միջոցին Մշոյ մէջ հաւաքած է հարիւրաւոր չէրքէզներ, չաչաններ և քիւրտեր,

<sup>1</sup> Հիշյալ տեղեկագրերի ու զեկուցագրերի մի մասը 1895-1896 թթ. հրապարակվել են «Արարատ» ամսագրում:

որպեսզի ի պատեհութեան Մշոյ հայերն կոտորել և կողոպտել տայ»<sup>1</sup>: Մեկ այլ փաստաթղթում Մուշի քաղաքական և կրոնական ժողովների՝ պատրիարք Իզմիրլյանին հղած գրության մեջ նշվում է. «Մինչև որ ծրագիրը գործադրութեան դրուի և բարենորոգումնք ներմուծուին որոշեալ նահանգաց մէջ հայ մը չմնար: Թիւրքիոյ կառավարութիւնն ու իսլամութիւնն իսպառ բնաջինջ պիտի ընեն հայերը և այն ատեն ում համար պիտի գործադրուի ծրագիրը և ի՞նչ բանի պիտի ծառայէ բարեկարգութիւնն, հայկական ինդիքն հայոց կոտորածո՞վ պիտի լուծուի արդեօք»<sup>2</sup>:

Հայաստանի Հանրապետության ազգային արխիվի տարբեր ֆոնդերում պահվում են 1894-1896 թթ. համիդյան կոտորածներին վերաբերող տասնյակ զեկուցագրեր ու տեղեկագրեր: Հիշյալ փաստաթղթերից առանձնացրել ենք չորսը, որոնք գրի են առնվել 1895 թ. սեպտեմբերի 12-ից նոյեմբերի 8-ն ընկած ժամանակահատվածում և ներկայացնում են հիմնականում Բիթլիսի (Բաղեշի) նահանգում բնակվող հայ բնակչության դեմ կիրառված բռնությունների, ավերածությունների ու կոտորածների համայնապատկերը:

Ստորև ներկայացվող փաստաթղթերը, որոնք պահվում են ՀՀ Ազգային արխիվի թիվ 56 (Ս. Էջմիածնի լուսավորչական հայոց սինոդ) ֆոնդում, հրապարակվում են առաջին անգամ, ուղղագրական և կետադրական որոշ շտկումներով, լեզվաոճական առանձնահատկությունների պահպանմամբ: Փաստաթղթերի վերնագրերը և ծանոթագրությունները կազմված են մեր կողմից:

ԳՈՆԱՐ ԱՎԱԳՅԱՆ

1

***Տարոնի առաջնորդական փոխանորդ Վարդան վարդապետ Հակոբյանի գրությունն Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիսյանին՝ Տարոնում տեղի ունեցած հայկական կոտորածների և օգնություն խնդրելու մասին***

12 սեպտեմբերի 1895 թ.

Մուշ

Նորին Ս. Օծութեան

Ս. Տ. Մկրտչի Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց,  
Ծայրագոյն Պատրիարքի Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան  
Առաքելական Մայր եկեղեցւոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի  
'Ի Վաղարշապատ

Մատուցի որդիական ամենախոնարհ յարգանքօք

Վեհափառ Տէր,

Ձեր Վեհափառութեան հայրական հոգածութիւնն 'ի վերայ 'ի սփիւռս

<sup>1</sup> Տէ'ս թիվ 2 փաստաթուղթը:

<sup>2</sup> Տէ'ս թիվ 3 փաստաթուղթը:



աշխարհի ցրուեալ հայութեան և մանաւանդ Թորգոմեան աշխարհի քաջա-  
ճանօթ գոլով, համարձակութիւն կըստանամք տոյնս գրելու:

՛Ի միջի այլոց Տարօնոյ<sup>1</sup> երկրի հայութիւնը առաւելապէս ընկճեալ,  
ճնշեալ, հարստահարեալ և գերութեան աւարներու ներքն տուայտեալ էր,  
հայութիւնը դիակնացնելու համար չ'մնաց պակաս նենգահէտ և չարահնար  
մեքենայութիւններ որ ՚ի գործ չտրուեցան և ՚ի լրումն ամենայն դժբաղտու-  
թեանց Մասուն<sup>2</sup>-Տալուորիկի<sup>3</sup> սրտաճմլիկ ու անողոք կոտորածն ալ յառաջ  
բերուեցաւ: Այն ինչ եռամեայ սովէ, հնդախտի<sup>4</sup> համաճարակէ և սուրի կոտո-  
րածէ հազիւ աչք բացած ժողովուրդն ու կ'ակնկալէր Եւրոպական տերու-  
թեանց պաշտպանութիւնն վայելել և իր արդար բողոքոյ ձայներն լսելի  
առնել Սուլթանին, ահա զայրացեալ իսլամութիւնն մոլեգին մոլեռանդու-  
թեամբ կը շարունակէ իր սովորական ընթացքն: Ձօլաքաղ Միւլթիզիմն<sup>5</sup>  
անագորոյն ոստիկանն, կաշառակուլ պաշտօնատարն և վերջապէս մեծն ու  
փոքրը կը գերին և գիրփէն: Մշոյ դաշտերն ու գիւղերն միջին դարու մէջ  
նմանը չը տեսնուած անլուր ու քստմնելի գործողութիւններ տեղի կ'ունենան:  
Յաւելումք ասոնց վրայ քրդաց և համիտիյէներու շահատակութիւնքն, որք  
ամենայն ազատութեամբ կը գործին կառավարութեան թոյլտուութենէն  
խրախուսեալ: Այս է ահա Մշոյ աշխարհի արդի կացութիւնը:

Գալով Մասուն-Տալուորիկցիներու մասին, յոյժ արգահատելի և ցաւալի  
վիճակ ունին: Չանագան տեղերէ հասած նպաստներով ցարդ հոգացուեցաւ  
այդ իւեղճերու կենսական պէտքերն, ձեռամբ տեղս հաստատուած մնացած  
մասնաժողովոյն և ձեռնատուութեամբ միսիոնարաց ձեռնարկուեցաւ բնակա-  
րաններ ալ շինելու, որոյ պիտի մասնակցէր կառավարութիւնը փայտեր ու գե-  
րաններ մատակարարելու գործակցութեամբ ու աջակցութեամբ: Երիցսէ, որ  
անձամբ կ'այցելէմք Մասունը և անձամբ կը դիտէմք կառավարութեան պաշ-  
տօնէից ընթացք ու վարմունքը, ոչ թէ միայն աջակցել չէ, այլ պարզապէս խա-  
բիլ ժողովուրդը և խափանաբար արգելքներ յարուցանել ընդդէմ շինութեանց  
տանց ունանց որմերն կանգնուած են, սակայն կտուրներն չեն ծածկուած, որոյ  
հոգն որպէս թէ ստանձնած էր կառավարութիւնը: Այդ պղատօնական յուսա-  
խաբութիւնը բացարձակապէս նպատակ ունի զՄասունցիս անպատասպար  
թողուլ ձմեռուան հանդէպ և այդ կոտորածէ գերծ մնացած թշուառները ողջ  
ողջ մահացնել: Իրաց այս տխուր վիճակին մէջ յոյսերնիս դրած ենք համազ-  
գայնոց նուիրատուութեան և մենք խոնարհաբար կուգամք դիմել յոտս Ձեր  
Վեհափառութեան, որ զթասէր կարդաք մերագնէից մարդասիրական զգաց-

<sup>1</sup> Տարոն – գավառ Մեծ Հայքի Տուրուբերան աշխարհում: Համապատասխանում է Մուշի գավառին, որը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ընդգրկված էր Բիթլիսի նահանգում:

<sup>2</sup> Մասուն – գավառակ Մշո գավառում:

<sup>3</sup> Տալվորիկ – գյուղախումբ Գենջի գավառի Խուլփի գավառակում:

<sup>4</sup> Հնդախտ – խոլերա:

<sup>5</sup> Մյուլթիզիմ – հարկերի և պետական կապալառու Թուրքիայում:

մանց: Ձեր Վեհափառության ՚ի նպաստ դրկած յիսուն օսմանեան ոսկին Ամեն. Ս. Պատրիարք հօր միջոցաւ ստացանք:

Մասուն այցելած միջոցնուս ամենաստոյգ տեղեկութիւններ հաւաքեցինք կոտորածի և ողջ մնացեալներու թուոյն վրայ, նոյնպէս այրուած գիւղերու և ընդհանուր վնասուց:

Ահա մի փոքր և ամփոփ տեղեկագիր կոտորածին.	
սպաննուած	ողջ մնացած
1473 հոգի Կելի իր 17 գիւղերով	1255
587 Սէմալ <sup>1</sup>	605
495 Շէնըք <sup>2</sup>	527
259 Իշխանձոր իր 4 գիւղերով <sup>3</sup>	445
1819 Տալուորիկ իր 13 գիւղերով	1002
316 Ախբի իր 3 գիւղերով <sup>4</sup>	525
56 Կելիկէլըման <sup>5</sup>	83
-----	
5004	4447

Հետևեալ գիւղերն ալ այրուած ու թալանուած են, իսկ սրածութիւնք մասնակի են եղած: Հիրթինք<sup>6</sup> 329, Ընկուզակ<sup>7</sup> 268, Արտկունք<sup>8</sup> 237, Սէվիթ<sup>9</sup> 82, որով ընդամենը գրեթէ 5000 հոգի, այժմ նպաստ կընդունեն:

Արդ Վեհափառ Տէր, խոնարհաբար կուգամք յանուն բազմաչարչար Տարօնոյ տառապեալ ժողովրդեան և յանուն նահատակ սասունցիներու Ձեր հայրական հովանին հայցել: Ձեր Վեհափառութիւնը ՚ի մօտոյ տեսած և

<sup>1</sup> Սէմալ – գյուղ Մուշի գավառի Մուշի գավառակում, Վերին գավառի գյուղախմբում: Երբեմն մտել է նաև Գենջի գավառակի մեջ: Գտնվում էր Մուշ քաղաքից 20-22 կմ հարավ-արևմուտք, Անդոկ լեռան հյուսիսային կողմում:

<sup>2</sup> Շէնիկ, Շէնիք – գյուղ Մուշի գավառի Մուշի գավառակում, Մուշ քաղաքից մոտ 24 կմ հարավ-արևելք, Խուլբ գետի վերին հոսանքի հովտում:

<sup>3</sup> Իշխանաձոր – գյուղ Գենջի գավառի Խուլբի գավառակում, Խիանքի գյուղախմբում: Բաժանված էր չորս առանձին թաղերի (Գալինք, Խզըրկու արտեր կամ Խըրվարդ, Խզլարդիհ, Նորհան):

<sup>4</sup> Աղբիկ, Աղբի – գյուղ Մուշի գավառի Մասունի գավառակում, Ծովասարից 8-10 կմ հեռավորության վրա: Աղբիկի մաս էին կազմում նաև Գյալառաշ, Թխիկ և Խտան գյուղերը՝ դիտարկվելով որպես վերջինիս «թաղերը»:

<sup>5</sup> Կելիեգենման – գյուղ Մուշի գավառի Մուշի գավառակի Վերին գավառի գյուղախմբում (երբեմն տեղադրվում է նաև Շատախ գավառակում):

<sup>6</sup> Հեթինք, Հեթին – գյուղ Մուշի գավառի Մասունի գավառակում, Գավառի գյուղախմբում: Չուտ հայաբնակ էր, զբաղվում էին երկրագործությամբ և անասնապահությամբ:

<sup>7</sup> Ընկուզակ – Գյուղ Բիթլիսի վիլայեթի Խուլբի գավառակի Խիանքի գյուղախմբում:

<sup>8</sup> Արտկունք – գյուղ Գենջի գավառի Խուլբի գավառակում, Խիանքի գյուղախմբում, դրա հյուսիսարևելյան մասում:

<sup>9</sup> Սևիթ – գյուղ Գենջի գավառի Խուլբի գավառակի Խիանքի գյուղախմբում:

խորաթափանց եղած է մշեցիներու ցաւերուն, Հայրապետական գահէն մեր վերքերուն բալասան կը հայցեմք:

Մատչելով ՚ի հաբոյր Աստուածարեալ և օծեալ ս. աջոյդ և հաւաստեալ որդիական ամենախոնարհ յարգանաց մնամ ամենախոնարհ ծառայ:

Փոխանորդ ընդհ. վանահայր Առաջնորդի Տարօնոյ՝  
Վարդան վարդապետ Յակոբեան

ՀԱՍ, ֆ. 56, ց. 16, թթ. 9-10, բնագիր, ձեռագիր:

2

**Տարունի առաջնորդական փոխանորդ Վարդան վարդապետ Հակոբյանի գրությունը Կ. Պոլսի Հայոց պատրիարք Մատթեոս Իգմիրլյանին՝ Մշո գավառի հայկական կոտորածների մասին**

1 նոյեմբերի 1895 թ.  
Կ. Պոլիս

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր<sup>1</sup>.

Մուշէն ներկայ հոկտեմբեր 18 թիւ ինձ ուղղեալ նամակներէն կը քաղեմ հետևեալները Մշոյ գաւառի<sup>2</sup> ներկայ վիճակի վերայ:

Բաղէշի<sup>3</sup> կոտորածը.- Մշոյ իլէմաներէն<sup>4</sup> իր մուլեռանդութեանք և հայատեցութեամբ ծանօթ հաճի Տույիպ էֆէնտի, որ հոկտեմբերի սկիզբները Մշէն Բաղէշ գնացած էր, Բաղէշոյ շէյխերէն ոմանց հետ համաձայնութեամբ կը պատրաստէ Բաղէշոյ Հայոց կոտորման ծրագիրը:

Հայերը քանի մ'օր յառաջ թուրք կատաղիներու շարժումէն և ոմանց բացարձակ խօսուածքէն վտանգն զգալով տեղւոյն փոխ-կուսակալին կը

---

<sup>1</sup> Կ. Պոլսի հայոց պատրիարք Մատթեոս արքեպիսկոփոս Իգմիրլյան – Ծնվել է 1845 թ. Կ. Պոլսում, մահացել 1910 թ.՝ Էջմիածնում: Սովորել է ճննդավայրի Պողոսյան և Պեզճեան վարժարաններում: 1869 թ. նշանակվել է Մկրտիչ Ա Կաթողիկոսի անձնական քարտուղար, 1872 թ. ընտրվել Կ. Պոլսի կրոնական ժողովի անդամ և ատենապետ, 1886-1890 թթ.՝ Եգիպտոսի Հայոց թեմի առաջնորդ, 1894-1896 թթ. և 1908 թ.՝ Կ. Պոլսի Հայոց պատրիարք: Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ 1908 թվականից:

<sup>2</sup> Մուշի գավառ – գավառ Բիթլիսի նահանգում, Կենտրոնը Մուշ քաղաքն էր: Բաժանվում էր 5 գավառակների՝ Բուլանըղ, Մանազկերտ, Մուշ, Սասուն, Վարդո, որոնք միասին 20-րդ դարի սկզբներին ունեին 567 բնակավայր:

<sup>3</sup> Բաղէշ կամ Բիթլիս – քաղաք Վանա լճի հարավարևմտյան կողմում, լճափից մոտ 18-20 կմ հեռավորության վրա, համանուն նահանգի և գավառի կենտրոնը:

<sup>4</sup> Ուլեմա (արաբ.) – թրքական կրթված հոգևոր դասը, որը միաժամանակ օրենսգետ է: Ուլեմաների թվում են կադին, իմամը, մուֆտին:

դիմեն և կացութիւնն յայտնելով ապահովութիւն կը խնդրեն: Կուսակալի փոխանորդն զանոնք ապահովցնելէ զատ, քանի մը կարևոր դիրքերու վրայ թնդանօթներ կը զետեղէ, եթէ յարձակում պատահի ռմբակոծելու համար զյարձակողս և այսու անդորրութիւնը ապահոված կը համարէ և կը յորդորէ զհայերն իրենց առօրեայ գործերն շարունակելու: Հոկտեմբեր 13-ի ուրբաթ օրն, բոլոր թուրքերը զինեալ ահագին բազմութեամբ ճամիները<sup>1</sup> կը լեցուին, և որպէսզի պատրուակ մը գտնեն ինքզինքնին արդարացնելու, հայու զգեստով 2-3 թուրքերը հրահանգուած, շուկային կից գտնուած Ուլուճամիի բակին մէջ ասորճանակներ կը պարպին և միւս կողմէն ալ կաղաղակին, թէ. «Կեավորլար ճամիի պասթըլար»<sup>2</sup>: Մնացածը յայտնի է, շուկայի երկու բերանն իսկոյն թուրքերէ բռնուելով միջի հայերը ամբողջովին կըլան առաջին զոհերն, և շուկան ամբողջովին ինչ-որ հայոց կը պատկանի, կը կողոպտուի, և այնուհետև կը ծաւալի թաղերուն մէջ, որս շատ մը տունէր կողոպտուելէն զատ, շատ մը կանայք և մանկտիք զոհ կերթան յարձակող կատաղիներուն: Բաղէշի հայոց կոտորածին մասնակցած են ոչ միայն տեղական թուրքերը և ժանտարմները, այլև դուրսէն առաջուց կանչուած և բերուած մուրկանցիները, խութեցիները և ուրիշ աշիրէթից<sup>3</sup> վերաբերեալ խառնիճաղանճ քրդերը:

Բաղէշի կոտորածէն աւելի սոսկալի տեղի ունեցած է շրջակայ գիւղերը և զաւառակները, որոնցմէ առայժմ մեր նամակագիրքը Դուլթիկի<sup>4</sup> 500 տնէ բաղկացեալ գիւղի ամբողջովին ջնջուիլն կը նշանակեն և որուն բաղտակից եղած են Փարխանդ<sup>5</sup>, Խոլսըլըլուր<sup>6</sup>, Փափշէն<sup>7</sup> և զանազան գիւղեր, որք Բաղէշոյ մօտերն են և քանի մը ժամ հեռաւորութիւն ունին: Հաճի Տայիպ Էֆէնդի իր ծրագիրը պատրաստելէն վերջ, կոտորածէն 4 ժամ առաջ կը մեկնի, ճամբան զանազան քրդաբնակ տեղեր հանդիպելով և իր պատուէրները տալով, Սջէն 3 ժամ հեռաւորութեամբ գտնուած Քօլօսիկ<sup>8</sup> քրդաբնակ գիւղը կը հասնի ամացս 14-ին, ուր պալաքցի աշիրէթներէն հաճի Ֆարրզ աղային հետ լինելով իսկոյն պատգամաւորներ դրկել կուտայ պալաքցի, խութեցի, սէյտանցի և այլն աշիրէթներուն, որք իսկոյն կը յարձակին հայ գիւղերու վրայ, և ինքն ամենայն հանդարտութեամբ Մուշ կը վերադառնայ ամսոյս 15-ին:

<sup>1</sup> Ճամի – մզկիթ, հարուստ և նշանավոր մուսուլմանական աղոթատուն:

<sup>2</sup> Կեավորլար ճամիի պասթըլար (թուրք.) – Գյավուրները մզկիթը գրավեցին:

<sup>3</sup> Աշիրէթ – ցեղապետի կողմից կառավարվող քրդական ցեղ:

<sup>4</sup> Դուլթիկ, Խուլթիկ – գյուղ Բիթլիսի գավառի Բիթլիսի գավառակի Բայիբկի գյուղախմբում, Բիթլիս քաղաքից մոտ 16 կմ հարավ-արևելք: Եղել է Գավառակի ամենամարդաշատ ու նշանավոր գյուղը:

<sup>5</sup> Փարխանդ – գյուղ Բիթլիսի գավառի Բիթլիսի գավառակում Դատվանի գյուղախմբում:

<sup>6</sup> Խոսըլըլուր Բիթլիսի գավառի Բիթլիսի գավառակի Դատվանի գյուղախմբի Խմելջուր գյուղի մասին է:

<sup>7</sup> Փափշէն կամ Բաբշէն – գյուղ Բիթլիսի գավառի Դատվանի գյուղախմբում: Գտնվում էր Բիթլիս քաղաքից հյուսիս, Վանա լճի հարավարևմտյան ափին:

<sup>8</sup> Քոլոսիկ – գյուղ Մուշի գավառի Մուշի գավառակում, Մուշ քաղաքից 17 կմ հարավ-արևելք, Բիթլիս տանող ճանապարհի աջ կողմում:

Մշոյ գաւառը.- Մշոյ քաղաքի հայերը՝ Բաղէշի կոտորածի լուրը հոկտեմբեր 13-ին Ուրբաթ գիշերը՝ լսելով, առտուն՝ շաբաթ այլև խանութնին չեն բանար և իրենց տուները կապաստանին, և թէպէտ կառավարութիւնը հայոց երևելիներէն մի քանիները կանչելով կը ստիպէ, որ խանութները բանան և բանէ մը չ'կասկածին, սակայն հայերը՝ Բաղէշի Հայոց վիճակն ու կոտորածը յառաջ բերելով նաև Մշոյ թրքաց վերջին աստիճան գրգռեալ և սպառնալի դրութիւնը և լեռնաբնակ քրդաց դաշտի հայ գիւղերու վրայ յարձակելն և ոմանց խումբ-խումբ գումարուած և կարծես հրամանի մը սպասող զօրագնդի պէս պատրաստ վիճակի մէջ լինելն ի մէջ բերելով չեն ուզեր խանութներն բանալ, միւս կողմէն գիւղերը քրդական արշաւանքներու առջև բոլորովին անպատասպար, աւարառութեանց, սպանութեանց և հրկիզութեան մատնուած են: Մշոյ դաշտի գիւղերէն Արեգլբան<sup>1</sup>, Տրմէրս<sup>2</sup>, Առնիստ<sup>3</sup>, Յագաղբիւր<sup>4</sup> գիւղերը թէ կողոպտուած է և թէ բնակիչներն ալ ցրուած են, իսկ Վարդենիս<sup>5</sup>, Արտօնք<sup>6</sup> և Խարձ<sup>7</sup> գիւղերը քրդերէ պաշարուած են, Յիսափու<sup>8</sup>, Աւրան<sup>9</sup>, Տէրէք<sup>10</sup>, Ալատին<sup>11</sup> և շրջակայ ուրիշ շատ մը գիւղեր աւարառութիւններ և մարդասպանութիւններ կատարուած են, որոց մանրամասնութիւնք դեռ չեն հասկցուած:

---

<sup>1</sup> Խոսքը Մուշի գավառի Մուշի գավառակի Ալիգլբոն գյուղի մասին է: Գտնվում էր Մուշ քաղաքից մոտ 22 կմ արևելք:

<sup>2</sup> Դրմերդ, Դրմետ – գյուղ Մուշի գավառի Մուշի գավառակում, Մուշ քաղաքից արևելք: Այստեղ մի քարակոթողի վրա պահպանվել է ուրարտական թագավոր Մենուա 1-ինի սեպագիր արձանագրություններից մեկը:

<sup>3</sup> Առնիստ – գյուղ Մուշի գավառի Մուշի գավառակում, Մուշ քաղաքից մոտ 28 կմ արևելք, Մուշ-Բիթլիս ճանապարհից ձախ:

<sup>4</sup> Խոսքը Մուշի գավառի Մուշի գավառակի Ավգաղբյուր գյուղի մասին է, որը գտնվում էր Մուշ քաղաքից շուրջ 22 կմ արևելք, Մուշ-Բաղէշ ճանապարհից դեպի ձախ:

<sup>5</sup> Վարդենիս – գյուղ Մուշի գավառի Մուշի գավառակում, Մուշ քաղաքից մոտ 35 կմ հարավ-արևելք, Մեղրագետի աջ կողմում:

<sup>6</sup> Արտօնք – գյուղ Մուշի գավառի Մուշի գավառակում, Մուշ քաղաքից հարավ-արևելք, Մեղրագետի հովտում:

<sup>7</sup> Խարս, Խարձ – գյուղ Մուշի գավառի Մուշի գավառակում, Մուշ քաղաքից մոտ 30 կմ արևելք:

<sup>8</sup> Ծիսափու – գյուղ Մուշի գավառի Մուշի գավառակում, Մշո դաշտի հյուսիսարևմտյան մասում, Մուշ քաղաքից մոտ 23 կմ հեռավորությամբ, դեպի Կարին տանող ճանապարհին:

<sup>9</sup> Ավրան – գյուղ Մուշի գավառի Մուշի գավառակում, Մուշ քաղաքից հյուսիս, Աշտիշատ վանքի մոտ:

<sup>10</sup> Խոսքը Մուշի գավառի Մուշի գավառակի Դերիկ գյուղի մասին է: Այն նախապատմական շրջանի հեթանոսական շրջանի գլխավոր կենտրոն Աշտիշատ ավանն է, որը 19-րդ դարի վերջում մի անշուք գյուղ էր:

<sup>11</sup> Ալադին, Ալատին – գյուղ Մուշի գավառի Մուշի գավառակում, Մուշ քաղաքից մոտ 18 կմ հյուսիս:

Պաշարման վիճակի մեջ են Վարդոյ գաւառակի<sup>1</sup> հայ գիւղերն ալ, իսկ Պուլանըզ գաւառակի<sup>2</sup> համար կը գրեն, թէ բոլորովին թալանուած, արուած և 5-6 նշանաւոր գիւղերն ալ իսպառ հիմնայատակ ըրած են, որոնցմէ Լիզ<sup>3</sup> գիւղի մեջ սպաննուած են ի մասնաւորի տեղւոյն երևելիներէն Մաքսուտեան Լևոն էֆէնտի և բաղէշեցի Պաքալեան Սերովբէ աղան: Իսկ տեղական կառավարութիւնը այս պարագայից մեջ կը փայլի իր ցցուցած սառն անտարբերութեամբը, և մանաւանդ շատ մը պարագաներ կապացուցանեն անոր գործակցութիւնն այս աղետալի կոտորածներու և ասարառութեանց մեջ և որ այս միջոցին Մշոյ մեջ հաւաքած է հարիւրաւոր չէրքէզներ, չաչաններ և քիւրտեր, որպէսզի ի պատեհութեան Մշոյ հայերն կոտորել և կողոպտել տայ:

Մշոյ հայոց երևելիները՝ քանի մը թիւրք իւլէմաններու և գապիլէից գլխաւորներուն դիմած և պաշտպանութիւն ինդրած ըլլալով նոքա իբր պայման առաջարկած են, Սասունի հայոց մեջ գտնուող միսիօնարներն այնտեղէն հեռացնել, ըսելով, թէ մենք Մշոյ հայերէն չենք կասկածեր, այլ Սասնոյ հայերէն, որք միսիօնարներու թելադրութեամբ կրնայ ըլլալ, որ մեր վրայ յարձակեն և որպէս թէ այդ կասկածէն ստիպեալ եկեր են զենքով շրջել, մինչ իրենց նպատակն է միսիօնարներն վար իջեցնելէ վերջ, կոտորել տալ նոյն իսկ այն դժբաղտները, որք արդէն ապրուած էին հերուան կոտորածէն:

Ս. Կարապետի վանքն<sup>4</sup> ևս կողոպտուած է:

Վերջապէս Բաղիշոյ ամբողջ կուսակալութեան մեջ չկայ հայաբնակ փոքրիկ գիւղ մ'իսկ, որ սպառսպուո<sup>5</sup> ջնջուելու և արուելու վտանգէն ազատ լինի, և եթէ մէկ քանի օրէն արտաքին օգնութիւն մը չ'հասնի, հայ անուն կրող մէկ մը չալիտի մնայ այս ընդարձակ նահանգի մեջ:

Հաղորդելով զայստսիկ Ձեր բարձր Սրբազնութեան ի տեղեկութիւն, համբուրիւ ս. աջոյդ

Մնամ խոնարհ ծառայ

ՀԱԱ, ֆ. 56, ց. 16, թթ. 7-8 շրջ., հաստատված պատճէն, ձեռագիր:

---

<sup>1</sup> Վարդոյի գավառակ – գավառակ Բիթլիսի նահանգի Մուշի գավառում, նրա հյուսիսարևմտյան կողմում: Կենտրոնը հայաբնակ Գյումգյում գյուղն էր:

<sup>2</sup> Բուլանըիս – գավառակ Բիթլիսի նահանգի Մուշի գավառում: Տարածքով հիմնականում համապատասխանում է պատմական Հարք գավառին:

<sup>3</sup> Լիզ – գյուղ Մուշի գավառի Բուլանըիսի գավառակի Ներքին Բուլանըիսի գյուղախմբում, վերջինիս կենտրոնը: Գտնվում է Նազիկ լճակից հյուսիս-արևմուտք, Լիզ գետի ափին:

<sup>4</sup> Ս. Կարապետ – վանք Մեծ Հայքի Տուրուբերան աշխարհի Տարոն գավառում, նոր ժամանակներում՝ Բիթլիսի նահանգի Մուշի գավառում: Գտնվում է Մուշ քաղաքից մոտ 35 կմ հյուսիս-արևմուտք, Արածանիի աջ կողմում: Ըստ ավանդության՝ վանքը հիմնել է Գրիգոր Լուսավորիչը 303 թ. հայ հեթանոս աստվածների ավերված Իննակնյան մեհյանի տեղում: 6-րդ դարից վանքը Հայաստանի եկեղեցական ու կրթական նշանավոր կենտրոններից էր, որտեղ հոգևորականների թիվը երբեմն հասնում էր 400-ի: Գրչության հայտնի կենտրոն էր, ուներ իր մատենադարանը:

<sup>5</sup> Սպառ ի սպուռ – իսպառ, ամբողջովին, գլխովին:

**Մուշի քաղաքական և կրոնական ժողովների գրությունը  
Կ. Պոլսի Հայոց պատրիարք Մատթեոս Իզմիրլյանին՝  
Բիթլիսի նահանգի հայկական կոտորածների մասին**

1 նոյեմբերի 1895 թ.

Մուշ

Ամենապատիւ Ս. Ս. Մատթեոս Ա. Արքեպիսկոպոս Իզմիրլեան  
Ազգախնամ Պատրիարք Հայոց

Դ Կ. Պոլիս

Բարձրաշնորհ Հայր Սրբազան

Կը հաստատեմք մեր 417 թուահամար և հոկտ. 18 ամսաթիւ կրող տեղեկագիրն, որով Մշոյ ընդհանուր վիճակի, նորա շրջակայից և քաղաքիս տագնապալից, արհաւիրալից և անապահով կացութիւնն, վիճակիս գիւղօրէից և շրջակայից մէջ տեղի ունեցած խժոժութեանց, ասարառութեանց և այլ չարագործութեանց դէպքերը ծանուցած և մահմետականաց ծայրայեղ զրգուրեան, զայրոյթի, սպառնալեաց և տարօրինակ ընթացից մասին ընդարձակօրէն գրած էինք, այդ տեղեկագիրն երկու օրինակ ըրած էինք, մինն՝ ուղղեալ առ Բարձր Սրբազնութիւնդ, որ ստորագրուած է՝ ի մենջ, և միւսն ուղղեալ առ Կարնոյ Գեր. Ս. Առաջնորդն<sup>1</sup>, ստորագրուած միայն Փոխանորդ Շօր կողմէ, սակայն այս վերջինն ևս Ձեր Բարձր Սրբազնութեան հասցէին դրկել հարկ դատուեցաւ, որպէսզի գէթ մի օրինակն ժամանէ Ձեր ձեռքը, կը յուսամք, թէ անոնցմէ մինը ստացած էք, յորմէ պիտի տեղեկանաք ներկայ իրաց կացութիւնը, այդ տեղեկագիրը նախկին շարքու սուրհանդակին հասած չ'լինելուն նախորդ սուրհանդակաւ դրկուեցաւ, յաւելելով անոր մէջ վերջէն պատահած դէպքերն ալ:

Քաղաքիս և համայն վիճակիս ամենատխուր և վտանգալից կացութեան մասին հոկտ. 25 ամսաթուով հեռագիր մը ևս ուղղած եմք Ձեր Բարձր Սրբազնութեան, զոր բարեփոխութեամբք հանդերձ հազիւ թէ՝ տեղույս Վսեմ. Կառավարիչն հաւանեցաւ արտօնել հեռագրելու, սակայն տարակոյս ունենք տակաւին, որ հեռագրուած ըլլայ, ինչպէս վստահ չենք, որ այս գիրն ևս հասնի Ձեր Բարձր Սրբազնութեան ձեռքը, յիշեալ հեռագրի պատճէնն արդէն դրկուած է Ձեզ:

Հոկտ. 26 ամսաթուով յետագայ հեռագիրն ևս ուղղած ենք Ձեր Բարձր Սրբազնութեան.

«Տերի սէատէթտէ էրմէնի փաթրիկլիկինէ.

<sup>1</sup> Խոսքը Ղևոնդ եպիսկոպոսի մասին է:

Տիւնքի կէճա ճիւղանի աշայիրի աղավաթինտէն Սօֆի գըրգ նէֆէր ավանլար իլէ Չանկլի մանասթըրըն Սուֆլա չիֆթլիկինտէն պէշ իւզ էլլի իիւշ րաս գօյունլարընի դասպ իթտիքլէրինտէն սօնրա մանասթըրըն սէօյմէլէրընի թէհտիտէն վա՛ատ իթտիքլէրինտէ մանասթըր էլէվմ էմնիյէթսիզ հալտա պուլըտըղի մանասթըր րահպանընտան ալընան մաալիւմաթ իւզէրինէ արզ օլունըր ֆէրման»:

Այս հեռագրով՝ ինչպէս կերևի, ծանուցած ենք Ս. Կարապետի վանուց ներքին ագարակի վրայ Ճիւղանցի աշիրէթներն Շավէշի Տերվիշի եղբոր որդի Սօֆիի և նորա հրոսախումբի կողմէ եղած յարձակումը, անդ գտնուած 553 գլուխ ոչխարաց և այլ գոյից թալանումը, մինչև իսկ վանքի վրայ յարձակելու, միաբանութիւն սուրէ անցունելու և վանքը աւարելու համար քրդաց սպառնալիքներն և վանքի արդի յոյժ անապահով կացութիւնն, որ տակաւին կը շարունակուի ու միաբանութիւնն ահուդողի մէջ է:

Բաղէշի խժողական կոտորածին վրայ պաշտօնական մանրամասն տեղեկութիւններ ստանալու համար թէ՛ հեռագրով և թէ՛ նամակաւ դիմեր ենք տեղւոյն Արժանապատիւ Առաջն. Տեղապահ Հօր, որ սակայն տակաւին պատասխան մը տուած չէ, մեր ստացած տեղեկութիւններն անհատական են, որոյ նայելով՝ թուրքեր սովորականէն աւելի մեծ բազմութեամբ գնացեր են դէպքի Ուրբաթ աւուր միջօրէի աղօթքին և նախապէս որոշուած նշանը տրուելուն պէս զէն ՚ի ձեռին մզկիթներէն ելնելով յարձակեր են հրապարակի վրայ գտնուող հայոց բազմութեան վրայ և սկսեր են անխնայ կոտորել, այդ սոսկալի կոտորածը տևած է մինչև երեկոյեան ժամ 12-ին. ամբողջ կրպակներն իսպառ աւարի առնուած և սպանելոց դիակներն կողոպտուած ու մերկացած են, այժմ կըսուի, որ զոհ գնացած հայոց թիւն 1200 է աւելի է, Ս. Սարգիս եկեղեցւոյ վարժարանի աշակերտք մեծաւ մասամբ սրախողխող եղած են, դիակները Ուրբաթէն մինչև Կիւրակէ օրը հրապարակի վրայ և փողոցներու մէջ թողուեր են անթաղ: Կ՛ըսուի նաև, որ ջարդէն ազատուած, բայց սարսափահար ու լեղապատառ եղած հայերէն օրական 5-8 և 10 անձինք՝ այր, կին և մանուկ կը մեռնին, բացի յի կանանց վիժած երեխաներէն: Յայտնապէս տեսնուած է այդ կանխորոշ կոտորածին մէջ տեղւոյն կառավարութեան դատապարտելի թելադրութիւնն և հրամանն, թէն նա կը ջանայ այժմ բոլոր պատասխանատուութիւնն ու յանցանքը իւեղճ բաղէշցի ազգայնոց վերագրել և զանոնք յանցաւոր ցոյց տալ, իբր նախայարձակ և իւր այդ դիտաւորութիւնն ի գլուխ կարենալ հանելու և ինքզինք արդարացնելու համար 200-է աւելի հայեր ձերբակալած ու բանտ լեցուցած է և սպառնալէաց ու բռնութեան ներքն անոնցմէ ստորագրութիւն կը պահանջէ. և թէ գտնուեր են առահի ստորագրութիւն տուողներ, որոնք ազատ արձակուեր են: Արդ չգիտենք բանտի մէջ գտնուող ազգայինք ինքզինքնի՞ն ողբան մահմետականաց վայրագ կոտորածին զոհ գնացած իրենց սիրելիներն, թէ՞ տուներու մէջ փակուած և անպաշտպան մնացած սգաւոր և անմխիթար ընտանիքներն հոգան:



Զմոռնանք ըսել, որ ՚ի Բաղէշ սպաննուեր են Խոյթ<sup>1</sup> գաւառակէն երկու քահանայք ևս, որք իրենց ընկերակից քահանայից և աշխարհականաց հետ անդ կը գտնուէին միջոցէ մը ՚ի վեր կուսակալութեան հրամանաւ և բողոք բարձած էին իրենց երկրի հարստահարութեանց դէմ:

Բաղէշի և Խուլթիկ<sup>2</sup> գիւղի հետ աւարի առնուեր և իսպառ կողոպտուեր են շրջակայ հետնեալ 21 կտոր հայ գիւղերն ևս, որոնց մէջ սպանութիւնք ևս գործուեր՝ Փրխուս<sup>3</sup>, Կոշտեան<sup>4</sup>, Մեծք<sup>5</sup>, Տափավանք<sup>6</sup>, Ջրհոր<sup>7</sup>, Աղաղ<sup>8</sup>, Շամիրամ<sup>9</sup>, Թուխ<sup>10</sup>, Ուրտափ<sup>11</sup>, Խնձորկի<sup>12</sup>, Բաշուան<sup>13</sup>, Նէլ<sup>14</sup>, Կարփ<sup>15</sup>, Հանդ<sup>16</sup>,

---

<sup>1</sup> Խոյթ կամ Խութ – օսմանյան տիրապետության սկզբից այն մտնում էր Բիթլիսի նահանգի մէջ և կազմում էր Խութ-Բոնաշեն գավառակը:

<sup>2</sup> Խուլթիկ – գյուղ Բիթլիսի գավառի Բիթլիսի գավառակի Բայիրկի գյուղախմբում, Բիթլիս քաղաքից մոտ 16 կմ հարավ-արևելք: Գավառակի ամենամարդաշատ ու նշանավոր գյուղն էր:

<sup>3</sup> Փրխուս – գյուղ Բիթլիսի գավառում, Խլաթի գավառակում, Խլաթ քաղաքից 12 կմ հյուսիս-արևմուտք, Նազիկ լճակի հարավային կողմում:

<sup>4</sup> Կոշտյան, Կոշտյան – գյուղ Բիթլիսի գավառում, Խլաթի գավառակում, Վանա լճի արևմտյան ափին:

<sup>5</sup> Մեծք, Մեծիկ – գյուղ Բիթլիսի գավառի Խլաթի գավառակում: Գտնվում էր Նազիկ լճից 4-5 կմ հարավ:

<sup>6</sup> Տափավանք – գյուղ Բիթլիսի գավառի Խլաթի գավառակում, Խլաթ քաղաքից 20 կմ արևմուտք, Նազիկ լճից հարավ:

<sup>7</sup> Ջրհոր – գյուղ Բիթլիսի գավառի Խլաթի գավառակում, Բիթլիս քաղաքից մոտ 20 կմ հյուսիս-արևելք:

<sup>8</sup> Աղաղ – գյուղ Բիթլիսի գավառի Խլաթի գավառակում, Խլաթ քաղաքի և Դատվան գյուղաքաղաքի միջև, Վանա լճի արևմտյան ափին:

<sup>9</sup> Շամիրամ – գյուղ Բիթլիսի գավառի Խլաթի գավառակում, Նեմրութ լեռան հարավային լանջերին:

<sup>10</sup> Թուխ – գյուղ Բիթլիսի գավառի Բիթլիսի գավառակի Դատվան գյուղաքաղաքում, Վանա լճի հարավարևմտյան ափին, Թուխ գետի գետաբերանի մոտ, մի փոքր հյուսիս-արևմուտք: Միջին դարերում եղել է գրչության կենտրոն:

<sup>11</sup> Ուրտափ – գյուղ Բիթլիսի գավառի Բիթլիսի գավառակի Դատվանի գյուղախմբում, Բիթլիս քաղաքից 20-26 կմ հյուսիս-արևելք, Դատվանից հարավ-արևմուտք, Վանա լճի հարավարևմտյան առափնյա շրջանում:

<sup>12</sup> Խնձորգին – գյուղ Վանի նահանգի (վիլայեթ) համանուն գավառի Կարճկանի գավառակի, Վանա լճի հարավարևմտյան ափամերձ շրջանում, Բիթլիսի նահանգի սահմանի մոտ:

<sup>13</sup> Բաշվան(ց), կոչվել է նաև Խնձորիկ – գյուղ Վանի նահանգի (վիլայեթ) համանուն գավառի Կարճկանի գավառակի, Վանա լճի հարավարևմտյան ափամերձ շրջանում, Բիթլիսի նահանգի սահմանի մոտ:

<sup>14</sup> Նէլ – գյուղ Բիթլիսի գավառում, Բիթլիս քաղաքից մոտ 15 կմ հյուսիս-արևելք:

<sup>15</sup> Կարբ, Կարփ – գյուղ Բիթլիսի գավառի Բիթլիսի գավառակի Ագնվաձորի (Գյոզալդարա) գյուղախմբում:

<sup>16</sup> Հանդ – գյուղ Բիթլիսի գավառի Բիթլիս գավառակում, Ագնվաձորի (Գյոզալդարա) գյուղախմբում, համանուն գետի ափին: Ջուտ հայաբնակ էր, բնակիչները զբաղվում էին երկրագործությամբ ու անասնապահությամբ:

Ներքին Հանդ, Տաշտոփ<sup>1</sup>, Խախըռեվ<sup>2</sup>, Ծուար<sup>3</sup>, Փափշեն, Մըզրեն<sup>4</sup> և Փարխանդ:

Դառնանք քաղաքիս, ընդհանուր վիճակիս և նորա շրջակից արդի տագնապալից կացութեան, որ ցարդ չը մեղմանալէ գատ՝ օր ըստ օրէ, ժամէ ի ժամ և վայրկեան առ վայրկեան կը վատթարանայ, կը ծանրանայ և աւելի վտանգաւոր կը դառնայ և հայ ժողովրդեան վրայ տիրող ահ ու սարսափն ու մտահոգութիւնն գամ քան զգամ<sup>5</sup> կը շատնայ, մանաւանդ այլև և այլ կողմերէ հասած ահաբեկիչ և սրտաճմլիկ լուրերովն Կ. Պոլսի, Տրապիզոնի, Երզնկայի, Ռօտոսթոյի, Նիկոմեդիոյ և Բաղէշի հայոց աղէտալի կոտորածներէն յետոյ՝ սարսափով և ցաւօք սրտի կը լսուի, որ Կարնոյ, Տիգրանակերտի, Բաբերդի, Աղերդի և ուրիշ քաղաքաց ու նոցա գիւղերու հայերն ևս կոտորուեր ու թալանուեր են, ուրեմն կարելի ու հաւանական է, որ Մշոյ մոլեռանդ և կատաղի թուրքերն՝ որք տակաւին զինաթափ չեն ըլլուած, հակառակ Վսեմ. Կառավարչի տուած խոստման, չեն հանդարտած և կը շարունակեն իրենց սպառնական ընթացքը հայոց դէմ, ստոր և յետ մնած այն գազանաբարոյութեան և կարծեցեալ դիւցազնութեան մէջը, զորս գործեցին այլ տեղերու իրենց եղբարք, եթէ երկու շաբաթ է՝ ի վեր քաղաքիս մէջ ջարդ մը տեղի ունեցած չէ, չ'կարծուի, թէ ալ անցած է, բնաւ երբէք, այս երկու շաբթուան կեանքն պարտինք հայոց արթնութեան և զգուշաւոր ընթացքին, որոնք կանխաւ զգալով վերահաս վտանգը փութացին թողուլ գործերնին և իրենց տուներն ապաստանել, թէև կառավարութեան և թուրք երևելեաց տուած կեղծ խոստումներուն վստահութիւն չը ըլուեր, սակայն աղքատ ժողովուրդը ՚ի սեր իրենց նօթի և կարօտ ընտանեաց և գաւակաց ոգեպահիկին շաբթուայ մը մէջ երկու օր կը բանան խանութնին ցանցառ կերպով, բայց օրուան մէկ երրորդ պահէն վերջ վերստին տուներնին դառնալ կը պարտաւորուին, զի ինչպէս զարնանէ ի վեր յաճախ գրած և յայտնած ենք, այս երկրի մահմետականութիւնն՝ մասնաւորապէս Մասունի դէպքէն և անոր հետևանքներէն ՚ի վեր, Մշոյ հայոց դէմ ևս առաւել ատելութեամբ, զայրութիւ և վրէժխնդրութեամբ լեցուած է, զանոնք հեղինակ և սկզբնապատճառ համարելով հայկական ինդրոյն վերածագման, այժմ ևս լսելով այլ և այլ քաղաքներու և տեղերու մահմետականաց շահատակութիւններն և տեսնելով կառավարութեան թոյլատու և գրգռիչ ընթացքը վերջին աստիճան քաջալերուած և խրախուսուած են անոնց օրինակին հետևել և ՚ի գործ դնելու իրենց վատ խորհուրդն ու որո-

<sup>1</sup> Տաշտոփ կամ Դաշտոփ – գյուղ Բիթլիսի գավառի Ազնվաձորի (Գոգալդարա) գյուղախմբում:

<sup>2</sup> Խախըռ – գյուղ Բիթլիսի գավառի Դատվան գյուղախմբում, Բիթլիս քաղաքից մոտ 12 կմ հյուսիս-արևելք:

<sup>3</sup> Ծվար կամ Զվար – գյուղ Բիթլիսի գավառի Դատվան գյուղախմբում, Բիթլիս քաղաքից մոտ 9 կմ հյուսիս-արևելք:

<sup>4</sup> Մզրե, Մզրեն – գյուղ Բիթլիսի գավառի Դատվանի գյուղախմբում:

<sup>5</sup> Գամ քան զգամ – քայլ առ քայլ:

շումն և եթէ այսօր ու վաղը Տէր այցելութիւն մը չընէ և փրկութեան դուռ մը չբանայ մեզի, անտարակոյս այսօր ըլլայ, վաղ ըլլայ կամ շաբաթ մը վերջ ամենէն ծանր ու քստմենլի կոտորածն աստ տեղի պիտի ունենայ և տեղոյս անգէն ու անպաշտպան հայերն իսպառ բնաջինջ պիտի ըլլուին, հետևաբար մշեցի ողորմելի հայ ժողովուրդն վայրկեանէ վայրկեան կոտորածի և մահուան կ'սպասէ սրտատրոփ, ասոր համար իւր աշխատութիւնն ու գործը թողած ներս փակուած մնացած է, մինչ այսօր պետք էր ջանալ ապահովելու իւր ընտանեաց ու զուակաց գէթ ձմեռուան պարէնը և հոգալ ուրիշ անհրաժեշտ պետքերն: Եթէ այսպէս տևէ այս դժնդակ կացութիւնն, ինչպէ՛ս պիտի լինի աղքատ ժողովրդեան վիճակը յառաջիկային, փախչելու և ազատուելու ճար ու ճամբայ չունինք, և ինքնապաշտպանութեան միջոցներէ ալ բոլորովին զուրկ ենք:

Մեր յարաբերութիւնք և երթևեկութիւնք ընդհանրապէս դադրած են ուրիշ վիճակներու և նոյնիսկ մեր դաշտի գիւղօրէից միջև: Ըստ առաջնոյն հաղորդակցութիւնք չեն կատարուիր շրջակայ քաղաքներու հետ, զի ճանապարհք անապահով և վտանգալից են, ի մի բան պաշարման վիճակի մէջ ենք: Կ. Պոլսէն, Կարինէն և այլևայլ տեղերէ հայրենիք վերադառնալ ուզող հայ պանդուխտներն ու վաճառականք կողոպտուած, սպաննուած ու անյատացած են: Հազուադէպ է այժմ, որ տասէն քսանէն մէկ երկունք լոկ կեանքերնին ազատած ըլլան, սակայն այդպիսիք ալ այժմ մեռեալի նման են երկիւղահար եղած ըլլալով: Ինչպէս նախորդ ամսոյ 25 թիւ մի գրութեամբն ծանուցուած է արդէն, Կարնոյ մօտերը Արապ Չայիր ըստուած տեղը աւազակներէ առևանգուած մշեցի 8 ազգայինք տակաւին չգտնուեցան, և հակառակ մեր և նոցա ազգականաց ջանքերուն հետքերնին չգտնուեցաւ, տարակոյս չկայ այլևս, որ սպաննուած ու անհետացուած են: Կարնոյ Գեր. Ս. Առաջնորդն ևս այս անգամ գրութեամբ մը պատասխանելով յայտնած է, որ պարագայից բերմամբ անկարելի է իրեն հետազօտութիւններ կատարել և տեղեկութիւններ տալ այդ տարաբաղտներու մասին:

Շաբթօուս մէջ Պուլանըք, Մանազկերտ, Վարդոյ, Խոյթի և Բոնաշէն<sup>1</sup> գաւառներէն լուրեր առած չենք, պաշարման ներքն ճանապարհ գոցուած ըլլալուն համար: Երկբայելու տեղի չ'կայ, որ յիշեալ գաւառակաց հայ ժողովուրդներն ևս անտանելի նեղութեան մէջ չ'լինեն, ինչպէս է Մշոյ դաշտի հայերն ևս: Կառավարութեան կողմէ թէև մի քանի խումբ շրջուն պահապան զինուորներ դրկուած են դաշտի այլ և այլ կողմերը քրդաց արշաւանքը զսպելու և յափշտակուածներն անոնցմէ ետ առնելով տերերուն վերադարձնելու պաշտօնով, սակայն և այնպէս անկարելի եղած է յառաջին առնուլ գեշութեանց և նորանոր դէպքերու, և զարմանալի չէ այդ, քանի որ պահապան զօրաց գրգսէրտարիներն են աւազակ քիւրտեր և թուրքերը, ինչպէս են ճիպ-

---

<sup>1</sup> Բոնաշէն – գավառակ Բիթլիսի նահանգում: Հաճախ այդպէս է անվանվում Սասունի Խոյթ-Բոնաշէն գավառակը:

րանցի աշիրեթէն հանրաձանօթ աւագակապետ Իսայի որդիներէն և Համիտիյէի հեծելագնդի սպայներէն Մելիմ պէկ և Մշոյ Գապիլէ սահիպիներէն բերդեցի Սալէի և Մուրատ գատէ Իսլամ աղայք և իրենց չարագործութեամբք ու աւագակութեամբք ծանօթ այլ թուրքեր և քիւրտեր:

Այս եօթնեկին Մշոյ դաշտին մէջ գործուած և մեզի հաղորդուած սպանութեան, յափշտակութեան և այլ դէպքերն են հետևեալքը.

1. Հոկտեմբեր 26-ի գիշերը քսանի չափ քիւրտեր և չերքեզներ Ալիճան Բողացի Մուխսու Մարտիկի տան վրայ յարձակելով զմարդիկ սպաննած և նորա ամբողջ անասուններն յափշտակած են:
2. Հոկտեմբեր 26-ին, Ճիպրանցի աշիրեթէն Օիւպլի տղայք և Տալիան Սեղեցի Կագօ և հաճիանցիք ընդ ամէն 12 ձիաւոր և 22 հետևակ քիւրտեր Զիարեթ<sup>1</sup> գիւղի վրայ յարձակած և յափշտակած տարած են 1035 գլուխ ոչխար և 221 տաւար:
3. Հոկտեմբեր 27-ին հարիւրի չափ Ճիպրանցի աւագակներ երկրորդ անգամ ըլլալով կը յարձակին Ղեյպիան<sup>2</sup> գիւղի վրայ, քանի անձինք վիրաւորելէ ետքը տուներու գոյքերը և հայոց ամբողջ անասուններ թալանած տարած են: Գիւղի ժողովուրդը ցիր ու ցան եղած է, չորս կանայք տարուած լլկուած են:
4. Հոկտեմբեր 29-ի գիշերը պատրքանդի աշիրեթէն խիքանցի 40-50-ի չափ քիւրտեր Շէխալան<sup>3</sup> գիւղի վրայ յարձակեցան, սակայն դրացի Քիւրտ Մէյտան<sup>4</sup> գիւղի հայեր շէխալանցոց օգնութեան հասնելով յետս մղած են զքիւրտերը, որք քիչ մը վերջ Քիւրտ Մէյտան գիւղի վրայ քալելով գիւղի պահապան քիւրտն կը վիրաւորեն ու կը հեռանան, սպառնալով վերստին յարձակել և աւարել յիշեալ գիւղերն:

Երկու օր յառաջ Սասունէն լուր տրուեցաւ, որ Կենճի Խուլի<sup>5</sup> և Խիյան<sup>6</sup> գաւառակաց ամբողջ հայ գիւղերն թալանուէր և աւարի առնուէր են Հայոց ինչքեր ու ստացուածք այն կողմի աշիրեթներէն և թէ կոտորածի մը ևս երկիւղ և հաւանականութիւն կայ: Խիյանի և Խուլի գաւառակի կողոպտուած

---

<sup>1</sup> Զիարեթ – գյուղ Մուշի գավառի Մուշի գավառակում, Մուշ քաղաքից մոտ 25 կմ հյուսիս-արևմուտք: Գյուղը կողոպտվել և ավերվել է 1895 թ., 1915 թ. նրա բնակիչների մեծ մասը դարձել է հայկական ջարդերի զոհը:

<sup>2</sup> Խեյբյան, Ղեյպյան – գյուղ Մուշի գավառի Մուշի գավառակում, Մուշ քաղաքից մոտ 22 կմ հյուսիս-արևմուտք, Մուշ-Զիարեթ ճանապարհին:

<sup>3</sup> Շէխալան – գյուղ Մուշի գավառի Մուշի գավառակում, Մուշ քաղաքից 16-17 կմ հյուսիս-արևմուտք, Մուշ-Զիարեթ ճանապարհին, Արածանի գետի ձախ ափին: Հայաբնակ նշանավոր գյուղ էր:

<sup>4</sup> Քուրդ Մէյրան, Քուրդմէյրան – գյուղ Մուշի գավառի Մուշի գավառակում, Մուշ քաղաքից մոտ 20 կմ հյուսիս-արևելք, Արածանի գետի ձախ կողմում:

<sup>5</sup> Խուսքը Բիթլիսի նահանգի Գենջի գավառի Խուլի գավառակի մասին է:

<sup>6</sup> Խիանք – գյուղախումբ Գենջի գավառում, Խուլիի գավառակում: Փոված էր Անտոք լեռան հարավարևմտյան կողմում:

գիւղերն են Բանակ<sup>1</sup>, Կէօրնէ Ձոր<sup>2</sup>, Գեղերվան<sup>3</sup>, Ընձքար<sup>4</sup>, Ձմաթաղ Վանից կողմ, Մըսըր Ձոր<sup>5</sup>, Էրուպ<sup>6</sup>, Ահարօնք<sup>7</sup>, Շուղէկ<sup>8</sup>, Կասգէ<sup>9</sup>, Հաւրըք<sup>10</sup>, Թըլլթըֆ<sup>11</sup>, Կրէմորի<sup>12</sup>, Կրէխօխի<sup>13</sup>, Պահմըտայ<sup>14</sup>, Հարանդ, Փառկայ<sup>15</sup>, Սաղտուն<sup>16</sup>, Հէ-դին<sup>17</sup>, Ընկուզնակ, Արտկունք, Սևիթ, Իշխնձոր, Բացի<sup>18</sup> և Պէրմ<sup>19</sup>:

Լուր տրուած է նաև, որ քիւրտ աշիրէթներն պատրաստուած և սպանացած են վերստին արշաւել ՚ի Սասուն քանդել և այրել նորաշէն տուններն և երկրորդ ջարդ մը ևս տալով սպառ սպուռ ջնջել սասունցիներին, արդէն Սասնոյ Հէթենք<sup>20</sup> և Կէլիէմսուր<sup>21</sup> գիւղերը քանի օր յառաջ թալանուէր են աստի և անտի ՚ի նորոյ հայթայթուած գոյքերէն: Սասունի քիւրտ աղանէրը բազմութեամբ քրդաց, շաբաթէ մ'ի վեր Շատախի հայ գիւղերու մէջ լեցուած մահու և աւառարութեան սպառնալէօք խաֆիքութեան տուրք<sup>22</sup> կը պահանջեն երկպատիկ և եռապատիկ: Տարաբաղդ սասունցիք և շատախցիք ահաբէկած ու սարսափած պատրաստուած էին գալ լեցուել ՚ի Մուշ, սակայն

<sup>1</sup> Խոսքը Գենջի գավառի Խուլփի գավառակի Խուլփի գյուղախմբի Բանոկ գյուղի մասին է:

<sup>2</sup> Խոսքը Գենջի գավառի Խուլփի գավառակի Խուլփի գյուղախմբի Կոկնաձոր (Կայնաձոր) գյուղի մասին է:

<sup>3</sup> Գեղերվան, Գեղերվանք – գյուղ Գենջի գավառի Խուլփի գավառակի Խուլփի գյուղախմբում:

<sup>4</sup> Ընձքար – գյուղ Գենջի գավառի Խուլփի գավառակի Խուլփի գյուղախմբում:

<sup>5</sup> Մըսըրձոր կամ Գէլիէմսուր – գյուղ Մուշի գավառի Մուշի գավառակի Վերին գավառ գյուղախմբում: Վարչականորեն Բիթլիսի Գենջի գավառի Խուլփի գավառակի կազմում:

<sup>6</sup> Էհուր, Էյուր, Իհուպ – գյուղ Գենջի գավառի Խուլփի գավառակի Խուլփի գյուղախմբում:

<sup>7</sup> Ահարոնք կամ Ահրոնք – գյուղ Գենջի գավառի Խուլփի գավառակի Խուլփի գյուղախմբում:

<sup>8</sup> Շուղէկ, Շուղըք – գյուղ Գենջի գավառի Խուլփի գավառակում:

<sup>9</sup> Կասգէ, Գագկէ – գյուղ Գենջի գավառի Խուլփի գավառակի Հավէղան գյուղախմբում:

<sup>10</sup> Հավըրք, Հավրըք – գյուղ Գենջի գավառի Խուլփի գավառակի Խուլփի գյուղախմբում:

<sup>11</sup> Թըլլթըֆ, Թըլլթավ – գյուղ Գենջի գավառի Խուլփի գավառակի Խուլփի գյուղախմբում:

<sup>12</sup> Կրէմորի, Գրէմորի – գյուղ Գենջի գավառի Խուլփի գավառակի Խուլփի գյուղախմբում:

<sup>13</sup> Կրէխօխ, Գրէխօխ – գյուղ Գենջի գավառի Խուլփի գավառակի Խիանքի գյուղախմբում:

<sup>14</sup> Խոսքը Գենջի գավառի Խուլփի գավառակի Խիանքի գյուղախմբի Բահմէղա (Բահմը-դանք) գյուղի մասին է:

<sup>15</sup> Փարկա – գյուղ Գենջի գավառի Խուլփի գավառակում, Խիանքի գյուղախմբում:

<sup>16</sup> Սաղտուն – գյուղ Գենջի գավառի Խուլփի գավառակի Խիանքի գյուղախմբում: 19-րդ դարի վերջերին ուներ 100 տուն հայ բնակիչ:

<sup>17</sup> Հէդին, Եդի – գյուղ Գենջի գավառի Խուլփի գավառակի Խիանքի գյուղախմբում:

<sup>18</sup> Բացի – գյուղ Գենջի գավառի Խուլփի գավառակում, Խիանքի գյուղախմբում:

<sup>19</sup> Պէրմ – գյուղ Գենջի գավառի Խուլփի գավառակում, Խիանքի գյուղախմբում, դրա արևելյան կողմում, սարահարթի վրա:

<sup>20</sup> Հէթինք, Հէթին – գյուղ Մուշի գավառի Սասունի գավառակում, գավառի գյուղախմբում: Չուտ հայաբնակ էր, զբաղվում էին երկրագործությամբ և անասնապահությամբ:

<sup>21</sup> Գէլիէմսուր – գյուղ Մուշի գավառի Մուշի գավառակի Վերին գավառ գյուղախմբում:

<sup>22</sup> Խաֆիքությունը թուրքիայում մի տուրք է, որ հայերը վճարում էին որևէ քուրդ բեկի իբրև վարձ այն հովանավորության և պաշտպանության համար, որ բեկը ցույց էր տալիս նրանց:

նկատելով, որ նոցա այդ շարժումը աստիճան մը ևս աւելի պիտի ծանրացնէ Մշոյ հայոց վիճակն, զի առիթ պիտի լինի թուրքերուն ՚ի գործ դնելու իրենց վատ խորհուրդը, շտապեցինք ազդարարել անոնց որ չշարժեն իրենց տեղերէն և զգուշանան Մուշ գալու, քանի որ կառավարութեան կողմէ ևս ինչպէս Վսեմ. Կառավարիչ փաշան յայտարարած է, այսօր վաղը Պէօլիք<sup>1</sup> մը զօրք կը դրկուի ՚ի Սասուն ի պահպանութիւն Հայոց:

Ասկից հինգ օր յառաջ գիշերայն յարձակեր են վիճակիս Մատնավանից<sup>2</sup> վրայ և աշխատեր են ներս մտնել ու աւարել: Տեսուչ Տ. Վարդան քահանայն վանքի զանգակները հնչեցնել տալով շրջակայ հայ գիւղերէն օգնութիւն կը խնդրէ, այդ միջոցին Գրգսերտարի Սէլիմ պէկն, որ վանքին մերձակայ Ձխաւու<sup>3</sup> գիւղը կը գտնուի եղեր, ժողովրդեան թախանձանաց վրայ վանքի օգնութեան կուգայ, յարձակողք խոյս կուտան, կը հեռանան: Տ. Վարդան անապահով և ՚ի վտանգի տեսնելով ինքզինքը ծառայի մը հետ նոյն հետայն կը հեռանայ վանքէն իւր տունը վերադառնալու, որ Աւրան գիւղի մէջն է, և որ նոյնպէս մօտ է Մատնավանուց: Ճանապարհին քահանայն ու ծառայն մէկգմէկ կը կորսնցնեն, ծառայն գիւղ հասնելուն կիմանայ, որ տակաւին տ. Վարդան չէ եկեր, կը վերադառնայ վանքը հարցնելու, անդ ևս չգտներ, հոս ու հոն ի խնդիր քահանայի կելլէ, սակայն պարապ: Վերջապէս քահանայն այժմ անյայտ է, ո՞ր և ինչպէ՞ս ըլլալ տակաւին չգիտցուեցաւ, իսկ Մատնավանք բոլորովին անապահովութեան մէջ է: Զգիտեմք ինչպէ՞ս ընինք, միջոց չունինք, որ զէջ նորա Սրբազան մասունքներն յափշտակող և պիղծ ձեռքերէ ազատինք:

Վերջապէս մահուան ծանր տագնապի ու ճգնաժամու մէջ է, Հայր Սրբազան, Մշոյ աշխարհի հայ ժողովուրդն, ինչ ընենք ուրեմն, ի՞նչ ընէ ինչքէ ու ստացուածքէ զրկուած ու մերկացած և այժմ կեանքը մահու սպառնալեաց և վտանգի ներքն եղող եղկելի ժողովուրդն, փրկութեան համար որո՞ւ դիմէ, ո՞ր սպաստանի: 15-20 տարիներէ ի վեր հայ ժողովրդեան կրած անտանելի տառապանաց, չարչարանաց և արգահատելի վիճակին վրայ շարունակ գրուեցաւ, խօսուեցաւ, Եւրոպայի ուշադրութիւնն ու գթութիւնն խնդրուեցաւ և հազիւ ուրեմն Եւրոպական երեք մեծ տէրութիւնք բարեհաճեցան իրենց ուշադրութիւնն դարձնել հայոց ամենաթշուառ վիճակին վրայ և հայկական նահանգաց բարենորոգմանց ծրագիր մը առաջարկել Սուլթանի կառավարութեան, և թէպէտ և ընդունել տրուեցաւ, բայց ի՞նչ օգուտ, մինչև որ ծրագիրը գործադրութեան տրուի և բարենորոգումնք ներմուծուին որոշեալ նահանգաց մէջ հայ մը չմնար: Թիւրքիոյ կառավարութիւնն ու իսլամութիւնն

<sup>1</sup> Պէօլիք, Բէօլիզ (թուրք.) – զինվորական գումարտակ, վաշտ:

<sup>2</sup> Մատնավանք – վանք Խլաթի գավառակում, Խլաթ գյուղաքաղաքից 5-6 կմ հարավարևմուտք, համանուն գյուղի մոտ: Եղել է գրչության կենտրոն:

<sup>3</sup> Ձխավու, Ցխավու- Մշո գավառի հայաբնակ գյուղերից, Մուրադ (Արլ. Եփրատ) գետի ձախ ափին, Մուշ քաղաքից հյուսիս:

իսպառ բնաջինջ պիտի ընեն հայերը և այն ատեն ո՞ւմ համար պիտի գործադրուի ծրագիրը և ի՞նչ բանի պիտի ծառայէ բարեկարգութիւնն, հայկական խնդիրն հայոց կոտորածո՞վ պիտի լուծուի արդեօք: Ուրեմն, Հայր Սրբազան, վերստին Ձեզ կը դիմենք, ոյր հայկական սիրտն լի է առ իւր բազմաչարչար և նահատակ հօտն ունեցած անսահման գորով ու խանդաղատանք, և որ անշուշտ եմք թէ, անհուն վշտով ու տխրութեամբ համակուած է հանդէպ ժողովրդեան այժմու աղէխարշ վիճակին և տեսնելով ու լսելով նորա ջարդուկոտոր լինելն, հաճեցէք միւս անգամ այս օրհասական ժողովրդեան մտահոգութեան արժանի և տազնապալից կացութիւնն ներկայացնել Եւրոպական երեք տէրութեանց խորին ուշադրութեան և անմիջական դարման խնդրել: Եթէ ընդ փոյթ պիտի լինին բարենորոգմունք և հայոց գոյութեան սպառնացող վտանգներն պիտի բարձուին ՚ի մօտոյ, շնորհ ըրէք փութով հաղորդել մեզ, յոյս տալ յուսահատ ժողովրդեան, միխիթարութիւն տալ անմիխիթար տառապելոց, ալ այնուհետև ժողովուրդը հոգ չպիտի ընէ թէ իզուր սրոյ և մահուան ճարակ պիտի լինի, գոհ սրտով կը մեռնի:

Կըսուի, թէ Շաքիր Բաշան<sup>1</sup> մօտիկցած է Սշոյ և այսօր վաղը տեղս պիտի ժամանէ: Անշուշտ Կարնոյ գործողութիւնքն աստ ևս պիտի կրկնէ, ի՞նչ ընելու ենք այդ պարագային, հաճեցէք փութացնել Ձեր Բարձր Սրբազնութեան հրահանգներն:

Մատչելով ՚ի համբոյր Սրբոյ Աջոյդ մնամք իս. ծառայք

Փոխանորդ ընդհ. վան. Առաջնորդի Սշոյ  
(ստորագրութիւն) Վարդան վարդապետ Յակոբեան  
Դիւան քաղաքական ժողովոյ Ատենապետ՝ Յովհաննէս Մերունի  
Ատենադպիր՝ Նազարէթ Քէշիշեան  
Կնիք քաղաքային ժողովոյ  
Դիւան կրօնական ժողովոյ Վ. Ատենապետի Յովհ. քահանայ Ս.  
Աստուածատուրեան  
Ատենադպիր՝ Գալուստ քահանայ. Ս. Չաքարեան  
Կնիք կրօնական ժողովոյ

Բնագիր յար և նման է. 24 նոյեմբերի 1895

ՀԱԱ, ֆ. 56, ց. 17, գ. 70, թթ. 5-8 շրջ., հաստատված պատճեն, ձեռագիր:

---

<sup>1</sup> Էրզրումի զինվորական գավառապետը:

**Մուշի Հայոց առաջնորդական փոխանորդ Վարդան վարդապետ Հակոբյանի  
գեկուցագիրը Կ. Պոլսի Հայոց պատրիարք Մատթեոս արքեպիսկոպոս  
Իզմիրյանին՝ Բիթլիսի և Դիարբեքիի նահանգների հայկական  
կոտորածների և օգնություն հայցելու մասին**

8 նոյեմբերի 1895 թ.

Մուշ

Ամենապատիւ

S. S. Մատթեոս Ս. Արքեպիսկոպոս Իզմիրլեան  
Ազգախնամ պատրիարք Հայոց

Ի Կ. Պոլիս

Բարձրաշնորհ Սրբազան Հայր,

Կը հաստատեմք մեր նախորդ ամսոյ 18 և նոյեմբեր 1<sup>1</sup> ամսաթիւ և 417, 426 թուահամար գրութիւններն, որովք Ձեր բարձր Սրբազնութեան յայտա-  
գրած ենք Բաղէշի աղետալի կոտորածէն ՚ի վեր վիճակիս և իւր շրջակայից  
մէջ գործուած սպանութիւնք, ասարառութիւնք և անբնութիւնք և մասնաւորա-  
պէս քաղաքիս հայոց սպառնացող վտանգը նորա վրայ տիրող տագնապն,  
մահմետականաց գրգռեալ և սպառազինեալ վիճակն և հայ ժողովրդեան  
վտանգալից և յոյժ անապահով կացութիւնն:

Նախընթաց շարքուն մեր ամսոյս 2 թիւ գրովն և Խնուսի<sup>2</sup> գծով Ձեր  
Բարձր Սրբազնութեան յուղարկած եմք Բաղէշի Առաջն. Տեղապահէն աստ  
հասած համառօտ տեղեկագիր մը, որ եթէ անկորուստ ժամանէ Ձեր ձեռքը,  
փոքր ՚ի շատ տեղեկութիւններ պիտի ստանաք Բաղէշի վայրագ և խժդժա-  
կան կոտորածին վրայ, որ տեղի ունեցած է անցեալ ամսոյ 17-ին:

Բաղէշի դէպքին յաջորդ օրը, անխուսափելի կոտորածն քաղաքիս մէջ ևս  
տեղի պիտի ունենար, եթէ հայերը թուրքերու տարօրինակ սպառազինումն  
ու շարժումներն տեսնելով չ'նախազգային սպառնացող վտանգն ու տուներ-  
նին չապաստանէին թողլով իրենց բան ու գործը, այնուհետև թէև կառավա-  
րութեան և թուրք երևելիներու կողմէն ապահովութիւններ խօսուեցան ու  
խոստումներ եղան, որ քաղաքիս մէջ բնաւ ամենևին հայոց կոտորած ու  
ջարդ տեղի պիտի չունենայ և հանրային անդորրութիւն ու խաղաղութիւն  
չ'պիտի վրդովի, սակայն հայեր տեսնելով համայն թուրք հասարակութեան  
գրգռեալ վիճակն, աստի և անտի լսելով թուրքերու սպառնալիքներն և գի-  
տակ լինելով նոցա վայրագ և մոլեռանդ բնատրութեան, համարձակութիւն  
չ'կրցան ունենալ և վստահել տրուած խօստումներուն, զորս համարեցին

<sup>1</sup> Տե՛ս փաստաթուղթ թիվ 2:

<sup>2</sup> Խնուս – քաղաք Էրզրումի նահանգի Էրզրումի գավառի Խնուսի գավառակում,  
վերջինիս կենտրոնը:



մեքենայութիւն և որոգայթ լարուած իսլամութեան կողմէն և այնուհետև լսելով Բաղէշի, Կարնոյ, Տիգրանակերտի և այլ հայաբնակ քաղաքներու ու վիճակներու հայոց ջարդն՝ հաստատուեցան իրենց երկկողմի և կասկածներու մէջ և ահ ու սարսափով պաշարուած՝ առ ի զգուշութիւն և ՚ի պաշտպանութիւն կեանքի, խանութնին ցանցառաքար օր մը բանալով, օր մը գոց պահելով մտահոգ և ահաբէկ կ'սպասէին այս տագնապալից կացութեան աղէտալի ելից ու վախճանին:

Ժողովրդեան օրեր ու ժամեր համրուած էին այլևս, վայրկեանէ վայրկեան մահուան կ'սպասէինք, առաւօտ ելնողը յոյս չունէր թէ ողջամբ պիտի հասնի իրիկունը, և գիշերը առանց վտանգի անցունելով պիտի ողջունէ արշալոյսը այս ահ ու սարսափի մէջ, կենաց և մահու այս պայքարին մէջ յուսահատ և սարսափի մէջ հայերը պաշտպանեցին ինքզինքնին մինչև անցեալ Ուրբաթ օրը, ամսոյս 3-ը: Ուրբաթ օրեր մանաւանդ հայերը կը զգուշանային ի հրապարակ իջնելէ, ուստի և այդ օրը բացի թուրքերու և մի քանի հայոց խանութներէն, շուկան գրեթէ ամբողջովին գոց էր: Մշեցի հայոց ջարդն կանխամտածուած ու որոշուած էր արդէն, չէր կարելի խուսափել ու ճողոպրել անկից, տեղոյս թուրքերը՝ որք վատութիւն կը համարէին ուրիշ երկիրներու թուրք եղբայրներէն վատ մնալ, աննշան առիթի մը կ'սպասէին գործադրելու իրենց վատ խորհուրդը, և ահա այդ առիթը, որ ըստ ինքեան աննշան և սովորական բան մը էր չուշացաւ, ներկայացաւ անցեալ Ուրբաթ օրուայ ժամ 4-5-ի միջոցները: Յիշեալ օրը քիւրտին մէկը իւր լեցուած ու աւրուած ատրճանակն հայ զինագործի մը (զըլլճճի) կը բերէ պարպել և շինել տալու համար, զէնքը յանկարծակի կրակ կառնու, կարճակուի, և ահա մեծ ու սարսափելի իրարանցումը, թուրքեր և քիւրտերը զէն ՚ի ձեռին և պատրաստ յարձակեցան նոյն ժամուն հրապարակի մէջ գտնուող հայերու վրայ և սկսած հարուածներ տեղալ, ահաբէկ ու սարսափահար հայերը ՚ի փախուստ խուճապեցին, սակայն անագան էր, ճամբայներ բռնուած ու գոցուած էին արդէն, թուրք հասարակութիւնն սպառագինեալ շուկայի մէջ լեցուած էր, փրկութիւն չկար հայոց: Աղէտալի լուրը տարածուեցաւ քաղաքիս մէջ, ընդհանուր ահ ու սարսափն պատեց իւեղճ և ողորմելի ժողովուրդը: Կանանց ու երախայից բարձած լաց ու կոծը, վայնասունը ու աղաղակներն ահագին ու սրտակեղեկ էին, զարհուրելի և տխուր տեսարանն աննկարագրելի է: Բարեբաղդաբար հայերէն մեծ բազմութիւն մը չէր գտնուէր շուկային մէջ, վսեմ Միլիթսերիֆ և Լիվա փաշաներն ևս փութացին անմիջապէս հեծեալ և հետևակ զօրքերով ու ոստիկան զինուորներով հրապարակ ելնիլ, քրդաց ու թուրքերու բազմութիւնն ցրուելու աշխատիլ և քաղաքիս մէջ շրջելով սիրտ ու ապահովութիւն տալ սարսափահար հայ ժողովրդեան: Մշոյ Գապիլէ սահիպիներու գլխաւորք ոմանք իրենց սպառագինեալ մարդերով անմիջապէս լեցուեցան շուկային մէջ: Թերևս մի կողմէ տեսնելով կառավարական ու զինուորական միջամտութիւնն և միւս կողմէն նկատելով, որ ակնկալուածին չափ հայոց բազ-

մութիւն մը չկար հրապարակին վրայ, յարձակողական դիրքերնին փոխեցին պաշտպանողականի, եթէ ոչ հրապարակի մէջ գտնուող ամբողջ հայերն ջարդուելէ և որոյ ճարակ լինելէ զկնի՝ հոսանքը պիտի յառաջանար հայոց թաղերու մէջ ևս, յորժամ աղէտն ու տեսարանն յոյժ ահեղ ու սուկալի պիտի լինէր, զի քաղաքիս հայերն անձնապաշտպանութեան միջոցներէն զուրկ կը գտնուին բոլորովին: Ի վերայ այսր ամենայնի 6 հայեր սպաննուեցան և 34-36-ի չափ ևս ծանր ու թեթև կերպով վիրաւորուեցան բացի վախցողներէն: Թերևս գիւղացի հայ սպանեալ ու վիրաւորներ ալ կան որք մեզ յայտնի չեն տակաւին: Տրուած հարուածներն են նորահնար հրացաններու, վեց հարուածեանի, սուրերու, դաշոյնի և տապարի: Թուրքերէն ու քիւրտերէն բնաւ երբէք սպանեալ և վիրաւոր չկան, սպանեալ ու վիրաւոր հայերէն մի քանիքն հարուածներ ընդունած են նոյն իսկ զինուորներէն՝ տասնապետ Քեալ Մահմուտիէն, գանոն չավուշիներէն<sup>1</sup>, ուրիշ զինուորներէ, ոստիկան զինուորներէն Իսախ օղլու Մեհիաստիէն, պատժական ատենի երկրորդական անդամներէն (միւլազիմ) իզգէթ Էֆէնտիէ և Գապիլէ սահիպիներուն վերաբերող քանի մը թուրքերէն: Գանոն Չավուշիք հայ թաղերու մէջ քանի մը հրացաններ ևս պարպեցին զրգռելու համար զհայս, սակայն հայեր պատասխանած չըլլալով անոնց անհետևանք մնաց:

Կառավարութիւնն թէպէտ և ոճրագործներէն քանի մը թուրքերը ձերբակալած ու բանտարկած է, ինչպէս նաև զինագործ հայն ևս, այսու ամենայնի երկրորդ կոտորածի մը ևս վտանգի և հաւանականութեան առջև կը գտնուինք: Տագնապ տակաւին անհետացած չէ, վստահութիւն իսպառ վերցուած է և այժմ մանաւանդ աւելի անապահով կ'զգանք ինքզինքնիս, հետևաբար յօրէ անտի քաղաքիս եկեղեցիք, վարժարանք, ամբողջ շուկան և հանրային շէնքերն փակուած են և տակաւին նոյն վիճակին մէջ կը մնան: Մշոյ աղքատիկ հայ ժողովուրդը՝ որ իւր ընտանեաց ու զուակաց օրապահիկն առօրեայ աշխատութեամբ կը հայթայթէր, այժմ ձեռքերը ծալլած տուն նստած է անգործ, ինչպէ՞ս պիտի լինի այս դժբաղտներու վիճակն ներկային ու յառաջիկային մէջ, չգիտեմք, այժմէն իսկ շատ մը ընտանիքներ անօթութենէ ու կարօտութենէ կը տառապին: Երէկուրնէ ձերբակալուած ու բանտարկուած են իբրև եղեռնագործ քաղաքիս հայ երևելիներէն Միրիճանեան Պօղոս աղան և նորա Վահան ու Սմբատ անուն որդիներն, որոնց անպայման Թէվքիֆ ևս տրուեցաւ:

Քաղաքիս կոտորածը անշուշտ իւր վատ ազդեցութիւնն կունենայ ամբողջ Մշոյ աշխարհին վրայ ևս: Քիւրտեր աւելի համարձակութիւն առնելով՝ նորանոր չարիքներ կը գործեն, և որովհետև երթնեկութիւնք դադրած և յարաբերութիւնք ու հաղորդակցութիւնք խզուած են քաղաքիս հետ՝ չենք կրնար պատահած նոր դէպքերու վրայ մանրամասն տեղեկութիւններ տալ այս անգամ: Միայն տեղեկացեր ենք, որ սօլախցի Տախօ և Ուսըրըսի Ահմօյ

<sup>1</sup> Գանոն չաուշ – օրենքի պահապան տասնապետ:

անուն աւագակ քիւրտեր և ուրիշ հինգ ձիաւորներ, իրենց հետ ունենալով 300-ի չափ հետևակ սօլախցի և էօմերանցի քիւրտեր ամսոյս 4-ի լուսնալու գիշերը Կուարս<sup>1</sup> գիւղ հասած և առաւօտուն Բագու<sup>2</sup> գիւղի ճանապարհով վանքի վերին ագարակին առջև եկած համախմբուած են: Անկից վերջ երեք քիւրտեր վանքին մօտենալով Տախօյի և Ահմօյի անուամբ. «Ասքերին» հաց կուգեն, պահանջուած հաց կը տրուի և քիւրտերէն կ'իմացուի, որ Կինճի<sup>3</sup> Միւֆթի<sup>4</sup> էֆէնտին, պօկլանցի<sup>5</sup> Իսկէնտէր աղան, պայմանադրած է եղեր այդ քիւրտերու հետ, որ ինքն ևս հակառակ կողմէն ահագին բազմութեամբ վանքին վրայ պիտի արշաւէ, այնուհետև իրարու միանալով պիտի յարձակին վանքին վրայ, միաբանութիւնն սուրբ անցունելու և վանքն ամբողջովին աւարելու համար, սակայն 2-3 ժամ ետքը՝ երբ կը տեսնեն, որ Միւֆթին կուշանայ, սօլախցի և էօմերանցի քիւրտերն սպառնալիքներ արձակելով կը հեռանան, կը յարձակին վանքին մօտակայ եղող Բագու գիւղին վրայ և աւարի կառնուն գայն: Ս. Կարապետի վանքին սպառնացող վտանգն տակաւին անհետացած չէ:

Պատըքանցի աշիրէթէն խօշկանցի, լաչըկանցի և արաշկանցի քիւրտերն ևս 772 գլուխ ոչխար յափշտակեր, տարեր են Ս. Յովհաննու վանքէն և նորա ագարակներէն Տատըզգոմ<sup>6</sup> գիւղէն, ցարդ 72 ոչխար միայն ետ տրուեր են:

Մեր ահ ու երկիւղն, երկրորդ կոտորածի մը ևս վտանգը ոչ միայն ներսէն է, այլ նաև դուրսէն: Տիգրանակերտէն սրտաճմլիկ լուրեր կը հասնին, քաղաքին մէջ մեծ ջարդ տեղի ունեցած և քրիստոնէից տուներն թալանուած և ապա այրուած են բնակիչներով: Կը խօսուի, որ Մուսուլի կողմեր Խարաճադաղ<sup>7</sup> ըսուած լեռան ստորոտներ բնակող Մըլանցի ըսուած արիւնկզակ աշիրէթն առաջնորդութեամբ և հրամանատարութեամբ իւր ցեղապետին՝ Համիտիէ հեծելագնդի բարձրաստիճան սպաներէն Թիմուր փաշայի և նորա որդւոց, Տիգրանակերտի շրջակայ հայաբնակ գիւղերէն սկսեալ Հազրօ, Սլիվան, Լճէ, Հայնէ և Պշերիք գաւառակներու մէջ բնակող հայերն կոտորեր, գիւղեր աւարեր և հրդեհելով, յաւեր ու յապականութիւն մատնելով եկեր հասեր է Խուլբի և Խիյանի սահմաններ և կըսպառնայ Մասունի գծով արշաւել քաղա-

---

<sup>1</sup> Կվարս – գյուղ Բիթլիսի նահանգի Գենջի գավառում, Ս. Կարապետ վանքից 6-7 կմ արևմուտք: 1880-ական թթ. ուներ 120 տուն հայ և 80 տուն քուրդ բնակիչ:

<sup>2</sup> Բագու, Պագու – գյուղ Մուշի գավառի Մուշի գավառակում, Ս. Կարապետ (Գլակա) վանքից հարավ:

<sup>3</sup> Խոսքը Գենջիի մասին է:

<sup>4</sup> Մուֆտի – բարձրագույն հոգևորական անձ մուսուլմանական աշխարհում, շարիաթի կիրառման հարցերում կրոնական-իրավաբանական հեղինակություն է, որը բարձր է կադիից և ցածր է իմամից:

<sup>5</sup> Պոկլան, Բոզլան – գյուղ Գենջի գավառի Գենջի գավառակում:

<sup>6</sup> Տատրագոմ – գյուղ Մուշի գավառի Մուշի գավառակում, Մուշ քաղաքից 14 կմ հարավ-արևմուտք, գետափին:

<sup>7</sup> Խոսքը Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան կողմում գտնվող Ղարաջադաղ լեռան մասին է:

քիս և ամբողջ վիճակին վրայ: Խուլբի և Խիյանի քիւրտ աշիրէթներն՝ ինչպէս նախընթաց շաբթուն գրած ենք, ասպատակեր ու կողոպտեր են յիշեալ գաւառակաց հայ գիւղերն, տեղ-տեղ սպանութիւններ գործեր և քանի մը գիւղերն ևս այրեր, մոխիր դարձուցեր են: Վատաբաղդ Սասուն տակաւին անցեալ տարւոյ աղէտներէն չ'սթափած և գարնանէ 'ի վեր Վեհ. Սուլթանի, մեր ազգայնոց և Անգլիացի մարդասիրաց նպաստներով ապրած, մի քանի խրճիթներ շինած և անոնց մէջ տեղաւորուած Սասունցիներն ևս զերծ չեն քրդական նորանոր սպառնալիքներէն: Աշիրէթները պատրաստութեան մէջ են միւս անգամ յարձակելու Սասունի վրայ, նորաշէն տունները քանդելու և վերստին կոտորելու գիայս: Տալուրիկցիներն քրդաց այդ սպառնալիքներէն ու պատրաստութիւններէն ահաբէկ փախեր ու ցրուեր են: Տիր ու ցան ըլլալու վրայ են նաև Սասունի և Շատախի հայերն ևս:

Քրդաց ասպատակութեանց, չարագործութեանց և աւիրմանց ձայներ կը հասնին նմանապէս Կինճի կողմերէն ևս, Ճակչնուտ, Կըծու, Փարխու, Նորեկ և Անկաք գիւղերն<sup>1</sup>: Կինճի պէկերէն ու պատըքանցի քիւրտերէ թալանուեր և բնակիչք ցրուեր են:

Ի մի բան, Հայր Սրբազան, աղէտն ընդհանուր է և սարսափելի, չորեք-կողմէ մահու և ընդհանուր կոտորածի սպառնալիքներ կը հասնին, տունէ, տեղէ, ինչքէ ու ստացուածքէ մերկացանք, ոչինչ մնացեր է, անթիւ հայ անմեղ արիւններ թափուեցան տարապարտուց, կոտորուելով: Բնաջինջ եղաւ, սպառեցաւ հայ ժողովուրդն, մնացեալքս ևս օրհասական տագնապի և մահուան ճգնաժամու մէջ ենք, ազատելիք չկայ եթէ ընդ փոյթ դարման մը չտարուի այս անտանելի և անել կացութեան: Գթացէք, կաղաչեմք, Ձեր տարաբաղդ և բազմաչարչար հօտի վատաբաղդ մնացորդին վրայ, հաճեցէք շուտով ընել ինչ որ պէտքն է, և գէթ նորա կեանքի փրկութեան համար միջոցներ որոնել և գտնել, գթութիւն և փրկութիւն կը խնդրեմք 'ի սէր Աստուծոյ, յանուն մարդկութեան և յանուն քաղաքակրթութեան:

Շաբթուս սուրհանդակն այսօր ժամանեց տեղս, ինչպէս նախորդ երկու շաբթոներու սուրհանդակներով ներկայիս ևս Ձեր բարձր Սրբազնութենէն ո'նէ գրութիւն ստացած չենք, ի՞նչ պատճառաւ չգիտեմք:

Համբուրիւ Ս. Աջոյդ  
Մնամք խոնարի ծառայք

Փոխանորդ ընդհ. վան. Առաջնորդի Մշոյ  
(ստորագրութիւն) Վարդան վարդապետ Յակոբեան  
Դիւան քաղաքական ժողովոյ Ատենապետ՝ Յովհաննէս Մերուսի  
Ատենադպիր՝ Նազարէթ Քէշիշեան

---

<sup>1</sup> Խոսքը Գենջի գավառի Գենջի գավառակի Ճապկնուտ, Գծու (Կծու), Փարխու, Նորեկ և Անգակ գյուղերի մասին է:

Կնիք քաղաքային ժողովոյ  
Դիւան կրօնական ժողովոյ Վ. Ատենապետի Յովհ. քահանայ  
Տ.Աստուածատուրեան  
Ատենադպիր՝ Գալուստ քահանայ. Տ. Չաքարեան  
Կնիք կրօնական ժողովոյ

Յ. Գ. Այժմ տեղեկութիւն ստացանք, որ Խիանցի ութհարիւր հոգի զինեալ քիւրտեր յարձակեր են Մասնոյ գաւառի նպաստով ապրող Սնիթ, Ընկուզակ, Արտկօնք և Իշխանաձոր գիւղօրէից վրայ թալաներ և Իշխանձոր, Բատրէ անուն հայ մ'ալ սպաններ են<sup>1</sup>: Ժողովուրդ փախած քարանձաւներու մէջ ապաստանած է:

Տիգրանակերտի շրջակայ Սլիվան, Պշերիկ, Հագրօյ, Հայնէ և Լըճէ գաւառակաց կողոպտուած, այրուած և թալանուած հայաբնակ և Ասորի գիւղեր.

Խըթըրպըլ	Հոտնօֆ	Գունտէճանօ
Հայեղիկ	Ջընզըն	Թըրպէ-Սըպի
Խարապաշ	Խաչոյի գիւղ	Ֆերան
Սատիա	Տէրտերի գիւղ	Սալքան
Խաբասախալ	Ֆերիանտ	Գուրէշան
Հուսէյնա	Պօշատ	Սըլօխ
Կօզալտարա	Պաշխա	Խուրտէ
Սիտան	Մսուրիա	Թըլմին
Ալօտինա	Պախուս	Մերկէ Ռաճըլ
Մարա	Շէլման	Սօրան
Քընէաթ	Գունտէ-Նու (Հայերեն՝ Նորգեղ)	Ռաշըք
Միրալիա	Հայտարաքա	Շաքուէա
Ասլօ	Պաշնիխ	Կէօրմէգ
Ճըրնոխի	Տէրսըլ	Ֆըրէսի
Պայըք	Խնճիքա	Չէռէ
Կրէսալաթ	Ռաստալայնա	Պիրախալա
Չըռըք	Հագրօ գիւղաքաղաք	Շէֆքաթ
Հաճիճան	Երուն	Վերին Քլէսին
Խաուշան	Տէրըք	Ատշահ
Հէլին	Խօճեան	Պըլպըլ

<sup>1</sup> Խոսքը Գենջի գավառի Խուլփի գավառակի Խիանք գյուղախմբի Սնիթ, Ընկուզակ, Իշխանձոր և Արտկունք գյուղերի մասին է:

Պապօսին	Հալէրի	Հաշտար
Ալմատինա	Պասօրք	Հատհատըք
Կրէսիրա	Կօրըք	Քօռըք
Պիլէյտար	Թլմըրճ	Սաթու գիւղ
Շանէտերք	Էլիա Մելիա?	Ֆարխին գիւղ
Ջալտաքան	Էլէհ	
Շքեապթաք	Հալխամի	

Վերոյիշեալ գիւղերից աւերմանց բօթն մէջ բերաւ Կիրակոս անուն հայ մը, որ այդ տեղեր պտտած ու ամէն ինչ աչքով տեսած էր, ասոնցմէ զատ կան նաև բարձրահայեաց Ս. Աստուածածին վանից բոլորի, Հայնէի, Լըճէք, Բըշէրիկի գաւառաց և Տիգրանակերտի շրջակայ 45 կտոր աւերեալ հայ գիւղեր ևս, որոց անուանքն չենք գիտեր:

Ոչխարավաճառ քիւրտերէ կը տեղեկանանք, թէ բուն Տիգրանակերտի պարիսպի բոլոր դուռներ գոցուած, քաղաքի մէջ վեց օր անդադար հրացանաձգութեան ձայներ լսուած և մեծ կոտորած մը տեղի ունեցած է, սակայն առ այս ցարդ մանրամասն տեղեկութիւնք չը հասան մեզ:

Փոխանորդ վան. Առաջնորդի Սշոյ  
(ստորագրութիւն) Վարդան վարդապետ Յակոբեան

Բնագրին հար և նման է:

ՀԱԱ, ֆ. 56, ց. 17, գ. 70, թթ. 5-8 շրջ., հաստատված պատճեն, ձեռագիր:

**Gohar Avagyan – *Documents on Armenian Massacres in 1894-1896*  
(*Bitlis Provence*)**

The present publication summarizes four documents elucidating the Armenian massacres that took place in Bitlis and Diarbakir provinces in 1895. Three of those are the reports of Vardan Rev. Hakobyan – the eparchial vicar of Taron, to the Catholicos of All Armenians Mkrtych Khrimyan and Armenian Patriarch of Constantinople Matteos Izmirlyan and one sent to the latter is the writing of political and religious assemblies of the city of Mush. These documents have great significance as source study, as the authors of these documents not only impartially represent the situation existing there, the Armenian massacres, but also reveal the genocidal policy carried out by the Ottoman authorities. The published documents are stored in the National Archives of Republic of Armenia – the Illuminator Fund of Etchmiadzin Synod (N 56).

---

---

## LES MASSACRES DE DIARBÉKIR DE 1895 : REGARD D'UNE SŒUR FRANCISCAINE

Ce document, intitulé *Massacres de Diarbékir (Novembre 1895)*, que nous présentons aux lecteurs de notre revue, est sorti de la plume de Marthe, sœur franciscaine, témoin oculaire des massacres de 1895 des Arméniens à Diarbékir.

Les attestations des contemporains étrangers de la première période du génocide des Arméniens, que nous possédons à l'heure actuelle, sont assez rares, surtout en comparaison à celles des massacres de 1915-1916. Profitant de l'occasion, citons que ce n'est que cette période, où l'extermination du peuple arménien a atteint son apogée, que la plupart des chercheurs qualifient du *génocide des Arméniens*, à la différence des massacres des Arméniens de 1894-1896, plutôt connus dans la littérature historique sous le nom des vèpres hamidiennes.

Inutile de dire que les rapports des diplomates français accrédités dans l'Empire ottoman dans les années 1890, sont d'une valeur indéniable ; la plupart de ceux-ci ont été réunis dans le *Livre Jaune*<sup>1</sup> grâce aux efforts des défenseurs français de la cause du peuple arménien, comme Jean Jaurès, Francis de Pressencé, Denis Cochin et d'autres, immédiatement après ces épouvantables massacres, organisés par Abdhülhamid II, *sultan rouge*. Certes, la politique turcophile du gouvernement de la III<sup>e</sup> République n'a pas permis aux éditeurs d'y insérer les textes intégraux de ces documents et, et dès lors, la plupart de ceux-ci ont été publiés avec des coupures.

**Malatia** a été encore plus éprouvée que Diarbékir. La moitié des chrétiens furent massacrés ; on dit 4.000 morts et mille jeunes filles et femmes enlevées, une partie se fit musulmans et l'autre vit dans la misère la plus grande. Les 4 églises furent la proie des flammes y compris celle des Pères Capucins bâtie il y a 10 ans et le couvent ; tout fut réduit en cendres. Cela de la faute du Gouverneur qui oublia qu'il était de son devoir de protéger les sujets étrangers. (En Turquie, tous les Missionnaires catholiques

latins sont protégés français). Les Pères n'ayant pu sauver que leur vie, furent obligés de quitter le pays pour quelque temps.

À *Kharpouth*, il y eut aussi beaucoup de mal. Après avoir pillé et saccagé les villages environnants, les Kurdes se dirigèrent vers la montagne sur laquelle est bâtie la ville. Les chrétiens du quartier où est le couvent des Pères Capucins, se jetèrent dans l'église, dans le couvent et les dépendances. Plus de 2.000 personnes y étaient réunies, de toutes sectes et de tous rangs ; ils espéraient là, être à l'abri de tous dangers...

À peine y étaient-ils réunis, qu'arriva au couvent un Sheïk, qui de la part du Gouverneur vint dire aux Pères, qu'il regrettait beaucoup mais qu'il se voyait impuissant à les protéger, de descendre à Mézéré chez les Pères où ils seraient en sûreté, et il leur offrit une escorte.

En entendant ces mots, ces pauvres gens furent consternés ; ils s'écrièrent : si vous nous abandonnez, nous sommes perdus. En entendant ces cris, le R[évéré]nd Père Adrien de la province du Tyrol, en son nom et au nom de ses deux compagnons de la province de Lyon, Père Ludovic et le Frère Adrien, répondit : Nous n'abandonnerons jamais le poste confié par Dieu ; s'il faut mourir, nous mourrons avec ces pauvres gens !

L'envoyé alla rendre compte de sa mission au *Vali*, lequel envoya le Commandant de la place afin de presser les Pères d'abandonner la maison. Celui-ci ne réussit pas mieux et reçut la même réponse. Alors le Commandant très ému en voyant tant d'héroïsme dit à haute voix : Puisque vous êtes des gens à donner votre vie pour les autres je prends sur moi de vous garder et tous ceux qui sont chez vous ! Il tint parole, il envoya des soldats avec des ordres sévères de faire respecter le couvent.

Les assassins se voyant repousser énergiquement, ne touchèrent pas à ce quartier où il y avait cependant de quoi piller, et ils se dirigèrent vers le quartier des protestants qu'ils pillèrent, saccagèrent et brûlèrent ainsi que les bazars. Ces pauvres réfugiés voyant tant de dévouement de la part des Pères, furent transportés d'enthousiasme et dès les premiers jours, plus de 150 familles devinrent catholiques latins.

À *Orfa*, ce fût une boucherie... Le 28 Décembre, jour des Saints Innocents, fut vraiment le massacre des Innocents. Du samedi 28 à midi au dimanche soir, plus de 10.000 chrétiens allaient devant Dieu. Les uns furent égorgés comme des moutons ; d'autres par des armes tranchantes, d'autres par les armes à feu et d'autres enfin, furent brûlés dans leur maison et près de 3.000 dans l'église des arméniens schismatiques.

Les femmes furent encore plus maltraitées qu'ailleurs, car les hordes des Kurdes et des Arabes ayant exercé toute leur haine, leur fureur sur leurs maris, leurs époux, leurs fils et leurs frères ; à quelques uns ayant couper la gorge à moitié, mirent du sel dans leurs blessures, afin de se procurer le barbare plaisir de les voir sauter comme des poules nouvellement tuées...

Ces barbares obligèrent ces pauvres femmes affolées à dépouiller les corps des leurs dont plusieurs étaient encore vivants afin de leur remettre leurs vêtements, n'ayant sans doute, pas assez de ce qu'ils avaient volé... Ils voulurent même dépouiller les morts. Celles de ces pauvres qui se refusèrent à cette barbare besogne, eurent les seins coupés ; on éventra les femmes enceintes et ensuite beaucoup furent massacrés après avoir subi toutes les hontes. Ce qui s'est fait là-bas est indescriptible, la barbarie, la méchanceté et la cruauté y présidaient.

Le Couvent des Pères Capucins dont le supérieur est le R[évéré]nd Père Appolinaire, l'église et la maison des Sœurs furent protégés par le Gouvernement. Après tout cela, vous vous ferez facilement une idée de la misère que nous avons sous les yeux. Veuves et orphelins manquant de tout, même du strict nécessaire : de pain et de vêtements (sans compter certainement ni les chemises, ni les bas, ce qui serait de trop) point de maison, de bois, ni de charbon et avec cela, un hiver des plus rigoureux.

Tout le monde, même ceux chez qui rien ne manquait, demandent du pain et une mauvaise robe. Des blessés, en grande quantité réclament des soins délicats. Les pauvres malheureux villageois échappés aux massacres se sont réfugiés dans les villes où ils augmentent encore le nombre des misérables.

Chaque jour, on voit mourir beaucoup de ces malheureux, les uns de la faim, les autres du froid, les autres de frayeur, les autres suite de blessures mortelles et d'autres enfin manquant absolument de tout... Un exemple : la fille d'un millionnaire a été réduite, en ces jours malheureux, à n'avoir pas une chemise pour changer, ni pour elle, ni pour son mari, ni pour ses enfants... supposez ce que doivent souffrir les autres... En un mot, nos yeux ne voient que misères, nos oreilles n'entendent raconter que des misères et notre cœur en est oppressé ; c'est la misère noire dans toute la force du mot et avec cela, le cauchemar d'un nouveau massacre. Tous ces pauvres gens sèchent !...

Priez le Bon Dieu qu'Il éloigne de nous tant de maux et qu'Il ait pitié de son peuple comme Il a eu pitié des Israélites. Nos cris et nos gémissements unis à ceux des malheureux montent tous les jours devant Lui.

Que par l'intercession toute-puissante de la Très sainte Vierge, Il daigne aussi nous visiter malgré notre indignité !

### **Վարուժան Պողոսյան – 1895 թ. Դիարբեքիի կոտորածը ֆրանցիսկյան միհանձնուհու տեսանկյունից**

«Դիարբեքիի կոտորածները (1895 թ. նոյեմբեր)» վերնագրով նամակի հեղինակի՝ ֆրանցիսկյան միհանձնուհի Սարթայի կյանքի և գործունեության մասին մեզ չհաջողվեց տեղեկություններ հայթայթել: Իր ընտանիքի անդամներին հղած՝ 1896 թ. փետրվարի 23-ի թվակիր սույն նամակում նա անկողմնակալորեն ներկայացնում է 1895 թ. նոյեմբերին Դիարբեքիում տեղի ունեցած հայկական կոտորածի զանազան մանրամասներ, որի ականատեսն է եղել: Նրա պատումը համալրում է այն տեղեկությունները, որոնք պատմաբաններին գլխավորապես մատչելի են շնորհիվ Դիարբեքիում Ֆրանսիայի փոխհյուպատոս Գուստավ Մեյրիեի՝ Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի դեսպան Պոլ Կամբոնին հղած զեկուցագրերի: Նամակագիրը ոչ միայն բացահայտում է օսմանյան տեղական որոշ պաշտոնյաների չարագուշակ դերը Դիարբեքիի կոտորածում, այլև արժևորում Գ. Մեյրիեի և եվրոպացի տարբեր վանականների անձնուրաց հայանպաստ գործունեությունը: Նա համառոտակի անդրադարձներ է կատարում նաև Մարդինում, Մալաթիայում, Ուրֆայում և Խարբերդում բնակվող հայերի անմխիթար կացությանը և նրանց բնաջնջման որոշ դրվագների:

---

---

## THE ECHOES OF THE ARMENIAN MASSACRES OF CILICIA IN 1909 IN THE *TIMES*

The Armenian massacres in Cilicia in 1909, organized by the Young Turks government in April, are an integral part of the Armenian Genocide (1894-1922). In the historiography of this theme the Cilician massacres have not been studied on a high level. Sometimes they missed the attention of the representatives of different generations of scholars not only in Armenia, but also in foreign countries, even in the second half of the XX century, when more scholars became interested in the issues of the Armenian Genocide. Therefore, the Cilician massacres need to be studied completely, as there are only three serious studies on this subject<sup>1</sup>.

The historians have not made a careful study of the sources of these massacres. Certainly, some of the contemporary scholars, both French and Armenian, have recently republished the most important and as to day the only collection of documents<sup>2</sup>, as well as some other important books<sup>3</sup>. One of my Armenian colleagues has published some Armenian documents<sup>4</sup>; others have concentrated on some articles on the interpretation of Armenian and Danish sources<sup>5</sup>.

In each case, the historians of the Cilician massacres have focused mainly on the Armenian sources. Only the French historian R.H. Kevorkian has studied the German and Austrian archival documents. But the English sources have been unfortunately omitted by my predecessors. As far as the *Times* is concerned, it has never been referred to by my colleagues.

While, this newspaper, which had its correspondents in Asia Minor, periodically received from them reliable information about the events which were taking place in

---

<sup>1</sup> **Kévorkian R.H.**, Les massacres de Cilicie d'avril 1909 // La Cilicie (1909-1921). Des massacres d'Adana au mandat français. Volume préparé par Raymond H. Kévorkian, Paris, 1999; **Simonyan H.**, The Destruction of Armenians in Cilicia, April 1909, Erevan, 2009 (in Armenian); see also its English translation: London, 2012; **Poghosyan V.**, The Armenian Massacres of 1909 in Cilicia in the light of the prism of French historiography, Yerevan, 2009 (in Armenian).

<sup>2</sup> **Brézol G.** Les Turcs ont passé là... Recueil de documents, dossiers, rapports, requêtes, protestations, suppliques et enquêtes établissant la vérité sur les massacres d'Adana en 1909. Préparé à la publication par Varoujean Poghosyan, Erevan, 2009 ; Chamigny, 2009.

<sup>3</sup> **Duckett Ferriman.** Les Jeunes Turcs et la vérité sur l'Holocauste d'Adana en Asie Mineure en avril 1909. Chamigny, 2008 ; Turkish Atrocities. The Young Turks and the Truth about the Holocaust at Adana, in Asia Minor, during April, 1909. Written and compiled in April, 1911, by Ferriman Duckett. Yerevan, 2009; **Adossidès A.**, Arméniens et Jeunes-Turcs. Les massacres de Cilicie. Le texte d'autotypie est préparé à la publication par Varoujean Poghosyan, Erevan, 2011 ; Chamigny, 2009 ; **Essayan Z.**, Dans les ruines, Paris, 2011.

<sup>4</sup> **Avagyan G.**, The Echoes of the Massacres of the Cilician Armenians, "VEM", 2009, N 1, pp. 173-182, (in Armenian).

<sup>5</sup> **Kharatyan A.**, The Elucidation of Adana's Massacre of 1909 in the Western Armenian Press, "Patmabanasirakan Handes", 2009, N 1, pp. 3-14 (in Armenian); **Khaltaktchyan T.**, The First Echoes of Adana's Massacre of 1909 in the Western Armenian Press, "Lraber", 2009, N 1, pp. 3-13 (in Armenian); **Bjørnlund M.**, Adana and Beyond: Revolution and Massacre in the Ottoman Empire seen through Danish Eyes, 1908/9, "Haykazian Hayagitakan Handes", 2010, pp. 125-156.

this region. Therefore, they are not only interesting, but also one of the most reliable sources. This is also true of the other stages of the Armenian Genocide. Some documents on the Massacres of 1915 were included in the collection of documents on the Armenian Genocide, published by Mkrtich Nersisyan in 1966<sup>1</sup>. Several information's of the *Times* were published in a collection of documents on the Armenian massacres in Marash in 1920<sup>2</sup>.

Nevertheless, the publications of the *Times* about the Cilician vespers of 1909 are very interesting and that's why worth being published. The publications of this newspaper are frequently based on the information of British and American diplomats and foreign missionaries, the eyewitnesses of these massacres. Several circumstances were reflected in these publications, refer to two stages of the Cilician massacres, which took place at the beginning and in the middle of April throughout the region. They elucidate also some important details of these massacres. According to one of the publications over 30.000 Armenian victims were mentioned. This question should be properly investigated by the historians<sup>3</sup>.

VAROUJEAN POGHOSYAN

\* \* \*

### *Attack on the Armenians*

Constantinople, April 15.

Consular telegrams from Mersina (Asia Minor) state that, owing to the murder there of the two Moslems by an Armenian, and the non-discovery of the assassin, the Moslems have attacked the Armenians.

Later

The first news from Mersina was happily exaggerated. The disturbance really occurred at Adana and only ten Armenians were killed.

*Times. 16. IV. 1909.*

\* \* \*

### *Further Resignations (Extract)*

Constantinople, April 16.

#### The Disturbances in Asia Minor

The latest advices from Adana and Mersina state that a large number of Christians have been killed at the former place, and that the Moslem attacks were continuing last night.

*Times. 17. IV. 1909.*

---

<sup>1</sup> The Armenian Genocide in the Ottoman Empire. Collection of documents and materials. Compiled by Mkrtich Nersisyan and Rouben Sahakyan. Yerevan, 1966.

<sup>2</sup> Poghosyan V., Les massacres des Arméniens de Marache en 1920, Yerevan, 2010 (in English and in French).

<sup>3</sup> For example, according to the figures of V. Dadrian and R.H. Kevorkian 25.000 Armenians were killed (Dadrian V., Histoire du génocide arménien. Conflits nationaux des Balkans au Caucase, Paris, 1996, p. 305; Kévorkian R.H., Le génocide des Arméniens, Paris, 2006, p. 100). H. Simonyan estimate the number of victims approximately over 40.000 (Simonyan H., op. cit., p. 206).



\* \* \*

### *Moslems Outbreaks in Asia Minor*

The situation in Cilicia is grave. Telegrams of yesterday's date from Adana describe the situation as desperate. A large part of the town has been burnt, including the quarter inhabited by the Armenians, who made a desperate resistance and inflicted heavy loss on their assailants before they were overpowered. The British Vice-Consul received slight injuries. Two American missionaries were killed and the mission is in great danger.

The town of Tarsus is on fire. The Christians are peaceable, but the Moslems murdering and looting.

At Mersina the situation is threatening owing to the paucity of troops and the activity of the Moslem agitators. The disturbances have spread to Ayas and the neighborhood of Alexandretta. As it is evident that the local authorities are quite unable to cope with the situation the commanders of the British war vessels which were ordered to Mersina have received instructions to act on their own initiative. It is hoped that the approaching concentration of eight European warships at Mersina may save the town from the horrors which have overtaken Adana.

*Times. 19. IV. 1909.*

\* \* \*

Constantinople, April 18.

The names of the American missionaries killed in the massacres at Adana are Maurer and Rogers. The other members of the missions are safe, as is M[iste]r Christie, who is at Tarsus.

A British war vessel has been ordered to Alexandretta, which town is now threatened by the surrounding Moslems. Several Armenian farms in the neighborhood of the town have been destroyed. There is great apprehension and excitement at Kharput owing to the depredations of the Kurds in the neighboring villages. So far there have been no disturbances in the town itself.

*Times. 19. IV. 1909*

\* \* \*

### *The Outbreaks in Asia Minor*

(From our own correspondent)

Constantinople, April 18.

The disturbances in Cilicia have spread to the Tarsus. I understand that the French Embassy is informed that a massacre of Christians has occurred at Marash.

Constantinople, April 18, Midnight.

A telegram from the British Vice-Consul at Adana, dispatched this afternoon, states that he has apprehensions of further trouble at that place. There is no further

news from Tarsus or Mersina, while there is increased apprehension in regard to Alexandretta. A British warship is expected at Alexandretta to-night and a French warship at Mersina to-morrow.

The American Vice-Consul at Mersina telegraphs that things are quieting down.

The American missionaries, M[iste]r Rogers and M[iste]r Maurer, were killed at Adana on Thursday afternoon while attempting to extinguish a fire at the house of an aged Turkish woman. Both of them were shot dead. The missions at Adana and Tarsus have now received adequate protection and are safe.

The number of killed in the fighting between Turks and Armenians at Adana is estimated at over 1.000.

April 19.

Consular telegrams from Aleppo report that 20 persons have been killed and wounded at Marash, in the province of Aleppo, 80 miles north of the town of Aleppo. The authorities are behaving well and the disturbance has been stopped.

The Sheik-ul-Islam and the Armenian Patriarch have telegraphed to the ecclesiastical authorities in the vilayet of Adana urging the naibs, bishops, and priests to exert themselves with a view to stopping bloodshed and to counsel peace and concord.

*Times. 20. IV. 1909.*

\* \* \*

### ***The Outbreaks in Asia Minor***

(From our own correspondent)

Constantinople, April 20, 12 35 a[n]te m[eridiem].

The Vali of Adana and the Mutessarif of Tarsus have been dismissed. According to the latest telegrams, all is quiet at Adana, though disorder persists in some neighboring villages. Over 3.000 persons are homeless. Order has been restored at Tarsus.

The Press echoes the hope, already expressed amid general by one of the Armenian Deputies in Parliament yesterday, that all persons found guilty of complicity in the massacres should be severely punished, and remarks that the failure to punish the authors of former outrages has led the worst elements of the population of Asia Minor to believe that crimes against the Armenians can be perpetrated with impunity.

*Times. 21. IV. 1909.*

\* \* \*

### ***Thousands Killed***

Constantinople, April 20.

The latest Consular telegram from Adana estimates the number of killed at 2,000, including over 200 Moslems, at Adana itself, and at about 5,000 throughout the vilayet. Quiet prevails at Adana at present.

A Consular telegram from Marash, in the province of Aleppo, reports a renewal of the attacks, and adds that the situation is exceedingly precarious, while the excitement at Alexandretta is still very grave, though the presence of his Majesty's cruiser *Diana* will prove to have a tranquillizing effect.

Disturbances are reported from Hadjin, in the northern extremity of the vilayet of Adana, a large Armenian centre.

*Times. 21. IV. 1909.*

\*\*\*

### ***The Outbreaks in Asia Minor (Extract)***

(From our own correspondent)

Constantinople, April 21.

The disturbances in Cilicia are spreading eastwards. Affrays between Christians and Moslems are reported in the neighborhood of Antioch, Alexandretta, and Aleppo. A massacre is believed to have occurred at Biredjik. Orders have been issued to the local authorities to check disturbances of all coasts, and the Sheik-ul-Islam and the Armenian Patriarch have issued strict injunctions to the *mufitis* and clergy to abstain from provocative language.

But there is reason to fear that a wave of reactionary fanaticism and turbulence is spreading rapidly eastwards; and reports of the state of feeling in Angora and Konia indicate the possibility of dangerous outbreaks in Asia Minor. Fighting between Armenians and Moslems is reported in the Marash and Hajin districts; but no details are known.

*Times. 22. IV. 1909.*

\* \* \*

### ***The Outbreak in Asia Minor (Extract)***

(From our own correspondent)

Constantinople, April 22.

The news from Asia Minor causes considerable anxiety. Fighting between Moslems and Armenians is reported from the Jebel Bereket district, north-east of Adana. Telegrams from Sivas complain of the pillage of the settled inhabitants by bands of Kurds and Circassians and Hajin is surrounded by armed Moslems.

*Times. 23. IV. 1909.*

\* \* \*

*The Outbreaks in Asia Minor*

(From our own correspondent)  
Constantinople, April 23.

Massacre at Antioch

The *Turquie* announces a massacre of Christians at Antioch by criminals escaped from the Payas prison near Alexandretta.

Constantinople, April 23.

According to the latest Consular reports, massacres are continuing in the district of Antioch, and the people are fleeing in all directions.

The French Vice-Consul at Marash telegraphs that order has been restored in that town. Two Englishmen named Gunter and Proctor have reached Adana safely from Osmanieh and Bagtcheh respectively. Both places are situated in the Adana vilayet.

The cruiser *Medjidieh* left this morning for the Syrian coast.

Fugitives who have arrived at Alexandretta relate that all the Armenian villages and settlements in the Alexandretta district are being destroyed. All, or nearly all, dwellings have been destroyed, and the Christian inhabitants who have escaped massacre are living in the open, half starving and panic-stricken.

A British warship, which went to the relief of Dortyol, returned to Alexandretta after accomplishing nothing. The Commander applied to the Governor of the district for permission to land a relief party, but his application was refused.

The following telegram, dated yesterday, has been received from an American missionary at Adana who witnessed the massacre:—

The immediate pretext for the massacre was the action of an Armenian who shot three Turks, one of whom died, on April 10. On the evening of the following day a large Moslem crowd beat the Armenian to death. As the unrest was greatly increased by this event, the Armenian notables urgently demanded that the Governor should take adequate measures to preserve order.

On the morning of the 14<sup>th</sup> the situation became critical. The Armenians closed their shops, and later on the Turks followed their example. The Armenian notables thereupon repeated their demands for adequate precautionary measures, and the Governor assured them that perfect order would be maintained. The Moslem and Armenian notables walked through the streets and urged their coreligionists to reopen their shops. However, a Moslem crowd, armed with clubs, filled the market place and the other streets, and near noon began massacring, looting, and burning the shops and houses of the Armenians. The conflict raged fiercely until Friday morning. Two American missionaries were killed, and the British Vice-Consul, while riding through the streets in an attempt to restore order, was wounded. The Armenians defended themselves stoutly and killed some of the Moslems.

On Friday morning the Armenians, through a friendly mullah, begged for Government protection, and troops paraded the streets and guard were posted at various points. Order was slowly restored. At night time extensive conflagrations threatened the whole city. Thousands of Armenians have been killed and thousands more are homeless, penniless, and hungry. The devastation in the outskirts of the city

is inconceivable. Extensive relief measures have been undertaken by the four hospitals, but enormous efforts will be necessary to give adequate relief.

*Times. 24. IV. 1909.*

\* \* \*

***Distress in Adana Vilayet***

Adana, April 23.

Appalling distress has resulted from the recent massacres in the vilayet. Some 15.000 people are homeless and starving, and there are thousands of orphans to be provided for. A committee of Moslems and Christians, presided over by M[iste]r Chambers, a Canadian missionary, who gained much experience in relief work during the former Armenian massacres, and organized under the suppression of Major Doughty-Wylie, Vice-Consul, is doing what it can to provide shelter and food, but foreign help is urgently needed to prevent further loss of life from starvation. It is hoped that the public in Great Britain and America will make a charitable response to this appeal for subscriptions. Which are to be sent to the American Bible House in Constantinople.

*Times. 26. IV. 1909.*

\* \* \*

***Massacres still Proceeding***

Constantinople, April 25.

A telegram from Adana reports that Hajin is in flames. According to information from Aleppo a massacre is proceeding at Latakia, while 10.000 Christians are surrounded at Dortyol, near Bayas, and that there is no means of reaching them. A French battleship which has arrived at Beirut has since proceeded to Latakia.

*Times. 27. IV. 1909.*

\* \* \*

***The Adana Massacres (Extract)***

Constantinople, April 27.

A telegram from Adana reports that a fresh outbreak, accompanied by looting and incendiarism, occurred there during the night. The situation is described as critical.

In an account of the massacres of Christians at Adana, M[iste]r Gibbons, the missionary, says:—

On Friday afternoon (after the Adana outbreak) 250 so-called reserves, without officers, seized a train at Adana and compelled the engineer to convey them to Tarsus, where they contributed to the complete destruction of the Armenian quarter, the best part of Tarsus. The great historic Armenian church, the most important building in the city, was sacked, the marble statues demolished, the historic tablets shattered, and

everything portable carried off; but the building resisted the attempt to burn it. Fortunately few were killed, owing to the proximity of the American college, where 4.000 refugees, destitute and homeless, took shelter.

-----

The Reformed Presbyterian Churches of Ireland and Scotland have a joint mission at Antioch, Aleppo, Idlib, and Alexandretta, in Syria, and the secretary of the mission board at Belfast has received from the missionary in charge at Alexandretta, the Rev[erend] S.H. Kennedy, the following telegram:—

“At Antioch Armenians have been massacred. There are hundreds of widows and orphans. D[octo]r Martin and his family are safe. Here the situation is most serious. The churches are filled with refugees. Two hundred are in my house; foreigners are protected”.

*Times. 28. IV. 1909.*

\* \* \*

***The Massacres in Asia Minor (Extract)***

(From our own correspondent)  
Constantinople, April 28.

Miss Rose Lambert, an American missionary, telegraphing from Hajin, Asia Minor, on April 26, states that the rising against the Christians began there nine days before. The Government sent troops to stop the fighting between Mahomedans [sic] and Christians, but they were not sufficient to restore order. There were many killed and wounded on both sides. The desperadoes occupied the Armenian Cloister on April 21, firing on the people without interruption. Although white flags have since been flown on the Armenian churches to show that no further resistance will be offered, shooting and plundering continue. The population of Hajin numbers 15.000. Many shops have been robbed, while others will probably share the same fate. The Armenian settlements and villages in the province have been burned, and many persons have been killed. There is almost no food in the town, and animals are dying of starvation. The provincial authorities have vainly appealed for more troops both in writing and orally. Miss Lambert adds that the messenger who was first given the foregoing telegram to take to the telegraph office was killed on the way.

*Times. 29. IV. 1909.*

\* \* \*

***The Massacres in Asia Minor  
Relief Voted by the Chamber***

Constantinople, May 1.

In the Chamber today, a lively debate took place on the massacres at Adana. The late vali and the Assistant Minister of the Interior were violently attacked and stigmatized as creatures of the Hamidian *régime*. Finally, after an agitated sitting, a

resolution was adopted almost unanimously in favor of the formation of a Court-martial at Adana to try guilty parties of dispatching a Parliamentary commission of inquiry and sending immediately a sum of £T20.000 to relieve the distress at Adana.

The Chamber also unanimously adopted a proposal to pension the families of the killed and wounded in the recent fighting at Constantinople.

*Times. 3. V. 1909.*

\* \* \*

***The Massacres in Asia Minor***  
***Narrative by D[octo]r Chambers***

Reuter's Agency has received a telegram from D[octo]r W.N. Chambers, the head missionary at Adana. It is dated Mersina, May 1, and says:—

“A terrible massacre began on Wednesday, the 14<sup>th</sup>, but was somewhat mitigated on the 16<sup>th</sup> in Adana, but continued in the out-district. The following week arrangements were begun for the relief of 15.000 destitute. Over 300 wounded were crowded into the emergency hospital. The massacre was furiously renewed on Sunday. On the 25<sup>th</sup> the soldiers and Bashi-Bozouks turned a terrible fusillade on the Armenian school harboring nearly 2.000 refugees. It was soon ablaze and the refugees escaping were shot at as they showed themselves. Many also perished in the flames. Then followed a devastating conflagration continuing unabated till Tuesday morning, destroying four churches and their schools and hundreds of houses in the most populous parts, leaving thousands of people homeless and penniless. Goods escaping the flames were stolen.

On Monday the British Consul, his arm in a sling, was active in including the Government to restore order and rescue the refugees from the burning district. The American mission house and school and the Jesuit Sister's school were in imminent danger from fire, but are so far safe. The Jesuit fathers' church and school were burnt. On Monday evening over 20.000 people took refuge in a couple of large factors. ... On Wednesday morning ... rations were issued, one-third of a pound of rice and a quarter of a pound of bread each to the crowds who had had nothing to eat for three days. The Government relief measures are absolutely inadequate, and the measures for protecting life and property are inefficient. Some troops are engaging in pillage. ... Over £ 250 sterling is needed daily to feed the people now starving”.

*Times. 4. V. 1909.*

\* \* \*

***The Massacres at Adana***

Larnaca, May 3.

The following telegram of yesterday's date has been received here from Adana:—

Turkish letters and telegrams have been censored. The city is still lawless; the estimate of the number of killed in Adana is now 6.500, more having been killed yesterday. In the entire province 30.000 have been killed and 35.000 are penniless, homeless refugees. Adana is being terrorized by 4.000 soldiers, who are looting,

shooting, and burning. No respect is being shown for the property of foreigners; both the French schools have been destroyed. Fears are felt regarding the American school, while commercial and missionary interests are totally ruined. Confidence in the authorities is still lacking, and further massacres of Christians are feared. The troops, instead of pouring water on the fires, feed the flames with kerosene. Fears are entertained regarding the American missions at Hadjin and Tarsus.

*Times. 5. V. 1909.*

\* \* \*

### ***The Cilician Outbreak***

(From our own correspondent)

Constantinople, May 17.

A Parliamentary Commission will shortly start for Adana, where the Court-martial has opened an inquiry. It is hoped that its presence and that of the Macedonian officers will guarantee the infliction of exemplary punishment on the reactionaries guilty of the massacre of Armenians and Greeks.

Details which have reached Constantinople show that the outbreak in Cilicia was marked above all others by the perpetration of infamous and hideous outrages upon women and children. It is therefore the more to be regretted that there are signs of a tendency in certain Turkish official circles to minimize both the extent and the horror of the massacres. The presence of Adana Deputies and officers of strong antireactionary tendencies should, however, prevent local influences from interfering with the course of justice.

*Times. 18. V. 1909.*

### **Վարուժան Ղողոսյան – 1909 թ. Կիլիկյան կոտորածների արձագանքները «Թայմս» թերթում**

Սույն հրապարակումն ամփոփում է անգլիական հեղինակավոր «Թայմզ» լրագրում տպագրված՝ 1909 թ. Կիլիկիայում և հարակից տարածաշրջաններում տեղի ունեցած հայկական կոտորածների երկու փուլերն անկողմնակալորեն լուսաբանող հաղորդումները: Հարկ է նշել, որ թերթն ունեցել է իր թղթակիցներն Օսմանյան կայսրությունում, որոնց հաղորդումների արժանահավատությունը կասկած չի կարող հարուցել, առավել ևս որ դրանց մի մասն ընդգրկում է օտար ականատեսների վկայությունները: Սույն հրապարակումները կարևոր են այն առումով, որ 1909 թ. կիլիկյան կոտորածների պատմությանն անդրադարձած պատմաբաններն առ այսօր չեն օգտագործել անգլիական մամուլի նյութերը:



*Հրաչիկ Միմոնյան, Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք I (1905 թ. հունվար-1906 թ. օգոստոս), Երևան, Հայագիտակ, 2003, 816 էջ; գիրք II (1906 թ. օգոստոս-1907 թ. հուլիս), Երևան, Հայագիտակ, 2003, 764 էջ; գիրք III (1907 թ. հուլիս-1908 թ. ապրիլ), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2009, 1128 էջ; գիրք IV (1908 թ. ապրիլ-1912 թ. սեպտեմբեր), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2010, 1204 էջ; գիրք V (1912 թ. սեպտեմբեր-1914 թ. օգոստոս), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2013, 1296 էջ:*

Հայ պատմագիտական միտքը և մասնավորապես հայկական ազատամարտի պատմագրությունը հարստացան ծանրակշիռ և մնայուն ձեռքբերումով: Լույս տեսավ նշանավոր պատմաբան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրաչիկ Միմոնյանի երկարամյա աշխատանքի արդյունքներն ամփոփող՝ հայկական ազատագրական շարժումների պատմությանը նվիրված հինգհատորյակը:

Հր. Միմոնյանի բազմաբնույթ և բազմաժանր գիտական ժառանգության գլուխգործոցը գրախոսվող աշխատությունն է, որն աչքի է զարնում ադրյուրագիտական հարուստ հենքով, հարցադրումների բազմազանությամբ և պատմագիտական համոզիչ հայեցակարգերի շրջանակում՝ դրանց սպառնիչ պատասխանների որոնման ձգտումներով: Մենագրությունը շարադրված է անկողմնակալ դիրքերից, որտեղ հեղինակի պատմագիտական մոտեցումները խարսխվում են փաստերի քննական խոր վերլուծության վրա:

Փորձենք ամփոփի ներկայացնել այն նորն ու գնահատելին, որ հայ պատմագիտության մեջ ներմուծում է Հր. Միմոնյանի հինգհատորյակը: Առաջին գրքում նա վերլուծում է Ռուսական առաջին հեղափոխությունից հետո ծայր առած իրադարձությունները մինչև 1906 թ. օգոստոս: Այս կարճատև ժամանակահատվածի պատմությունը սովոր հատորով ներկայացնելն ինքնին վկայում է այն ընդգրկուն մոտեցման մասին, որը որդեգրել է հեղինակը: Նրա հայացքից չի վրիպել հայ քաղաքական մտքի ակունքներին առնչվող ոչ մի իրադարձություն:

1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմը, որին հետևեց 1905-1907 թթ. Ռուսական առաջին հեղափոխությունը, տարաբնույթ ընկալումների տեղիք տվեց քաղաքական տարբեր կազմակերպությունների կողմից: Հեղինակն իրավամբ նկատում է, որ թե՛ ռուսական հեղափոխական և թե՛ Ս.Դ. Հնչակյան և ՀՅ Դաշնակցություն կուսակցությունները Ռուսաստանի պարտությունը դիտում էին որպես ինքնակալության կործանման նախաշեմ՝

միաժամանակ չժխտելով դրա բացասական հետևանքները ռուս աշխատավոր ժողովրդի համար: ՀՅԴ-ն գտնում էր, որ կովկասահայությունը չպետք է նպաստի ռուսական զենքի հաղթանակին, քանզի դեռևս թարմ էր 1903 թ. հակահայկական ձեռնարկումների թողած տհաճ տպավորությունը: Դրան զուգընթաց պետականամետ դիրքորոշում էր դրսևորում հայ հոգևորականության մի մասը, ինչը արժանանում է հեղինակի հիմնավոր քննադատությանը:

Կարևոր է նաև այն, որ հեղափոխական շարժման սկզբնավորումը Հր. Միմոնյանը ներկայացնում է ինքնակալության վերին օղակներում ծավալված իրադարձությունների և առաջադեմ ուժերի՝ Ռուսական հեղափոխության նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքի համայնապատկերի վրա: Այնուհետև նա անդրադառնում է հեղափոխական շարժման կովկասյան դրսևորումներին, ցույց տալիս տարբեր ազգությունների հասարակական շերտերի տրամադրվածությունը հեղափոխության հանդեպ:

Բացահայտելով ինքնակալության քաղաքականության նրբերանգները՝ հեղինակը մեկնաբանում է դրա հետևանքով 1905-1906 թթ. Կովկասում սանձազերծված հայկական կոտորածների պատճառներն ու հետևանքները:

Անշուշտ, համառոտ գրախոսության սահմաններում հնարավոր չէ ներկայացնել Հր. Միմոնյանի բոլոր նոր մտտեցումները, որոնք ի հայտ են գալիս պատմագիտական հայեցակարգերի տեսքով: Ավելացնենք միայն, որ վեր հանելով կովկասյան արյունալի իրադարձությունների ամբողջ շղթան՝ նա անդրադառնում է նաև դրանց ազդեցությանն Արևմտյան Հայաստանի ազատագրական շարժման վրա:

Մենագրության երկրորդ գիրքը սկսվում է թուրք (թաթարական)-հայկական ընդհարումների ավարտական փուլի քննությամբ (Ղարաբաղ, Սուրմալու, Զանգեզուր): Հեղինակի ամբողջ շարադրանքը հազեցված է այն գաղափարով, որ հայ ժողովուրդը պետք է ապավինի սեփական ուժերին: Այս գրքում նա մեծ տեղ է հատկացրել տվյալ ժամանակաշրջանում հասարակական մտքի հետազոտությանը՝ ջանալով ճշգրտել հայի հոգեբանական նկարագիրը, միտք, որն ամբարված է հայ ժողովրդի հազարամյակների պատմության հոլովոյթում: Հետաքրքրություն են ներկայացնում և խիստ այժմեական են Հայկական հարցի շուրջ Ռուսաստանի հասարակական-քաղաքական շրջանների տեսակետները, որոնք Հր. Միմոնյանի ուշադրության կենտրոնում են: Նա քննական վերլուծության է ենթարկում գոլիցինյան հակահայկական քաղաքականության ակունքները և դրանից Ռուսաստանի կառավարական շրջանների հրաժարվելու պատճառները: Այս առնչությամբ նա առաջին անգամ է հիմնավորապես բացահայտում Կովկասի փոխարքա Ի. Վ. Վորոնցով-Դաշկովի հայասիրական գործունեությունը: Սույն գրքում հեղինակը նշանակալից տեղ է հատկացնում նաև հայ ազգային կուսակցությունների գաղափարական պայքարի դրվագներին, նրանց որդեգրած

ռազմավարական և մարտավարական ուղղությունների քննությանը:

Աշխատության երրորդ գրքում Հր. Միմոնյանն անդրադառնում է 1907-1908 թթ. հայ ժողովրդի երկու հատվածների կյանքում տեղի ունեցած կարևորագույն իրադարձություններին, զուգահեռաբար մշակում հայ հեղափոխական կուսակցությունների գործունեության գնահատման հայեցակարգեր: Այսպես, եթե պարսկական հեղափոխությանը հայ քաղաքական ուժերի մասնակցության առնչությամբ հեղինակի դիրքորոշումը դրական է, ապա նա անվարան ժխտողական վերաբերմունք է ցուցաբերում երիտթուրքերի հետ ՀՅԴ-ի համագործակցությանը, որն ի վերջո արևմտահայության համար աղետալի հետևանքներ ունեցավ:

Մենագրության չորրորդ գիրքն ընդգրկում է 1908-1912 թթ. իրադարձությունները, որոնց թվում հատուկ քննության է առնված 1909 թ. կիլիկիահայության մեծ աղետը: Այստեղ հեղինակն անդրադառնում է նաև կովկասահայության խնդիրներին ինքնակալության հալածանքների պայմաններում: Միաժամանակ նա բացահայտում է պարսկական հեղափոխության խորքային գործընթացները: Խիստ այժմեական են նոր փաստերի հիման վրա զանազան հիմնախնդիրների նրա մեկնաբանությունները, որոնք վերաբերում են, օրինակ, այսպես կոչված «Դաշնակցության գործին» և դրա ավարտին, սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների գործունեությանը հեղափոխական վերելքի պայմաններում և այլն:

Մենագրության հինգերորդ գիրքն ընդգրկում է Հայկական հարցի վերաբացման պատմությունը: Հր. Միմոնյանը մեկնաբանում է հարցի վերաբացման ամբողջ շղթան, բացահայտում այն շահագրգռվածությունները, որ դրսևորում էին Ռուսաստանը և նրա դաշնակիցները: Քայլ առ քայլ նա լուսաբանում է մեծ տերությունների մտտեցումները: Ազատագրական շարժումների պատմագրության մեջ նա թերևս առաջինն է, որ հանգամանալից վերլուծում է Հայկական հարցի վերաբացմանն առնչվող բազմաբնույթ հիմնախնդիրները: Համակողմանիորեն ներկայացնելով Հայկական հարցի շուրջ ընթացող մեծ տերությունների դիվանագիտական խաղերը՝ հեղինակը ցույց է տալիս Հայաստանի բարենորոգումների խնդիրը բարեհաջող ավարտին հասցնելու համար Ռուսաստանի կառավարության ջանքերը:

Եզրափակելուց առաջ շեշտենք, որ Հր. Միմոնյանի հինգ գրքից բաղկացած սույն մենագրությունն աննախադեպ է մի քանի առումներով:

*Առաջին:* 1905-1914 թթ. հայոց պատմությունը հեղինակը ներկայացնում է համակողմանիորեն. նրա տեսադաշտից չի վրիպել քննարկվող ժամանակաշրջանի քաղաքական-հասարակական ոչ մի կարևոր իրադարձություն:

*Երկրորդ:* Պատմական անցքերը գնահատելով անկողմնակալ դիրքերից՝ նա նոր ուղիներ է մատնանշում անցյալի իրադարձությունների ապաքաղաքական գնահատման համար:

*Երրորդ:* Հեղինակը դեպքերը շարադրում է աշխարհաքաղաքական

գործընթացների համայնապատկերի վրա, բացահայտում Հայկական հարցի նկատմամբ մեծ տերությունների դիրքորոշումների էությունը և նրանց ձգտումները:

*Չորրորդ:* Հեղինակը ցույց է տալիս այն խորքային դրդապատճառները, որոնք աստիճանաբար հանգեցրին հայոց մեծ ողբերգությանն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին:

Չենք կարող անտեսել մի էական հանգամանք ևս. աշխատությունը շարադրված է ոչ միայն գիտական բարձր մակարդակով, այլև պարզ ու հստակ, կենդանի և պատկերավոր լեզվով: Այս իրողությունը մենագրությունը դարձնում է դյուրըմբռնելի յուրաքանչյուր ընթերցողի համար:

Նշենք նաև, որ հինգհատորյակը հրատարակված է տպագրական բարձր մակարդակով: Ի դեպ, վերջին երեք գրքերը լույս են տեսել «Գալուստ Կիլպենկեան հիմնարկության» հոգողությամբ:

Ակադեմիկոս Սիմոնյանի «Ազատագրական պայքարի ուղիներում» աշխատությունը նոր խոսք և ծանրակշիռ ներդրում է հայ պատմագիտության մեջ, որը, մեր կարծիքով, գիտական սխրանք է՝ ի ծառայություն ոչ միայն ժամանակակիցներին, այլև հետագա սերունդներին:

*ՊԵՏՐՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

---

---

*Ալեքսանդր Սաֆարյան, Ջիյա Գյոքալփըր և «Թյուրքականության հիմունքները», Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2012, 300 էջ:*

Երիտթուրքերի պարագլուխներից մեկի և թյուրքականության (Türkçülük, հմմտ. ռուս. тюркизм) թերևս ամենանշանավոր գաղափարախոս Ջիյա Գյոքալփի՝ 1923 թ. լույս ընծայած «Թյուրքականության հիմունքները» աշխատությունը, որը բազմիցս վերահրատարակվել է և դարձել թուրքիզմի ու պանթուրքիզմի «հռչակագիր», հայ ընթերցողին հիմնականում ծանոթ էր շնորհիվ Ջարևանդի գրքի<sup>1</sup>: Հայ գիտնականները տասնամյակներ շարունակ օգտագործել են նաև ՀՀ ԳԱԱ արևելագիտության և պատմության ինստիտուտների գրադարաններում պահվող Ջիյա Գյոքալփի գրքի՝ Գ. Սանթուրչյանի «աշխատանքային» թարգմանությունը, որն առ այսօր չի հրատարակվել՝ գիտական խմբագրման ենթարկված չլինելու պատճառով: Մեր նախորդները երբեմն հղումներ են կատարել այդ գրքին նվիրված ռուս հեղինակների աշխատություններին:

ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի վարիչ, հայագիտական հետազոտությունների ինստիտուտի հայ-օսմանական առնչությունների բաժնի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Ալեքսանդր Սաֆարյանն ավելի քան երկու տասնամյակ առաջ ձեռնամուխ է եղել «Թյուրքականության հիմունքները» աշխատության՝ առավել խորին հատվածները թարգմանելու ու համակողմանի մեկնաբանելու գործին՝ Հայաստանում և արևմտյան առաջատար պարբերականներում հրատարակելով գյոքալփյան թեմային նվիրված հոդվածաշար<sup>2</sup>: Գրախոսվող մենագրության հիմքում խարսխված են այդ ուսումնասիրությունների և միջազգային բազմաթիվ գիտաժողովներում հեղինակի զեկուցումների դրույթները<sup>3</sup>:

Թուրք, արևմտյան, խորհրդային, ժամանակակից ռուս և հայ հեղինակների՝ Ջիյա Գյոքալփին նվիրված պատկառելի գիտական գրականության

---

<sup>1</sup> Տե՛ս **Ջարևանդ**, Ի՞նչ կծրագրեն թուրքերը – Միացյալ և անկախ Թուրանիա, Երևան, 1993:

<sup>2</sup> Տե՛ս օրինակ **Safarian A.**, Ziya Gökalp on National Education, “Iran and the Caucasus”, vol. 8.2, BRILL, Leiden-Boston, 2004, pp. 219-229; *նույնի՝* On the History of Turkish Feminism, “Iran and the Caucasus”, Vol. 11.1, Brill, Leiden-Boston, 2007, pp. 141-152. Տե՛ս նաև [http://www.jiscjournalarchives.ac.uk/browse/brill/16098498\\_issues/8\\_2004.html](http://www.jiscjournalarchives.ac.uk/browse/brill/16098498_issues/8_2004.html), [http://www.jiscjournalarchives.ac.uk/browse/brill/16098498\\_issues/11\\_2007.html](http://www.jiscjournalarchives.ac.uk/browse/brill/16098498_issues/11_2007.html)

<sup>3</sup> Նշենք, որ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ Արամ Միմոնյանի և Ռուբեն Սաֆրաստյանի խմբագրությամբ հրատարակված՝ Ա. Սաֆարյանի գիրքն արդեն արժանացել է դրական գնահատականների: Տե՛ս մասնավորապես Հ. Մանուչարյանի (ՊԲՀ, 2012, թիվ 3, էջ 233-235) և Ռ. Մելքոնյանի ու Ա. Դումանյանի (Միջազգային հարաբերություններ, Հայկական աշխարհ, 2013, թիվ 6, էջ 35-36) գրախոսությունները:

մանրագնին ուսումնասիրության հիման վրա հեղինակը գրքի առաջաբանում բավական հանգամանորեն վերլուծում է «Գյոքալփագիտության» հատած ուղին, ընդգծում առավել վիճահարույց հիմնախնդիրները: Ձիյա Գյոքալփին նա ներկայացնում է իբրև «Օսմանյան մոդելի» քննադատ, քննարկում «Թյուրքականության հիմունքներում» թուրքերենի ու թուրք գրականության պատմության հիմնահարցերի՝ նրա առաջադրած մոդուսը, համակողմանի լուսաբանում կրթության ու դաստիարակության հիմնահարցերի շուրջ նրա հայացքները, մեկնաբանում թյուրքականության գաղափարախոսի՝ թուրք կանանց իրավունքներին («թուրքական ֆեմինիզմ») վերաբերող դրույթները: Հեղինակի ուշադրությունից չեն վրիպել նաև Ձիյա Գյոքալփի տնտեսագիտական հայացքները, էտատիզմի քաղաքականության և տնտեսության «թուրքացման» կապը: Մենագրության վերջաբանում հեղինակը համառոտակի ամփոփում է իր հիմնարար դրույթներն ու եզրակացությունները, մասնավորապես ընդգծում «այն ակնհայտորեն հակասական իրողությունը, որ առաջին պլան մղելով թուրքերի՝ դեռ նոր ձևավորվող ազգային ինքնագիտակցության գործոնը, Ձիյա Գյոքալփը փորձում էր այն վերագրել (ավելի ճիշտ՝ ներարկել կամ պարտադրել) թյուրքալեզու մյուս ժողովուրդներին: Միաժամանակ թյուրքականության գաղափարախոսն ակնհայտորեն ծայրահեղ անհանդուրժողականություն էր պրոպագանդում Օսմանյան կայսրության կողմից նվաճված տարածքներում ապրող բնիկ ազգերի (հույների, հայերի, ասորիների, արաբների) անհամեմատ ավելի վաղ ձևավորված ազգային ինքնագիտակցության նկատմամբ՝ «Թյուրքականության հիմունքներում» անթաքույց և վճռականորեն հայտարարելով, որ պետք է թուրք համարել բոլոր նրանց, ովքեր ասում են, որ իրենք թուրք են ու պատժել բոլոր նրանց, ովքեր կղավաճանեն «թրքությանը» (էջ 244):

Համաձայն ենք պրոֆ. Սաֆարյանի այն դիտարկմանը, որ «համաթյուրքական» արժեքների վերհանումը և տարբեր ոլորտներում «միջթյուրքական» համագործակցության հիրավի լայնամասշտաբ ծավալումը նորանկախ թյուրքալեզու պետությունների քաղաքական և մշակութային էլիտաների կողմից մեծ մասամբ ընկալվելու էին որպես հսկա հարևանների շրջապատին հարմարվելու որոշակի մեխանիզմ, սակայն «դասական պանթյուրքիզմի» քաղաքականությունն իրատեսորեն և միանշանակորեն մերժվելու էր, քանզի ուղղակիորեն հակասում էր թե՛ վերոհիշյալ պետությունների ինքնիշխանությանը և թե՛ դազախական, դրդական (կիրգիզական), ուզբեկական, թուրքմենական իրական ազգային ինքնագիտակցությանը... Այսօր դազախերենը, ուզբեկերենը, կիրգիզերենը (դրդերենը), թուրքմեներենը ոչ միայն հարուստ գրական ավանդույթներ ունեցող, այլև թե՛ դե յուրե և թե՛ դե ֆակտո ինքնիշխան երկրների սահմանադրությամբ ամրագրված պետական լեզուներ են, և նրանց բարբառ թե՛ լեզու որակելու հարցադրումն իսկ,

անշուշտ, անհեթեթ կամ վիրավորական է հնչում Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու երկրներում» (էջ 246-247):

Հիրավի անվիճարկելի է այն փաստը, որ «գյոքալփյան էթնոկենտրոն տնտեսագիտական հայեցակարգը, որը որդեգրել էին նաև քեմալականները, իրականում ծայրահեղ անհանդուրժող էր ոչ այնքան օտարերկրյա կապիտալի, որքան ազգային փոքրամասնությունները ներկայացնող գործարարների և նույնիսկ արհեստավորների նկատմամբ» (էջ 236): Ազգային-կրոնական փոքրամասնությունների և նրանցից սերած գործարարների դեմ թյուրքական այլատյաց իշխանությունների իրականացրած «արտակարգ միջոցառումները» (կոտորած, տեղահանություն, բռնագրավում, կանխամտածված ունեզրկմանը նպատակաուղղված հարկեր և այլն) հիրավի «ընթացել են տնտեսության «թյուրքացման» ծիրում, ինչն անքակտելիորեն կապված է պետականորեն կազմակերպված ցեղասպանական քաղաքականությանը» (էջ 252):

Գրախոսվող գրքում ներկայացված են նաև Զիյա Գյոքալփի հիմնարար մենագրության, տարբեր տարիների նրա գրած «ծրագրային» բանաստեղծությունների, ինչպես նաև Մուստաֆա Քեմալ Աթաթյուրքի ելույթների բնագրերի ծավալուն հատվածներն ու դրանց հայերեն թարգմանությունը, ինչը կարող է օգտակար լինել օսմանագետների, թյուրքագետների, պատմաբանների ու լրագրողների համար:

Համոզված ենք, որ պրոֆ. Սաֆարյանի մենագրությունը շահեկան ներդրում է ժամանակակից հայ թյուրքագիտության ասպարեզում, և գտնում ենք, որ հարկ է առաջիկայում այն հրատարակել նաև անգլերեն և ռուսերեն:

*ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ,  
ՔՆԱՐԻԿ ՄԻՂՉՈՅԱՆ*

---

---

*Mari Hovhannisyian, Collision of Past and Present. The Collective Memory of the Armenian Genocide and the Turkish Denial, Saarbrücken, LAP Lambert Academic Publishing, 2012, 56 p.*

*Մարի Հովհաննիսյան, Անցյալի և ներկայի բախում. Հայոց ցեղասպանության հավաքական հիշողությունը և թուրքական ժխտողականությունը, Սաարբրյուքեն, Լամբերտ ակադեմիական հրատարակչություն, 2012, 56 էջ:*

Թեպետ Հայոց ցեղասպանությանը վերաբերող հայ և այլազգի հեղինակների ուսումնասիրությունները բազմազան են և տարաբնույթ, այդուհանդերձ իրադարձության պատմության գիտական ուսումնասիրության ասպարեզում հայ մասնագետների երիտասարդ սերնդի ներկայացուցիչները ևս ունեն իրենց ներդրումը: Արդի ցեղասպանագիտության հիմնահարցերի հետազոտության տեսակետից՝ Մարի Հովհաննիսյանի<sup>1</sup> գրախոսվող ուսումնասիրությունը յուրահատուկ մարտահրավեր է Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ժխտման պետական շարունակական քաղաքականությանը և արդիական հնչեղություն ունեցող կարևոր ներդրում հիմնախնդրի քննության ասպարեզում: Հեղինակը դրսևորել է Հայոց ցեղասպանության հավաքական հիշողությանն ու թուրքական ժխտողականությանն առնչվող հիմնահարցերի նորովի գնահատման և նոր բացահայտումների կարողություններ:

Գրքույկը պատմական տարատեսակ սկզբնաղբյուրների և այլալեզու գրականության, այդ թվում ցեղասպանության՝ իբրև երևույթի, հայտնի մասնագետների աշխատությունների<sup>2</sup> քննական վերլուծության, մամուլի

---

<sup>1</sup> Մարի Հովհաննիսյանը 2006 թ. ավարտել է ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետը, 2009-2010 թթ. ուսանել Բուդապեշտի Կենտրոնական եվրոպական համալսարանի քաղաքագիտության ֆակուլտետում, իսկ 2010-2012 թթ. աշխատել ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում: Նրա գիտական հետաքրքրությունները ներառում են ցեղասպանագիտության, կոնֆլիկտոլոգիայի, ինչպես նաև ժողովրդավարության հաստատման հիմնախնդիրները հետճգնաժամային և անցումային փուլում գտնվող հասարակություններում:

<sup>2</sup> Encyclopedia of Genocide, Israel W. Charny editor in chief, vol. 1-2, California, 1999; *idem*: Innocent Denials of Known Genocides: A Further Contribution to a Psychology of Denials of Genocide, "Human Rights Review", 2000; **Hovhannisyian R.**, The Armenian Genocide Cultural and Ethical Legacies, New Brunswick, 1991; **Dadrian V.**, The History of the Armenian Genocide; Ethnic Conflicts from the Balkans to Anatolia to the Caucasus, Providence, RI & Oxford, 1995; **Akcem T.**, A Shameful Act: The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility, London, 2007; **Marutyan H.**, Iconography of Armenian Identity, The Memory of Genocide and the Karabagh Movement, vol. 1, Yerevan, 2009.



նյութերի լուսաբանման, հեղինակի իրականացրած հարցազրույցների արդյունքների վրա խարսխված ամփոփ ուսումնասիրություն է:

Մ. Հովհաննիսյանի աշխատանքին նոր որակ են հաղորդում հատկապես թուրք և հայ մտավորականների հետ Ստամբուլում, ուր նա մեկնել է Հայոց ցեղասպանության ժխտման դրդապատճառները պարզաբանելու և Թուրքիայում տեղի ունեցող գործընթացների մեջ խորամուխ լինելու նպատակով, և Երևանում ունեցած նրա հարցազրույցները:

Անդրադառնալով տարակարծությունների, անգամ անհարիր մեկնաբանությունների տեղիք տված «ցեղասպանություն» եզրույթին՝ հեղինակ հղում է մասնավորապես ամերիկացի գրող և փիլիսոփա Մ. Ա. Վորենին: Սակայն իրավական տեսանկյունից աշխատանքում առաջ քաշված հարցերն ու փաստարկները նա մեկնաբանում է ըստ 1948 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի ընդունած «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի դրույթների (էջ 9-10):

Մ. Հովհաննիսյանը հակված է Հայոց ցեղասպանության ժամանակագրական եզրերը ընդգրկել 1894-1923 թվականների սահմաններում, սակայն նրա շարադրանքում նկատելի են որոշ անհամատեղելիություններ: Հայոց ցեղասպանության տարիներին և Սումգայիթում տեղի ունեցած վայրագությունների նմանություններն ի ցույց դնելու նպատակով նա անդրադառնում է 1915 թ. Մեծ եղեռնին, թեև Հայոց ցեղասպանությունը եզերում է 1915-1923 թթ. շրջանակում, իսկ 1894-1896 թթ. հայկական կոտորածները որակում իբրև համիդյան ջարդեր (էջ 30):

Առաջադրելով մի շարք խնդիրներ՝ քննարկվող հիմնահարցն առավել ընդգրկուն և ամբողջական դարձնելու նպատակով Մ. Հովհաննիսյանն ըստ մատչելի սկզբնաղբյուրների ուսումնասիրել է Հայոց ցեղասպանության հավաքական հիշողությունը: Այս առնչությամբ ուշագրավ են նրա հետևյալ հարցադրումները. «Արդյոք անտեսո՞ւմ ենք անցյալի հաղթանակները, արդյոք վտարո՞ւմ ենք մեր ազգից անցյալի հերոսներին: Պատասխանը մեկն է՝ ոչ: Ապա ինչպե՞ս կարելի է անտեսել անցյալի չարագործությունները: Ինչպե՞ս կարող են հայերը հիշողությունից ջնջել ցեղասպանության ողբերգությունը, և ինչպե՞ս կարող են թուրքերը հայտարարել, թե կապ չունեն 20-րդ դարի սկզբին տեղի ունեցած իրադարձությունների հետ այն դեպքում, երբ այժմ ապրում են Հանրապետական Թուրքիայում: Արդյո՞ք նոր վարչակարգի հաստատմամբ նոր ազգ է ձևավորվում: Իհարկե՞՝ ոչ: Յուրաքանչյուր ազգ ազգային բնույթի և ինքնության փոփոխություններ է կրում՝ պայմանավորված ժամանակի փոփոխություններով, սակայն ներկյան անցյալի շարունակությունն է» (էջ 16):

Հեղինակը շատ լավ է գիտակցում իր յուրաքանչյուր մտքի արժեքն ու ընթերցողի վրա դրա ազդեցության նշանակությունը: Ուստի նա ոչ միայն հորդորում է վերհիշել անցյալը և հիմնավորում դրա կարևորությունը, այլև

լավատեսություն է ներշնչում ընթերցողին՝ շեշտելով, որ հիշողությունը վճռորոշ նախապայման է արդարությունը վերականգնելու, հոգեցնցման հետևանքներից ապաքինվելու, ինչպես նաև համերաշխության սահմանեզրին հասնելու համար (էջ 17):

Գիտական գրականության և հարցազրույցների արդյունքների վերլուծությունը հեղինակին հիմք են տվել եզրակացնելու, որ արտերկրի տարբեր համայնքներում ապրող հայերը միանշանակորեն չեն ընկալում Հայոց ցեղասպանությունը, ինչը նա պայմանավորում է պատմական այլևայլ իրադարձություններով, որոնց ականատեսը նրանք եղել են, ինչպես նաև այն միջավայրի ազդեցությամբ, որտեղ բնակվում են: Նրա խորին համոզմամբ՝ Հայոց ցեղասպանության հիշողությունը երբևէ չի խամրել Սփյուռքի տարանջատ համայնքներում, իսկ հաղորդակցությունն ավելի է ամրապնդել դրանց փոխհարաբերությունները:

Հիշատակելի է նաև Մ. Հովհաննիսյանի հավաստումն առ այն, որ Հայաստանում և Սփյուռքում Հայոց ցեղասպանության ընկալումները ևս զանազանվում են, քանզի այլ երկրներում բնակվող հայերի՝ ցեղասպանության հիշողության պահպանման նախադրյալները բոլորովին այլ են. նման հետևության նա հանգել է հայրենիքում և Սփյուռքում ապրող հայերի հավաքական մտածողությունների համադրմամբ: Հեղինակը կասկած իսկ չի տածում, որ Հայոց ցեղասպանության հավաքական հիշողությունը, չնայած նշված հանգամանքներին, ոչ միայն շարունակում է հարատևել, այլև եղել է հայ ժողովրդի անբաժանելի ուղեկիցը նույնիսկ այն տասնամյակներին, երբ այդ մասին արգելված էր անգամ խոսելը, առավել ևս գրելը: Բավական հատու է նրա հետևյալ եզրահանգումը. «Քանի դեռ առկա է Թուրքիայի կողմից ցեղասպանության ժխտումը, հիշողությունը կշարունակի խայթիչ ցավ պատճառել հայերին... Մեկ ու կես միլիոն հայերի նահատակության մեղքը դեռևս ժխտվում է, պատմական անարդարությունը դեռևս անպատասխան է մնացել: Կորուսյալ հայրենիքի վիշտը դեռևս կենդանի է» (27):

Ներկայացնելով և վերլուծելով Ղարաբաղյան շարժման ընթացքում Մուսգայիթում հայերի դեմ իրականացված վայրագությունները՝ Մ. Հովհաննիսյանը փաստում է, որ դրանք խթանում են Արևմտյան Հայաստանում հայերի նախնիների կրած տառապանքների մասին հուշերի շարունակականությունը: Սկզբից նեթ նա այն համոզմունքն է հայտնում, որ անցյալը վերհիշելու առումով սերտ կապ գոյություն ունի այս երկու ողբերգության միջև:

Մ. Հովհաննիսյանը հատուկ ուշադրություն է դարձնում ժխտումների տարատեսակ եղանակներին, որոնք տասնամյակներ շարունակ առկա են եղել թուրքական իրականության մեջ: Հայոց ցեղասպանության թուրքական շարունակական ժխտողականության տարբեր դրսևորումները նա ուսումնասիրում է Սթենլի Կոհենի առաջադրած տեսության շրջանակում, ըստ որի՝ գոյություն ունի ժխտողականության երեք հիմնական դրույթ՝ բառացի

(literal), մեկնական (interpretive) և առնչակից-եզրակացության հանգող (implicatory):

Հեղինակը փաստում է, որ ժխտողականության ձևերի բազմակողմանի քննությունը նպատակ ունի ոչ միայն հավաստելու անցյալում տեղի ունեցածը, այլև վերականգնելու արդարությունը և կանխելու նմանօրինակ ոճ-բազործությունների կրկնությունը: Նա նաև համոզմունք է հայտնում, որ ժխտումը փախուստ է ներկայից, իսկ անցյալի սխալներն ընդունելուն պետք է հաջորդեն նախ պատասխանատվության ստանձնումը, այնուհետև զոհերի հանդեպ կիրառված անարդարության դիմաց հատուցումները նրանց սերունդներին (էջ 29):

Հեղինակի՝ Ստամբուլում անցկացրած հարցազրույցները մեկ անգամ ևս ակնհայտ են դարձնում, որ թուրքական հասարակությունը հետևողականորեն հետամուտ է դեռևս Աբդուլ Համիդ II-ի որդեգած՝ Հայոց ցեղասպանության ժխտման քաղաքականությանը<sup>1</sup>: Հետաքրքիր է հատկապես հեղինակի հետևյալ հավաստումը. «Թուրքիա կատարած այցելությունս համընկավ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա՝ ապրիլի 24-ի հետ: Ժամանակակից Թուրքիայի պատմության մեջ առաջին անգամ ցույց էր կազմակերպվել մի խումբ թուրք և քուրդ ակտիվիստների կողմից՝ 1915 թ. զոհերի հիշատակը հարգելու նպատակով: Առաջին հայացքից թվում է, թե Թուրքիան իսկապես գտնվում է սեփական պատմությունն ընդունելու և անցյալն ուսումնասիրելու ճանապարհին, բայց եթե նկատի ունենանք Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հարգող մարդկանց թիվը և այն համեմատենք քաղաքի (Ստամբուլ) ամբողջ բնակչության թվի հետ, և եթե հաշվի առնենք այն փաստը, որ հրապարակի մյուս մասում պաստառներով և քարոզչական թռուցիկներով հավաքվել էին «դավաճաններ» գոչող ազգայնամուլները, ժխտողականության դեմ թուրքական ջանքերը ոչ այնքան խոստումնալից են թվում: «Հայերի վիշտը կիսող» ցուցարարների թիվը հասնում էր մոտավորապես 2000-ի, որոնց կեսը Ստամբուլում ապրող հայերն էին, մինչդեռ քաղաքի բնակչությունը, ըստ վերջին տվյալների, հասնում է շուրջ 13 միլիոնի (Թուրքիայի վիճակագրության ինստիտուտ)» (էջ 36):

Համադրելով թե՛ թուրքական պաշտոնական և թե՛ թուրք գիտնականների ու շարքային քաղաքացիների հայտարարությունները և քննարկելով դրանք Ս. Կոհենի առաջադրած տեսության լույսի ներքո՝ Ս. Հովհաննիսյանը եզրակացնում է, որ թուրքական լայնածավալ ժխտողականությունը պետական մակարդակով իրականացվում է հնարավոր բոլոր եղանակներով, իսկ ցեղասպանության ժխտողականության քարոզչությունը տարածված է

---

<sup>1</sup> Այդ մասին տե՛ս **Պողոսյան Վ.**, Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ), երկրորդ, բարեփոխված հրատարակություն, Երևան, 2011, էջ 171-209:

ոչ միայն Թուրքիայում, այլև նրա սահմաններից դուրս: Հավելենք, որ այլ երկրների շարքում առաջնային տեղ է զբաղեցնում ԱՄՆ-ը:

Միանգամայն իրավացի է հեղինակը, երբ նշում է. «Անցյալի ժխտումը չի ենթադրում միայն գոհերի ստորացում, այլև հանցագործներին հնարավորություն է ընձեռում միևնույն կամ մեկ այլ ժողովրդի հանդեպ իրագործել նոր կոտորածներ կամ ցեղասպանություններ... Թուրքական ժխտողականության հիմնական դրույթների ուսումնասիրությունը նախ և առաջ նպատակ ունի կանխել նմանատիպ հանցագործությունների կրկնությունը: Ցեղասպանության ժխտողականության ուսումնասիրությունն ինչ-որ առումով նշանակում է վերականգնել արդարությունը և պատասխանել անցյալին առնչվող հարցերին» (էջ 48):

Մ. Հովհաննիսյանի շարադրանքը և եզրակացությունները վկայում են նրա բանիմացության և երիտասարդ մտավորականին բնորոշ համարձակության մասին: Նա գիտական հանրության սեփականությունն է դարձրել թեպետ փոքրածավալ, սակայն ուրույն լեզվամտածողությամբ աչքի ընկնող մի ուսումնասիրություն, որը կարևոր քայլ է միջազգային հանրության կողմից հայ ժողովրդի ողբերգության ճանաչման և դատապարտման ճանապարհին:

*ԹԵՀՄԻՆԵ ՄԱՐՏՈՅԱՆ*

---

---

*Հայկ Ղազարյան, Սևրի պայմանագիրը և Վուդրո Վիլսոնի իրավաբար վճիռը Հայաստան-Թուրքիա սահմանաբաժանման վերաբերյալ: Գիրք առաջին, Սևրի 1920 թվականի պայմանագիրը և Միացյալ Անկախ Հայաստանի հռչակումը, Երևան, Էդիթ Պրինտ, 2012, 731 էջ: Գիրք երկրորդ, Վուդրո Վիլսոնի իրավաբար վճիռը Հայաստան-Թուրքիա սահմանաբաժանման վերաբերյալ, Երևան, Էդիթ Պրինտ, 2012, 731 էջ:*

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի անդամ Հայկ Ղազարյանի հերթական մեծածավալ և ինքնատիպ աշխատության գիտական արժևորումը համարում ենք կարևոր, քանզի այն վերաբերում է հայ ժողովրդի տարբեր հատվածներում մեծ հույսեր արթնացրած պատմական մի նշանակալից իրադարձության՝ Սևրի պայմանագրին և դրա իրավական հենքի վրա ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի կատարած Հայաստան-Թուրքիա սահմանաբաժանմանը: Սույն երկհատոր մենագրությունը մի շարք առանձնահատկություններով իր ուրույն տեղն ունի հայրենական պատմագրության մեջ:

Դեռևս խորհրդային իշխանության տարիներին լույս ընծայված՝ արևմտահայության պատմությանը վերաբերող պրոֆ. Ղազարյանի աշխատություններին բնորոշ էին այնպիսի հայեցակարգային մոտեցումներ, որոնք կարծես միտված էին նրբորեն շրջանցելու երկրում իշխող գաղափարական կապանքները: Հիշատակելի է արևմտահայության սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությանը նվիրված նրա մենագրությունը<sup>1</sup>, որը դրական գնահատականների արժանացավ թե՛ մայր հայրենիքում և թե՛ Սփյուռքում: Նման արձագանքներն օրինաչափ էին, քանի որ հեղինակը վերհանում էր Օսմանյան կայսրության տիրապետության տակ հեծող արևմտահայության սոցիալ-տնտեսական ծանր կացությունը հայեցակարգային այնպիսի շրջանակում, որը դարձավ XIX դարի վերջին սկիզբ առած Հայոց ցեղասպանության գործընթացի պատճառները բացահայտելու նախաշավիղը:

Այս հանգամանքը վկայում է, որ պրոֆ. Ղազարյանը տակավին խորհրդային իշխանության տարիներին իր գերագույն նպատակը համարել է արևմտահայության մեծ ողբերգության ծալքերի բացահայտումը, որի համակողմանի ուսումնասիրության համար լայն հնարավորություններ ընձեռվեցին ԽՍՀՄ փլուզումից հետո: Հետագա տասնամյակների տքնաջան աշխատանքի արդյունքում նա նախ լույս ընծայեց Հայոց ցեղասպանության

---

<sup>1</sup> Տե՛ս **Ղազարյան Հ.**, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Երևան, 1967:

պատմությանը նվիրված երկհատոր աշխատություն<sup>1</sup>, այնուհետև ձեռնարկեց, իր իսկ արտահայտությամբ, **«մեկ այլ, ոչ պակաս հանդուգն ու բարդ, առավել աշխատարար, միաժամանակ նյութական մեծ գոհողություններ պահանջող խնդրի լուծումը**: Այդ այլևս անհետաձգելի խնդիրը ցեղասպանության մասին **սկզբում մեկ, քիչ անց նաև մի քանի օտար լեզուներով աշխատությունների ստեղծումն էր»** (գ. առաջին, էջ 13) (այստեղ և այսուհետ ընդգծումները հեղինակինն են):

Հայոց ցեղասպանությանը նվիրված մենագրությունում, որի համառոտ տարբերակները լույս տեսան նաև տարբեր լեզուներով (ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, թուրքերեն), պրոֆ. Ղազարյանին հաջողվեց բացահայտել իրադարձության բուն պատճառները, նպաստել պատմական ճշմարտության վերականգնմանը, Հայաստանի Հանրապետության քաղաքական շրջանակներին ներկայացնել հայ ժողովրդի նկատմամբ իրականացված մեծ ոճրի համար Թուրքիային պատասխանատվության ենթարկելուն նպաստող անառարկելի պատմական փաստեր, ապացուցել նաև, որ օսմանահպատակ ժողովուրդների նկատմամբ իրականացված ցեղասպանությունները եղել են Օսմանյան կայսրության քաղաքականության բաղկացուցիչ մասը:

Այժմ անդրադառնանք պրոֆ. Ղազարյանի գրախոսվող մենագրության շահեկան կողմերին: Սերի պայմանագրի և Վիլսոնի իրավարար վճռի մասին շատ է գրվել: Մույն աշխատության հպանցիկ ծանոթությունը կարող է ստեղծել այնպիսի տպավորություն, թե հեղինակն իբր շեղվել է հիմնախնդրից, որը պետք է վերաբերեր միայն Սերի պայմանագրի և Վիլսոնի իրավարար վճռի լուսաբանմանն ու վերլուծությանը: Մակայն իրականում նա իր առջև դրված խնդիրը մեկնաբանել է ավելի լայն և ընդգրկուն հենքի վրա՝ ներկայացնելով պատմաքաղաքական այն բոլոր իրադարձությունները, որոնց տրամաբանական ավարտը դարձավ Սերի պայմանագիրը: Ուստի զարմանալի չէ, որ մենագրությունը սկսվում է Հայոց ցեղասպանությանը նվիրված գլխով, ուր հեղինակը բերում է այդ իրողությունը հավաստող՝ հիմնականում օտար, այդ թվում և թուրք հեղինակների աշխատություններից վկայություններ և հանգում անհերքելի եզրակացության. **«Օտար սկզբնաղբյուրների, իրենց իսկ թուրք գործիչների վկայություններն աներկբա են դարձնում, որ հայ ժողովրդի կոտորածները եղել են զանգվածայնորեն, կազմակերպվել և իրողության են վերածվել պետական մակարդակով»** (գ. առաջին, էջ 73):

Մեծ եղեռնի իրականացումը պետական քաղաքականության մակարդակով պրոֆ. Ղազարյանն ապացուցում է լրացուցիչ փաստերով, որոնք մեկ անգամ ևս վկայում են, որ այն ծրագրել էին երիտթուրք պարագլուխները: Ցեղասպանության ժամանակագրական եզրերի սահմանման վիճահարույց խնդրում ողջունելի է հեղինակի հայեցակարգային մոտեցումը: Դիտելով Հա-

---

<sup>1</sup> **Ղազարյան Հ.**, Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, հ. 1-2, Երևան, 2005: Երկրորդ, վերամշակված հրատարակություն, Երևան, 2007:

յոց ցեղասպանությունն իբրև շարունակական գործընթաց՝ նա տրամաբանական կապ է արձանագրում 1890-ական թվականներին իրադարձության սկզբնավորման և 1922 թ. ավարտի միջև: Այդ մասին է վկայում գրքի ենթավերնագրերը մեկը՝ «Ցեղասպանությունը շարունակեցին և «ավարտին հասցրեցին» Մուստաֆա Բեմալն ու Քյազիմ Կարաբեքիրը» (գ. առաջին, էջ 120):

Հարկ ենք համարում շեշտել, որ պրոֆ. Ղազարյանը Հայոց ցեղասպանության պատճառներն ու ընթացքը համառոտակի ներկայացնելիս պետական մակարդակով իրականացված այդ ոճրագործության համար մեղավոր է համարում նաև «քաղաքակիրթ մարդկության» մի մասին, քանի որ այն տեղի է ունեցել նրա «ոչ միայն լուռ համաձայնությամբ, այլև օգնությամբ ու խրախուսմամբ» (գ. առաջին, էջ 120):

Ընթերցողը կարող է հավաստի տեղեկություններ քաղել, թե Թուրքիան Հայաստանի գույգ հատվածներից որքան տարածքներ է բռնակցել մինչև 1921 թ., և թե ինչպիսի ահռելի նյութական ու հոգևոր կորուստներ է կրել հայ ժողովուրդը: Այս առումով հեղինակի հաշվարկները լուրջ կովան են քաղաքական և դատաիրավական գործընթացներում Թուրքիայի նկատմամբ հայ ժողովրդի պահանջների օրինականությունն ապացուցելու տեսանկյունից:

Պրոֆ. Ղազարյանը հետամուտ է նաև Ջեմալ փաշայի առեղծվածի բացահայտմանը, որի մասին հաճախ իշխել է այն թյուր մտայնությունը, ինչը երբեմն նկատելի է նաև մեր օրերում, թե իբր Հայոց ցեղասպանության համար նա որևէ պատասխանատվություն չի կրել: Առաջին հայացքից թվում է, թե սա այնքան կարևոր չէ, սակայն իրականում խնդիրը բոլորովին այլ է: Նորահայտ փաստերի օգտագործմամբ հեղինակը Թալեաթին, Էնվերին և Ջեմալին դնում է միննույն հարթության վրա և մեկ անգամ ևս ապացուցում այն իրողությունը, որ Հայոց ցեղասպանությունը պետական քաղաքականության արդյունք էր, իսկ երիտթուրքական «եռապետության» անդամների միջև չկային դիրքորոշումների տարբերություններ: Միաժամանակ նա փաստում է, որ բանակցությունները Ջեմալի հետ թե՛ Ասիական Թուրքիայի և թե՛ հայերի դրության բարելավման վերաբերյալ կրել են սոսկ պատրանքային բնույթ:

Ջեմալի դիրքորոշման հստակեցումից հետո հեղինակը վերլուծության է ենթարկում Սայքս-Պիկոյի համաձայնագիրը, որով դաշնակիցները պետք է իրականացնեին Ասիական Թուրքիայի մասնատումը: Դրվատելի է, որ անդրադարձը համաձայնագրին հեղինակը կատարում է արխիվային փաստաթղթերի մատուցման գուզորդությամբ՝ հօգուտ իր տեսակետների հիմնավորման, որոնք են. ա) դաշնակիցները Թուրքիայի մասնատումը կատարել են ոչ ի նպաստ հայության բաղձանքների իրականացման: Հայության համար իբրև թե վերապահված Կիլիկիան, Սեբաստիայի, Խարբերդի և Դիարբեքիրի մեծ մասն անցնում էին Ֆրանսիային; բ) Խորհրդային Ռուսաստանը հուղարկավորեց ոչ միայն Հայաստանի անկախության, այլև ինքնավարության վերաբերյալ հայության գուրգուրած հույսերը:

Մայքս-Պիկոյի համաձայնագրից մինչև Մուդրոսի զինադադարը տեղի ունեցած դիվանագիտական գործընթացների ծալքերի պարզաբանումից հետո պրոֆ. Ղազարյանն անցնում է այդ զինադադարի հողվածներում արձանագրված՝ հայկական պետականության վերականգնման համար իրավական հիմքերի որոնումներին: Մասնավորապես 24-րդ հողվածի առնչությամբ նա հայտնում է հետևյալ կարծիքը. «Զինադադարի որոշման 24-րդ հողվածը նախատեսում էր, որ եթե Հայկական վիլայեթներից **որևէ մեկում «անկարգություններ ծագեին»,** Դաշնակիցներն իրենց իրավունք են վերապահում **դրանց վերագրավումը**» (գ. առաջին, էջ 227-228): Զինադադարն իրավական փաստաթուղթ է, իսկ այս հողվածն ամրագրում էր «հայկական վիլայեթներ» հասկացությունը, որն իրավական տեսանկյունից շատ կարևոր է, քանզի փաստում է դրանց հայկական, այլ ոչ թե հայաբնակ լինելու փաստը: Մա ևս, մեր կարծիքով, Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության մարտավարության համար կարևոր կռվան է: Ցանկանում ենք անդրադառնալ նաև 11-րդ հողվածի վերաբերյալ հեղինակի մեկնաբանությանը, այն է՝ «թուրքերը պարտավորվում էին դուրս գալ Անդրկովկասում իրենց բռնագավթած երկրամասերից և դրանք հանձնել Դաշնակիցներին: Այդ նշանակում էր, որ չեղյալ էին համարվում **Բրեստի և Բաթումի** թալանչիական պայմանագրերը, և լայն դարպաս էր բացվում հայանպաստ նոր դաշնագրերի ստորագրման համար» (գ. առաջին, էջ 228):

Իսկապես, Մուդրոսի զինադադարի հիշյալ հողվածները վկայում են այն մասին, որ Հայկական պետականության ճանաչման և սահմանների ընդլայնման համար նոր հնարավորություններ էին ընձեռվում, որոնք ըստ էության ըմբռնելու՝ հայկական գույգ պատվիրակությունների գործադրած ջանքերին է անդրադառնում հեղինակը: Մինչ այդ նա բացահայտում է Հայոց Ազգային և Հայաստանի Հանրապետության պատվիրակությունների միջև առկա հակասությունները, որոնք հիմնականում պայմանավորված էին այն բանով, որ Պոդոս Նուբարը տարանջատում էր Արևմտյան Հայաստանի խնդիրը Հայաստանի Հանրապետությունից: Դա, անտարակույս, ճիշտ մոտեցում չէր, առավել ևս եթե հաշվի առնենք, որ միայն նա չէր ներկայացնում արևմտահայ քաղաքական միտքը. Հայաստանի Հանրապետությունում գտնվող արևմտահայության բազում ներկայացուցիչներ համակրանքով ընդունեցին 1919 թ. մայիսի 28-ի Միացյալ Հայաստանի միավորման ակտը, որը նպաստեց արևելահայության և արևմտահայության միջև հոգեբանական անջրպետի վերացմանը: Անդրադառնալով այդ հակասություններին՝ պրոֆ. Ղազարյանն իրավամբ նկատում է, որ «պատվիրակությունների վերջնական միացումը անիրական չէր թվում, քանի որ բազմաթիվ դեպքերում **Ավետիս Ահարոնյանը և Պոդոս Նուբարն արդեն միացել էին՝ հանդես գալով հանուն ամբողջական Հայաստանի**» (էջ 238):

Իրոք, չնայած հայ-հայկական անպտուղ բանակցություններին, որոնցով Պոդոս Նուբարը ցանկանում էր ապահովել արտաքին աշխարհում իր



դիրքորոշումների առաջնահերթությունը, նաև Ավ. Ահարոնյանը միջազգային հանրությանը ներկայացրած պահանջների խնդրում փաստորեն հանդես եկան միասնական դիրքերից: Միացյալ պատվիրակությունների դիվանագիտական գործունեությունը պրոֆ. Ղազարյանը ներկայացնում է աշխարհաքաղաքական գործընթացներին զուգահեռ, լուսաբանում այն բոլոր քաղաքական, պատմական և դիվանագիտական քայլերը, որոնք ծրագրում և իրականացնում էին հաղթանակած դաշնակիցները, բացահայտում այն ճշմարտությունը, թե ի վերջո ինչ էին նրանք նախատեսել հայության համար, և ինչու էին հապաղում այդ ծրագրերի լուծումները:

Սերի պայմանագիրը, որի տարբեր հոդվածներով ինչ-որ չափով կարծես թե բավարարվում էին հայության բաղձանքները, գրախոսվող մենագրության մեջ լուսաբանվում է տարբեր տեսանկյուններից՝ սկսած այն ստորագրելուն նախորդած քաղաքական քայլերից, արարողակարգից մինչև հայերի հետագա ճակատագրին առնչվող հոդվածների վերլուծությունը: Այս ամենին զուգահեռ՝ կարևոր է նաև ժամանակի նշանավոր պետական-քաղաքական այրերի, մասնավորապես Վիլսոնի մասին տեղեկությունների հաղորդումը, քանզի շատերն առ այսօր հստակ պատկերացում չունեն նրա կյանքի և գործունեության մասին: Անկեղծ էր արդյոք Վիլսոնը Հայաստանի մանդատն անվերապահորեն ստանձնելու իր ջանքերում, չէ՞ր սեթևեթում նա՝ իբրև հայասեր հանդես գալով, մանավանդ այն պայմաններում, երբ 1920 թ. հունիսի 1-ին ԱՄՆ կոնգրեսը մերժեց Հայաստանի Հանրապետության մանդատը, այն պայմաններում, երբ ընդդեմ դաշնակիցների արդեն ձևավորվում էր բոլշևիկյան-քեմալական դաշինքը: Հարուստ փաստերի վերլուծության հիման վրա հեղինակն այն համոզմունքն է հայտնում, որ Վիլսոնն իրոք անկեղծ էր: Իրականությանն ամբողջությամբ համապատասխանում է նաև նրա առաջադրած հայեցակարգը, որն ամրագրված է ութերորդ գլխի վերնագրում. «Անկախ Հայաստանը ողջակիզվեց քեմալական Թուրքիայի և լենինյան Ռուսաստանի գոհասեղանի վրա» (գ. առաջին, էջ 441):

Մենագրության երկրորդ գիրքն առավել համոզիչ է դարձնում հեղինակի այն դիտարկումները, որոնք վերաբերում են Վիլսոնի իրավարար վճռին, որը նրան հնարավորություն էր ընձեռում կյանքի կոչելու Սերի պայմանագիրը: Ըստ հեղինակի՝ նրա վճիռը հայ ժողովրդին տվեց իրավական հիմք՝ Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստան կերտելու համար:

Հատկանշական է, որ պրոֆ. Ղազարյանը մենագրության թե՛ առաջին և թե՛ երկրորդ գրքերում հաճախակի է թվացյալ շեղումներ կատարում արձարձվող բուն հիմնախնդրից, բայց իրականում դրանք ծառայում են քննարկվող իրադարձությունների պատճառահետևանքային կապի ամբողջացմանը: Այդ շեղումները, կարծում ենք, հարկ է պայմանավորել հեղինակի առջև դրված խնդրի արդիական հնչեղությամբ, պատմության (մանավանդ ուսումնասիրվող խռովահույզ և փոթորկալի ժամանակաշրջանի) ընթացքից

ճիշտ դասեր քաղելու, ավելի լայն տեղեկություններ հաղորդելու և դրանք ուսանելի դարձնելու ձգտումով:

Դա ակնհայտ է դառնում «Հայ ժողովուրդը ցեղասպանության դարադարձին ընդառաջ» վերտառությամբ հեղինակի էսթիզներից, ուր նա կրկին անդրադառնում է Հայոց ցեղասպանությանը, նորանոր փաստեր բերում թուրքերին բնորոշ հատկանիշների բացահայտման համար: Այնուհետև նա իրավացիորեն նկատում է, որ կորցրած հայրենիքի հանդեպ ցավը Հայաստանի երեք հանրապետությունների գոյության ընթացքում անմար է մնացել մասնավորապես հայ մտավորականների սրտերում: Տարբերություններն իրենց զգալ են տվել հայրենիքի ազատագրման համար նախընտրելի ռազմավարություններ և մարտավարություններ որդեգրելու դեպքում: Այս տեսակետից նա քննադատում է խորհրդահայ պատմագրության մի շարք հայեցակարգեր, որոնք ինչ-որ տեղ մերձենում էին թուրքական տեսակետներին: Միաժամանակ նա առանձնացնում է նաև նրանց, ովքեր արել են հնարավորը՝ հանուն պատմական ճշմարտության: Միանգամայն անառարկելի է նրա հետևյալ ընդհանրացումը. «Քսաներոդդ հարյուրամյակի **60-80-ական թվականները** հայ գրականության, արվեստի, հասարակական-քաղաքական մտքի, հատկապես **պատմագրության զարգացման այնպիսի տասնամյակներ էին, որոնք չէինք ունեցել նախորդ, դժբախտաբար չունեցանք նաև վերջին քսանամյակում**» (գ. երկրորդ, էջ 30): Հիրավի, ԽՍՀՄ փլուզումը չպետք է պատճառ դառնար նրա գոյության ընթացքում ստեղծված հոգևոր արժեքների փլուզման կամ դրանց նկատմամբ ժխտողականության, ինչը, ցավոք, տեղի ունեցավ և շարունակվում է առ այսօր մասնավորապես պատմագիտության ասպարեզում:

Հեղինակն անդրադառնում է նաև երիտթուրքերի դատավարության մանրամասներին, որոնք ցայսօր շատերին հասանելի չեն, այնուհետև մի քանի էջ նվիրում Վիլսոնի իրավարար վճռին:

Հատորի առաջին բաժնում ընթերցողը կծանոթանա Վիլսոնի կյանքի և գործունեության հետաքրքիր դրվագներին, որոնք կարևոր նշանակություն ունեն նրա դիմանկարի ամբողջացման համար: Այնտեղ ուրվագծված է Վիլսոնի՝ իբրև քաղաքագետի, մարդասերի, գիտնականի և հայասերի կերպարը: Պրոֆ. Ղազարյանը բացահայտում է նաև ԱՄՆ նախագահի քաղաքական ընկալումներում Հայաստանի կացութաձևի աստիճանական ամբողջացման բարեշրջումը, մանդատն ստանձնելու ուղղությամբ նրա գործադրած ջանքերը և ցավոք, ի հեճուկս Վիլսոնի ու հայության, կոնգրեսի կողմից այն մերժելու մանրամասները: Ընդունելի է նրա հետևյալ եզրահանգումը. **«Հայկական մանդատի ընդունումը փաստորեն մերժեց ԱՄՆ-ի կոնգրեսը, սակայն այն հիմք դարձավ Սևրի պայմանագրի 88-90-րդ հոդվածներին և «վիլսոնյան Հայաստանի» սահմանագծման համար**» (գ. երկրորդ, էջ 176):

Հեղինակը բացահայտում է նաև հայ քաղաքական ղեկավարների դիվանագիտական ընկալումները, ճշգրտում նրանց ձեռնարկած քայլերը, մանրա-

մասնում դրանց արդյունավետության համար գործադրված ջանքերը Սան-Ռեմոյից մինչև Սևր: Գրքում, բնականաբար, կարևորագույն տեղ է հատկացվել Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանի, Հայաստանի՝ դեպի Սև ծով ելք ունենալու և նրան սահմանակից թուրքական տարածքների ապառազմականացման վերաբերյալ Վիլսոնի հրապարակած որոշմանը, որն ամբողջությամբ զետեղված է գրքում:

Կցանկանալինք արժևորել պրոֆ. Ղազարյանի մենագրության ոչ միայն պատմագիտական, այլև սկզբնաղբյուրային նշանակությունը, քանզի այն ներառում է բազմապիսի փաստաթղթեր, որոնք զետեղված են թե՛ բնագրում և թե՛ հավելվածներում՝ կոչված նպաստելու ուսումնասիրվող հիմնախնդիրների ըմբռնմանը, հեղինակի մշակած պատմագիտական հայեցակարգերի արժանահավատության հիմնավորմանը, ինչպես նաև ամբողջական պատկերացումների ձևավորմանը: Բավական է նշել Սևրի պայմանագրի բնագրի ռուսերեն, ֆրանսերեն և հայերեն տարբերակների հրատարակումն առաջին հատորի առանձին բաժնում:

Աշխատությանը համարժեք են երկրորդ հատորի երկրորդ և երրորդ բաժիններում ամփոփված բազմապիսի վավերագրերը: Դրանցից հատկապես կարևորում ենք Վիլսոնի «14 կետերը»՝ անգլերենով, ռուսերենով և հայերենով, Հովհաննես Քաջազունու խիստ բացառիկ հուշագիրը Հայաստանի Հանրապետության մասին՝ ներկայացված ԱՄՆ կոնգրեսին և Վիլսոնին (անգլերենով և հայերենով), որը, հիրավի, գիտական շրջանառության մեջ դրվելու կարոտ փաստաթուղթ է, Հայաստանի մանդատի մասին Վիլսոնի նամակը կոնգրեսին (անգլերենով, ռուսերենով և հայերենով) և տարաբնույթ բազում այլ վավերագրեր ու որոշումներ:

Չորրորդ բաժնում անգլերենով և թուրքերենով Սևրի պայմանագրի բնագրի հրապարակումը համայն քաղաքական աշխարհին և Թուրքիայի Հանրապետությանը ներկայացնում է այն ճշմարտությունը, ըստ որի՝ մեծ տերությունները ճանաչել են հայ ժողովրդի պատմական իրավունքն Արևմտյան Հայաստանի նկատմամբ: Դա կյանքի կոչելու ռազմավարությունն ու մարտավարությունը ճշգրտելը Հայաստանի Հանրապետության կարևորագույն խնդիրը պետք է լինի: Մեր կարծիքով, նպատակահարմար կլիներ սույն պայմանագրի տարբեր լեզուներով տարբերակները ժողովել մեկ բաժնում:

Գրքի արժանիքներն այսքանով չեն սահմանափակվում: Ավելացնենք, որ պրոֆ. Հայկ Ղազարյանի հիմնարար մենագրությունը միաժամանակ գնահատելի է պատմաաշխարհագրական տեղեկությունների մատուցման, քաղաքական և դիվանագիտական գործընթացների բացահայտման տեսանկյուններից: Վերջապես, հարկ է չըջանցել հայրենասիրական այն վարակիչ շունչը, որով համակված է մենագրությունը, և որը ետին պլան է մղում հեղինակի որոշ պատմագիտական հայեցակարգեր երբեմն չկիսելու ներքին ցանկությունը:

*ԱՇՆՏ ՆԵՐՄԻՍՅԱՆ*

---

---

**Rolf Hosfeld (Hg.):** *Johannes Lepsius – Eine deutsche Ausnahme. Der Völkermord an den Armeniern, Humanitarismus und Menschenrechte*, Göttingen, Wallstein Verlag, 2013, 284 S.

**Ռոլֆ Հոսֆելդ** (Խմբագիր), *Յոհաննէս Լէփսիուս – միակ գերմանացի բացառությունը: Հայոց ցեղասպանությունը, հումանիտարիզմը և մարդու իրավունքները, Գյոթինգեն, «Վալշտայն» հրատարակչություն, 2013, 284 էջ:*

Meine persönliche Annäherung an Johannes Lepsius hat eine lange Vorgeschichte. Als ich mich vor mehr als vierzig Jahren mit den Stellungnahmen aus der evangelischen Kirche und der Theologie zum Ausbruch des Ersten Weltkriegs beschäftigte, stieß ich nicht nur auf die Kriegspredigten, die den Satz über den Tod Jesu aus dem Johannesevangelium missbrauchten: „Niemand hat größere Liebe als die, dass er sein Leben lässt für seine Freude.“ Sondern ich stieß auch auf die Gewissensqualen liberaler Theologen, die sich zwar in den ersten Kriegswochen der allgemeinen Kriegsbegeisterung kaum entziehen konnten, aber doch bald merkten, dass die Preisgabe allgemeiner humanitärer Maßstäbe und die Inanspruchnahme Gottes für die jeweils eigene Sache – „Gott mit uns“ auf den Koppelschlössern – zu einem „Bankrott des Christentums“ führten.

Es war Martin Rade, der Herausgeber der Christlichen Welt, der die Unvereinbarkeit von Kriegstheologie und christlichem Glauben auf diese einprägsame Formel brachte. Doch von Johannes Lepsius, dem Weggefährten von Rade, wusste ich damals noch kaum etwas. Dass er die Spannung zwischen einem universalistischen humanitären Ethos und partikularistischem Nationalismus noch auf ganz andere Weise als Martin Rade existentiell erlebte, war mir unbekannt. Ja, die „armenische Frage“ war mir damals nicht einmal in groben Umrissen geläufig. Dass die armenische apostolische Kirche, im Jahr 301, also vor der konstantinischen Wende, gegründet, die älteste christliche Staatskirche auf der ganzen Welt ist, hatte ich im Studium gelernt. Doch der Armeniengenozid gehörte in meiner Schulzeit noch weniger zum Bildungskanon an westdeutschen Schulen als der Völkermord am europäischen Judentum.

Im Jahr 1986 war ich als Mitglied der Theologischen Fakultät in Heidelberg Zeuge eines denkwürdigen Besuchs. Ganz gegen die universitären Üblichkeiten nahmen zwei Gäste an einer unserer Fakultätssitzungen teil. Es handelte sich um den Heidelberger Professor der Soziologie Mario Rainer Lepsius und den jungen Hallenser Dozenten der Theologie Hermann Goltz. Dass ein ostdeutscher Theologe in Heidelberg auftauchte, war damals alles andere als selbstverständlich, dass ein Soziologe ihn einführte, erst recht. Rainer Lepsius hatte dafür familiäre Gründe. Er wollte uns auf die Forschungen von Hermann Goltz über Johannes Lepsius aufmerksam machen und uns vor Augen stellen, welche außerordentliche Rolle Johannes Lepsius in seiner Zeit gespielt hatte. Nicht nur von seinen Ansätzen zu einer Orientmission war die Rede, sondern vor allem von seiner Reaktion auf den zweifachen Mord an den armenischen Christen in der Endphase des Osmanischen Reichs: den hami-

dischen Massakern seit 1895 und dem jungtürkischen Genozid seit 1915. In ersten Umrissen erfuhren wir, wie hoch der persönliche Einsatz von Johannes Lepsius war und wie sehr er sein persönliches Leben geprägt, ja gezeichnet hatte. Wenn ich mich recht erinnere, trat noch nicht in den Blick, welche Bedeutung die Sachverständigenaussage von Johannes Lepsius in dem Prozess gegen den armenischen Studenten Soghomon Tehlirjan für die weitere Entwicklung des humanitären Völkerrechts spielen sollte. Aber das war damals den allermeisten noch unbekannter als der Armeniengenozid als solcher oder das Attentat, das Tehlirjan am 15. März 1921 auf einen der Haupttäter, nämlich Talaat Pascha, verübt hatte.

Noch einmal dauerte es fast zehn Jahre, bis ich die Große Weinmeisterstraße besuchte und dabei nicht nur jenes Generalswitwenhaus kennen lernte, in dem eine evangelische Grundschule entstehen sollte, sondern auch wenige Schritte weiter vor dem Haus Große Weinmeisterstraße 45 stand, in das Johannes Lepsius 1908 eingezogen war. Es befand sich, als ich es das erste Mal sah, in einem bejammernswerten Zustand.

Wie sich die Zeiten ändern! Inzwischen sind es nicht mehr wie 1986, zwei, sondern viele Menschen im Umkreis des Fördervereins Lepsiushaus Potsdam, die mit beharrlicher Energie die Erinnerung an Johannes Lepsius und die Aufgabe des deutsch-armenischen Dialogs wieder lebendig gemacht haben. Beides brauchte einen Ort und hat diesen im wieder hergestellten Lepsius-Haus gefunden, in dem die Arbeit 2010 beginnen konnte. Diese Arbeit geschieht in besonders dankbarer Erinnerung an Hermann Goltz, der über 25 Jahre deren *spiritus rector* gewesen ist und dessen Archiv und Bibliothek den Kern der Bestände des Lepsius-Hauses bilden. Aber auch andere sind zu nennen, ganz besonders Hans-Ulrich Schulz, der in der ganzen bisherigen Geschichte den Förderverein geleitet, und Peter Leinemann, der dessen Geschäfte geführt hat. Beide scheiden in wenigen Tagen aus diesen Aufgaben; deshalb liegt mir sehr daran, Ihnen aus dem heutigen Anlass für allen Einsatz im Förderverein von Herzen zu danken. Dieser Dank gilt ebenso Rolf Hosfeld, dem Leiter des Lepsius-Hauses und Herausgeber des Buches, dessen Vorstellung uns heute zusammenführt. Aber ich sprach von einem großen Kreis von Menschen, denen dieser Dank gilt, auch wenn sie jetzt nicht namentlich genannt werden können.

Wie sich die Zeiten ändern! Auf der Weltkonferenz Armenien 2000 sagte der frühere deutsche Außenminister Hans-Dietrich Genscher, Johannes Lepsius „wäre würdig gewesen, mit dem Friedensnobelpreis ausgezeichnet zu werden“. In der Tat: wer die Liste der Empfänger dieses Preises von 1901, der erstmaligen Verleihung, bis 1926, dem Todesjahr von Johannes Lepsius, durchschaut, findet diesen Vorschlag nicht so vermessen, wie er vielleicht zunächst klingen mag. Der erste deutsche Träger dieses Preises war übrigens, im Todesjahr von Lepsius und gemeinsam mit dem französischen Außenminister Aristide Briand, Gustav Stresemann. Wie sich die Zeiten ändern: Inzwischen ist der Armenien-Genozid sogar zum Thema einer Bundestagsresolution geworden, die am 16. Juni 2005 von allen Fraktionen des deutschen Parlaments verabschiedet wurde und in der sich unter anderem der Satz findet: „Besonders das Werk von Dr. Johannes Lepsius, der energisch und wirksam für das Überleben des armenischen Volkes gekämpft hat, soll dem Vergessen entrissen werden.“

Und noch einmal: Wie sich die Zeiten ändern! Hermann Goltz schrieb in einer biographischen Skizze über Johannes Lepsius: „Die christlich-humanitäre Wirkung dieses Mannes und seiner Mitarbeiter braucht den Vergleich mit der des Theologen

Albert Schweitzer nicht zu scheuen, ebenso wenig stehen die Stärke seines politisch-ethischen Widerstandes und die Weite seines theologischen Horizontes der des Theologen Dietrich Bonhoeffer nach.“

Das Buch, das ich Ihnen heute vorstellen darf, ist in solchen Vergleichen weit zurückhaltender – und das aus guten Gründen. Der gerade im Wallstein-Verlag erschienene Sammelband geht auf eine wissenschaftliche Konferenz zurück, die vor einem Jahr im Lepsius-Haus stattgefunden hat. Als jemand, der mit der Entstehungsgeschichte von Sammelbänden eigene Erfahrungen hat, will ich Rolf Hosfeld zu allererst dazu gratulieren, dass er die Beiträge in so kurzer Zeit und in einer durchweg beeindruckenden Qualität hat zum Druck befördern können. Die Konferenz, die den Ausgangspunkt dieses Buches bildet, dokumentiert einen Prozess, der zu begrüßen ist, nämlich die Historisierung der Gestalt und des Erbes von Johannes Lepsius. Sein Leben und seine Leistung werden nach keinen anderen Methoden als denen der wissenschaftlichen Forschung und der erreichbaren historischen Objektivität behandelt. Er wird politisch wie theologisch in den Kontext seiner eigenen Zeit hineingestellt und aus deren Voraussetzungen heraus verstanden. Offene Fragen, innere Spannungen, misslungene Initiativen und ungelöste Probleme kommen in aller wünschenswerten Deutlichkeit zur Sprache. Dadurch differenziert sich unser Bild dieser Persönlichkeit; es wird aber auch klarer.

Elf Autoren haben an diesem Buch mitgewirkt. Neben dem Herausgeber Rolf Hosfeld, der mit zwei Beiträgen vertreten ist, sind dies M. Rainer Lepsius, Hans-Lukas Kieser, Manfred Aschke, ebenfalls mit zwei Beiträgen, Manfred Gailus, Ulrich Sieg, Margaret Lavinia Anderson, Axel Meissner, Christian Schneebeck, Aschot Hayruni und Gabriel Goltz. Wer mit der neueren Literatur zu Johannes Lepsius vertraut ist, weiß, dass damit ein sehr erheblicher Teil der wichtigen Autoren zu diesem Thema vertreten sind. Sie reichen von Rainer M. Lepsius, den man vielleicht als den Nestor der Autoren bezeichnen darf und der in diesem Band Johannes Lepsius' politische Ansichten in großer Klarheit skizziert, bis zu dem Studenten der Geschichtswissenschaft Christian Schneebeck, der die Armenierhilfe in dem Spannungsfeld zwischen nationalen Interessen und internationaler Kooperation beschreibt.

Natürlich kann ich den Inhalt dieses Buches nicht in all seinen Facetten beschreiben. Ich soll Ihnen ja auch die Lektüre nicht ersparen, sondern sie auf den Inhalt des Buchs neugierig machen. Deshalb beschränke ich mich auf vier Aspekte: die Einheit der Biographie, die politischen Ansichten, den Ort von Lepsius innerhalb der intellektuellen Auseinandersetzung mit dem Armenienthema und schließlich die Theologie.

*Zunächst die Einheit der Biographie.* Bücher sind leichter zu erinnern als Taten. Aber für Lepsius besteht zwischen beidem ein unlöslicher Zusammenhang. Er war ein Mann der Tat, bevor er zum Autor wurde. Er hatte als Pfarrer im mansfeldischen Friesdorf nach orientalischem Vorbild eine Teppichfabrik gegründet, was ihm ermöglichte, auf die ersten Nachrichten über die Massaker an christlichen Minderheiten im Osmanischen Reich als Teppichhändler dorthin zu reisen und sich ein eigenes Bild zu machen. Seine unmittelbare Reaktion bestand darin, ein groß geplantes und auch in seinen schließlich erheblich kleineren Dimensionen noch eindrucksvolles Hilfswerk in Gang zu setzen, zu dessen praktischen Voraussetzungen unter anderem die Verlegung der genannten Teppichfabrik von Friesdorf nach Urfa gehörte. Das Bemühen um tätige Hilfe stand im Vordergrund. Dafür musste die Unterstützung vieler Menschen gewonnen werden. Dem diente schon die erste große

Armenienveröffentlichung, die Anklageschrift „Armenien und Europa“ aus dem Jahr 1896. Mit der Theologie verhält es sich ja so, dass sie nicht einfach im Wort bleiben kann; denn das Wort ist, wie wir Christen bekennen, Fleisch geworden. Das erfordert einen inneren Zusammenhang von Wort und Tat, von Theologie und Biographie. Dafür ist Johannes Lepsius wirklich ein herausragendes Beispiel. Das wird in einer Reihe von Beiträgen in vorzüglicher und detaillierter Weise veranschaulicht. Ich nenne beispielhaft die Beiträge von Axel Meissner über das Armenienhilfswerk und von Aschut Hayruni über Johannes Lepsius' armenische Verbindungen.

*Sodann die politischen Ansichten.* Als Kind seiner Zeit war Lepsius durch das nationale Denken geprägt. Immer wieder schlägt sein Interesse an der Rolle Deutschlands durch. Ja er sieht einen inneren Zusammenhang zwischen dem Erfolg der deutschen Politik, auch im Nahen Osten, und dem Erfolg der christlichen Mission, an dem er ein starkes Interesse hat. Doch zugleich bricht sich bei Lepsius intensiver als bei den meisten anderen – und zwar auf Grund eigener Erfahrungen und eigener Beteiligung – die internationale Solidarität Bahn. Die Erschütterungen der Jahre 1896 und 1915 bewirken jeweils Schübe in der Anerkennung humanitärer Kriterien von universaler Geltung vor den Ansprüchen nationaler Machtpolitik. Insbesondere 1915 ist das für Lepsius mit einem großen Risiko verbunden. Dadurch, dass er gegen das Verbot der Reichsregierung und ohne die Unterstützung seines Kuratoriums seinen „Bericht über die Lage des Armenischen Volkes in der Türkei“ auf eigene Faust in zwanzigtausend Exemplaren verbreitet, wird er in Deutschland zur *persona non grata*, weicht – auch aus gesundheitlichen Gründen – nach Holland ins Exil aus und ist fortan, da ohne regelmäßige Einkünfte, auf die Unterstützung von Exilarmeniern angewiesen.

Wenn man Johannes Lepsius und Dietrich Bonhoeffer miteinander vergleichen will, dann im Blick auf die existentiellen Folgen, die ihre ebenso persönliche wie politische Entscheidung nach sich zog. Allerdings führte sie bei Lepsius ins zeitweilige Exil in Holland, bei Bonhoeffer dagegen zur Rückkehr aus dem ihm angebotenen Exil in den USA. Während Lepsius sich in den Kriegsjahren wegen seines Verstoßes gegen das politisch verhängte Verbot einer Äußerung zur armenischen Frage nicht in Deutschland halten konnte, schlug Bonhoeffer die Möglichkeit einer sicheren Zuflucht in den USA aus und kehrte im Juli 1939, in der klaren Erwartung des bevorstehenden Krieges nach Deutschland zurück. Lepsius musste sich trotz des Kriegs Bündnisses zwischen Deutschland und dem Osmanischen Reich zur Verletzung des Völkerrechts klar äußern, wenn er ein glaubwürdiger Anwalt der Menschenrechte bleiben wollte. Bonhoeffer fühlte sich dazu verpflichtet, im Krieg bei seinen Landsleuten zu sein, wenn er nach dem Krieg einen Beitrag zu einem Neuaufbau in Gerechtigkeit und Frieden leisten wollte.

Der Vorrang eines universalistischen Humanitarismus ist im einen wie im anderen Fall existentiell erstritten. Und dies bei Lepsius eine Generation und bei Bonhoeffer noch immer ein Jahrzehnt vor der Verabschiedung der Allgemeinen Erklärung der Menschenrechte von 1948. Beide Theologen erarbeiteten sich ihre grundsätzliche Haltung in diesen Fragen zu einer Zeit, zu der die Stichworte Menschenwürde und Menschenrechte in keinem theologischen Nachschlagewerk und in keinem Lehrbuch der Ethik vorkamen. Die Spannung, die ich mit diesem knappen Vergleich zwischen Bonhoeffer und Lepsius beschreibe, wird im Blick auf Lepsius in Beiträgen von Rolf Hosfeld, Rainer Lepsius oder Manfred Aschke eindrücklich und einleuchtend analysiert.

*Lepsius in der intellektuellen Geschichte seiner Zeit.* Sehr erhellend sind die Beiträge, die sich auf die intellektuellen Stellungnahmen zu den Ereignissen des Ersten Weltkriegs und speziell zum Armenienkonflikt beziehen und Lepsius dazu in Beziehung setzen. Sein Konflikt mit Friedrich Naumann ist dafür ebenso interessant wie der Vergleich seiner Armenien-Stellungnahmen mit denen von Armin Wegner, Ernst Jäckh und Henry Morgenthau. Margaret Lavinia Anderson trägt eine schon furios zu nennende Entzauberung dieser so oft gepriesenen Autoren und Akteure vor. Manfred Gailus gibt einen Einblick in die Haltung der deutschen Protestanten im Ersten Weltkrieg, Ulrich Sieg behandelt die Haltung deutscher Intellektueller in dieser Zeit zu den Armenienereignissen; auch diese Vergleiche führen dazu, dass der Respekt vor der Haltung von Lepsius nicht schwächer wird – ganz im Gegenteil.

*Schließlich die Theologie.* Hans-Lukas Kieser bahnt, wie schon in früheren Arbeiten, einen neuen Weg zum Verständnis des theologischen Ansatzes, indem er Johannes Lepsius in einer „protestantischen Internationale“ seiner Zeit verortet. Zu deren Kennzeichen gehört die Hoffnung darauf, dass das Reich Gottes sich irdisch und politisch Bahn bricht. Kieser macht ferner deutlich, dass diese Hoffnung auf eigene Weise mit dem Nahen Osten, der Ursprungsregion des christlichen Glaubens verbunden ist, und verwendet dafür den Ausdruck „Nahostmillenarismus“. Aus heutiger Sicht hat diese Position etwas Befremdliches; doch beeindruckend ist die theologische Intensität, mit der Lepsius sie entwickelt und an ihr festhält. Sie zeigt sich insbesondere in der Weigerung, einer in seiner Zeit verbreiteten Haltung zu folgen, die einen Dualismus zwischen der Eigengesetzlichkeit des Politischen und der deshalb politisch unbrauchbaren Bergpredigtethik konstatiert. Lepsius sucht nach Möglichkeiten der Verbindung; worum es dabei geht, veranschaulicht Manfred Aschke durch einen aus der Staatsrechtslehre entlehnten Begriff, nämlich den Begriff der praktischen Konkordanz.

*Eine Bemerkung zum Schluss:* Für mich bündelt sich nach der Lektüre dieses Buchs die Leistung von Johannes Lepsius in der eigentümlichen Rolle, die er im Prozess gegen Solomon Thelirjan spielte. Lepsius' eindrucksvolle Schilderung des Armenien-Genozids trug dazu bei, dass das Gericht den Angeklagten wegen zeitweiliger Unzurechnungsfähigkeit freisprach. Er war, so legte dieses Urteil nahe, von dem Geschehen so erschüttert, dass er die Kontrolle über sich selbst verlor. So problematisch das Urteil war, so folgenreich war es auch, wie man von Rolf Hosfeld und Manfred Aschke erfahren kann. Zu den Teilnehmern an dieser Gerichtsverhandlung gehörte der junge Robert Kempner, der in den Nürnberger Kriegsverbrecherprozessen als stellvertretender Chefankläger tätig war; es zieht sich eine Spur von der Gerichtsverhandlung im Juli 1921 zu den Nürnberger Prozessen nach dem Zweiten Weltkrieg. Zu denen aber, die sich später ausdrücklich auf diesen Prozess beriefen, gehört der polnische Jurist jüdischer Herkunft Raphael Lemkin, der den Begriff des Genozids geprägt und die Konvention der Vereinten Nationen zur Verhütung und Bestrafung des Genozids von 1948 vorbereitet hat.

Dafür, dass Johannes Lepsius mit dem Friedens-Nobelpreis ausgezeichnet wird, ist es etwas spät. Bis er so bekannt wird wie Albert Schweitzer oder Dietrich Bonhoeffer, wird es noch etwas dauern. Aber dieses Buch leistet einen unschätzbaren Beitrag dazu, dass Johannes Lepsius besser verstanden werden kann. Denn nicht nur darauf kommt es an, dass Lepsius bekannt, sondern auch, dass er verstanden wird. Deshalb beglückwünsche ich den Herausgeber und die Autoren sehr herzlich zu diesem Buch, dem ich eine gute Resonanz wünsche. Und ich unterstreiche dessen Titel. Ja, Johannes Lepsius war eine deutsche Ausnahme.

WOLFGANG HUBER



---

---

*Феофанис Малкидис, История греков Понта, Александруполис, Союз Репатриотов Области Эврос, 2010, 112 с.*

**Թեոֆանիս Մակլիդիս**, *Պոնտոսի հույների պատմությունը, Ալեքսանդրոպոլիս, Էվրոսի մարզի հայրենադարձների միություն, 2010, 112 էջ:*

Հունաստանի Կավալայի Տեխնոլոգիական ինստիտուտի պրոֆեսոր, Ցեղասպանագետների միջազգային ընկերակցության անդամ Թեոֆանիս Մակլիդիսի գիտական աշխատությունների ցանկը վերջերս համալրվեց նոր և կարևոր ուսումնասիրությամբ՝ «Պոնտոսի հույների պատմությունը» մենագրությամբ, որը 2010 թ. Ալեքսանդրոպոլիսում լույս է տեսել ոչ միայն հունարեն, այլև ռուսերեն թարգմանությամբ:

Գրքի առաջաբանում Թ. Մակլիդիսը նշում է, որ իր առջև խնդիր է դրել բարձրաձայնել Պոնտոսի հույների ցեղասպանության խնդիրը և նպաստել դրան ճանաչում տալուն: Ջուզահեռներ անցկացնելով հույների և հրեաների ցեղասպանությունների միջև՝ նա փաստում է, որ Շոան դատապարտվեց շնորհիվ Նյուրնբերգյան դատավարության, մինչդեռ 20-րդ դարի առաջին ցեղասպանություններից մեկը ցայսօր մնացել է անպատիժ: Նա հետազոտել է Պոնտոսի հույների ողբերգությունը՝ հանուն պատմական ճշմարտության վերականգնման:

Թ. Մակլիդիսը համառոտակի անդրադառնում է Պոնտոսի հույների անցած ուղուն՝ ի սկզբանե մինչև նրանց՝ XV դարում օսմանյան տիրապետության տակ ընկնելու ժամանակաշրջանը: Հեղինակը փորձում է նախ ցույց տալ, թե ովքեր են պոնտոսցի հույները և ինչ պատմական ճանապարհ են հատել, իսկ այնուհետև բացահայտում է նրանց ներդրումը ոչ միայն հույն ժողովրդի, այլև Օսմանյան կայսրության պատմության և մշակույթի մեջ:

Առհասարակ, հունական սկզբնաղբյուրներում Պոնտոս է անվանվում Սև ծովի հարավային ափին ձգվող այն տարածքը, որը նախկին օսմանյան վարչական միավորներից ընդգրկում էր Տրապիզոնի վիլայեթը (ներառյալ Ջանիքի սանջակը), Կաստամոնուի վիլայեթի Սինոպի սանջակը, ինչպես նաև Մեքաստիայի վիլայեթի Ամասիայի, Շապին Գարահիսարի և Թոքատի սանջակները: Բացի դրանից՝ այս տարածքն ուներ նաև թեմական բաժանում: Պոնտական վեց միտրոպոլիտություններն էին՝ Տրապիզոնը, Ռոդոպոլիսը (Ջևիզլիկը), Խալդիան (Գյումուշխանեն), Կոլոնիան (Նիկոպոլիս - Շ. Գարահիսարը), Նեոկեսարիան (Նիքսարը) և Ամասիան:

Գրախոսվող ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում պատկերացում կազմելու, թե որքան նշանակալից է եղել պոնտոսցի հույների

դերն Օսմանյան կայսրության հյուսիսարևելյան շրջաններում, և որքան բարձր՝ տնտեսական և մշակութային զարգացման մակարդակը: Թ. Մալկիդիսը վկայակոչում է Պոնտոսում հույների հոգևոր և կրթական զգալի ներկայությանն առնչվող ուշագրավ վիճակագրական տվյալներ:

Գրքում հանգամանակից ներկայացված է Պոնտոսի հույների տեղահանությունների և կոտորածների ընթացքը: Ինչպես մի շարք հույն պատմաբաններ, Թ. Մալկիդիսը ևս Օսմանյան կայսրությունում հակահունական արշավը բաժանում է մի քանի փուլերի: Ըստ նրա՝ առաջին փուլն ընդգրկում է 1908-1914 թթ., երկրորդը՝ 1915-1918 թթ., իսկ երրորդը՝ 1919-1923 թթ. ժամանակահատվածները: Գիտական շրջանառության մեջ դնելով մի շարք նորահայտ սկզբնաղբյուրներ և փաստեր՝ հեղինակը հիմնովին բացահայտում է յուրաքանչյուր փուլում պոնտոսցի հույների նկատմամբ երիտթուրքերի և քեմալականների՝ պետական մակարդակով իրականացրած ցեղասպան քաղաքականության էությունը: Միաժամանակ, նա չի շրջանցում նաև ցեղասպանության տարիներին հույների իսլամացման ու թուրքացման իրողությունը և հիմնավորապես ապացուցում է, որ նրանց հավատափոխության գործընթացը մեծ ծավալներ է ստացել հատկապես Պոնտոսում: Տասնյակ հազարավոր հույներ դարձել են մուսուլման, ինչը բնորոշ էր նաև Հայոց ցեղասպանության գործընթացին<sup>1</sup>: Հետաքրքիր է հեղինակի կողմից Պոնտոսի հավատափոխ հույների շրջանում վերջին տասնամյակներում սկիզբ առած՝ ուղղափառ կրոնին վերադառնալու և հունական ինքնության վերականգնման խիստ հետաքրքիր երևույթի ուսումնասիրությունը:

Պատմական ընդարձակ ծանուցմամբ Թ. Մալկիդիսը լուսաբանում է ռուս-հունական հարաբերությունների, ցեղասպանության հետևանքով Ռուսաստան և նախկին խորհրդային հանրապետություններ հույների գաղթի հիմնահարցերը:

Խիստ այժմեական են մասնավորապես հույների զանգվածային տեղահանությունների և կոտորածների առնչությամբ օսմանյան տարբեր իշխանությունների քաղաքականությունը՝ որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն բնորոշելու անհրաժեշտությանը վերաբերող հեղինակի անդրադարձները: Դիտարկելով այն «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի համատեքստում՝ Թ. Մալկիդիսը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ պոնտոսցի հույների նկատմամբ երիտթուրքերի և քեմալականների կիրառած քաղաքականությունը հարկ է բնութագրել իբրև ցեղասպանություն: Իրավական հարթության շրջանակում հիմնահարցի վերլուծությունից գատ՝ հեղինակը քննարկում է նաև Թուրքիայի ժխտողական քաղաքականությունը և հույների ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին առնչվող հիմնախնդիրները:

---

<sup>1</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս **Մելքոնյան Ռ.**, Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. ընթացքը և հետևանքները, Երևան, 2010:

Այնուամենայնիվ, գրախոսվող հետաքրքիր և կարևոր աշխատությունը գերծ չէ մասնակի թերություններից: Նախ նշենք, որ Թ. Մալկիդիսն այն հույն պատմաբաններից է, ով հույների ցեղասպանությունը համարում է իբրև միասնական գործընթաց: Լինելով այս իրատեսական մոտեցման կողմնակիցը՝ նա իրավամբ ձեռնպահ է մնում Պոնտոսում, Փոքր Ասիայի մյուս տարածաշրջաններում և Արևելյան Թրակիայում բնակված հույների կոտորածներն իբրև առանձին ցեղասպանություններ որակելուց: Այդուհանդերձ, գրախոսվող մենագրությունում հետևողականորեն չի արտացոլվել Պոնտոսի հույների կոտորածը՝ հույն ժողովրդի ցեղասպանության ընդհանուր համատեքստում ընդգրկելու միտումը: Բացի դրանից, սեղմ ծավալի շրջանակում հեղինակը շրջանառության մեջ է դրել շատ հարուստ փաստական նյութեր: Այս պայմաններում գրքի որոշ հատվածներ կարելի էր ավելի հանգամանորեն և հիմնավոր շարադրել, ինչն ավելի մեծ հստակություն կսահմաներ քննարկվող հիմնահարցի ուսումնասիրության ասպարեզում: Մեր կարծիքով, գիրքն ունի նաև մեթոդաբանական բնույթի որոշ թերություններ. մասնավորապես վեցերորդ գլխում, որտեղ շատ ավելի տեղ է հատկացված մինչև ցեղասպանությունը Ռուսաստանի տարածքում բնակություն հաստատած հույներին և ռուս-հունական հարաբերություններին, քան հետցեղասպանական ժամանակաշրջանում նրանց կացությանը և ճակատագրին:

Հարկ ենք համարում նաև նշել, որ գրքի ռուսերեն թարգմանության մեջ առկա են թերություններ: Երբեմն սպրդում են ոչ միայն լեզվական սխալներ, այլև շեղումներ բնագրից: Բերենք մեկ օրինակ. հեղինակի օգտագործած «ազգայնամուլական քեմալական շարժում»<sup>1</sup> արտահայտությունը թարգմանված է «նացիստական քեմալական շարժում» (էջ 23) (թարգմանիչը, անտարակույս, շփոթել է ռուսերեն «националистическое» և «нацистское» բառերը):

Ինքնին հասկանալի է, որ մասնավոր բնույթ կրող նշված թերություններն ամեննին չեն նսեմացնում աշխատության գիտական նշանակությունը: Թ. Մալկիդիսը երկար տարիներ հետազոտել է այս թեման, իսկ սույն գրքում առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրել բազմաթիվ նորահայտ և կարևոր փաստեր: Չնայած այն հանգամանքին, որ հույն պատմաբաններն այս թեմային նվիրել են շատ հաջողված ուսումնասիրություններ, այնուամենայնիվ նրա մենագրությունն իր հարցադրումներով և գիտական նորությով արժեքավոր ներդրում է ոչ միայն Պոնտոսի պատմության ուսումնասիրության, այլև հունական ցեղասպանագիտության մեջ առհասարակ:

*ԳԵՎՈՐԳ ՎԱՐԴԱՆՅԱՆ*

---

<sup>1</sup> Հմմտ. “...il Movimento nazionalista kemalista”. Տե՛ս **Malkidis T.**, Il genocidio dei greci, Atene, 2011, p. 63.

---

---

*Акрам Айлисли, Каменные сны. Роман-реквием. С азербайджанского. Перевод автора под редакцией М. Гусейнзаде // «Дружба народов», М., 2012, N 12, с. 13-69.*

**Աքրամ Այլիսլի, Քարե երագներ: Վեպ-ռեքվիեմ: Աղբբեջաներենից թարգմանությունը հեղինակի՝ Ս. Հուսեյնզադեի խմբագրությամբ, «Դրուժբա նարողով», Մոսկվա, 2012, թիվ 12, էջ 13-69:**

Աղբբեջանցի անվանի գրող Աքրամ Այլիսլիի «Քարե երագներ» վեպը կարճ ժամանակում լայն և միաժամանակ տրամագծորեն հակընդդեմ արձագանքների արժանացավ հատկապես Հայաստանում և Աղբբեջանում<sup>1</sup>: Կասկածից վեր է, որ դրա պատճառը հայկական խնդիրների արժարծումն է. հեղինակը նկարագրում է 1980-ական թվականների վերջին Աղբբեջանում տեղի ունեցած հայկական ջարդերը և հասարակական-քաղաքական կյանքում ծավալված հակահայկական հիստերիան: Ինչ խոսք, Աղբբեջանում տիրող ամբողջատիրական վարչակարգի, ավելի ստույգ՝ բռնապետության և ազգայնամոլության պայմաններում սույն վեպի հրատարակումը խիստ համարձակ և խիզախ քայլ էր:

Ա. Այլիսլին դեռևս Խորհրդային Աղբբեջանում լայն ճանաչման արժանացած ամենահայտնի գրողներից է: Նա աղբբեջանցի գրողների ավագ սերնդի ներկայացուցիչն է, ծնվել է 1937 թ., Աղբբեջանի անկախության տարիներին արժանացել բազմաթիվ բարձրագույն պարգևների, շքանշանների և կոչումների, այդ թվում՝ Աղբբեջանի ժողովրդական գրողի, մշակույթի վաստակավոր գործչի: Նրա գրքերը թարգմանվել են թե՛ նախկին ԽՍՀՄ ժողովուրդների և թե՛ եվրոպական բազմաթիվ լեզուներով:

Անվիճելի է, որ Աղբբեջանում գեղարվեստական գրականությունը ևս քաղաքականացված է, և ազատ ստեղծագործող մտքին փոխարինել են պետական պատվերներով իրականացվող գեղծարարությունները, ազգայնամոլական թեմաները, ազգամիջյան թշնամանքի հրահրումը և քարոզը: Ուստի միանգամայն օրինաչափ է, որ նման պայմաններում այդ կաղապարները խախտող ցանկացած գրող պետք է դառնար իշխանությունների և հասարակության գերակշռող մասի թիրախը: Այդպես եղավ Ա. Այլիսլիի պարագայում, երբ վեպի հրատարակումից հետո նրա նկատմամբ Աղբբեջանում սկսվեց լայնածավալ հալածանքի արշավ. նրա հասցեին տեղացին

---

<sup>1</sup> Տե՛ս նաև վեպի հայերեն թարգմանությունը. **Այլիսլի Ա.**, Քարակերտ երագներ, վեպ-ռեքվիեմ, ռուսերենից թարգմանությունը Հակոբ Սողոմոնյանի և Լևոն Գալստյանի, Երևան, 2013:

բացահայտ սպառնալիքներ, միմյանց հաջորդեցին ազգայնական բողոքի ելույթներ, նրա գրքերի հրատարակային հրկիզումներ, կոչումներից զրկում և այլն:

«Քարե երազները», որը հեղինակը համարում է վեպ-ռեքվիեմ, վաղուց արդեն ապացուցման կարիք չունեցող պատմական ճշմարտության արտացոլումն է: Այն բավականին հետաքրքիր կառուցվածք ունի. գրողը պատմում է նաև 20-րդ դարի սկզբին Ագուլիսում տեղի ունեցած հայկական կոտորածների մասին և զուգահեռներ անցկացնում դրանց և 1980-ականների վերջին Սումգայիթի, Բաքվի հայերի ջարդերի, հակահայկական գործողությունների միջև: Հեղինակը հնարավորություն է ընձեռում ադրբեջանցու շուրթերից լսելու և ընկալելու այդ ժամանակաշրջանում երկրում տիրող ներքին բարոյահոգեբանական իրավիճակի առանձնահատկությունները, հայերի հանդեպ արմատացող ազգայնամոլական թշնամանքը:

Վեպի հերոսները հիմնականում արվեստի ոլորտի գործիչներ են, մտավորականներ, որոնց գործունեությունը և մտորումները ներկայացվում են ադրբեջանցի ազգայնամոլների գործողությունների, պետական պաշտոնյաների պահվածքի, հայերի գույքի թալանի հաշվին նոր հարստացող պետական վերնախավի ձևավորման համատեքստում: Կարելի է ասել, որ վեպում առանցքային տեղ է հատկացված պատմական Ագուլիսին<sup>1</sup>. գրողը շարունակ փաստեր է բերում Ագուլիսում հայկական ներկայության, մշակույթի, եկեղեցիների մասին, բայց դրանից գատ` նաև կարծես գործող կերպարի հատկանիշներով է օժտում նախկինում հայաբնակ այդ տարածքը:

Վեպի գլխավոր հերոսն Ադրբեջանում բավական մեծ հարգանք վայելող դերասան Մադայ Մադիխլին է: Մահացու ծեծի ենթարկվելուց հետո նա հայտնվում է հիվանդանոցում միայն այն պատճառով, որ փորձել է սատարել մի խեղճ ու անպաշտպան հայի: Վեպում նկարագրվող իրադարձությունների զգալի մասի ընթացքում գլխավոր հերոսը գտնվում է անգիտակից վիճակում և տեսնում ներկայի ու անցյալի պատկերներ, «ճամփորդում» ժամանակների միջև: Բազմաթիվ գրողների օգտագործած այս մեթոդն Ա. Այլիսլիի մոտ բավական հաջող է ստացվել և թույլ տվել նրան մերձեցնելու իրականն ու երևակայականն անջրպետող սահմանները, պատկերել գլխավոր հերոսի` խորհրդանշաններով լի յուրահատուկ ներաշխարհը: Գրողն այսպես է սկսում հերոսի կյանքի ուշագնացության ժամանակաշրջանի նկարագրությունը. «Արտիստը հենց իր այդ սեփական աշխարհում էր հայտնվել այն պահից, երբ կորցրել էր գիտակցությունը» (էջ 30): Վեպն ինչ-որ չափով կառուցված է նաև Մադիխլիի հոգեբանական խնդիրների վերհանման, նրա ապրած ճգնաժամի վերլուծության հիման վրա: Գլխավոր հերոսի հոգեբանական վիճակը պատկերող հետաքրքրական դրվագներից է այն, որ նա

---

<sup>1</sup> Գրողը ծնունդով Ագուլիսից է, որն ադրբեջանցիներն աղավաղված անվանվում են Այլիս. դրանով է պայմանավորված նրա Այլիսլի ազգանունը, այն է` այլիսցի (ագուլիսցի):

օրեր շարունակ գնում է կայարան, որպեսզի դիմավորի և ճանապարհի երևան-Բաքու գնացքը, որը որոշակի խորհրդանիշ է:

Ուշագրավ են նաև մտավորականի մտորումներն իր ժողովրդի գործած մեղքերի և դրանց համար ապաշխարելու վերաբերյալ: Ընդ որում, այդ ամենն ավելի տպավորիչ դարձնելու նպատակով գրողն ընտրել է չափազանցության, գրոտեսկային մեթոդը: Այսպես, սոււմգայիթյան ջարդերից հետո Սադիխլին լրջորեն խորհրդածել է Էջմիածին գնալու, քրիստոնեություն ընդունելու և իր ժողովրդի գործած մեղքերի համար Ամենայն Հայոց Կաթողիկոսից թողություն հայցելու մասին: Նկարագրության գրոտեսկային մեթոդին հետամուտ գրողը փաստում է, որ, չբավարարվելով այսքանով, գլխավոր հերոսը ցանկություն է հայտնել նաև դառնալու հոգևորական-ճգնավոր և աղոթքներով Աստծուց ներում հայցելու՝ հայերի նկատմամբ մուսուլմանների իրականացրած վայրագությունների համար: Կրկին միահյուսելով իրականի ու երևակայականի սահմանները՝ գրողը պատկերում է հերոսի հոգեվիճակը՝ նշելով մասնավորապես, որ նա չի կարողանում ըմբռնել, թե երբ է իր մոտ առաջացել Էջմիածին գնալու ցանկությունը՝ քնած ժամանակ, թե իրականում: Դա է հավաստում նաև այն, որ հիվանդանոցում գտնվելով անգիտակից վիճակում՝ նա երբեմն արտաբերել է հնչյուններ, որոնք հիշեցնում էին Էջմիածին անվան աղավաղված տարբերակները:

Վեպում հանդիպում ենք նաև այն մտքին, որ պատմական ճշմարտությունների մասին բարձրաձայնումը, համամարդկային չարիքների դատապարտումը բխում են ոչ թե հայերի, այլ հենց իրենց՝ աղբբեջանցիների շահերից: Այդ հենքի վրա է մեկնաբանվում գլխավոր հերոսի մերժողական պահվածքը հակահայկական հիստերիայի առնչությամբ: Սակայն հարկ է նկատել, որ այստեղ քողարկված է սույն վեպը գրելու շարժառիթը. ի դեմս գլխավոր հերոսի դերում հանդես եկող մտավորականի՝ Ա. Այլիսլին հավանաբար մարմնավորել է իրեն:

Վեպի խորհրդանշական կերպարներից է նաև Սադիխլիի աները՝ հոգեբույժ Աբասալիևը, որը ծագումով Ագուլիսից է: Հենց նրա միջոցով է հեղինակը վառ կերպով ներկայացնում, թե ինչպիսին է եղել հին Ագուլիսը, ինչպիսին է այն այսօր, ինչ տեղ ու դեր են այնտեղ ունեցել հայերը, և ինչ է փոխվել նրանց կոտորածից և տեղահանումներից հետո: Նկարագրելով 20-րդ դարի սկզբում Ագուլիսի հայերի ջարդին առնչվող դեպքեր՝ հեղինակը թանձրացնում է գեղարվեստական շեշտադրումները և Աբասալիևի շուրթերով պատմում, որ կոտորված հայերի տներում բնակվում են հոգիներ, որոնք հանգիստ չեն տալիս դրանք զավթածներին և նրանց սերունդներին: Ավելին՝ այդ ամենին հաղորդելով փոքր-ինչ առասպելական երանգ՝ գրողը վեպը դարձնում է մի կողմից ավելի գեղարվեստական և գրավիչ, մյուս կողմից ավելի է միահյուսում իրականի ու երևակայականի սահմանները: Աբասալիևը մասնավորապես նշում է, որ «հայկական տներ զավթած յուրաքնայուր

այլիսյան ընտանիքում կան հոգեկան հիվանդներ» (էջ 36), և թվարկում կոտորված հայերի տներում բնակվող այն աղբբեջանցիների ընտանիքները, որոնցում իսպառ բացակայում է հոգեկան անդորրը: Վեպի հերոսները դա համարում են Աստծո պատիժ՝ ի պատասխան դարասկզբի ոճրագործությունների: Դրանով գրողն ակնարկում է, որ եթե դրանց հետևանքներն իրենց զգալ են տալիս նաև շուրջ 100 տարի անց, ապա 1980-ական թվականների վերջի ոճիրները ևս չեն կարող անպատիժ մնալ. աղբբեջանական ընտանիքներում լինելու են նոր հոգեկան խեղումներ, և ծագելու են տարատեսակ խնդիրներ:

Աբասալինն ընդարձակ մեջբերումներ է անում «Ձաքարիա Ագուլեցու օրագրությունից», որտեղ բազում փաստեր կան հայոց պատմության, հայերի նկատմամբ իրականացված կոտորածների մասին, և իր ընթերցումներն ամփոփում է հետևյալ կերպ. «Մրանք գալիս են և սպանում, նրանք գալիս են և սպանում: Եթե բռնությամբ սպանված յուրաքանչյուր հայի համար գեթ մեկ մոմ վառեին, ապա այդ մոմերի ցուլքը լուսնի լույսից ավելի վառ կլիներ» (էջ 65):

Վեպի հիշարժան հերոսներից է նաև Սադիխլիի ընկերը՝ դերասան Նուվարիշ Քարաբախլին, որը նույնպես դասվում է Աղբբեջանում հակահայկական հիստերիան սարսափով ընդունած արվեստագետների շարքը: Ավելի համառոտ նկարագրելով Քարաբախլիի հոգեկան ապրումները՝ գրողն այնուհետև որոշ ժամանակ չի անդրադառնում նրան, իսկ ավելի ուշ այլ հերոսների երկխոսությունից պարզվում է, որ նա ինքնասպան է եղել: Նման մոտեցումն ընթերցողին հնարավորություն է ընձեռում մտորելու և եզրակացությունների հանգելու, սակայն գերիշխում է այն մտայնությունը, որ արվեստագետին ինքնասպանության է դրդել երկրում տիրող բարոյահոգեբանական անհանդուրժելի մթնոլորտը:

Նկարագրություններից և ներքին մենախոսություններից, «մտքերի հոսքից» գատ՝ Ա. Այլիսլին վեպում զգալի տեղ է հատկացնում նաև հերոսների երկխոսությանը և այդ միջոցով վարպետորեն ուրվագծում Աղբբեջանում ձևավորված և արմատավորված հակահայկական մթնոլորտը: Այսպես, հերոսներից մեկը խոստովանում է. «Փորձիր որևէ մեկին հայ անվանել, և վերջ: Անմիջապես կոտնահարեն, կտրորեն՝ ինչպես վայրի գազանները: Կմասնատեն, և ոչ ոք չի համարձակվի անգամ մոտենալ» (էջ 14):

Ուշագրավ է նաև Սադիխլիի և նրա կնոջ՝ Ազադայի զրույցը, որի ընթացքում սումգայիթյան ողբերգության առնչությամբ վերջինս ամուսնուն ասում է. «Դա կազմակերպվել էր ՊԱԿ-ի կամ, հավանաբար, իշխանության՝ այժմ տարբեր հանցախմբերի մասնատված մնացորդների կողմից: Ես երբեք չեմ հավատա, Սադայ, որ առանց իրական կազմակերպչի աղբբեջանցիները կարող էին դիմել նման խելացնոր վայրագության» (էջ 47):

Մեկ այլ հերոս՝ Մոսկվայից Բաքու տեղափոխված բժիշկ Ֆարիդ Ֆարգանին, մահամերձ Սադիխլիին վիրահատելուց դեռևս 10-15 օր առաջ վիրահատել էր 14-15 տարեկան մի հայ աղջնակի, որը հրաշքով էր փրկվել մահվան ճիրաններից: Մարդաշատ մետրոյում մի քանի աղբբեջանցի կանայք հարձակվել էին նրա վրա և ականատեսների աչքի առջև դաժանաբար ծեծի ենթարկել: Ի դեպ, համանման, սակայն ավելի վայրագ դեպքի ականատեսն է դարձել նաև Սադիխլին, որի ներկայությամբ մի հայ աղջկա վրա կայարանում բենզին են լցրել և հրկիզել: Այս դեպքից հետո նա հոգեբանական խորն ընկճախտ է ապրել:

Ֆարգանին Բաքվում շատ տարօրինակ երևույթների ականատեսն է դառնում, որոնցով և պայմանավորված էր կրոնական ենթատեքստ ունեցող՝ հայերի նկատմամբ առկա թշնամական վերաբերմունքը: Անտարակույս հետաքրքիր են հերոսի մտքերը. «Բժիշկը հատկապես ապշած էր հայերի հանդեպ քաղաքի մուսուլման բնակչության դրսևորած դաժանությունից, հնարավոր է նաև այն պատճառով, որ նման դաժանություն հայերի կողմից նա անձամբ երբեք չէր տեսել» (էջ 25):

Վեպի մեկ այլ փաստական կողմն առնչվում է այդ տարիներին հայերի գույքի կողոպուտին և դրա յուրացմամբ հարստացողներին. ընդ որում՝ նման անձինք կային աղբբեջանական հասարակության տարբեր խավերում՝ թե՛ շարքային քաղաքացիների և թե՛ պաշտոնյաների թվում: Օրինակ՝ Ա. Այլիսլին գրում է մի պետական պաշտոնյայի մասին, որը տիրացել է թատրոնի հայ աշխատակցուհու տանը՝ նրան պարզապես ցած նետելով բարձրահարկ շենքի լուսամուտից և դա ներկայացրել որպես ինքնասպանություն: Այս դրվագի նկարագրությանը հետևում է վեպի հերոսի դատողությունը, որը լավագույնս պատկերացում է տալիս այդ ժամանակշրջանում Աղբբեջանում տիրող մթնոլորտի մասին. «Այսօր արդեն ժամանակներն են այդպիսին: Ամեն օր թեկուզ հարյուր հայի ցած նետիր պատշգամբից» (էջ 19):

Նկարագրվող իրադարձություններն ավարտվում են 1990 թ. հունվարին, երբ գիտակցության չգալով՝ հիվանդանոցում վախճանվում է վեպի գլխավոր հերոս Սադայ Սադիխլին: Հեղինակը վեպն ավարտում է մի խորիմաստ նախադասությամբ, որը գալիք պատերազմների, բռնությունների մասին ակնարկ-կանխագուշակում է. «Եվ աղավնիները, որոնք գիշերում էին Ագուլիսի եկեղեցիներում, դեռևս հանգիստ քնել էին և տեսնում էին խաղաղ երազներ» (էջ 68): Այստեղ ևս նկատելի է վեպի վերնագրին առնչվող բառախաղ-խորհրդանիշ՝ քարե երազներ-խաղաղ երազներ:

Ամփոփելով կարող ենք եզրակացնել, որ «Քարե երազները», փաստորեն, փաստագեղարվեստական վեպ է, որի հեղինակը չի խուսափում հաճախակի և անվարան դիմելու խորհրդանշանների կիրառման եղանակին: Նկատենք նաև, որ գրքում տեսանելի են ներկայումս գերիշխող գրական ուղղությանը՝ պոստմոդեռնիզմին, հատուկ երանգներ: Հեղինակը երբեմն մեծ տեղ է



հատկացնում ուղղակի կամ երկխոսությունների միջոցով նկարագրություններին, ժամանակային անտեղի անցումներին, որոնք որոշ հատվածներում թուլացնում են դիպաշարի ռիթմը: Նրա անուրանալի արժանիքներից է ադրբեջանական հասարակության մեջ տեղի ունեցող գործընթացների բացահայտումը. մասնավորապես մի կողմից ազգայնամոլական տրամադրություններ կրող և դրանց նկատմամբ դրականորեն տրամադրված մեծամասնության դիմագծի ուրվագծումը, մյուս կողմից՝ մտավորականների աննշան խմբի դիրքորոշման պարզաբանումը, որը հազվադեպ (ինչպես գլխավոր հերոսի պարագայում է) իր բողոքի ձայնն է բարձրացնում մարդասպանությունների, ռասիզմի և ազգայնամոլության դեմ:

Վեպի փաստական հենքը թույլ է տալիս հավաստել, որ նկարագրվող դեպքերի գերակշռող մասի անմիջական ականատեսը դարձած հեղինակն այդ իրադարձություններից շուրջ երկու տասնամյակ անց դրանք ընթերցողին է ներկայացնում գեղարվեստական վարպետությամբ: Սա ադրբեջանցի մտավորականի սխրանքն է, որը, երկար ժամանակ լինելով կաշկանդված, այլևս ի գորու չէ հանդուրժելու կեղծիքը: Ա. Այլիսլիի դիրքորոշումը ցույց է տալիս, որ ադրբեջանական հակահայկական քաղաքականությունը գոնե սակավաթիվ մտավորականների կողմից Ադրբեջանում, բարեբախտաբար, «հավուր պատշաճի» չի ընկալվում: Իհարկե հեղինակը թույլ է տվել որոշ պատմական անճշտություններ, բայց նրա ստեղծագործությունն անտարակույս ունի ոչ միայն գեղարվեստական, այլև հասարակական-քաղաքական մեծ նշանակություն, և այն հարկ է անվարան համարել լռության ու կեղծիքի պատնեշը սասանելուն ուղղված առաջին քայլերից մեկը:

Սույն գրախոսությունը ցանկանում ենք ավարտել՝ մեջբերելով «Դրուժբա նարոդով» ամսագրի խմբագրականի եզրակացությունը. «Ի՞նչ անի գրողը, որը չի կարողանում ո՛չ լռել, ո՛չ ձայնն իջեցնել: Անի այն, ինչ անում է ատելությանը դեմ հանդիման ելած Աքրամ Այլիսլին»: Այս հռետորական հարցն ու դրան հաջորդող կոչը խիստ արդիական են հնչում Ադրբեջանում տիրող ամբողջատիրական բռնապետության պարագայում:

*ՌՈՒԲԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ,  
ԴԻԱՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ*

«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ» ԹԵՄԱՆ ԵՊՀ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ  
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 2009-2013 ԹԹ.  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների կենտրոնի հիման վրա ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Միմոնյանի գլխավորությամբ 2008 թ. հիմնադրվեց ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը (այսուհետև՝ ՀՀԻ), որն ընդգրկում է մեկ կենտրոն, երկու լաբորատորիա և վեց բաժին՝ «Աղբբեջանագիտության հայկական կենտրոն», «Աղբբյուրագիտության բաժին», «Բ. Հարությունյանի անվան Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության լաբորատորիա», «Հայ-օսմանական առնչությունների բաժին», «Հնագիտական հետազոտությունների լաբորատորիա», «Վիրտուալ հայագիտության և տեղեկատվության բաժին», «Հայ-վրացական առնչությունների բաժին», «Հայ-քրդական առնչությունների բաժին», «Ցեղասպանագիտության բաժին»:

Հայոց ցեղասպանության թեման մեծ տեղ է զբաղեցնում ինստիտուտի շատ ստորաբաժանումների հետազոտություններում, իսկ Ցեղասպանագիտության բաժնի համար այն հիմնական հետազոտությունների առանցքն է կազմում: Քննարկվող ժամանակահատվածում Ցեղասպանագիտության բաժնի աշխատակիցները, բազմաթիվ հոդվածներից բացի, հրատարակել են տասներեք գիրք, որոնք հիմնականում նվիրված են հայկական ազատագրական շարժումների, 1909 թ. կիլիկյան կոտորածների, 1922 թ. Զյուլոնիայի աղետի, եվրոպական պետությունների քաղաքականության, ինչպես նաև Հայոց ցեղասպանության՝ ֆրանսիական և գերմանական պատմագրության հիմնախնդիրներին: Հայոց ցեղասպանության պատմությանն ուղղակիորեն առնչվում են հայկական ազատագրական շարժումների հիմնահարցերը, որոնք գիտական մանրագնին քննության է ենթարկել ՀՀԻ-ի տնօրենի գիտական գծով խորհրդական, ակադեմիկոս Հրաչիկ Միմոնյանն իր հինգհատորանոց մնայուն մենագրությունում<sup>1</sup>:

1909 թ. կիլիկյան կոտորածները երկար ժամանակ դուրս էին մնացել Հայոց ցեղասպանության պատմությունն ուսումնասիրողների տեսադաշտից: Դրանց համակողմանի քննությանն է նվիրված Հ. Միմոնյանի մենագրու-

<sup>1</sup> Տե՛ս **Միմոնյան Հ.**, Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք I-V, Երևան, 2003-2013: Սույն ուսումնասիրության III-V հատորները լույս են տեսել 2009-2013 թթ.:

թյունը<sup>1</sup>, որը լույս է տեսել նաև անգլերեն թարգմանությամբ<sup>2</sup>: Արժանահավատ տարատեսակ սկզբնաղբյուրների վերլուծության հիման վրա հեղինակը հայտնում է իրատեսական և համոզիչ կարծիքներ կիլիկյան կոտորածների կնճռոտ հիմնախնդիրների վերաբերյալ: Հիշարժան են, մասնավորապես, Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ ի սկզբանե բազմիցս տարակարծությունների տեղիք տված՝ կիլիկյան կոտորածների կազմակերպիչների բացահայտման վիճահարույց խնդրին առնչվող նրա մեկնաբանությունները: Կիլիկիահայության բնաջնջման պատասխանատվությունը հեղինակն իրավամբ վերագրում է երիտթուրքական վարչակարգին:

Միևնույն տեսակետն է սատարում նաև Ցեղասպանագիտության բաժնի ղեկավար, պատմական գիտությունների դոկտոր Վարուժան Պողոսյանը 1909 թ. կիլիկյան կոտորածների՝ ֆրանսիական պատմագրությանը նվիրված գրքում<sup>3</sup>: Նրա մեկ այլ մենագրություն նվիրված է XIX դարի վերջի և XX դարի սկզբի ֆրանսիական պատմագրության և հասարակական-քաղաքական մտքի՝ Հայոց ցեղասպանության առաջին փուլի (1894-1908) ուսումնասիրության վերլուծությանը<sup>4</sup>: Հեղինակը անդրադարձել է ֆրանսիական պատմագրության կայացման և զարգացման առանձնահատկություններին, առաջին անգամ բացահայտել XIX դարի 90-ական թվականներին Ֆրանսիայում ձևավորված՝ Հայոց ցեղասպանության ժխտողական ուղղության ակունքները:

ՀՀԻ-ի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր Աշոտ Հայրունիին մանրամասնորեն և համակողմանիորեն քննական վերլուծության է ենթարկել 1918 թ. Գերմանիայի արտաքին քաղաքականությունը Հայկական հարցում<sup>5</sup>:

Ինստիտուտի աշխատանքներում մեծ տեղ է հատկացվել Հայոց ցեղասպանության պատմության մի շարք արժանահավատ սկզբնաղբյուրների հրատարակություններին և վերահրատարակություններին, որոնց մի մասը նվիրված է 1922 թ. սեպտեմբերին Մուստաֆա Բեմալի կազմակերպած՝ Զմյուռնիայի քրիստոնյա բնակչության ոչնչացմանը, որի գոհն են դարձել ավելի քան հարյուր հազար քրիստոնյա, այդ թվում՝ շուրջ երեսուն հազար հայ:

Վ. Պողոսյանի աշխատասիրությամբ լույս է ընծայվել Զմյուռնիայի կոտորածին նվիրված՝ անգլերեն և ֆրանսերեն փաստաթղթերի և նյութերի ժո-

---

<sup>1</sup> Տե՛ս **Միմոնյան Հ.**, Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Երևան, 2009:

<sup>2</sup> Տե՛ս **Simonyan H.**, The Destruction of Armenians in Cilicia, April 1909, London, 2012.

<sup>3</sup> Տե՛ս **Պողոսյան Վ.**, 1909 թ. հայկական կոտորածները Կիլիկիայում ֆրանսիական պատմագրության գնահատմամբ, Երևան, 2009:

<sup>4</sup> Տե՛ս **Պողոսյան Վ.**, Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ), երկրորդ, բարեփոխված հրատարակություն, Երևան, 2011:

<sup>5</sup> Տե՛ս **Հայրունի Ա.**, Հայկական խնդիրը Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ 1918 թվականին, Երևան, 2013:

դովաճու, որն ընդգրկում է եվրոպացի և հայ ականատեսների հուշեր, անգլիական մամուլի հաղորդագրություններ, նաև արխիվային որոշ վավերագրեր<sup>1</sup>: Նա վերահրատարակել է նաև Ջմյունիայի կոտորածին նվիրված ֆրանսիացի լրագրող Ռենե Պյոյի՝ 1922 թ. և 1923 թ. Փարիզում լույս ընծայած «Ջմյունիայի վախճանը», «Ջմյունիայի վերջին օրերը» երկու արժեքավոր գրքույկները<sup>2</sup>: Պյոն անկողմնակալ ներկայացրել է Ջմյունիայում և արվարձաններում ծավալված՝ քրիստոնյաների կոտորածների պատկերը: Սույն հրատարակության մեջ գետեղված է նաև Պյոյի առաջին գրքույկի՝ Վ. Պողոսյանի իրականացրած հայերեն թարգմանությունը: Օսմանյան կայսրության պատմության, թուրքական լծի տակ հեծող հպատակեցված այլազգի ժողովուրդների, մասնավորապես արևմտահայության ծանր կացության և Հայոց ցեղասպանության բազում էական հիմնահարցեր արտացոլվել են ֆրանսիացի ռազմական գործիչ, մինչև 1914 թ. Կոստանդնուպոլսում աշխատանքային գործունեություն ծավալած, ֆրանսիական ռազմական առաքելության անդամ Հ. Սենյոբոսի՝ «Թուրքեր և Թուրքիա» վերնագրով գրքում<sup>3</sup>: Հեղինակն անաչառորեն բացահայտել է թուրքերի հավաքական բարբարոսական մտածողությունը և այլազգիների հանդեպ նրանց այլատյաց քաղաքականությունը, ի ցույց դրել Օսմանյան կայսրության՝ իբրև ցեղասպան պետության դիմագիծը, ապացուցել օսմանյան տարբեր վարչակարգերի կողմից հայ ժողովրդի բնաջնջումը պետական քաղաքականության մակարդակով: Հաշվի առնելով նրա հուշերի կարևորությունը և այժմեականությունը՝ Վ. Պողոսյանն իրականացրել է դրանց վերահրատարակությունը:

Վ. Պողոսյանը հրատարակել է նաև «Համիդյան կոտորածները ֆրանսիացի ժամանակակիցների հրապարակային ելույթներում» ժողովածուն, որն ամփոփում է XIX դարի 90-ական թվականներին ֆրանսիացի գործիչների ելույթները՝ նվիրված Օսմանյան կայսրությունում սանձազերծված հայկական կոտորածներին<sup>4</sup>: Հեղինակների թվում են ականավոր պատմաբաններ Ալբեր Վանդալը, Անատոլ Լերուա-Բոլիոն և այլք, որոնց գերակշռող մասը բացահայտել է արևմտահայության զանգվածային բնաջնջումը պետական քաղաքականության մակարդակով և անարգանքի սյանը գամել կոտորածների կազմակերպիչ Աբդուլ Համիդ II-ին:

Ցեղասպանագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող Էվելինա Մակարյանը պրոֆեսոր Դորա Մաքայանի հետ թարգմանել և հրատարակել է Վիլիելմ Բաումի «Թուրքիան և նրա քրիստոնյա փոքրամասնությունները»<sup>5</sup> և

<sup>1</sup> Տե՛ս **Poghosyan V.**, La catastrophe de Smyrne de 1922 (recueil de documents), Erevan, 2011.

<sup>2</sup> Տե՛ս **Puau R.**, La mort de Smyrne. Les derniers jours de Smyrne, Erevan, 2012.

<sup>3</sup> Տե՛ս **Capitaine Seignobosc H.**, Turcs et Turquie, Erevan, 2013.

<sup>4</sup> Les massacres hamidiens à travers le prisme des conférences des contemporaines français, Erevan, 2013.

<sup>5</sup> Տե՛ս **Բաում Վ.**, Թուրքիան և նրա քրիստոնյա փոքրամասնությունները. Անցյալը-Ցեղասպանությունները- Ներկան, թարգմ.՝ Դ. Մաքայան, Է. Մակարյան, Երևան, 2010:

Յակոբ Քյունցլերի «Արյան և արցունքի երկրում»<sup>1</sup> աշխատությունները: Ավելին, պրոֆեսոր Սաքայանը հայերենով<sup>2</sup> և միաժամանակ անգլերեն թարգմանությամբ վերահրատարակել է մայրական կողմից իր պապի՝ զմյուռնիացի Կարապետ Խաչերյանի օրագիրը, որում ամփոփված են Զմյուռնիայի հայերի և հույների կոտորածների մասին ականատեսի նոթերը, որոնք աղբյուրագիտական անժխտելի նշանակություն ունեն:

Ինստիտուտի առանձին ստորաբաժանումներ ևս հիշյալ ժամանակահատվածում իրենց գիտահետազոտական գործունեության բնույթի շրջանակներում ուսումնասիրել են հայոց ցեղասպանության տարաբնույթ խնդիրներ:

ԵՊՀ ռեկտոր, ՀՀԻ տնօրեն և աղբյուրագիտության բաժնի ղեկավար Արամ Սիմոնյանի խմբագրությամբ ու առաջաբանով տպագրվել է Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմությանը նվիրված՝ 1998-2007 թթ. լույս ընծայված ռուսալեզու գրականության արժեքավոր մատենագիտությունը, որը կազմել է երջանկահիշատակ Էմմա Բաբայանը<sup>3</sup>: Նույն լաբորատորիայի գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու Սուսաննա Գևորգյանը հայերենից էսպերանտերեն է թարգմանել գերմանացի գրող Է. Հիլզենրաթի «Վերջին մտքի հեթիաթը» վեպի առաջին մասը<sup>4</sup>:

Հայ-օսմանական առնչությունների բաժնի ղեկավար, բանասիրական գիտությունների թեկնածու Լուսինե Սահակյանը թեմայի շրջանակներում հրատարակել է «Տեղանունների թուրքացումն Օսմանյան կայսրությունում և Հանրապետական Թուրքիայում» աշխատությունը<sup>5</sup>: Բազմաթիվ փաստերի համադրմամբ հեղինակը ներկայացնում է Թուրքիայի տարբեր վարչակարգերի ժամանակ Արևմտյան Հայաստանի զանազան հայկական տեղանունների թուրքացման պատմությունը: Սահակյանի մյուս ուսումնասիրությունը, որը հեղինակը գրի է առել Արևմտյան Հայաստանի մի շարք շրջաններում կատարած դաշտային հետազոտական աշխատանքների ժամանակ հավաքած նյութերի վերլուծության հիման վրա, նվիրված է Համշենի մանրատեղանուններին<sup>6</sup>:

«Բ. Հարությունյանի անվան Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության լաբորատորիա»-ի գիտաշխատողները թեմային պատմաաշխարհագրական և քարտեզագրական իրենց հետազոտություններում Հայոց ցեղասպանության բավականին մեծ տեղ են հատկացրել: Սկսած եր-

---

<sup>1</sup> Տե՛ս **Քյունցլեր Յ.**, Արյան և արցունքի երկրում, թարգմ.՝ Դ. Սաքայան, Է. Մակարյան, Երևան, 2011:

<sup>2</sup> Տե՛ս **Սաքայան Դ.**, Զմյուռնիա 1922. Բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը, Երևան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության-թանգարան ինստիտուտ, 2005:

<sup>3</sup> Տե՛ս Армянский вопрос и геноцид армян. Библиография на русском языке (1998-2007 гг.). Составитель Э. Бабалян. Ответственный редактор и автор предисловия А. Г. Симонян, Ереван, 2009:

<sup>4</sup> Տե՛ս **Hilzenrat E.**, La Fabelo de la lasta penso. Romano. Libro unua, Erevan, 2013.

<sup>5</sup> Տե՛ս **Sahakyan L. S.**, Turkification of the Toponyms in the Ottoman Empire and the Republic of Turkey (անգլերեն, հայերեն, ռուսերեն), Montreal, 2010.

<sup>6</sup> Տե՛ս **Սահակյան Լ. Ս.**, Համշենի մանրատեղանունները (հայերեն, թուրքերեն, ռուսերեն), Երևան, 2012:

ջանկահիշատակ Բաբկեն Հարությունյանից՝ լաբորատորիայի գիտաշխատողները պատրաստել են թեմային առնչվող քարտեզներ թե՛ լաբորատորիայի համահավաք ատլասներում և ինստիտուտի համապատասխան հետազոտություններում, թե՛ առանձին հրատարակություններում զետեղելու համար: Այսպես, լաբորատորիայի նախկին ղեկավար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Բաբկեն Հարությունյանի ընդհանուր խմբագրությամբ, մասնակցությամբ լաբորատորիայի ներկայիս ղեկավար Վարդան Մխիթարյանի և կրտսեր գիտաշխատող Գեղամ Բաղայանի, լույս տեսած «Հայաստանի պատմության ատլաս»-ի Բ<sup>1</sup> և Գ<sup>2</sup> մասերում ներառված բազմաթիվ քարտեզներից հարկ է հիշատակել «Ադանայի և Կիլիկյայի հայության կոտորածները 1909 թ.», «Արևելյան («Հայկական») լեզեռնի մարտական գործողությունները և Արարայի ճակատամարտը», «Արևմտահայ գաղթականությունը և հայ որբերը Հայաստանի Հանրապետությունում (1919-1920 թթ.)», «Արևմտահայության վերադարձը և երկրի վերաշինումը (1917 թ.)», «Արևմտահայությունը 19-րդ դ. 70-ական թթ. (Էթնիկական քարտեզ)», «Էրզրումի գործողությունները (օպերացիա)», «Կիլիկիա, Կիլիկիայի հայությունը և մուսալեռցիները 1919-1921 թթ.», «Կոտորածներն Արևմտյան Հայաստանում 1894-1896 թթ.», «Հայ-թուրքական սահմանագիծն՝ ըստ Սևրի պայմանագրի (10.08.1920) և ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի (22.09.1920)», «Մուսա լեռան 40 օրը», «Մասունի 1894 թ. ապստամբությունը», «Սարիղամիշի գործողությունները (օպերացիա)», «Վանի հերոսական ինքնապաշտպանությունը (07.04-06.05.1915 թ.)»:

Իր հերթին լաբորատորիայի կրտսեր գիտաշխատող Գեղամ Բաղայանը այլ հեղինակների հրատարակություններում ու առանձին քարտեզների տեսքով պատրաստեց «Սպորտը Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում (1900-1922 թթ.)» (Հայկ Դեմոյանի «Հայկական սպորտը և մարմնակրթությունը Օսմանյան կայսրությունում» ալբոմ-մենագրություն, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Երևան, 2009), «Հայոց ձոր (20-րդ դ. սկիզբ)» (Երվանդ Կյուրեղյան, Իմ հուշերի ճանապարհով, «Արարատ» ռազմավարագիտական կենտրոն, Երևան, 2009), «Երվանդ Կյուրեղյանի մարտական ուղին (1906-1922 թթ.)» (Երվանդ Կյուրեղյան, Իմ հուշերի ճանապարհով, «Արարատ» ռազմավարագիտական կենտրոն, Երևան, 2009), «Մուշ-Տարոնը 1914 թ. դրությամբ, մասշտաբ 1:160 000, «Տիգրան Մեծ» հրատ., Երևան, 2010», «Մասունը 1914 թ. դրությամբ, մ. 1:160 000, «Տիգրան Մեծ» հրատ., Երևան, 2010» քարտեզները:

Ինստիտուտը, բացի իր գիտաշխատողների աշխատանքներից, իրականացնում է նաև այլ գիտնականների՝ Հայոց ցեղասպանության համար կարևոր նշանակություն ունեցող հրատարակություններ: 2011 թ. ՀՀԻ-ի աջակցությամբ լույս է տեսել նաև անվանի իսպանացի գրող Գոնսալո Էդուարդո

<sup>1</sup> Հայաստանի պատմության ատլաս, Բ մաս, Երևան, 2008:

<sup>2</sup> Հայաստանի պատմության ատլաս, Գ մաս, Երևան, 2012:

Գուարչի «Հայոց կտակը» գիրքը<sup>1</sup>: Այս երկը նվիրված է Հայոց ցեղասպանության թեմային և առանձնահատուկ է այն առումով, որ օտարազգի հեղինակը ջանացել է ներկայացնել հայերի ողբերգությունը և ցույց տալ թուրքական ժխտողականության դրդապատճառները:

Խնդրո առարկա թեմայի շուրջ ինստիտուտում իրականացվող գիտահետազոտական աշխատանքներին զուգահեռ հավելվեց նաև կրթական բաղադրիչը. ինստիտուտի կազմում 2013 թ. սեպտեմբերից մեկնարկեց «Ցեղասպանագիտություն» մագիստրոսական ծրագիրը<sup>2</sup>: Առաջին անգամ հայկական բարձրագույն կրթության հարթակում ՀՀԻ-ն նախաձեռնեց նմանօրինակ ծրագիր, որին մասնակից դարձան ոչ միայն ԵՊՀ հումանիտար ֆակուլտետների, այլ նաև ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի մի շարք ինստիտուտների, առաջին հերթին Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի մասնագետները:

Այսօրինակ գիտակրթական գործունեության արդյունավետության գործակիցը ավելի բարձրացնելու համար Վիրտուալ հայագիտության և տեղեկատվության բաժինը ՀՀԻ պաշտոնական կայքի<sup>3</sup> և վեց հայագիտական համացանցային նախագծերի<sup>4</sup> կողքին մշակեց նաև Հայոց ցեղասպանության թեմային նվիրված հայագիտական համացանցային պաշար<sup>5</sup>, որը կոչված է ներկայացնելու կայքի եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) բաժիններում պարբերաբար համալրվող գրքեր, գիտահետազոտական և հանրագիտարանային հոդվածներ, քարտեզներ, փաստաթղթեր, լուսանկարներ, տեսանյութեր և այլ բնույթի տեղեկատվական նյութեր: Կարևոր է ընդգծել, որ բաժինը թեմայի շուրջ հեղինակներից ու գրադարաններից ստացվող նյութերի էլեկտրոնային տարբերակներից բացի նախաձեռնել է լայնամասշտաբ թվայնացման աշխատանքներ, որոնք վերջնական հանգրվանում բացարձակ անվճար և ընկալելի մատուցմամբ հասանելի են դառնում համացանցային օգտատերերին:

Ինստիտուտի աշխատակիցները շարունակում են իրենց ուսումնասիրությունները վերոհիշյալ ասպարեզներում: Մեծ եղեռնի հարյուրամյակին ընդառաջ նրանք գիտական հանրության դատին կհանձնեն նոր ուսումնասիրություններ, փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ, օտար սկզբնաղբյուրների և արտասահմանյան հեղինակների արժեքավոր գրքերի վերահրատարակություններ, ինչպես նաև կունենանք առաջին ցեղասպանագետ շրջանավարտներ:

*ՄՀԵԸ ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ*

<sup>1</sup> **Գուարչ Գ. Է.**, Հայոց կտակ (իսպաներենից թարգմանեց Մ. Սուքիասյանը), Երևան, 2011:

<sup>2</sup> Տե՛ս «Ցեղասպանագիտություն» ՄՕ դասատախտակը - <http://masters.armeniangenocide.am/am/Schedule>:

<sup>3</sup> Տե՛ս ՀՀԻ պաշտոնական կայքը - [www.armin.am](http://www.armin.am):

<sup>4</sup> Տե՛ս ՀՀԻ վեց հայագիտական համացանցային նախագծերը - [www.historyofarmenia.am](http://www.historyofarmenia.am), [www.armeniaculture.am](http://www.armeniaculture.am), [www.armenianarchaeology.am](http://www.armenianarchaeology.am), [www.armenianreligion.am](http://www.armenianreligion.am), [www.armeniandiaspora.am](http://www.armeniandiaspora.am), [www.armenianlanguage.am](http://www.armenianlanguage.am):

<sup>5</sup> Տե՛ս ՀՀԻ յոթերորդ հայագիտական համացանցային նախագիծը՝ նվիրված Հայոց ցեղասպանության թեմային - [www.armeniangenocide.am](http://www.armeniangenocide.am):

---

---

**ՀՀ ԳԱԱ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏԻ  
2009-2013 ԹԹ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ**

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը (այսուհետև՝ ՀՅԹԻ) 2009-2013 թթ. գիտական հանրությանն է ներկայացրել Հայոց ցեղասպանության պատմությանը նվիրված ավելի քան 20 հրատարակություններ՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, որոնք ներառում են թե՛ գիտական ուսումնասիրություններ, թե՛ բացառիկ սկզբնաղբյուրների հրատարակություններ ու վերահրատարակություններ և թե՛ թարգմանություններ: ՀՅԹԻ-ն իր աշխատանքներն իրականացնում է տարբեր՝ «Վերապրողի հիշատակարան», «Դիվանագիտական արխիվ», «Ականատեսի վկայություններ» և այլ մատենաշարերով: Ստորև ներկայացնում ենք Հայոց ցեղասպանության ուսումնասիրության համար առավել կարևոր սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող աշխատությունները:

2009 թ. Կիլիկիայի կոտորածների 100-ամյակի առիթով ՀՅԹԻ-ն թողարկեց «Կիլիկյան մատենաշարը», որում վերահրատարակված՝ սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող գրքերը լույս են սփռում Օսմանյան կայսրությունում 1909 թ. հայկական կոտորածների դրվագների վրա: 2009 թ. պատմական գիտությունների դոկտոր Վարուժան Պողոսյանի աշխատասիրությամբ ֆրանսերեն վերահրատարակվեց Ժորժ Բրեզոյի «Այստեղից թուրքերն են անցել...» փաստաթղթերի ժողովածուն<sup>1</sup>, որն առաջին անգամ լույս է տեսել Փարիզում 1911 թ. և ամփոփում է 1909 թ. կիլիկյան կոտորածների առնչվող բացառիկ վավերագրեր, վկայություններ ու լուսանկարներ: 2009 թ. վերահրատարակվեց նաև Ֆերիման Դաքեստի՝ «Թրքական դաժանություն. Երիտթուրքերը և ճշմարտությունն Ադանայի Հոլոքոստի մասին. Փոքր Ասիա, 1909 թ. ապրիլ» մենագրությունը, ուր ներկայացված են Ադանայի նահանգում երիտթուրքերի կազմակերպած և իրականացրած՝ հայկական կոտորածների մանրամասները<sup>2</sup>: Սույն գիրքն առաջին անգամ հրատարակել է 1913 թ. Լոնդոնում և յուրահատուկ է նրանով, որ հեղինակն առաջիններից է, որը Հայոց ցեղասպանության առնչությամբ վերնագրում օգտագործվել է «հոլոքոստ» եզրույթը: «Կիլիկյան մատենաշարը» համալրած գրականության շարքում են նաև 2011 թ. Վ. Պողոսյանի վերահրատարակած՝ ազգությամբ հույն, ֆրանսիացի լրագրող Ալեքսանդր Ադոսիդեսի «Հայեր և երիտթուրքեր.

---

<sup>1</sup> Տե՛ս **Brézol G.**, Les Turcs ont passé là... Recueil de documents, dossiers, rapports, requêtes, protestations, suppliques et enquêtes établissant la vérité sur les massacres d'Adana en 1909, Erevan, 2009:

<sup>2</sup> Turkish Atrocities. The Young Turks and the Truth about the Holocaust at Adana, in Asia Minor, during April, 1909. Written and compiled in April, 1911, by Ferriman Dukett. Yerevan, 2009.



Կիլիկիայի կոտորածները» գիրքը<sup>1</sup>, որն առաջին անգամ լույս է տեսել 1910 թ. Փարիզում, ինչպես նաև նույն գրքի՝ Վ. Պողոսյանի իրականացրած հայերեն թարգմանությունը<sup>2</sup>: Հեղինակը, օգտագործելով իրադարձության ժամանակակիցների՝ ամերիկացի, անգլիացի, ֆրանսիացի դիվանագետների և միսիոներների վկայությունները, նկարագրել է 1909 թ. Ադանայի և Հալեպի նահանգներում իրականացված հայկական կոտորածները և վերլուծել դրանց դրդապատճառները:

ՀՅԹԻ-ի թողարկած «Վերապրողի հիշատակարան» մատենաշարը համալրած հուշագրությունները Հայոց ցեղասպանության իրողությունը փաստող կարևոր վկայություններ են: 2010 թ. լույս տեսած Հովհաննես Կարապետյանի (Օննիկ Յուսուֆ) հուշագրությունը, որը հրատարակության է պատրաստել բանասիրական գիտությունների թեկնածու Վլադիմիր Մադայանը, Հայոց մեծ եղեռնից հրաշքով փրկված և հետագայում Հայաստանում հաստատված հեղինակի կյանքի պատմությունն է<sup>3</sup>: Նա ներկայացրել է իր ծննդավայր Ադաբազարի հայության կյանքը, 1915 թ. տեղահանությունների ու կոտորածների դաժան դրվագները:

2012 թ. ռուսերեն թարգմանությամբ լույս տեսավ արվեստագետ Մարգարիտ Աճեմյան-Անիերթի «Դռան թակոցը» հուշագրությունը<sup>4</sup>: Գրքի հիմքում խարսխված են հեղինակի մոր՝ 1900 թ. Ամասիա քաղաքում ծնված Էսթեր Միներաճյանի հուշերը 1915 թ. Մեծ եղեռնի և դրա պատճառած տառապանքների մասին: Ի դեպ, 2007 թ. ԱՄՆ-ում անգլերեն լույս տեսած այս գիրքը 2008 թ. Նյու Յորքի Գրքի տոնավաճառի՝ «Լավագույն պատմական հուշագրություն» անվանակարգում արժանացել է հաղթողի կոչման: Մեծ եղեռնը վերապրածի այս հուշագրությունը «Հայ օգնության ֆոնդի» նախաձեռնությամբ ու հովանավորությամբ թարգմանվել է և տպագրվել նաև հայերեն<sup>5</sup>:

Հրատարակված հուշագրությունների շարքում առանձնանում է Լիլիթ Թուրխալյանի՝ անգլերեն բնագրից հայերեն թարգմանությամբ լույս ընծայած օսմանյան բանակի հայազգի սպա Մարգիս Թորոսյանի հուշագրությունը, որն Օսմանյան կայսրությանը բացառիկ ծառայություններ մատուցած հայազգի սպայի կյանքի ողիսականն է<sup>6</sup>: Ի դեպ, նույն տարում այս հուշագրությունը տպագրվել է նաև թուրքերեն:

2013 թ. ՀՅԹԻ-ն անգլերեն և ռուսերեն վերահրատարակել է նաև մեկ այլ բացառիկ հուշագրություն՝ «Հոշոտված Հայաստան» խորագրով, որը Հայոց ցեղասպանությունը վերապրած չմշկածագցի Արշալույս (հետագայում՝

<sup>1</sup> Տե՛ս **Adossidès A.**, Arméniens et Jeunes-Turcs. Les massacres de Cilicie, Erevan, 2011:

<sup>2</sup> Տե՛ս **Ադասիդես Ա.**, Հայեր և երիտթուրքեր. Կիլիկիայի կոտորածները, Երևան, 2012:

<sup>3</sup> Տե՛ս **Կարապետյան Հ.** (Օննիկ Յուսուֆ), Վերածնված կյանք մը. երևակայական և իրական սարսափների արանքում, Երևան, 2010:

<sup>4</sup> Տե՛ս **Աճեմյան-Աներթ Մ.**, Стук в дверь. Путешествие сквозь тьму геноцида армян, Ереван, 2012:

<sup>5</sup> Տե՛ս **Աճեմյան-Անիերթ Մ.**, Դռան թակոցը: Ճամփորդություն Հայոց ցեղասպանության խավարի միջով: (Հուշեր), Երևան, 2009:

<sup>6</sup> Տե՛ս **Թորոսյան Ա.**, Դարդանելից մինչև Պաղեստին, Երևան, 2012:

Ավրորա) Մարդիգանյանի կյանքի իրական պատմությունն է<sup>1</sup>: Հրաշքով փրկվելով կոտորածներից և գաղթի երկար ճանապարհ անցնելուց հետո՝ 14-ամյա աղջնակն ի վերջո ապաստանել է ԱՄՆ-ում, ուր և հետագայում գրի է առել իր կյանքի սարսափելի ու ցնցող պատմությունը: Նշենք, որ այս հուշագրության հիման վրա 1918 թ. ԱՄՆ-ում նկարահանվել է Հայոց ցեղասպանությանը նվիրված առաջին՝ «Հոգիների աճուրդ» ֆիլմը (ռեժիսոր՝ Օսկար Աֆֆել), որի գլխավոր դերակատարը նույն ինքը՝ Ավրորա Մարդիգանյանն է: Ամենուր բացառիկ հաջողությունների արժանացած ֆիլմը գրաքննության ենթարկվելուց և որոշ տեսարաններ կրճատվելուց հետո այլևս չի ցուցադրվել, իսկ հետագայում անհետացել են նաև ութսունհինգ բուրձե տետրաբուրձային ֆիլմի ինը ժապավենները: 1920-ական թթ.՝ գրաքննության ենթարկվելուց հետո, մի շարք գրադարաններից հանվել է նաև «Հռոտոված Հայաստան» հուշագրությունը:

ՀՅԹԻ-ի «Դիվանագիտական արխիվ» մատենաշարում Արամյախ Բալոյանի աշխատասիրությամբ լույս է տեսել Հայկական հարցին նվիրված Իտալիայի արտաքին գործերի նախարարության դիվանագիտական արխիվի վավերագրերն ամփոփող երկհատոր ժողովածուն<sup>2</sup>: Առաջին անգամ հայերեն հրատարակված այդ վավերագրերը նոր լույս են սփռում Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության վրա: Այս մատենաշարում կարևոր է նաև 2012 թ. անգլերենով հրատարակված շվեդ ժամանակակից հետազոտող Գորան Գյուների «Հայոց ցեղասպանությունը շվեդների աչքերով» աշխատությունը<sup>3</sup>: Թե՛ 1894-1896 թթ. համիդյան կոտորածներին և թե՛ Մեծ եղեռնին նվիրված այս գիրքն արժեքավոր է նրանով, որ հեղինակն օգտագործել է մեծ թվով շվեդական սկզբնաղբյուրներ՝ դիվանագիտական գեկուցագրեր, ականատեսների վկայություններ, մամուլի հրապարակումներ:

Հայոց ցեղասպանության ուսումնասիրության համար սկզբնաղբյուրային մեծ արժեք ունեն նաև ականատես միսիոներների վկայությունները: Այս շարքը համալրվել է շվեդուհի միսիոներ Ալմա Յոհանսոնի «Աքսորյալ ժողովուրդ. մի տարի հայոց պատմությունից» եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) հուշագրությամբ<sup>4</sup>: Լինելով օտարերկրացի ականատես՝ հեղինակն անաչառորեն ներկայացրել է 1915 թ. իրադարձությունները Մուշում, որտեղ գտնվել է 1901-1915 թթ.: Նրա հուշերը հայերեն և ռուսերեն հրատարակվել են առաջին անգամ: 2011 թ. գերմաներեն բնագրից՝ Աշոտ Հայրունու, Հայկ Մարտիրոսյանի և Արամ Միրզոյանի թարգմանությամբ լույս տեսավ շվեդարացի միսիոներ, Հայոց ցեղասպանության ականատես Յակոբ Կյունցլերի

<sup>1</sup> Տե՛ս **Mardiganian A.**, Ravished Armenia, Yerevan, 2013; Растерзанная Армения. История Авроры Мартиканян, Ереван, 2013.

<sup>2</sup> Իտալիայի արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը Հայկական հարցի մասին 1913-1923 թթ., հ. Ա, 1913-1917, Երևան, 2008; հ. Բ, 1918-1923, Երևան, 2010:

<sup>3</sup> Տե՛ս **Gunner G.**, Genocide of Armenians. Through Swedish Eyes, Yerevan, 2013:

<sup>4</sup> Տե՛ս **Յոհանսոն Ա.**, Աքսորյալ ժողովուրդ. մի տարի հայոց պատմությունից, Երևան, 2008:

մենագրությունը<sup>1</sup>, որտեղ մանրամասն նկարագրվում են Ուրֆայում տեղի ունեցած հերոսամարտն ու հայ բնակչության կոտորածները: Միսիոներական վկայությունների շարքը 2012 թ. համալրվել է նաև ԱՄՆ դեսպանատան աջակցությամբ անգլերեն բնագրից հայերեն թարգմանությամբ (թարգմանիչներ՝ Խաժակ Դրամվյան, Անժելա Ղասաբյան) լույս տեսած ամերիկյան միսիոներուհի Կլարա Բարտոնի գրքով<sup>2</sup>: Նույն տարում ՀՅԹԻ-ն վերահրատարակեց նաև գրքի անգլերեն բնագիրը<sup>3</sup>: «Ամերիկյան Կարմիր խաչ» կազմակերպության հիմնադիր և նախագահ Կլարա Բարտոնի կազմակերպած նպաստամատույց առաքելության զեկույցը 1895-1896 թթ. համիդյան կոտորածներից տուժած հայ բնակչությանն օգնություն տրամադրելու մասին է: Այս գիրքը չափազանց կարևոր տեղեկություններ է պարունակում նրա գլխավորությամբ իրականացված մարդասիրական առաքելության չորս արշավախմբի գործունեության մասին, մանրամասնորեն ներկայացնում կոտորածներից փրկված հայերին օգնություն ցուցաբերելու դժվարին գործի կազմակերպումը:

ՀՅԹԻ-ի հրատարակած ուսումնասիրությունների շարքում առանձնանում է Կալիֆոռնիայի համալսարանի դասախոս Ռուբինա Փիրույանի «Եվ նրանք, ովքեր շարունակում են ապրել Թուրքիայում 1915 թվականից հետո» հետազոտությունը<sup>4</sup>: Գրքում ուսումնասիրվում են Հայոց ցեղասպանությունից հետո Թուրքիայում ապրող հայերի ինքնության հարցերը, որոնք ներկայացված են թուրք գրողների ստեղծագործություններում: Առանձնապես հետաքրքրական են այն թուրք հեղինակների պատմությունները, որոնց նախնիները եղել են հայեր: 2012 թ. լույս տեսած Ռ. Փիրույանի մեկ այլ՝ «Հայոց ցեղասպանությունը գրականության մեջ» աշխատությունը կարևոր ներդրում է Հայոց ցեղասպանության դատապարտմանն ուղղված պայքարում<sup>5</sup>: Գրքում նկարագրվում է Հայոց ցեղասպանությունը վերապրած հայի հոգեկան վիճակը, սոսկալի տառապանքները, որոնք անդառնալի դրոշմ են թողել նրա և սերունդների վրա:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում 2009 թ. հրատարակված ՀՅԹԻ-ի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Հայկ Դեմոյանի՝ Օսմանյան կայսրությունում հայկական սպորտին և մարմնակրթությանը նվիրված պատկերազարդ գիրքը<sup>6</sup>, որտեղ առաջին անգամ համադրվում են և ներկայացվում Օսմանյան կայսրությունում հայկական սպորտի, մարմնակրթու-

---

<sup>1</sup> Տե՛ս **Կյունցլեր Յ.**, Արյան և արցունքների երկրում. իրադարձությունները Միջագետքում Համաշխարհային պատերազմի ժամանակ, Երևան, 2011:

<sup>2</sup> Տե՛ս **Բարտոն Կ.**, Ամերիկյան Կարմիր խաչի նպաստամատույց առաքելությունը Փոքր Ասիա, Երևան, 2012:

<sup>3</sup> Տե՛ս **Barton C.**, Expedition in Asia Minor and Relief Operation, Yerevan, 2012:

<sup>4</sup> Տե՛ս **Peroomian R.**, And Those Who Continued Living in Turkey after 1915, Yerevan, 2008:

<sup>5</sup> Տե՛ս **Peroomian R.**, The Armenian Genocide in Literature, Yerevan, 2012:

<sup>6</sup> Տե՛ս **Դեմոյան Հ.**, Հայկական սպորտը և մարմնակրթությունը Օսմանյան կայսրությունում, Երևան, 2009:

թյան ձևավորման, զարգացման ընթացքն ու առաջին հայ մարմնամարզական ակումբների գործունեությունը: Հրատարակությունն ընթերցողին հնարավորություն է ընձեռում ծանոթանալու հայկական սպորտի պատմության, ինչպես նաև թուրքական ազգայնականության ցայսօր անհայտ որոշ դրվագների:

ՀՅԹԻ-ի աշխատանքների շարքում կարևոր տեղ է գրավում նաև Օսմանյան կայսրությունում քրիստոնյա այլ ժողովուրդների ցեղասպանությունների պատմության ուսումնասիրությունը: Պատմական գիտությունների թեկնածու Գևորգ Վարդանյանի լույս ընծայած մենագրությունը նվիրված է Օսմանյան կայսրությունում հույն բնակչության կարգավիճակի և 1914-1923 թթ. հույների ցեղասպանության ուսումնասիրությանը<sup>1</sup>: Հեղինակը գուգահեռներ է անցկացնում հայերի և հույների ցեղասպանությունների պատճառների և իրականացման մեխանիզմների միջև:

Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և դրա հետևանքներին առնչվող պայքարում կարևոր ներդրում է թուրքագետ, պատմական գիտությունների թեկնածու Մելինե Անումյանի մենագրությունը<sup>2</sup>, որը նվիրված է 1919-1921 թթ. Օսմանյան կայսրության ռազմական արտակարգ ատյաններում հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով հարուցված դատական գործերի և 1926 թ. Թուրքիայի Հանրապետության անկախ դատարաններում կայացած երիտթուրքերի դատավարությունների ուսումնասիրությանը:

Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ժխտողականության դեմ մղվող պայքարում մեծ կարևորություն ունի 2012 թ. հրատարակված՝ Հայոց ցեղասպանությունը վերապրածի ժառանգ Տիգրան Քալայջյանի «Ճշմարտության պաշտպանը. Գուրգեն Յանիկյանը և Հայոց ցեղասպանության ժխտողականության դեմ պայքարը» աշխատությունը<sup>3</sup>:

2013 թ. ՀՅԹԻ-ն հրատարակեց «Ցեղասպանագիտական հանդես» գիտական նոր ամսագրի առաջին համարը, որն ամփոփում է 1909 թ. կիլիկյան կոտորածների հարյուրամյակի առնչությամբ 2009 թ. ապրիլին Երևանում գումարված միջազգային գիտաժողովի նյութերը: Հեղինակների թվում են ոչ միայն հայրենական, այլև արտասահմանյան պատմաբաններ Ֆրանսիայից, ԱՄՆ-ից, Ավստրալիայից, Հունգարիայից, Սիրիայից, այդ թվում հայտնի մասնագետներ, ինչպիսիք են Իվ Տերնոնը, Ռայմոնդ Հ. Գևորգյանը:

ՀՅԹԻ-ի աշխատակիցները շարունակում են իրենց ուսումնասիրությունները թե՛ նշված և թե՛ ցեղասպանագիտության այլ ասպարեզներում:

---

<sup>1</sup> Տե՛ս **Վարդանյան Գ.**, Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և փոքրասիական աղետը (1914-1923 թթ.), Երևան, 2012:

<sup>2</sup> Տե՛ս **Անումյան Մ.**, Ճանաչում և դատապարտում. երիտթուրքերի դատավարությունները (1919-1921 թթ. և 1926 թ.), Երևան, 2013:

<sup>3</sup> Տե՛ս **Kalaydjian T.**, Sentinel of Truth. Gurgen Yanikian and the Struggle Against the Denial of the Armenian Genocide, Yerevan, 2012.

Մեծ եղեռնի հարյուրամյակին ընդառաջ նրանք գիտական հանրության դատին կհանձնեն նոր ուսումնասիրություններ, փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ, օտար սկզբնաղբյուրների և արտասահմանյան հեղինակների արժեքավոր գրքերի վերահրատարակություններ: 2013-2014 թթ. ՀՅԹԻ-ը նախատեսում է հրատարակել Հենրի Մորգենթաուի, Ժամանակակից անվանի ցեղասպանագետներ Վահագն Տատրյանի և Թաներ Աքչամի կոթողային աշխատությունները և մի շարք այլ ուսումնասիրություններ: Այս առիթով հրատարակության է պատրաստվում նաև «Հայոց ցեղասպանության հանրագիտարան» ծավալուն հատորը:

*ՄԵՂԱ ՊԱՐՄԱՄՅԱՆ*

---

---

**ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 2009-2013 ԹԹ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ**

Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության հիմնախնդիրները 2009-2013 թթ. գտնվել են ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության և այլ ստորաբաժանումների ուշադրության կենտրոնում: Իրականացվել են անհատական և կոլեկտիվ ուսումնասիրություններ, հրատարակվել մենագրություններ, փաստաթղթերի ժողովածուներ, կազմակերպվել են գիտական նստաշրջաններ:

Հայկական հարցի ուսումնասիրության շրջանակներում ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը Հայկական հարցի միջազգայնացման 130-ամյակի կապակցությամբ 2009 թ. հրատարակել է գիտական հոդվածների ժողովածու, որտեղ ներառված են ինստիտուտի կողմից նույն խորագրով 2008 թ. կազմակերպված հանրապետական գիտաժողովի զեկուցումները<sup>1</sup>:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Հայկական հարցի լուծմանը նպաստելուն ուղղված՝ եգիպտահայ հասարակական-քաղաքական գործիչ Պողոս Նուբարի գործունեությանն է նվիրված պատմական գիտությունների թեկնածու Հովակիմ Բոյաջյանի մենագրությունը<sup>2</sup>, որը գրի է առնվել ըստ արխիվային նորահայտ փաստաթղթերի, պարբերական մամուլի նյութերի և պատմագիտական գրականության ուսումնասիրության: Հայկական հարցի ուսումնասիրության բնագավառում ուշագրավ է պատմական գիտությունների դոկտոր Արարատ Հակոբյանի՝ Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերին նվիրված մենագրությունը<sup>3</sup>: Հեղինակը ոչ միայն քննարկել է այդ կոնֆերանսների դիվանագիտական նախապատ-

---

<sup>1</sup> Տե՛ս Հայկական հարցի միջազգայնացման 130-ամյակը և պատմության դասերը, Երևան, 2009 (**Անանյան Ա.**, Օսմանյան բանակում ծառայող հայ զինվորականության ճակատագիրը Առաջին աշխարհամարտի տարիներին, էջ 99-116; **Մարուքյան Ա.**, Հայկական հարցը Սևրի և Լոզանի պայմանագրերում, էջ 48-60; **Կարապետյան Ա.**, Հայկական հարցի լուծման ուղիները արմենականների ծրագրերում, էջ 39-42; **Կոստանյան Է.**, Հայկական հարցի ծագումն ու առաջացումը. նրա ներքին բովանդակությունը, էջ 22-39; **Հովհաննիսյան Լ.**, Հայկական հարցն Առաջին աշխարհամարտի նախօրյակին և մեծ տերությունները, էջ 87-99; **Ղամբարյան Ա.**, ԱՄՆ-ի դիրքորոշումը Հայկական հարցում Փարիզի վեհաժողովի նախօրյակին, էջ 60-69; **Ստեփանյան Ս.**, Հայկական հարցի միջազգայնացման 130-ամյա դասերը, էջ 7-22):

<sup>2</sup> Տե՛ս **Բոյաջյան Հ.**, Պողոս Նուբար փաշան և բարենորոգումների խնդիրներն Արևմտյան Հայաստանում 1912-1914 թթ., Երևան, 2010:

<sup>3</sup> Տե՛ս **Հակոբյան Ա.**, Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Երևան, 2010:

րաստությունը և ընթացքը, պատմաքննական ու համադրական տեսանկյուններից վերլուծել ստորագրված պայմանագրերը, այլև հատուկ ուշադրություն է դարձրել հայ-թուրքական տարածքային-սահմանային խնդիրներին, ինչպես նաև դիտարկել այդ պայմանագրերի օրինականությանն ու միջազգային պայմանագրային իրավունքին առնչվող հարցերը:

Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմությանն են նվիրված ինստիտուտի հրատարակած «Հայոց պատմություն» ակադեմիական բազմահատորյակում և գիտական այլ հրատարակություններում լույս ընծայված՝ ինստիտուտի մի շարք աշխատակիցների հոդվածները, որոնք շարադրված են արխիվային հարուստ նյութերի, հրատարակված փաստաթղթերի և պատմագիտական գրականության համակողմանի ուսումնասիրության հիման վրա<sup>1</sup>:

Հայոց ցեղասպանության տարբեր փուլերի պատմությանն առնչվող զանազան հիմնախնդիրներ քննարկվել են հանրապետական և արտերկրի հեղինակավոր մատենաշարերում և պարբերականներում ինստիտուտի աշխատակիցների տպագրած հոդվածներում<sup>2</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս Հայոց պատմություն, հ. III, գիրք առաջին (Նոր ժամանակաշրջան. 17-րդ դարի երկրորդ կես – 1918 թ.), Երևան, 2010 (**Կոստանյան Է., Հովհաննիսյան Ռ.**, Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը, էջ 429-447; **Պողոսյան Բ.**, Հայերի կոտորածների միջազգային արձագանքները, էջ 544-549; Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին (Նորագույն ժամանակաշրջան. 1918-1945 թթ.), Երևան, 2010 (**Գալոյան Գ., Խաչատրյան Վ.**, Հայկական հարցը Փարիզի խաղաղության վեհաժողովում: Սերի պայմանագիրը, էջ 142-164; **Ստեփանյան Գ.**, Բաքվի 1918 թ. ինքնապաշտպանությունը: Հայերի կոտորածները, էջ 165-180; **Խաչատրյան Վ.**, Քեմալական Թուրքիայի հայաջինջ քաղաքականությունը, էջ 211-218; **Գասպարյան Ռ.**, Իրադրությունը Կիլիկիայում: Հայերի ինքնապաշտպանական մարտերը և կոտորածները, էջ 218-231; **Հակոբյան Ա.**, Հայկական «Նեմեսիսը» գործողության մեջ, էջ 231-236; **Ղազախեցյան Վ.**, Մոսկվայի ռուս-թուրքական կոնֆերանսը: 1921 թ. մարտի 16-ի պայմանագիրը, էջ 324-339; *նույնի՛*՝ Կարսի կոնֆերանսը: 1921 թ. հոկտեմբերի 13-ի պայմանագիրը, էջ 367-374; *նույնի՛*՝ Հայկական հարցը Լոնդոնի և Լոզանի կոնֆերանսներում (1921-1923 թթ.): Հայրենադարձությունը, էջ 645-658); **Խաչատրյան Վ.**, ՀՍԽՀ սահմանների հարցը 1921 թ. խորհրդա-թուրքական հարաբերությունների ոլորտում (Մոսկվայի և Կարսի կոնֆերանսները), Լրաբեր հասարակական գիտությունների (այսուհետև՝ ԼՀԳ), 2010, թիվ 1-2, էջ 36-58; *նույնի՛*՝ Советская Армения и Армянский вопрос в сфере военных приготовлений СССР и советско-турецкого противостояния в годы Второй мировой войны // История: электронный научно-образовательный журнал. Содружество Независимых Государств: Историческое пространство обществ, народов, стран, регионов [Электронный ресурс]. <http://mes.igh.ru/magazine/content/armenian-iIssue.html>; **Մախմուրյան Գ.**, Հայկական հարցն ու Հայաստանի Հանրապետությունը բրիտանական պառլամենտի 1920 թ. փետրվար-ապրիլ ամիսների հաշվետվություններում, ԼՀԳ, 2009, թիվ 2, էջ 20-32:

<sup>2</sup> **Խաչատրյան Վ.**, Հայերի ցեղասպանության իրականացման թուրքական քաղաքականության շարունակականությունը (1894-1922 թթ.) // Tanulmányok az örmény népiirtás témaköréből, Budapest, 2009, 16-25 old; **Գասպարյան Ռ.**, Կիլիկիահայության կոտորածները և ինքնապաշտպանական մարտերը 1894-1896 թթ., ԼՀԳ, 2010, թիվ 1-2, էջ 15-35; **Սահակյան Ռ.**, Ականատեսի վկայությունները Մուշ քաղաքի հայության կոտորածի մասին, էջ 449-457; **Ստեփանյան Ա.**, Արմին Վեզները որպես մեծ մարդասեր և Հայոց ցեղասպանության ականատես, էջ 437-447; *նույնի՛*՝ Հայոց ցեղասպանությունը միջազգային հարաբերություններում, Գիտու-

2010 թ. ինստիտուտի աշխատակիցները զեկուցումներով հանդես են եկել Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցին և ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավաբար վճռի 90-ամյակին նվիրված հանրապետական գիտա-ժողովներում, որոնց նյութերը տպագրվել են 2011 թ. ինստիտուտի հրատարակած հոդվածների ժողովածուում<sup>1</sup>:

Հիշարժան են ինստիտուտի որոշ աշխատակիցների հոդվածները՝ նվիրված Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրին միջազգային ասպարեզում և դրա իրավաբանական-քաղաքական կողմին<sup>2</sup>: Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու հատուցման թեման գերակշռում է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աշոտ Մելքոնյանի հրատարակած հոդվածների ժողովածուում<sup>3</sup>: Հայոց ցեղասպանության պատմության տարբեր հիմնահարցերի վրա լույս է սփռում նաև պատմության ինստիտուտի հրատարակած՝ «Հայոց պատմության հարցեր» գիտական հոդվածների ժողովածուի 10-13-րդ հատորներում զետեղված ուսումնասիրությունների մի մասը<sup>4</sup>:

Ինստիտուտի աշխատակիցներն ուսումնասիրել են նաև Հայոց ցեղասպանության՝ ֆրանսիական և թուրքական պատմագրություններին վերաբերող տարբեր հիմնախնդիրներ<sup>5</sup>: 1909 թ. կիլիկյան կոտորածների ուսում-

---

թյան աշխարհ, 2010, թիվ 2, էջ 14-19; **Խառատյան Ա.**, Ադանայի 1909 թ. կոտորածի լուսաբանումը արևմտահայ մամուլում, ՊԲՀ, 2009, թիվ 1, էջ 3-14; **Սահակյան Ռ.**, Ինքնապաշտպանական կռիվները Արևմտյան Հայաստանում 1915 թ. և ՀՀ Դաշնակցությունը, Երևան, 2010:

<sup>1</sup> Տե՛ս Մեծ եղեռն. դատապարտումից՝ հատուցում (Հոդվածների ժողովածու), Երևան, 2011 (**Ստեփանյան Ս.**, Հայերի ցեղասպանությունը և արդարացի պահանջատիրությունը, էջ 25-35; **Ավագյան Ք.**, Ամերիկահայերի հասարակական-քաղաքական գործունեությունը Սևրի պայմանագրին նախորդող տարիներին, էջ 50-63; **Մարության Ա.**, ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավաբար վճռի քաղաքական ու միջազգային-իրավական նշանակությունը, էջ 83-98; **Պողոսյան Բ.**, Սևրի պայմանագիրը որպես ՀՀ արտաքին քաղաքականության գործոն, էջ 99-105, և այլն):

<sup>2</sup> Տե՛ս **Պողոսյան Բ.**, Թուրք-ամերիկյան հարաբերությունները և ԱՄՆ կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը 1991-2007 թթ., Երևան, 2011; **Մարության Ա.**, Թուրքիայի միջազգային-իրավական պատասխանատվության հիմնախնդիրը. ամփոփում և առաջարկներ, ՎԷՄ, 2010, թիվ 1 (29), էջ 11-28; *նույնի՝* Սևրի պայմանագրի և Վուդրո Վիլսոնի իրավաբար վճռի վավերականության հարցի շուրջ, ՎԷՄ, 2010, թիվ 3 (31), էջ 130-142; *նույնի՝* ՄԱԳ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիան և Հայոց ցեղասպանությունը (վերլուծություն և առաջարկներ), ՎԷՄ, 2011, թիվ 4 (36), էջ 152-175; **Ստեփանյան Ս.**, Հայոց ցեղասպանության ճանաչումից ու դատապարտումից մինչև հայկական հարցի արդարացի լուծումը, ԼՀԳ, 2012, թիվ 1, էջ 28-34; *նույնի՝* 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը. Հայերի ցեղասպանության միջազգային ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման հիմնահարցերը // *Tanulmányok az örmény népirtás témaköréből*, Budapest, 2009, 77-86 old:

<sup>3</sup> Տե՛ս **Մելքոնյան Ա.**, Հայոց պատմության հարցեր. դասերն ու պատգամները, Երևան, 2013:

<sup>4</sup> Հայոց պատմության հարցեր, հ. 10-13, Երևան, 2009-2012:

<sup>5</sup> **Պողոսեան Վ.**, Համիդեան կոտորածների պատմության նենգափոխումը ֆրանսիական պատմագրութեան կողմից (Ի դ. երկրորդ կես – ԲԱ դ. սկիզբ), Հանդես ամսօրեայ, 2009, թիվ 1-12, էջ 293-316; *նույնի՝* L'image du génocide des Arméniens d'après Henry Barby // *Tanulmányok az örmény népirtás témaköréből*, Budapest, 2009, 56-68 old; *նույնի՝* Համիդեան կոտորածները Բ. դարի սկզբի ֆրանսական պատմագրութեան քննական լոյսի ներքոյ, Հայկազեան հայագիտական



նասիրության ասպարեզում ֆրանսիական պատմագրության նվաճումներին է նվիրված պատմական գիտությունների դոկտոր Վարուժան Պողոսյանի մենագրությունը<sup>1</sup>: Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ առաջին անգամ նա քննական վերլուծության է ենթարկել 1909-1918 թթ. Ֆրանսիայում լույս տեսած պատմագիտական ուսումնասիրությունները:

Ինստիտուտի աշխատակիցներն իրենց լույսն են ներդրել նաև փաստաթղթերի ժողովածուների հրատարակության գործում: 2010 թ. Վ. Պողոսյանի աշխատասիրությամբ լույս է տեսել 1920 թ. Մարաշում քեմալականների իրականացրած հայերի կոտորածները լուսաբանող փաստաթղթերի ժողովածու, որն ամփոփում է ֆրանսերեն և անգլերեն տպագիր ու անտիպ նյութեր, որոնք քաղված են հայկական արխիվներից, ժամանակի անգլիական և ֆրանսիական մամուլից, օտարերկրյա և հայ ականատեսների հուշերից<sup>2</sup>: Այս ասպարեզում ինստիտուտի ձեռքբերումների շարքում հարկ է հիշատակել պատմական գիտությունների դոկտոր Գայանե Մախմուրյանի կազմած՝ «Հայաստանը ԱՄՆ Պետական դեպարտամենտի փաստաթղթերում 1917-1920 թթ.» փաստաթղթերի և նյութերի ժողովածուն, որտեղ ռուսերեն թարգմանությամբ ներկայացված են Հայաստանի ազգային արխիվում պահվող՝ ԱՄՆ Պետական դեպարտամենտի մեծաթիվ փաստաթղթեր ու նյութեր<sup>3</sup>:

Թարգմանական գրականության ասպարեզում ևս ինստիտուտն ունի ներդրում. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրաչ Բարթիկյանի ջանքերով հրատարակվել է Իռաննիս Կ. Խասիոտիսի՝ Հայկական հարցում հունական քաղաքականությանը վերաբերող աշխատությունը<sup>4</sup>:

Մեծ եղեռնի 100-րդ տարելիցի նախաշեմին ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի աշխատակիցները ջանքեր չեն խնայի նպաստելու Հայոց ցեղասպանության պատմության հետագա ուսումնասիրությանը և հայ ժողովրդի արդարացի պահանջատիրության խնդիրների բարձրաձայնմանն ու լուծմանը:

*ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՏՅԱՆ*

---

հանդես, հ. Լ., 2010, էջ 157-186; **Սահակյան Ռ.**, 1914-1916 թթ. հայ կամավորական շարժման և արևմտահայ ինքնապաշտպանական մարտերի խեղաթյուրումը թուրք և ադրբեջանցի պատմաբանների աշխատություններում, Պատմություն և մշակույթ. ընդդեմ կեղծիքի և ոտնձգության: Հանրապետական գիտաժողովի հիմնադրույթներ, Երևան, 2011, էջ 60-61:

<sup>1</sup> Տե՛ս **Պողոսյան Վ.**, 1909 թ. հայկական կոտորածները Կիլիկիայում ֆրանսիական պատմագրության գնահատմամբ, Երևան, 2009:

<sup>2</sup> Les massacres des Arméniens de Marache en 1920. Documents réunis et présentés par Varoujean Poghosyan, Erevan, 2010.

<sup>3</sup> Տե՛ս **Արմենիա в документах Государственного департамента США 1917-1920 гг.** /Сост. и пер. с англ. Г. Г. Махмурия. Ред. В. Казахцяян. Ереван, Ин-т. истории НАН Армении, 2011:

<sup>4</sup> Տե՛ս **Խասիոտիս Իռաննիս Կ.**, Պատմական ավանդույթ և քաղաքական իրապաշտություն. Հունական քաղաքականությունը Հայկական հարցի վերաբերյալ (1876-1996), հունարեն բնագրից թարգմանությունը ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հ. Ս. Բարթիկյանի, Երևան, 2012:

---

---

**ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 2009-2013 ԹԹ.  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ**

1960-ական թվականներից ի վեր՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտն իր լուսման է ներդրել Հայոց ցեղասպանության ուսումնասիրության ասպարեզում. հրատարակվել են արխիվային և պաշտոնական փաստաթղթեր, մենագրություններ, հոդվածների ժողովածուներ և այլ աշխատություններ՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, արաբերեն և այլ լեզուներով:

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո ինստիտուտի գործունեության մեջ մեծ տեղ է հատկացվել թե՛ Օսմանյան կայսրության ու Թուրքիայի քաղաքական պատմության և թե՛ Հայոց ցեղասպանության տարբեր հիմնախնդիրների ուսումնասիրությանը: Նախ անդրադառնանք ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ Նիկոլայ Հովհաննիսյանի, Ռուբեն Սաֆրաստյանի և ավագ գիտաշխատող Անուշ Հովհաննիսյանի աշխատություններին, որոնցում Հայոց ցեղասպանության հիմնահարցերը քննարկվում են ժամանակակից ցեղասպանագիտության տեսական դրույթների լույսի ներքո:

Ն. Հովհաննիսյանը Հայոց ցեղասպանությանը նվիրված իր մենագրության մեջ<sup>1</sup> բազմակողմանիորեն վերլուծել է Հայոց ցեղասպանության իրականացման նախադրյալները, դրդապատճառները, քաղաքական և էթնիկական ազդակների նշանակությունը, հիմնավորել լիբանանցի հայտնի ցեղասպանագետ Մուսա Պրենսի առաջադրած «արմենոցիդ» եզրույթի ավելի լայն կիրառման կարևորությունը:

Օսմանյան կայսրությունում ցեղասպանության ծրագրի ծագումնաբանության խնդիրներն արծարծող՝ Ռ. Սաֆրաստյանի մենագրությունն<sup>2</sup> առաջին լուրջ փորձն է օսմանյան տարբեր վարչակարգերի մշակած ցեղասպան ծրագրերի քննության միջոցով բացահայտելու այդ պետության կողմից հպատակեցված տարբեր ժողովուրդների դեմ ծրագրված ու իրականացված հանցագործություններին բնորոշ օրինաչափություններն ու տարբերությունները: Հեղինակի արժանիքներից է ոչ միայն ցեղասպանության՝ իբրև երևույ-

---

<sup>1</sup> Տե՛ս **Հովհաննիսյան Ն.**, Հայոց ցեղասպանություն. հայասպանություն՝ ամենացեղասպան ցեղասպանություն, Երևան, 2009:

<sup>2</sup> Տե՛ս **Սաֆրաստյան Ռ.**, Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Երևան, 2009:

թի հայեցակարգի ձևավորման գործընթացի քննությունը, այլև իր նախորդների առաջադրած հայեցակարգերում առկա որոշ բացթողումների (մասնավորապես նրանցից ոմանց կողմից պետության դերի և դիտավորության հանգամանքի ոչ բավարար հետազոտության) հաղթահարման փորձը: Հարկ է ընդգծել, որ նա առաջադրել է «նախացեղասպանության» հայեցակարգը, մատնանշել, որ թուրք ազգայնամոլական տրամադրությունների աճը պայմանավորված էր պետական աջակցությամբ, ինչի հետևանքով դեռևս 1875-1876 թթ. բուլղարացիները կանգնած էին նախացեղասպանական իրավիճակի առջև:

Ռ. Մաֆրաստյանն իրականացրել է Օսմանյան կայսրության ցեղասպան ծրագրերի ամփոփիչ վերլուծություն՝ հիմնվելով համեմատական-կառուցվածքային մեթոդի վրա: Այն է՝ նա ցեղասպան գործողությունների համեմատական ուսումնասիրությունը գուգորդել է ցեղասպանության ծրագրերի տեքստային հետազոտության հետ, ինչը նրան թույլ է տվել գիտականորեն ապացուցելու, որ Օսմանյան կայսրությունը գոյության վերջին հիսուն տարիներին եղել է ցեղասպան ու ոճրագործ պետություն:

Նկատենք նաև, որ Ն. Հովհաննիսյանը և Ռ. Մաֆրաստյանը բազմապիսի և բազմալեզու սկզբնաղբյուրների գիտական վերլուծության հիման վրա վկայակոչում են անժխտելի փաստեր առ այն, որ Հայոց ցեղասպանությունը օսմանյան իշխանությունների կողմից նախօրոք ծրագրված և մշակված պետական քաղաքականության մասն է կազմել, որի նպատակն էր էթնիկական այլ տարրերից մաքրված թուրքական տարածքի ստեղծումը: Այդ քաղաքականությունը շարունակվել է նաև Հանրապետական Թուրքիայում և հայերի ճակատագրին են արժանացել այնտեղ բնակվող ազգային փոքրամասնությունները:

Մշակութային ցեղասպանության տեսական հարցերին անդրադարձել է Ա. Հովհաննիսյանը «Հայասպանությունը՝ մշակութային ցեղասպանության համատեքստում» հոդվածում: Քննարկելով «մշակութային ցեղասպանությանն» առնչվող եզրույթները՝ նա եզրահանգել է, որ ժամանակակից Թուրքիայում շարունակվում է հայոց պատմության և մշակույթի դեմ ուղղված ցեղասպան քաղաքականությունը: Ըստ նրա՝ մինչ օրս շարունակվող «սպիտակ ջարդը» իրականացվում է երեք ուղղությամբ. խտրական վերաբերմունք Թուրքիայում բնակվող հայերի նկատմամբ, հայկական մշակութային կողթողների ոչնչացում, անտեսում կամ յուրացում, ցեղասպանության ժխտման պաշտոնական քաղաքականություն<sup>1</sup>:

Արևելագիտության ինստիտուտի աշխատակիցների ուշադրության կենտրոնում է նաև միջազգային ասպարեզում Հայոց ցեղասպանության

---

<sup>1</sup> Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, Հայասպանությունը՝ մշակութային ցեղասպանության համատեքստում, ՎԷՄ, 2010, թիվ 2 (30), էջ 102:

հարցի քննարկումների, ինչպես նաև Թուրքիայի որդեգրած Ժխտողական քաղաքականության ուսումնասիրությունը:

2009 թ. հայերեն, ռուսերեն և անգլերեն հրատարակվել է Ռ. Սաֆրաստյանի՝ «Թուրքիայի պայքարը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման դեմ ներկա փուլում. նոր միտում»<sup>1</sup> հոդվածը, որում հեղինակն անդրադառնում է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման դեմ թուրքական իշխանությունների ծավալած պայքարին: Նա ներկայացնում է վերջին տարիներին ի հայտ եկած «միջազգային-իրավական» նոր միտումը, որի հիմնական նպատակն է՝ օգտագործելով միջազգային իրավունքի հնարավորությունները՝ փորձել «ապացուցել», որ Հայոց ցեղասպանությունը չի համապատասխանում Ցեղասպանության մասին 1948 թ. ՄԱԿ-ի ընդունած կոնվենցիայում ամրագրված ցեղասպանության՝ իբրև երևույթի չափորոշիչներին, և այդպիսով կասեցնել դրա միջազգային ճանաչման գործընթացը: Հաշվի առնելով այն փաստը, որ հայկական կողմը միջազգային ասպարեզում որոշակի աշխատանքներ է իրականացնում Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման ուղղությամբ՝ հոդվածում տեղ գտած թուրքական նոր մոտեցումների առանձնահատկությունների բացահայտումը, բացի զուտ ճանաչողական հետաքրքրությունից, ունի նաև գործնական կարևոր նշանակություն:

Հայոց ցեղասպանության վերաբերյալ Իրանի պատմաբանների դիրքորոշմանն է անդրադարձել ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու Գոհար Իսկանդարյանը, որը «Իրանի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության նկատմամբ»<sup>2</sup> հոդվածում քննության է ենթարկել Հայոց ցեղասպանության վերաբերյալ թե՛ իրանցի պատմաբանների և թե՛ Իրանի ներկայիս իշխանությունների մոտեցումները: Հոդվածը կիրառական մեծ նշանակություն ունի, քանզի հնարավորություն է ընձեռում պատկերացում կազմելու Հայոց ցեղասպանության նկատմամբ Իրանի Իսլամական Հանրապետության դիրքորոշման վերաբերյալ և դրա հիման վրա ձեռնարկել անհրաժեշտ քայլեր ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործընթացն այդ երկրում ավարտին հասցնելու համար:

---

<sup>1</sup> Տե՛ս **Սաֆրաստյան Ռ.**, Թուրքիայի պայքարը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման դեմ ներկա փուլում. նոր միտում, Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները, Գիտական զեկուցումների ժողովածու (18-19 ապրիլի 2008 թ. Կիպրոս-Նիկոսիա), Երևան, 2009; *նույնի՝* Борьба Турции против международного признания и осуждения геноцида армян на данном этапе: новая тенденция, Основополагающие правовые требования западного армянства, Международная научно-практическая конференция (Кипр-Никосия, 18-19 апреля 2008 г.): Сборник научных докладов, М., 2009; *նույնի՝* Turkey's Struggle against International Recognition and Condemnation of the Armenian Genocide at the Current Stage: A New Tendency, The Main Issues of Western Armeniacy's Claims International Research and Practical Conference (Cyprus-Nicosia, April 18-19, 2008), Collection of Conference Papers, Yerevan, 2009:

<sup>2</sup> Տե՛ս **Իսկանդարյան Գ.**, Իրանի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության նկատմամբ, Հայ դատն այսօր, Թեհրան, 4 նոյեմբերի 2012:

Առանձնահատուկ ուշադրության են արժանի բավականին արդիական խնդիրների նվիրված «Քեմալ Աթաթուրքը և հայերի ունեզրկման գործընթացը. Թուրքական փաստաթղթերի և հրապարակումների լուսաբանմամբ» ու «Թուրքիայի հանրության վերաբերմունքը Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրին» Ա. Հովհաննիսյանի հոդվածները<sup>1</sup>: Հիմնվելով տարաբնույթ փաստերի վրա՝ հեղինակը վերջին հոդվածում բացահայտել է Թուրքիայում տիրող ներկայիս իրավիճակը, մանրամասն վերլուծել թուրքական իշխանությունների որդեգրած՝ Հայոց ցեղասպանության ժխտողական քաղաքականությունը և հանգել այն հետևության, որ արդի փուլում ցեղասպանության փաստն ընդունելու համար անհրաժեշտ է ոչ միայն թուրքական պետության, այլև հասարակության ժողովրդավարացում:

1890-ական թթ. Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության առաջին փուլի շուրջ ուսումնասիրություններ է իրականացրել Ռ. Սաֆրաստյանը<sup>2</sup>: Նա ապացուցել է, որ Աբդուլ Համիդ II-ի գահակալության օրոք արևմտահայության ցեղասպանության ծրագրի մշակումն իրականացվել է պետական կառավարման բարձրագույն մարմնի ընդերքում, որին նախորդել են երկարատև նախապատրաստական աշխատանքներ: Ուշագրավ է նաև հեղինակի «Հայոց ցեղասպանության պետական ծրագիրը» հոդվածը<sup>3</sup>, որում նա առաջ է քաշում հետևյալ տեսակետը. Օսմանյան կայսրությունում 1915 թ. հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանության պետական ծրագիրը բաղկացած է եղել երեք փաստաթղթից: Հեղինակը մեկ այլ հոդվածում անդրադառնում է Հայոց ցեղասպանության քեմալական ծրագրին<sup>4</sup>:

Պատմական գիտությունների թեկնածու Քրիստինե Մելքոնյանը քննության է ենթարկել Երկրորդ աշխարահամարտից հետո ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև Հայկական հարցի շուրջ ծավալված գործընթացները<sup>5</sup>, մասնավորապես

---

<sup>1</sup> Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, Քեմալ Աթաթուրքը և հայերի ունեզրկման գործընթացը. Թուրքական փաստաթղթերի և հրապարակումների լուսաբանմամբ, ՎԷՄ, 2011, թիվ 1 (33); *նույնի՝* Թուրքիայի հանրության վերաբերմունքը Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրին, ՎԷՄ, 2012, թիվ 2 (38):

<sup>2</sup> Տե՛ս **Սաֆրաստյան Ռ.**, Օսմանյան կայսրությունում 1890-ական թթ. կեսերի հայկական կոտորածների գիտական գնահատականի հարցի շուրջ, Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. VII, Երևան, 2011; *նույնի՝* Հայոց ցեղասպանության համիդյան ծրագիրը, Հայոց պատմություն, հ. III, Երևան, 2010:

<sup>3</sup> Տե՛ս **Սաֆրաստյան Ռ.**, Հայոց ցեղասպանության պետական ծրագիրը, ՎԷՄ, 2009, թիվ 1 (26): Տե՛ս նաև **Սաֆրաստյան Ռ.**, 1915 թ. «Տեղահանութեան օրենքը». Կարետր ճշդումներ, Ազդակ, Բացառիկ, 2010, թիվ 244 (23349):

<sup>4</sup> Տե՛ս **Սաֆրաստյան Ռ.**, Հայոց ցեղասպանության քեմալականների ծրագիրը, Ազդակ, Բացառիկ, 2010, ապրիլի 24:

<sup>5</sup> Տե՛ս **Մելքոնյան Ք.**, Սփյուռքահայությունը և Հայկական հարցի լուծման խնդիրը (1945-1947 թթ.), ՊԲՀ, 2010, թիվ 2, էջ 41-52; *նույնի՝* Հայկական հարցը 1945 թվականին, ՎԷՄ, 2010, թիվ 3; *նույնի՝* Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարության արխիվային փաստաթղթերը 1945-1946 թթ. հայկական հողային պահանջատիրության խնդրի մասին, Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. VII, Երևան, 2011 և այլն:

ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի որդեգրած քաղաքականությունը, ինչպես նաև այդ ուղղությամբ Հայոց եկեղեցու և Սփյուռքի ձեռնարկած միջոցառումները:

Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության ուսումնասիրության բնագավառում մեծ է պատմական գիտությունների դոկտոր Վահան Բայբուրդյանի վաստակը: 2013 թ. Կանադայում անցկերենով վերահրատարակվել է նրա «Քրդերը, Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո» աշխատությունը<sup>1</sup>: Հեղինակը ներկայացրել է նոր և նորագույն շրջանում Օսմանյան կայսրությունում, իսկ ապա Հանրապետական Թուրքիայում բնակվող քուրդ ժողովրդի քաղաքական և տնտեսական պատմության դրվագները, հայ-քրդական հարաբերությունների զարգացումները, վերլուծել դրանց վերելքներն ու վայրէջքները՝ անմիջականորեն անդրադառնալով Հայոց ցեղասպանության հիմնախնդիրներին: Հայկական հարցը նա քննարկել է քրդական ինդիի հարթության վրա, փաստել, որ այսպես կոչված «քրդական գործոնը» բացասաբար է անդրադարձել Հայկական հարցի զարգացումների վրա՝ դառնալով նաև հայ ազատագրական շարժման ձախողման պատճառներից մեկը:

Վերջին տարիներին Արևելագիտության ինստիտուտի հրատարակած տարաբնույթ ուսումնասիրություններն արժեքավոր են ոչ միայն գիտական, այլև քաղաքական նշանակության առումով, քանզի մեծապես նպաստում են Հայոց ցեղասպանության թուրքական ժխտողական քաղաքականության և դրան ձայնակցող քաղաքական ու գիտական ուժերի դեմ մղվող պայքարին և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին: Առավել ևս էթե նկատի ունենանք, որ Ն. Հովհաննիսյանի և Ռ. Սաֆրաստյանի գրքերը թարգմանվել են տարբեր լեզուներով<sup>2</sup>:

*ՔՐԴՍՏԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ*

---

<sup>1</sup> Տե՛ս **Baibourtian V.**, The Kurds, The Armenian Question and The History of Armenian-Kurdish Relations, Ottawa, 2013.

<sup>2</sup> Տե՛ս **Հովհաննիսյան Ն.**, Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագիտության քննական լույսի ներքո, Թեհրան, 2009 (պարսկերեն); *նույնի՝* The Armenian Genocide – The Most Genocidal Genocide. In Ten Languages of the World. In English, French, Russian, German, Turkish, Japanese, Hungarian, Armenian, Arabic, Persian, Yerevan, 2009; *նույնի՝* Genocidul Armean, Bucuresti, 2012; **Safrastyan R.**, Ottoman Empire: The Genesis of the Program of Genocide, Yerevan, 2010; *նույնի՝* Empire Ottoman : La genèse du programme de génocide (1876-1920), Erevan, 2012:

---

---

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

<b>Ավագյան Գոհար</b>	ՀՀ ազգային արխիվի տեղեկատու որոնողական համակարգի ստեղծման բաժնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու (gohar-arkhiv@mail.ru)
<b>Գրիգորյան Հասմիկ</b>	ՀՀ ԳԱԱ հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կրտսեր գիտաշխատող (grigoryan hasmik86@yahoo.com)
<b>Գևորգյան Հ. Ռայմոն</b>	Փարիզ VIII համալսարանում (Մեն-Դենիի) ուսումնասիրությունների տնօրեն (rhkevorkian@wanadoo.fr)
<b>Խաչատրյան Կարեն</b>	ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի փոխտնօրեն, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ (history@sci.am)
<b>Կարապետյան Դիանա</b>	ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի դասախոս (kdianka@yahoo.com)
<b>Կիրակոսյան Լյուբա</b>	ԵՊՀ ՀՀԻ ավագ գիտաշխատող, ճարտարապետության թեկնածու (kirakosyanlyuba@gmail.com)
<b>Հայրունի Աշոտ</b>	ԵՊՀ ՀՀԻ առաջատար գիտաշխատող, ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր (ahayruni@yahoo.de)
<b>Հովհաննիսյան Մհեր</b>	ԵՊՀ ՀՀԻ փոխտնօրեն, պատմական գիտությունների թեկնածու (mh@armin.am)
<b>Հովհաննիսյան Պետրոս</b>	ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր (petros.hovhannisyan@rambler.ru)
<b>Հոֆման Թեաս</b>	Բեռլինի Ազատ համալսարանի արևելաեվրոպական հետազոտությունների ինստիտուտի գիտաշխատող, փիլիսոփայության, բանասիրության և սոցիոլոգիայի դոկտոր hofmann@zedat.fu-berlin.de
<b>Հուրեր Վոլֆգանգ</b>	Գերմանիայի դաշնային հանրապետության էթիկայի հանձնաժողովի անդամ, Հումբոլդտի անվան (Բեռլին), Հայդելբերգի և Շթեյնբրոնի (Հարավային Աֆրիկա)

համալսարանների պատվավոր պրոֆեսոր, կրկնակի դոկտոր (w-k.huber@t-online.de)

**Մակլիդիս Թեոֆանիս** Կավալայի (Հունաստան) տեխնոլոգիական ինստիտուտի պրոֆեսոր (malkidis@gmail.com)

**Մարտոյան Թեհմինե** ՀՀ ԳԱԱ հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու (tehminemartoyan@gmail.com)

**Մելիքյան Գուրգեն** ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր (gmelikian@ysu.am)

**Մելքոնյան Ռուբեն** ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ (rubmelk@yahoo.com)

**Մելքոնյան Քրիստինե** ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու (kmelkonyan@mail.ru)

**Միրզոյան Քնարիկ** ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի դոցենտ (turkicstudies@ysu.am)

**Ներսիսյան Աշոտ** ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր (ashot-nersisyan@mail.ru)

**Պարսամյան Սեդա** ՀՀ ԳԱԱ հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ավագ գիտաշխատող (sparsamyam@yahoo.com)

**Պողոսյան Վարուժան** ԵՊՀ ՀՀԻ առաջատար գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր (varuzhan.poghosyan@mail.ru)

**Սաֆրաստյան Ռուբեն** ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (ruben.safrastyan@fulbrightmail.org)

**Միմոնյան Արամ** ԵՊՀ ռեկտոր, ԵՊՀ ՀՀԻ տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (rector@ysu.am)

**Վարդանյան Գևորգ** ՀՀ ԳԱԱ հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու (vardanyan\_gevorg@yahoo.com)



## INFORMATION ABOUT THE AUTHORS

- Avagyan Gohar** Manager of the Department of Information Search System of the National Archives of the Republic of Armenia, PhD in History (gohar-arkhiv@mail.ru)
- Grigoryan Hasmik** Researcher of the Armenian Genocide Museum-Institute of the National Academy of Sciences of the Republic of Armenia (NAS RA) (grigoryan hasmik86@yahoo.com)
- Hayruni Ashot** Senior Researcher of the Institute for Armenian Studies of Yerevan State University (YSU), Professor of the Chair of Armenian History, YSU, Doctor of History ahayruni@yahoo.de
- Hofmann Tessa** Research Worker of the Institute for East-European Studies, Free University of Berlin, Doctor of Philosophy, Philology and Sociology (hofmann@zedat.fu-berlin.ru)
- Hovhannisyan Mher** Deputy Director of the Institute for Armenian Studies of YSU, PhD in History (mh@armin.am)
- Hovhannisyan Petros** Deputy Head of the Chair of Armenian History, YSU, PhD in History, Professor (petros.hovhannisyan@rambler.ru)
- Huber Wolfgang** Dual Degree Doctor, Member of Ethics Committee of the Federal Republic of Germany, Honorary Professor of Humboldt University (Berlin), Heidelberg and Stellenbosch Universities (South Africa) (w-k.huber@t-online.de)
- Karapetyan Diana** Lecturer of the Chair of Turkology, YSU (kdianka@yahoo.com)
- Kevorkian Raymond H.** Director of Studies at the University of Paris VIII (Saint-Denis) (rhkevorkian@wanadoo.fr)
- Khachatryan Karen** Deputy Director of the Institute of History of NAS RA, PhD in History, Associate Professor (history@sci.am)
- Kirakosyan Luba** Senior Researcher of the Institute for Armenian Studies of YSU, PhD in Architecture (kirakosyanlyuba@gmail.com)
- Malkidis Teofanis** Professor of Technological Institute of Kavala (Greece) (malkidis@gmail.com)

<b>Martoyan Tehmine</b>	Senior Researcher of the Armenian Genocide Museum-Institute of NAS RA, PhD in History (tehminemartoyan@gmail.com)
<b>Melikyan Gurgen</b>	Dean of the Faculty of Oriental Studies of YSU, PhD in Philology, Professor (gmelikian@ysu.am)
<b>Melkonyan Kristine</b>	Senior Researcher of the Institute of Oriental Studies of NAS RA, PhD in History (kmelkonyan@mail.ru)
<b>Melkonyan Ruben</b>	Deputy Dean of the Faculty of Oriental Studies of YSU, PhD in Philology, Associate Professor (rubmelk@yahoo.com)
<b>Mirzoyan Knarik</b>	Associate Professor of the Chair of Turkology, YSU (turkicstudies@ysu.am)
<b>Nersisyan Ashot</b>	Professor of the Chair of Armenian History, YSU, Doctor of History, Professor (ashot-nersisyan@mail.ru)
<b>Parsamyan Seda</b>	Senior Researcher of the Armenian Genocide Museum-Institute of NAS RA (sparsamyan@yahoo.com)
<b>Poghosyan Varoujean</b>	Senior Researcher of the Institute for Armenian Studies of YSU, Doctor of History (varuzhan.poghosyan@mail.ru)
<b>Safrastyan Ruben</b>	Director of the Institute of Oriental Studies of NAS RA, Corresponding Member of the NAS RA, Doctor of History, Professor (ruben.safrastyan@fulbrightmail.org)
<b>Simonyan Aram</b>	Rector of YSU, Director of the Institute for Armenian Studies of YSU, Corresponding Member of the NAS RA, Doctor of History, Professor (rector@ysu.am)
<b>Vardanyan Gevorg</b>	Senior Researcher of the Armenian Genocide Museum-Institute of NAS RA, PhD in History (vardanyan_gevorg@yahoo.com)

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>Արամ Միմոնյան</b> Բարի երթ «Հայագիտության հարցեր» հանդեսին.....	3
---	---

## ՀՈՂՎԱԾՆԵՐ

<b>Ռուբեն Սաֆրաստյան</b> Օսմանյան կառավարության որոշումը հայերի տեղահանության մասին (1915 թ. մայիսի 30).....	5
<b>Ռայմոնդ Հ. Գևորգյան</b> (Ֆրանսիա) Գրիգոր Զոհրապը և երիտթուրքերը. դավաճանությունն օսմանյան իդեալին (ֆրանսերեն).....	20
<b>Աշոտ Հայրունի</b> 1915-1916 թթ. գերմանա-թուրքական դաշինքի շուրջ.....	34
<b>Հասմիկ Գրիգորյան</b> Հայոց ցեղասպանության «շարքային» իրականացնողները. մուսուլման կանանց մասնակցության գործառնության առանձնահատկությունները.....	48
<b>Թեմիհե Մարտոյան</b> Զմյուռնիայի հայ և հույն բնակչության բնաջնջման սպառնալիքի ժխտման հետևանքները (1922 թ. սեպտեմբեր).....	61
<b>Թեսա Հոֆման</b> (Գերմանիա) Ելքի, ինքնության հաստատման և բողոքի միջև. Հայոց ցեղասպանությունն ամերիկահայ Սփյուռքի և Թուրքիայի հուշապատում արձակում (գերմաներեն).....	76
<b>Թեոֆանիա Մալկիդիս</b> (Հունաստան) Հույն ժողովրդի ցեղասպանության շուրջ (անգլերեն).....	92
<b>Լյուբա Կիրակոսյան</b> Մշակութային եղեռն (Արցախի ճարտարապետական հուշարձանների օրինակով).....	107

## ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

<b>Գոհար Ավագյան</b> Փաստաթղթեր 1894-1896 թթ. հայկական կոտորածների վերաբերյալ (Բիթլիսի նահանգ).....	119
<b>Վարուժան Պողոսյան</b> 1895 թ. Դիարբեքիի կոտորածը ֆրանցիսկյան միանձնուհու տեսանկյունից (ֆրանսերեն).....	143

<b>Վարուժան Պողոսյան</b>	
1909 թ. կիլիկյան կոտորածների արձագանքները «Թայմս» թերթում (անգլերեն).....	159

**ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

<b>Պետրոս Հովհաննիսյան</b>	
Հրաչիկ Միմոնյան, Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք I-V .....	169
<b>Գուրգեն Մելիքյան, Քնարիկ Միրզոյան</b>	
Ալեքսանդր Սաֆարյան, Զիա Գյոքալփը և «թյուրքականության» հիմունքները.....	173
<b>Թեմիհն Մարտոյան</b>	
Մարի Հովհաննիսյան, Անցյալի և ներկայի բախում. Հայոց ցեղասպանության հավաքական հիշողությունը և թուրքական ժխտողականությունը .....	176
<b>Աշոտ Ներսիսյան</b>	
Հայկ Ղազարյան, Սևրի պայմանագիրը և Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը Հայաստան-Թուրքիա սահմանաբաժանման վերաբերյալ.....	181
<b>Վուլֆգանգ Հուբեր (Գերմանիա)</b>	
Ռոլֆ Հոսֆելդ (խմբագիր), Յոհաննես Լեվսիուս – միակ գերմանացի բացառությունը: Հայոց ցեղասպանությունը, հումանիտարիզմը և մարդու իրավունքները (գերմաներեն) .....	188
<b>Գևորգ Վարդանյան</b>	
Թեոֆանիս Մալկիդիս, Պոնտոսի հույների պատմությունը.....	193
<b>Ռուբեն Մելքոնյան, Դիանա Կարապետյան</b>	
Աքրամ Այլիսլի, Քարե երազներ.....	198

**ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ**

<b>Մհեր Հովհաննիսյան</b>	
«Հայոց ցեղասպանության» թեման ԵՊՀ հայագիտական հետազոտու- թյունների ինստիտուտի 2009-2013 թթ. ուսումնասիրություններում.....	202
<b>Մեղա Պարսամյան</b>	
ՀՀ ԳԱԱ հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի աշխատանքները 2009-2013 թթ. Հայոց ցեղասպանության ուսումնասիրության ասպարեզում.....	208
<b>Կարեն Խաչատրյան</b>	
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի աշխատանքները 2009-2013 թթ. Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության ուսումնասիրության ասպարեզում.....	214
<b>Քրիստինե Մելքոնյան</b>	
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի աշխատանքները 2009-2013 թթ. Հայոց ցեղասպանության ուսումնասիրության ասպարեզում.....	218
<b>Տեղեկություններ հեղինակների մասին.....</b>	223

## CONTENTS

<b>Aram Simonyan</b> On the Publication of the Bulletin “Armenological Issues” .....	3
---	---

## ARTICLES

<b>Ruben Safrastyan</b> The Decision of the Ottoman Government on the Removal of the Armenians (1915, May 30).....	5
<b>Raymond H. Kevorkian</b> (France) Grigor Zohrap and the Young Turks: Betrayal of the Ottoman Ideal (in French) .....	20
<b>Ashot Hairuni</b> On German-Turkish Alliance in 1915-1916 .....	34
<b>Hasmik Grigoryan</b> The “Denary” Executors of the Armenian Genocide: Functional Peculiarities of Women’s Participation .....	48
<b>Themine Martoyan</b> The Consequences of the Denial of the Threat of Extermination of the Greek and the Armenian Population of Smyrna (September 1922).....	61
<b>Tessa Hofmann</b> (Germany) Between Exit, Identification and Protest. The Armenian Genocide in the prose (memoirs) of American Armenian Diaspora and Turkey (in German) .....	76
<b>Theofanis Malkidis</b> (Greece) Aspects of the Greek Genocide (in English) .....	92
<b>Lyuba Kirakosyan</b> Cultural Genocide (With Special Reference to the Monuments in Artsakh).....	107

## PUBLICATIONS

<b>Gohar Avagyan</b> Documents on Armenian Massacres in 1894-1896 (Bitlis Province) .....	119
<b>Varoujean Poghosyan</b> 1895 Diyarbakir Massacre from the Point of View of a Franciscan Nun (in French)....	143
<b>Varoujean Poghosyan</b> The Armenian Massacres of Cilicia in 1909 in the Elucidation of the <i>Times</i> (in English) .....	159

## BOOK REVIEWS

<b>Petros Hovhannisyan</b> Hrachik Simonyan, On the Paths of Liberation Struggle, Book I-V.....	169
<b>Gurgen Melikyan, Knarik Mirzoyan</b> Alexander Safaryan, Ziya Gokalp and the Principles of “Turkishness” .....	173

<b>Tehmine Martoyan</b>	
Marie Hovhannisyan, Conflicts of the Past and Present: the Collective Memory of the Armenian Genocide and Turkish Denial.....	176
<b>Ashot Nersisyan</b>	
Hayk Ghazaryan, The Treaty of Sevres and Woodrow Willson’s Arbitration on Armenia-Turkey Border.....	181
<b>Wolfgang Huber</b> (Germany)	
Rolf Hosfeld (editor), Johannes Lepsius – the only German exception. The Armenian Genocide, Humanitarianism and Human Rights (in German) .....	188
<b>Gevorg Vardanyan</b>	
Theofanis Malkidis, History of Greeks of Pontus .....	193
<b>Ruben Melkonyan, Diana Karapetyan</b>	
Akram Aylisli, Stony Dreams .....	198

### SCIENTIFIC LIFE

<b>Mher Hovhannisyan</b>	
The Theme of the Armenian Genocide in the 2009-2013 Studies of Institute for Armenian Studies of YSU .....	202
<b>Seda Parsamyan</b>	
The Activities of the Armenian Genocide Museum-Institute of the National Academy of Sciences of the Republic of Armenia (NAS RA) in the Sphere of the Genocide Study in 2009-2013.....	208
<b>Karen Khachatryan</b>	
The Works of the Institute of History of NAS RA on the Armenian Question and the Armenian Genocide in 2009-2013 .....	214
<b>Kristine Melkonyan</b>	
The Works of the Institute of Oriental Studies of NAS RA in the Sphere of the Genocide Study in 2009-2013.....	218
<b>Information about the Authors</b> .....	225

# ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

## ՀԱՆԴԵՍ

Սրբագրիչ՝ Վ. Դերձյան  
Համ. ձևավորումը՝ Ա. Աղուզումցյանի  
Կազմի ձևավորումը՝ Ա. Ստեփանյանի

Ստորագրված է տպագրության՝ 28.11.2013 թ.:

Չափսը՝ 70x100 1/16:

Տպագրությունը՝ օֆսեթ: Թուղթը՝ օֆսեթ:

Տպագր. 14.5 մամուլ: Տպաքանակը՝ 300:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

---

«Ոսկան Երևանցի» տպագրատուն, Երևան, Նոր Նորքի 1-ին զանգված,  
Մամվել Մաֆարյան փող., 11/1ա

## Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

Հոդվածները ներկայացնել էլեկտրոնային կրիչով (տեքստը՝ Word, նկարները՝ TIFF կամ բարձրորակ JPG): Հիմնական լեզուն հայերենն է, ընդունվում են նաև ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն հոդվածներ, որոնք պետք է ունենան ամփոփում (հայերեն տեքստի դեպքում՝ անգլերեն, այլ լեզուների դեպքում՝ հայերեն, շուրջ 300 բառ):

Չափանիշներն են՝

1. Տառատեսակը հայերեն՝ Sylfaen, այլ լեզուներինը՝ Times New Roman:
2. Տառաչափը՝ 12, միջտողային բացատը՝ 1.5:
3. Հոդվածի սկզբում դրվում է հեղինակի անուն, ազգանունը (գլխատառերով), վերնագիրը (գլխատառերով), հոդվածի վերջում նշվում է հեղինակի գիտական աստիճանն ու կոչումը, աշխատանքի վայրը, պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի անվանումը (հեռախոսահամարը և էլփոստի անվանումը տպագրվում են հեղինակի համաձայնությամբ):
4. Հղումները տրվում են տողատակում՝ աճման կարգով, տառաչափը՝ 10, նշվում է աղբյուրի հեղինակը, վերնագիրը, հատորը, հրատարակության տեղը, տարեթիվը (մամուլի դեպքում՝ նաև համարը) և էջը:

Հոդվածները ներկայացնել՝

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ 2-րդ մասնաշենք, 5-րդ հարկ, 511 սենյակ, «Հայագիտության հարցեր» հանդեսի խմբագրություն (*handes@armin.am*)